

ISSN 2579-2733

УНИВЕРСИТЕТ
ГРИГОР НАРЕКАЦИ



UNIVERSITI
GRIGOR NAREKATSI

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴՊՐԱՏՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՆԴԵՍ

2022 - 1 (13)

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴՊՐԱՏՈՒՆ

Հասարակական գիտությունների

հանդես

2022-1 (13)

-

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

*Գլխավոր խմբագիր՝ ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ
Պատասխանատու քարտուղար՝ ԱՄԱԼՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

*Главный редактор: ВАРДАН АКОПЯН
Ответственный секретарь: АМАЛИЯ ГРИГОРЯН*

*Chief Editor: VARDAN HAKOBYAN
Executive Secretary: AMALYA GRIGORYAN*

© Հանդեսում զետեղված հեղինակներ, 2022
© Ստեփանակերտի «Գր. Նարեկացի» համալսարան, 2022
© «Դիզակ պլյուս» հրատարակչություն, 2022

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐ

ԱՎԱԳՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐՄԵՆ – բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող

ԱՎԱՆԵՍՅԱՆ ՎԱԼԵՐԻ – պատմական գիտությունների դոկտոր, ԱրՊՀ պրոռեկտոր

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԼԻԼԻԹ – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ռեկտոր

ԲԱԲՍՅԱՆ ԴԱՎԻԹ - պատմական գիտությունների դոկտոր, ԱՀ ԱԳ նախարար

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի Արևմտահայերենի, հայագիտության գիտահետազոտական Լուստովիկա և Յակոբ Այնթապլեան կենտրոնի տնօրեն, Որակի ապահովման պատասխանատու

ԴԵՎՐԻԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ – բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն

ԵՂԻՍԱՐՅԱՆ ԱԶԱՏ - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայ-ռուսական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ

ԹՈՎՍԱՍՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի օտար լեզվի դասախոս

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵՎԱԿ – իրավաբանական գիտությունների թեկնածու, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի գիտական և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր

ՏԷՐ - ՄԱԹՈՍԵԱՆ ՊԵՏՐՈՍ – պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Նեբրասկա-Լինքոլնի համալսարանի դասախոս, Հայագիտական ուսմանը ընկերության նախագահ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ՄԱՆԱՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ – փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԵՊՀ տեսական փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի պրոֆեսոր

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐԱՆՈՒՇ – բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական քարտուղար

ՄԿՐՏՅԱՆ ԷՂՈՒԱՐԴ – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս

ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՀՈՎԻԿ – բանասիրական գիտությունների դոկտոր, ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի դասախոս

ՄՈՒՐԱՅԱՆ ՍԱՄՎԵԼ – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի վարիչ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՐՔՄԵՆԻԿ – բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող

ՔԱՌԻ ՊԻՏԵՐ – ամերիկյան <ՅուՍիԷԼԷյ> (Լոս Անջելես, Կալիֆոռնիա) համալսարանի Նարեկացու անվան հայագիտության ամբիոնի ղեկավար, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հայագետ:

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

АВАКЯН АРЦРУН – доктор филологических наук, профессор, декан филологического факультета ЕГУ

АВАНЕСЯН АРМЕН – кандидат филологических наук, старший научный сотрудник литературного института имени М. Абегяна НАН РА

АВАНЕСЯН ВАЛЕРИЙ – доктор исторических наук, проректор АрГУ

АРЗУМАНЯН ЛИЛИТ – доктор филологических наук, профессор, ректор Ереванского государственного института театра и кино

АКОПЯН СЕВАК – кандидат юридических наук, проректор по научной части и международного сотрудничества Степанакертского университета «Григор Нарекаци»

БАБАЯН ДАВИД – доктор исторических наук, министр иностранных дел РА

ГРИГОРЯН АМАЛИЯ – кандидат филологических наук, доцент, директор западно-армянского арменоведческого научно-исследовательского центра Лютовики и Акопа Айнтаплеан Степанакертского университета «Григор Нарекаци», ответственная по обеспечению качества

ДЕВРИКЯН ВАРДАН – доктор филологических наук, директор литературного института имени М. Абегяна НАН РА

ЕГИАЗАРЯН АЗАТ – доктор филологических наук, профессор, заведующий кафедрой армянского языка и литературы армяно-русского университета

КАУ ПИТЕР – руководитель арменоведческой кафедры американского университета <ЮСиЭлЭй> (Лос-Анджелес, Калифорния) имени Нарекаци, доктор, филологических наук, профессор, арменовед.

МАНАСЯН АЛЕКСАНДР – доктор философских наук, член-корреспондент НАН РА, профессор кафедры философии и логики ЕГУ

МАРГАРЯН СИРАНУՍԻ – кандидат филологических наук, научный секретарь литературного института имени М. Абегяна НАН РА

МКРТЧЯН ЭДУАРД – доктор филологических наук, профессор, преподаватель кафедры армянского языка и литературы Степанакертского университета "Григор Нарекаци"

МУРАДЯН САМВЕЛ – доктор филологических наук, профессор, ЕГУ, заведующий кафедрой армянской литературы и истории имени академика Г. Тамразяна

МУСАЕЛЯН ОВИК – доктор филологических наук, преподаватель кафедры литературы и журналистики АрГУ

НИКОГОСЯН АРКМЕНИК - кандидат филологических наук, старший научный сотрудник
литературного института имени М. Абебяна НАН РА

ТОВМАСЯН ЛУСИНЕ - кандидат филологических наук, доцент, преподаватель кафедры языков
Степанакертского университета «Григор Нарекаци»

ТЕР - МАТЕВОСЯН ПЕТРОС - доктор, исторических наук, профессор преподаватель
университета Небраски в Линкольне, председатель организации
арменоведческого исследования, США.

EDITORIAL COUNCIL

ARTSRUN AVAGYAN - Doctor of Philology, Professor, Dean of the Faculty of Philology of YSU.

ARMEN AVANESYAN - Candidate of Philological Sciences, Senior Researcher at the Institute of Literature after M. Abeghian of NAS of RA.

VALERI AVANESYAN - Doctor of Historical Sciences, ASU Vice-rector.

LILIT ARZUMANYAN - Doctor of Philology, Professor, Rector of Yerevan State Institute of Theatre and Cinematography.

DAVIT BABAYAN - Doctor of Historical Sciences, Minister of Foreign Affairs

AMALYA GRIGORYAN - Candidate of Philological Sciences, Docent, Director of Lutovica and Agob Aintablean Western-Armenian and Armenology Research Centre at Stepanakert «Grigor Narekatsy» University, in charge of Quality Assurance.

VARDAN DEVRIKYAN - Doctor of Philosophy, Rector at the Institute of Literature after M. Abeghian of NAS RA.

AZAT EGHIAZARYAN - Doctor of Philology, Professor, Head of the Armenian Language and Literature Chair at Armenian-Russian University.

LUSINE TOVMASYAN - Candidate of Philological Sciences, Associate, Lecturer of Foreign Language at Stepanakert «Grigor Narekatsy» University.

SEVAK HAKOBYAN - Candidate of Law Sciences, Vice-Rector for Scientific-International Cooperation at Stepanakert "Grigor Narekatsy" University

PEDROS DER-MATOSSIAN-Doctor in Historical Science, Professor in the University of Nebraska-Lincoln, The United States of America, President of the Society for Armenian Studies

ALEXANDR MANASYAN - Doctor of Philosophy, Corresponding Member of NAS RA, Professor of the Chair of Theoretical Philosophy and Logic of YSU.

SIRANOUSH MARGARYAN - Candidate of Philological Sciences, Scientific Secretary at the Institute of Literature after M. Abeghian of NAS RA.

EDUARD MKRTCHYAN - Doctor of Philology, Professor, Lecturer of Armenian Language and Literature Chair at Stepanakert "Grigor Narekatsy" University

HOVIK MUSAELYAN - Doctor of Philosophy, Lecturer of the the Literature and Journalism Chair at ASU.

SAMVEL MURADYAN – Doctor of Philology, Professor, YSU, Head of the History of Armenian Literature Chair named after Academician Hr. Tamrazyan.

ARQMENIK NIKOGHOSYAN - Candidate of Philological Sciences, Senior Researcher at the Literature Institute after M. Abeghian of NAS of RA.

PETER QAU- Narekatsi Professor of Armenian Studies at UCLA, Doctor in Philological Sciences (Los Angeles, California), Professor, Armenologist.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
Գրականագիտություն

Անի Շիրինյան

Եղիշե Չարենցի վաղ շրջանի ստեղծագործությունը 15

Զինաիդա Բալայան

Գրողի նորարարությունը «Գիրք ճանապարհի» գրքում.

Փիլիսոփայություն և գեղագիտություն 21

Սուրեն Դանիելյան

Գրամշակութային միասնության նշանաբանով 30

Սոկրատ Խանյան

Արցախի գեղարվեստական պատկերը Վարդան Հակոբյանի պոեզիայում 35

Արքմենիկ Նիկողոսյան

Աբրահամ Երևանցիի և նրա «Պատմություն պատերազմացն» երկը 44

Մանուշ Բալայան

Ռ. Հատտեճյան. Կերպարի բացահայտման սահմանները 54

Արթուր Միրզոյան

Լիմինալությունը Հրանտ Մաթևոսյանի «Կայարան» պատմվածքում 61

Հովիկ Մուսայելյան

Բառիմաստների փոխներթափանցման տիպաբանությունը բանաստեղծական տեքստում 69

Լեզվաբանություն

Լուսինե Աւետիսեան

«Արկանք» երգի գաղափարական և ձևախմբաբանական յենակետերը 76

Էդուարդ Մկրտչյան

Հայոց գրերի ստեղծումն՝ ըստ կենսագիր Կորյուն Վարդապետի 90

Լուսինե Թովմասյան

Հոետորական հնարքները հեքիաթի պատումում (հատուկ հղումով չափազանցությանը) 98

Մանկավարժություն

Լիանա Սանթրյան

Հիբրիդային ուսուցման արդյունավետության բարձրացման ուղիները 106

Արմինե Բաղդասարյան

Բարձրագույն կրթության ռազմավարական ուղղություններն ու նրա հիմնարար արժեքները 114

Պատմություն

Էլինա Մխիթարյան

Ռուս-հայկական հարաբերությունների զարգացման ակունքները ռուսական պատմագիտության մեջ 119

Տնտեսագիտություն

Զավեն Մելիքջանյան

Օտարերկրյա ուղղակի ներդրումների առնչությամբ ՀՀ-ի ներդրումային ճիշտ քաղաքականության մշակումը որպես տնտեսական աճի գրավական 128

Աշխատաշուկայի առկա վիճակը, միտումներն ու զարգացման հեռանկարները Հայաստանում 135

Քաղաքագիտություն

Ալեքսանդր Մանասյան

Արևմուտքը պատասխանատվություն է կրում Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված պատերազմի համար 144

Մարտին Աղաջանյան

Քաղաքական զարգացման հրամայականները հանրային քաղաքականության համակարգի արդիականացման բաղադրիչ 149

СОДЕРЖАНИЕ

Литературоведение

Ани Ширинян	
Ранние произведения Егише Чаренца	15
Зинаида Балаян	
Нововведение писателя в книге «Книга дорог». Философия и эстетика	21
Сурен Даниелян	
Под девизом культурно-письменного единства	30
Сократ Ханян	
Художественный образ Арцаха в поэзии Вардана Акопяна	35
Аркменик Никогосян	
Абраам Ереванци и его творчество «История войн»	44
Мануш Балаян	
Р.Атечян раскрытие границ образа	54
Артур Мирзоян	
Лиминальность в рассказе Гранта Матевосяна «Станция»	61
Овик Мусаелян	
Типология взаимопроникновения семантики слов в поэтическом тексте	69

Языкознание

Лусине Аветисян	
Идейные и семантические основы песни " Жернова "	76
Эдуард Мкртчян	
Создание армянского письма по биографу Корюну Вардапету	90
Лусине Товмасян	
Риторические тропы в сказочном нарративе (с особой ссылкой на гиперболу)	98

Педагогика

Лиана Сантрян	
Способы повышения эффективности гибридного обучения	106
Армине Багдасарян	
Стратегические направления высшего образования и ее основные ценности /из наблюдений педагога/	114

История

Элина Мхитарян	
Истоки развития русско-армянских отношений в русской историографии	119

Экономика

Завен Меликджанян

*Рработка правильной инвестиционной политики Республики Армения в
отношении прямых иностранных инвестиций как гарантия экономического роста ... 128*

Текущее состояние рынка труда, тенденции и перспективы развития в Армении 135

Политическая наука

Александр Манасян

Запад несет ответственность за войну против Нагорного Карабаха 144

Мартин Агаджанян

*Императивы политического развития как составляющая модернизации
системы государственной политики 149*

CONTENT

Literary Criticism

Ani Shirinyan

Early works of Eghishe Charents 15

Zinaida Balayan

The writer's innovation in the book "The book of roads". Philosophy and Aesthetics 21

Suren Danielyan

With the Motto of Literary-Cultural Unity 30

Sokrat Khanyan

The Artistic image of Artsakh in Vardan Hakobyan`s poetry 35

Arqmenik Nikoghosyan

Abraham of Yerevan and his work "History of Wars" 44

Manoush Balayan

R. Haddeciyan The Limits of Discovering a Character 54

Arthur Mirzoyan

Liminality in the Short story "Station" by Hrant Matevosyan 61

Hovik Musayelyan

Typology of Mutual transfer in Poetry text 69

Linguistics

Lusine Avetisian

The ideological and semantic concept of the song "Arkanq" 76

Eduard Mkrtchyan

Creation of Armenian Letters According to the Biographer Koryun Vardapet 90

Lusine Tovmasyan

Rhetorical tropes in fairy tale narrative (With special reference to hyperbole) 98

Pedagogy

Liana Santryan

Ways to increase the effectiveness of hybrid learning 106

Armine Baghdasaryan

*Strategic directions of higher education and its core values
/ from the pedagogue's observations /* 114

History

Elina Mkhitarian

*The origins of development of Russian-Armenian relations in Russian
Historiography* 119

Economics

Zaven Melikjanyan

*Development of the correct investment policy of the republic of Armenia
in relation to Foreign direct Investment as a Guarantee of Economic Growth 128*

Current state of the Labor market, Trends and Development prospects in Armenia 135

Political science

Alexander Manasyan

The West is Responsible for the war against Nagorno-Karabakh 144

Martin Aghajanyan

*The Imperatives of political development as a component of the
Mmodernization of the Public Policy system 149*

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՅԻ ՎԱՂ ՇՐՋԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Չարենցի վաղ շրջանի ստեղծագործություններում գերակշռող են հեթանոսական և խորհրդապաշտական թեմաները, սակայն, կան գործեր, որտեղ դրանք զուգահեռվում են աստվածաշնչյան մոտիվների հետ: Իրական աշխարհում հոգեպես անպաշտպան լինելու զգացողությունը, երազանքների և իրականության հակասությունը, ես-ի ինքնաճանաչման մղումը բանաստեղծին տանում են դեպի մարդկության ակունքները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրիստոնեության նախահիմքերում առկա են հեթանոսական որոշակի դրվագներ, տարրեր, պատահական չեն բանաստեղծի երկերում դրանց միասին ու իրար կողքի հանդես գալը:

Բանալի բառեր. հոգեկան երերուն տրամադրություններ, հեթանոսական շունչ, դիցաբանություն, տեսիլ, փնտրումներ, քրիստոնեական խաչ, Աստված, հոգու աչք, լուսաթև հրեշտակներ, էություն, սուրբգրային հիմքեր:

Բարդ ու հակասական էին Չարենցի⁸ դեպի ստեղծագործության բարձունքները տանող ճանապարհները: Դեռևս վաղ շրջանից էր բանաստեղծի բախումը միջավայրի հետ: Նա կորցրել էր մանկությունը, ծննդավայրը, ընկերներին: Հոգին այլևս խոցված էր իրական հայրենիքի որոնման ճանապարհին: Տավիղը ծարավ էր հնամյա ավանդություններով ու առասպելներով հյուսված վիրավոր հայրենիքին: Հայրենի հնամյա թախիծը բանաստեղծին ավելի խորաթափանց ու նրբագգաց էր դարձրել: Տրտում ու անլույս օրերը Չարենցի մեջ հիասթափություն են ծնում: Նա ապրում էր ճշմարտությունը գտնելու անհանգիստ ձգտումներով, որոնում էր կյանքի հետ մերձավորություն գտնելու ուղիներ, ձգտում էր վերադառնալ ակունքներին:

Չարենցի պոեզիան համակվում է կյանքն օրհներգող հնչյուններով. «...Ու պե՛տք է քայլե՛լ ու քայլե՛լ համա՛մ // Ապրելու հսկա տենչը բեռ արած»: Բանաստեղծը արարում է իր հոգևոր աշխարհը՝ կախարդական ու զուևագեղ: Կենսական փաստերը ձուլվում են կարդացածին՝ բոցավառելով պատանու ոգին: Չարենցը հասկանում է, որ իրական գեղեցկությունները ծածկված են ստվերներով: Նա ամբողջ հոգով, իր ամբողջ էությամբ ձգտում էր տեսնել ստվերների այն կողմը: Ու նա կարողում էր, կարողում՝ նվաճելով ու սեփականացնելով ուրիշ աշխարհներ. «-Օ՛, գրքերի աշխարհը-տիեզերք է անեզր»:

Չարենցի առաջին կուռքը գիրքն էր, որին չղավաճանեց մինչև կյանքի մայրամուտ: Նա միանգամից կոփվեց ու հասունացավ և, բարձրանալով միջավայրից, սկսեց փնտրել «հավերժականի ուրվականին»: Առանց երկմտելու նա նետվեց հորձանքի մեջ՝ ստեղծելով մեծ ու մնայուն կտավներ (այդ է՞րբ նա հասցրեց թրծվել):

Վաղ շրջանի բանաստեղծական շատ պատկերների համար բնորոշ է երազանքների և իրականության հակասությունը: Էդ. Թոփչյանը շեշտում է, որ վաղ շրջանի «Չարենցի պոեզիան կյանքից հեռանալու երգ չէր, այլ լուսավոր կյանքի անհագուրդ կարոտ, իսկական բերկրանքի որոնում: Նա երագում էր արևի ոսկին, կապուտաչյա երջանկության առասպելը, նա անցնում է հարդագողի ճամփան՝ երագած աշխարհը հասնելու համար, բայց բուրժուական բիրտ ու անմարդկային կյանքի պայմաններում նրա երագները խորտակվում էին, և

բանաստեղծի հոգին լցվում էր թախիծով և հուսահատությամբ»¹:

Հոգեկան երերուն տրամադրությունները նախադրյալներ են ստեղծում, որպեսզի Չարենցն արձագանքի սիմվոլիստների բանաստեղծական զգացողություններին: Բնութագրելով այս ժամանակաշրջանի պոեզիան՝ Մ. Գորկին գրում է. «Պեսիմիզմ և լիակատար անտարբերություն իրականության նկատմամբ, կրքոտ պոռթկում դեպի վեր՝ դեպի երկինք և սեփական անգործության գիտակցություն: Բանաստեղծների մոտ թների բացակայության որոշակի զգացողություն, նրանց սրտերի մեջ սուրբ հոգու բացակայություն, - ահա մեր նոր պոեզիայի հիմնական նոտաներն ու թեմաները»²:

Չարենցի պատանեկան լիրիկան լի է միստիկական նախազգացումներով: Հենց սկզբից նրա պոեզիայում զգացվում է հեթանոսական շունչը: Մական հենց սկզբից էլ երևացող է բանաստեղծի երկվությունը.

Ես ուզեցի երգել գովքը ասածու,

Երգել փառքը պայծառ սիրո ու հացի,

Սիրտս լցվեց... բայց չգիտեմ, թե ինչու

Գորշ օրերի տաղտկությունը երգեցի: (I, 24)

Չարենցի վաղ շրջանի ստեղծագործությունը հարուստ է դիցաբանական վերաիմաստավորված կերպարներով, որոնց դիմելու համար բանաստեղծն ուներ իր շարժառիթները: Գրականության մեջ իշխող սիմվոլիստիկական բանաստեղծին ստիպում է նայել ավելի խորքերը. այդպիսին էր նա բնույթով՝ ամեն ինչ ուսումնասիրել խորությամբ, ամեն ինչ՝ կատարելության մեջ: Լինելով միշտ մարդու հետ ու մարդու մեջ, լինելով մշակույթի անհրաժեշտ օղակներից մեկը՝ դիցաբանությունը կարող էր տալ բանաստեղծի առաջ ծառացած մի շարք հարցերի պատասխաններ: Չարենցին դեպի մարդկության ակունքներն են տանում ես-ի ինքնաճանաչման մղումը, իրական աշխարհում հոգեպես անպաշտպան լինելու զգացողությունը: Կարևորագույն շարժառիթ էր մահահոտ ու արնավառ ժամանակաշրջանը, երբ կողմնորոշվելը բերում էր լինել-չլինելուն, երբ օրերն իրենք են մարդուն տանում այն աշխարհի կամ այնաշխարհը բերում ծառացնում մարդու առաջ՝ որպես արևածագ՝ փշրված հայելու մեջ: Դիցաբանության՝ որպես ժողովրդի միասնական ստեղծագործության մեջ է բանաստեղծը փորձում հաղթահարել իր «անհատապաշտությունը»:

Կյանքն ինքնին հակասական ու անբնական ընթացք ուներ, ինչը չէր կարող չանդրադառնալ բանաստեղծի տրամադրություններին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրիստոնեության նախահիմքերում առկա են հեթանոսական որոշակի դրվագներ, տարրեր, պատահական չեն բանաստեղծի երկերում դրանց միասին ու իրար կողքի հանդես գալը: Երազների ու տեսիլների պատկերային համակարգը տեղ է գտել «Երեք երգ»-ում, որն ունի «...Եվ այդ վերջին սերն է վաղնջական գիշերվա» („Et c'e'tait le dernier amour du soir antique...") բնաբանը՝ քաղված ֆրանսիական բանաստեղծ Ալբերտ Մամենի «Անավարտ պոեմներ» շարքի «Ամենտի» բանաստեղծությունից: Չարենցն «Ամենտի» բառի բացատրությունը տվել է որպես մայրամուտային, անորշիբիմյան եզերք՝ եզիպտական միֆոլոգիայում³: Հենրիկ Էդոյանն այն մեկնաբանում է որպես «հին եզիպտացիների դիցաբանական «դրախտը», ուր մարդը գտնում է «կյանք» և «հանգստություն»⁴: Չարենցի ստեղծագործություններից մեկում անորշիբիմյան «Ամենտի»-ն գտնվում է երկնքում.

Բայց շուրջս թող որքան կուզե աշխարհը այս խնդա, ցնդի -

¹ Գրական թերթ, 1957, թիվ 37:

² М. Горький, Соч. т. 23, стр. 122.

³ Եղիշե Չարենց, Ծիածան, Մ., 1917, «Պագեղներ» բաժնի նախավերջին գագելի (24) ծանոթագրությունը:

⁴ Հ. Էդոյան, Եղիշե Չարենցի պոետիկան, Երևանի համալս. հրատ., Եր., 1986, էջ 176:

Ես - հաշմանդամ ու խելագար ու հավիտյա՜ն վտարանդի՝

Դեպի երկի՜նք պիտի գնամ, դեպի եզերքը Ամենտի -

Իմ բա՜րձր, հին ու աստղային երազների ճանապարհով... (I, 298)

«Ամենտի եզերքը» նաև բանաստեղծի ստեղծագործություններում հիշատակվող «Կապույտ երկիրն» է, «բարձրագույն ոլորտը», «այն Կայանը», ուր ձգտում է հասնել մինչև անգամ «անմարմին, անտես», մահվան ու զոհաբերության միջոցով: Մա երկնային այն ոլորտն է, որտեղ պիտի իրականան բանաստեղծի երազները.

Քեզ կհասնեմ, քո՛ւյր իմ, ես - Ամենտի երկրում,

Երբ հուշ դարձած կքնես - Ամենտի երկրում... (I, 122)

«Երեք երգ»-ի բանաստեղծական պոեմեն ունի ինքնակենսագրական-ինքնամեկնաբանական հիմք: Ե՛վ ժամանակագրական առումով, և՛ հոգեբանական անդրադարձումներով սրա շարունակությունն է կազմում «Հրո երկիր» շարքը: Բոլոր դեպքում սերն է մնում մարմնի և հոգու միասնության, բնության հավերժությանը ձուլվելու միակ հնարքն ու եղանակը: Բանաստեղծը չի ցանկանում, որ իր ցնորք-աղջիկը աննյութական վիճակից մարմնանա ու մնա այդպես՝ մարմնեղեն, երկրային: Նա հմայված է հրաշքով, թող որ՝ անհասանելի...

Մարմնի և հոգու պառակտվածության ու միավորման չարենցյան բանաձևը միֆոլոգիական տեսանկյունից հանգամանորեն մեկնաբանել է Հ. Էդոյանը. «Ողջակիզումը» կապված է «մարմնի ու հոգու» հետ, որոնք, որպեսզի «ողջակիզվեն», պետք է անցնեն իրենց հակադիր վիճակներին՝ մարմինը «աննյութանա» և հոգին՝ «նյութանա». Այսինքն՝ մարմինը դառնում է «հոգի», և «հոգին» դառնում է «մարմին»: Հոգին «վերամարմնավորվելով» ձգտում է աշխարհ, մարմինը ձգտում է աշխարհից դուրս: «Կերպարանափոխությունների», «հրաշք դառնալու», «նյութանալու» և «աննյութանալու» արժեքավորումը կատարվում է «լուսավոր» մակդիրով, որը կապված է «Արևի» հետ»⁵: Մարմնի և հոգու փոխակերպումը գրականագետը դիտարկում է հեթանոսական տեսանկյունից: Բանաստեղծը ձգտում է հոգու և մարմնի ներդաշնակության, հաշտության: Հոգին մարդու կամքի դրսևորման տարածքն է: Մարմնի և հոգու պառակտվածությունը հատուկ է քրիստոնեական պատկերացումներին՝ մեկը մյուսի ժխտումն է. «Որովհետեւ մարմինը ցանկանում է հոգուն հակառակ, եւ հոգին մարմնին հակառակ. եւ սորանք իրար հակառակ են, որ մի գուցէ այն որ դուք կամենում էք՝ այն անէք» (Պօղոս առաքելի թուղթը առ Գաղատացիս, Ե - 17): Աստվածաշունչը մահը սահմանում է, երբ բաժանվում են հոգին ու մարմինը: Ազատ կամքը հնարավորություն է տալիս, որ մարդը ճիշտ ընտրություն կատարի: «Բայց տեսնում եմ ուրիշ օրէնք իմ անդամներումը՝ որ իմ մտքի օրէնքի դէմ պատերազմում է, եւ ինձ գերի է բռնում այն մեղքի օրէնքովը, որ իմ անդամներումն է (Պօղոս առաքելի թուղթը առ Հռովմայեցիս, Է - 23):

«Կապուտաշյա հայրենիք»-ում, թեև հեթանոսական են տրամադրությունները, այնուամենայնիվ, քրիստոնեական խաչը բանաստեղծին ստիպում է մի պահ կանգ առնել.

Ու լուռ էր այնպես: Հեռու-հեռում

Մի հազարամյա վանք էր երևում:

Փայլում էր ոսկին հնամյա խաչի-

Եվ ես կանգ առա նրա առաջին: (II, 10)

Անապատային հին լռության մեջ կար մի սպասում. «Կարծես թե մեկը այցի պիտի գար»: Ու այդ «անիմանալի գոյության ճախրումը» ստիպում է բանաստեղծին ծնկի գալ՝ աղոթքներով լցված, հավատալ, «որ կա, կգա, կլինի...»: Նշենք նաև, որ նման պատկեր կա «Դանթեական առասպելի» նախնական տարբերակում ևս.

Տեսանք հեռում ոսկի գմբեթներ՝

⁵ Նույն տեղում, էջ 254:

Արևի պես վառ, Արևի պես հին,
Խաչակնքեցինք բաց կրծքերը մեր,
Եվ նորից խնդաց մեր ջահել հոգին: (II, 316)

Խաչակնքման սովորությունն այնքան հին է, որքան քրիստոնեությունը: Խաչակնքումը հոգու աղոթքն է՝ ուղղված Արարչին, խաչի զորությունը Քրիստոսն է: Պողոս առաքյալն ասում է. «Որովհետև խաչի խօսքը կորածների համար յիմարտիւն է, բայց մեզ՝ փրկուածներիս համար Աստուծոյ զօրութիւն է» (Կորնթացիս Ա, Ա-18): Ինչպես մի շարք այլ գործերում, «Կապուտաչա հայրենիքում» ևս զուգահեռվում են հեթանոսականն ու քրիստոնեականը: Տեքստային տարբերություններում հեռավոր վանքի ոսկեկատար խաչը ցավ ու հառաչանք է խորհրդանշում՝ ամենուր խավար ու լռություն սփռելով: Եվ ահա պայթում է սպասումը. պատկերված է Արևի ու Խավարի հակադրությունը.

Եվ այդ լուսավոր փեռքը Արևի
Պատռեց խավարի մորթին անթափանց.
Առանց արցունքի, առանց բարևի
Հեռացավ այն գող Խավարը վաղանց... (II, 312)

Այն հանգամանքը, որ այս շրջանում Չարենցն առանձնապես տարված չէր քրիստոնեական հավատով, թույլ է տալիս մեզ ենթադրելու, որ Արևը հեթանոս աստվածությունն է, տվյալ դեպքում՝ Վահագնը, որի հետ իր հույսերն է կապում բանաստեղծը, իսկ Խավարը, որը նույնպես մեծատառով է գրված, քրիստոնեական աստծուն է վերաբերում: Իսկ հինավուրց վանքը, որի գմբեթին ոսկեփայլ խաչ է, իրականում «Հայրերի բազինն» է՝ հեթանոսական տաճարը: Ո՞ւմ է աղոթում Չարենցը տաճարում... Բազմաթիվ օրհնություններից նա փառաբանություն է ուղղում նաև «գթառատ Աստծուն», իսկ այնտեղից դուրս է գալիս՝ լցված «Հավատով, սիրով ու հույսով հսկա»: Այս եռամիասնության մասին ընթերցում ենք Պողոս առաքյալի թղթերում. «Ապա ուրեմն մնում է հաւատք, յոյս, սէր. այս երեքը եւ սորանցից մեծը սէրն է» (Կորնթացիս Ա, ԺԳ - 13): Բանաստեղծին էլ այստեղ է բերել «Մեծ Հույսը».

Ողջո՞ւյն, Վանահայր... Եկել եմ ահա
Վանքիդ մեջ հոգուս էն աղերսելու... (II, 312), (ընդգծումը մերն է):

Զգալով «Նրա շունչը» վանքի մեջ՝ բանաստեղծը խոստովանում է. «Հսկել է Նա իմ երագներին էն»: Աստծո ներկայությունն, առհասարակ, միշտ արտահայտվում է գոյության, լինելիության հարաբերակցության մեջ: Սուրբ Գրքում Աստծո ներկայությունը միշտ առնչվում է մարդու գոյության հետ, ուստի անվան իմաստն էլ պետք է որ բխի այդ էությունից: Զանազան հին գրություններում (ուղերձներ, նամակներ, կոնդակներ) սկզբում գրվում էր գլխատառ է, որ նշանակում էր Աստված, Աստծով, հանուն Աստծու: Ուրեմն՝ Աստծու անունն է է կամ ԵՄ՝ իբրև միշտ եղողի, այսինքն՝ ինքնագոյություն, աստվածային անսահմանություն: Իսկ ընդհանրապես պե՞տք էր Աստծուն անուն ունենալ. չէ՞ որ նա միակն է, եզակին, անկրկնելին: Ու հենց «անուն» բառի ստուգաբանության մեջ ինչ-որ չափով կա դրա պատասխանը: Հակոբ Գաբրիել Ավետիքյանը տալիս է այն ուն կամ էն ուն ստուգաբանությունը՝ որպես էություն ունեցող, գոյացած, կենդանի, քանի որ՝ ըստ նրա, անուն դրվում է գոյացած բանին, և ոչ թե չեղածին: Գաբրիել Ավետիքյանը, հիմնվելով «Յաճախապատում ճառք»-ի հետևյալ հատվածի վրա՝ «Բնութեանցն երկուց» երկու անուանք պիտոյանան, որ որոշեն զնոսա ի միմեանց, և անուանցն՝ բնութիւնքն պիտոյ են՝ որ կային ունէին զանուանսն», նշում է, որ մարդիկ հնարեցին անունը երկու պատճառով՝ «մէկ մը գոյացած եղած բանը նշանակելու, մէկ մալ բան բանէ որոշելու, զատելու համար»⁶: Ուրեմն, տվյալ պարագայում Աստված իր անունը հայտնում է ոչ իբրև զանազանելու միտումով, այլ բացահայտելու իր բուն էությունը:

⁶ Հ. Գ. Ավետիքեան, *Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815, էջ 191*:

20-րդ դարասկզբի հեթանոսական շարժման կարկառուն առաջնորդ Դ. Վարուժանն իր ստեղծագործություններից մեկում անդրադարձել է Է-ի խորհրդանշական իմաստին.

Կուզեմ ծովուն հետ սիրտ սըրտի ես հարիլ,
Իմ անհունիս մեջ այդ անհունը թաղել,
Բուռն իղձն ունիմ մըրըրկին հետ մաքառիլ,
Եվ գլուխս՝ Էին գաղտնիքներուն դեմ բախել⁷:

Հետաքրքրական են 19-ամյա Վարուժանի գրառումները. «Սկսյալ հյուլեե մը, նշանախեցիե մը ավելի մեծ չափով և ավելի ընդարձակությամբ մարմիններ կը պարփակե այս տառն իր մեջ: Թե կենդանի և թե անկենդան բնությունը հոն են՝ իրենց ամեն փնտրվոյն ու գոյնէրովը⁸: Ապա նա մեջբերում է Շաթոպրիայի խոսքերը. «Ամեն ջանք ընդունայն պիտի ըլլա գԱստված բացատրելու, բավական է ըսել՝ Է...»⁹:

Է Աստծուն հանդիպում ենք նաև Գրիգոր Նարեկացու տաղերում: Նարեկացու «Ի յարութիւնն Ղազարու» տաղում ընթերցում ենք. «Էն է ինքնէն ի միշտ Էն է»¹⁰: Ի վերջո, բացենք Աստվածաշունչը. «Եւ Աստուած ասեց Մովսէսին. Ես եմ ՈՐ ԵՄ. Եւ ասեց. Այսպէս ասիր Իսրայէլի որդիներին. Ինձ ԵՄը ուղարկեց ձեզ մօտ: Նաեւ Աստուած ասեց Մովսէսին. Այսպէս ասիր Իսրայէլի որդիներին. Ձեր հայրերի Եհովայ Աստուածը՝ Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը եւ Յակոբի Աստուածը ինձ ձեզ մօտ ուղարկեց, այս է իմ անունը յավիտեան, եւ այս է իմ յիշատակը ազգից ազգ» (Ելից, Գ - 14-15):

Բայց ահա նորից հեթանոսականը գալիս է՝ խառնվելու մոտիվներին. «Ունեմ հազար զոհաբերում ու բարիք // Քո գրկառատ ու հեթանոս Աստծուն»: Ստեղծագործության ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրելու, որ այն դարձի յուրահատուկ մի կոչ է դեպի հեթանոսություն. «մեզ աստվածներն են կանչում...»: Բոլոր դեպքերում պոեմն ավարտվում է հեթանոս հարսանիքով:

Չարենցի վաղ շրջանի ստեղծագործություններում նորից ու նորից մարմնի և հոգու, կյանքի և մահվան հավերժական պայքարն է: Մահն իր անդիմակ երեսով դարձել էր սարսափելի իրականություն, առօրյա: Գունագրկվում էին բարոյական արժեքները: «Մի սպանիր»-ի հետևորդը կարծես ինքնարդարացում է փնտրում՝ ստանձնելով պաշտպանվողի դերը՝ «Մեռցնում էինք - ապրելու համար...»:

«Ազգային երազ»-ում մերթ ընդ մերթ լսելի է եկեղեցու զանգերի ձայնը, ինչը մեր հոգևոր կյանքում հստակ առաքելություն ունի. այն մեզ համար արթնության, զգաստության կոչ է: Հնուց ի վեր եկեղեցու զանգերը նախատեսված են ժողովրդին ժամերգության կամ պատարագի հրավիրելու, կարևոր իրադարձություններն ազդարարելու համար: Զանգերի կանչը հայոց ժողովրդին փրկելու գնացող հոծ բազմություն է հավաքում.

Խավար գիշերի գրկում ահավոր
Քայլում էր նրանց խումբը թևավոր,
Գնում էր դեպի երկիրը հրի -
Մի խումբ էր կարծես հրեշտակների... (II, 57)

Աստվածաշնչյան հատվածներում խոսվում է մարդկային տեսքով հայտնված հրեշտակների մասին, որոնք, սակայն, առանձնանում են ոչ թե թևեր ունենալու հատկությամբ, այլ նրանով, որ սպիտակ հանդերձներով են, ու նրանցից լույս է ճառագում. «Եւ դեռ որ նորանք աչքերը ուղղած մտիկ էին տալիս դեպի երկինքը նորա գնալիս, ահա երկու մարդիկ երեւեցան

⁷ Դ. Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Եր., ՀՍՍՀ ԳԱ, 1986, էջ 13:

⁸ Դ. Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Եր., ՀՍՍՀ ԳԱ, 1987, էջ 17:

⁹ Նույն տեղում, էջ 18:

¹⁰ Գ. Նարեկացի, Տաղեր, Եր., 2013, էջ 59:

նորանց սպիտակ հանդերձներով» (Գործք Առաքելոց, Ա-10): Վստահաբար կարելի է ասել, որ լուսեղեն լինելու պարագան կապված է նաև նրանց ճերմակ հանդերձների հետ. «Եւ եղաւ երբոր նորա համար շատ հիացել էին, ահա երկու մարդ հասան նորանց լուսաւոր հանդերձներով» (Ղուկաս, ԻԴ-4):

Հեթանոսական և աստվածաշնչյան մոտիվների զուգահեռ գործածություններ ունեն Չարենցի այլ գործեր ևս, որոնց կանոնադաշտնաձև մեր հետագա հոդվածներում:

РАННИЕ ПРОИЗВЕДЕНИЯ ЕГИШЕ ЧАРЕНЦА - АНИ ШИРИНЯН - В ранних произведениях Чаренца доминируют языческие и мистические темы, но есть работы, где эти темы пересекаются с библейскими мотивами. Чувство духовной незащитности в реальном мире, противоречие мечты и реальности, стремление познать собственное "я" приводят поэта к истокам человечества. Принимая во внимание тот факт, что в христианстве присутствуют некоторые языческие компоненты и элементы, неслучайно, что в произведениях поэта эти темы находятся в тесной взаимосвязи.

Ключевые слова: *Духовные зыбкие настроения, языческое дыхание, мифология, видение, искания, христианский крест, Бог, глаза души, светлокрылые ангелы, сущность, библейские основы.*

EARLY WORKS OF YEGHISHE CHARENTS - ANI SHIRINYAN- The pagan and mystical topics dominate in Charents's early works, but there are works where they are paralleled with biblical motives. The desire to be spiritually defenseless in the real world, the desires of the reality and the contradiction of the reality, the self-awareness of the poet leads to the origins of humanity. Taking into consideration the fact that certain episodes and elements of pagan times are present in early basis of Christianity, their side by side presence is not coincidental in the writings of the poet.

Key words: *Soul hesitating moods, pagan spirit, epic poem, mythology, vision, searches, Christian cross, Lord, soul eye, light wing angels, nature, scriptural basis.*

**ԳՐՈՂԻ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ «ԳԻՐՔ ՃԱՆԱՊԱՐԻ» ԳԻՐՔՈՒՄ.
ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆ ԵՎ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

Եղիշե Չարենցի «Գիրք ճանապարհի»-ն 30-ական թթ. խորհրդահայ գրականության եզակի ու համապարփակ երևույթներից է: Առանձնանում է տիպաբանական առանձնահատկություններով, բազմաշերտ է, բազմաբովանդակ, բազմադեմ, բազմանշանակ, հայ և համաշխարհային գրականության մեջ՝ ժանրի տեսանկյունից՝ տարաբնույթ ու բացառիկ դրսևորումներով ակնառու և, ըստ այդմ էլ, պահանջում է մի գնահատականի մեջ չտեղավորվող գրականագիտական գնահատություն:

Բանալի բառեր. *փիլիսոփայություն, գեղագիտություն, հայ գրականություն, ժանր, գրականագիտական գնահատություն, «Նորք», Եղիշե Սողոմոնյան, Հայաստան, բանավեճ:*

Եղիշե Չարենցի ստեղծագործության մեջ կատարողական արվեստի ամրակուռ կառուցվածքով, ներկայացրած թեմաների բազմազանությամբ, ժամանակներին՝ անցյալի, ներկայի ու ապագայի մարդկանց (հայ և օտար ազգության) բանավեճով դիմելու, նրանց հետ մեծ երկխոսություն բացելու եզակի օրինակով, փիլիսոփայական անցումների մեկնաբանմամբ, տարբեր ժամանակների գրական երկերի, գրական, մշակութային գործիչների կերպավորմամբ ու նրանց վիթխարի ու տաղանդաշատ երկերի քննական անդրադարձներով, արտահայտչամիջոցներով, բանաստեղծի քաղաքացիական ու ստեղծագործական կերպարի հզոր ներկայությամբ, խոսքարվեստի նորարարական ձևայիններով, հայ ժողովրդի պատմության քաղաքական ու ողբերգական, դատասիկ անցքերի գեղարվեստականացմամբ առանձնանում է նրա վերջին ՄԱՏՅԱՆԸ ...

«Գիրք ճանապարհի»...

Հայ ժողովրդի ազգային գաղափարաբանության, ազգային փիլիսոփայական տիեզերական ընդգրկումների, ազգային իմաստասիրական խոր ու անպարփակ չափումների, ազգային հզոր ու մաքրամաքուր մենթալիտետի (մտախառնվածքի), ազգային գոյաբանության, քերթողական անկրկնելի ու աստվածային արվեստի, գեղագիտական բարձրադեմ քննումների, անթարգմանելի ու ողբազանգակ կորուստների, ամրակոփ հաղթանակների ու անդիմադրելի ու սահմոկեցուցիչ կոտորածների, արյան ու արտասուքի, մղձավանջների օվկիանափրփուր պղտոր գալարումների, ազատության աննախադեպ ոգորումների, հերոսապատումների, մարդկային անսթափ ու ստրկահաճո գազրումների, անմիաբանության ու սարսափազդու մատնությունների, անբեկանելի խիզախումների **ԱՄԵՆԱՄԱՏՅԱՆ**՝ թերթերն իր իսկ ժողովրդի արյան որդան կարմիրով երիզված, **ԱՄԵՆԱՄԱՏՅԱՆ**՝

հայ և համաշխարհային փիլիսոփայական մտքի, պարադիգմաների բարձրակետերին աղերսող, անհասանելի ու գերազանցող, գեղագիտական ու բարոյագիտական կոնցեպցիաների ամրադուր հանդիսացող, եզակի գեղարվեստական ընդգրկումներով շաղախված **ՄԱՏՅԱՆ**:

«Գիրք ճանապարհի՛»...

Գեղարվեստի զարմանահրաշ, ունիկալ նմուշ՝ ազգային և համազգային համապարփակ ու ամբողջական ընդգրկումներով՝ գրականագիտական, մեթոդաբանական, ժանրային նորանոր բանաձևումներով՝ նորարարական կնիքով հաստատված թե՛ թեմատիկ անսովոր ընդգրկումներով, թե՛ կերպարաստեղծ համակարգով, թե՛ սիլլոգիկով՝ պատճառահետևանքային կապերի թեժությամբ՝ պարոդքսալ բևեռացումներով, հաստատումներով, հերքումներով, թե՛ հայ ժողովրդի անկրկնելի հանճարի ու անմեկնելի ոգու ֆենոմենոլոգիայի բացահայտմամբ՝ անցյալի, ներկայի, ապագայի հայ մարդուն՝ սերմնացանին, իմաստասեր արվեստագետին, դպրանախշ մանրանկարիչներին, գանգրահեր պարմանիներին, մատենագիր դպիրներին, հայրենապահ ֆիդայիներին, նվիրյալ մարտիկներին պատգամված՝ հզորագոր ուղերձներով և անհերքելի՝ **«... ՈՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ՔՈ ՄԻԱԿ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՔՈ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ Է» ՊԱՏԳԱՄՈՎ** կնիքված...

«Գիրք ճանապարհի՛»...

ԱՄԵՆԱՄԱՏՅԱՆ՝ հայ և համաշխարհային մտքի թռիչքների, միմիայն հանճարամիտ ՉԱՐԵՆՑԻ անգերազանցելի գրչին հատուկ իրոնիայով՝ երգիծանքի ծալ-ծալ շերտերով, իր իսկ պայծառ ու ողբերգական կերպարին հատուկ խորագույն խոհ ու խորհրդով, կուռ տրամաբանությամբ, գեղարվեստական նորանոր ու հարուստ արտահայտչամիջոցներով մարգարտահյուսված, չարամիտ մարդկանց ու սև գրաքննիչների, անբարյացակամ քննադատների կողմից միտումնավոր կերպով հազար անգամ քարկոծված, ազգայնամոլության և նիհիլիզմի ու այլ վտանգավոր երևույթների մեջ մեղադրված գիրք, որը բանաստեղծի թե՛ անձնական կյանքի, թե՛ հեղինակության, թե՛ իշխանությունների տեսադաշտում գտնվելու անվստահելի պարտադրությամբ միանգամայն մահացու էին բանաստեղծի գոյության համար...

«Գիրք ճանապարհի՛»-ն...

Ազգային և համազգային մշակույթի, քերթողական արվեստի եզակի ու հազվագյուտ նմուշ, հզորաբառ Չարենցի երգացանկի հրակարմիր անդաստանում՝ որպես **վերջին ՄԱՏՅԱՆ, ՄԱՏՅԱՆ**՝ հին ժամանակների, միջնադարի, նոր և նորագույն ժամանակների բանաստեղծության, արվեստ ու սերմնադաշտ արարողների վարքամատյան՝ ամբողջացված ճանապարհի պատմափիլիսոփայությամբ, ողջակիզված, բայց արարիչ մի ողջ ժողովրդի հանճարի փայլատակմամբ ու հավերժացմամբ, որը ներկայանում է որպես անցյալի, ներկայի ու ապագայի՝ հայ ժողովրդի անցած ու անցնելիք ճանապարհների լավագույն և հավատարիմ ուղեցույց՝ ծնված իր մեծ զավակի՝ ողբերգականությամբ շաղախված սիրուց և կենսափիլիսոփայության խորհուրդներից ու ակունքներից:

«Գիրք ճանապարհի» ժողովածուի երկերի ստեղծման ժամանակագրությունը

արձանագրվում է **1929-1934 թթ.**:

«Գիրք ճանապարհի» ժողովածուն (**1932/33 - 1934 թթ.**) Չարենցը նվիրել է դասերը, նրան իր առաջին կնոջ՝ Արփենիկ Աստվածատրյանի անունն ու հիշատակը հավերժացնելու համար կոչել **Արփենիկ**: Մատյանը բովանդակում է սովորածավալ **տասը պոեմ**, **«Տաղեր և խորհուրդներ»**, **«Ջանազան բանաստեղծություններ և թարգմանություններ»** մասերը, իսկ **«Արվեստ քերթության»** և **«Գիրք իմացության»** շարքերը նա ավելացրել է գրաքննության պահանջով՝ ժողովածուից հանված **«Աքիլլե՛ս, թե՛ Պյերո»** **ինտերմեդիայի** փոխարեն:

Չարենցը, գեղարվեստի ձեռքբերումները բազմապատկելով, մտափայլատակումները միահյուսելով ժողովրդական մտածողության առանցքներին, ապրած ժամանակաշրջանի քաղաքական, հասարակական հզոր տեղաշարժերն անցկացնելով իր ստեղծագործության քուրայով, փորձեց կանխորոշել իր ժողովրդի ապագան, նրա անցնելիք ճանապարհների զիգագները, փորձեց ի մի բերել անցյալի, ներկայի և ապագայի, պատմության և գեղարվեստի փիլիսոփայական հաճումները, հայրենի ավանդներն ու գեղագիտական, բանահյուսական, բարոյական, տոհմիկ հատկանիշները՝ իմաստասիրական սևեռումներով՝ ամբողջության մեջ մանրակերտելով հայության, հայրենիքի կերպարը, գուշակելով և ցույց տալով հայ ժողովրդի պատմության ալֆան և օմեգան, քաղաքական սևեռումներն ու անցնելիք ճանապարհի օգտակար և անօգտակար հատկանիշները:

Գլխավոր հերոսը Չարենցն է, անցյալի, ներկայի, ապագայի մշակութային գործիչները, իր սիրելի մարդիկ, բախտակիցները, արյան հարազատները՝ Խորենացին, Աբովյանը, Կոմիտասը, Թումանյանը, Հայնեն, առաջինները կապված ազգային ճակատագրի ողբերգական շերտերով, վերջինը՝ Հայնեն՝ իբրև հեղափոխական մարտիկ, ապա և ապրած ժամանակաշրջանի պետապարտի դաժան կատարածությունները, բանսարկուները և սև գրաքննիչները, դահճի զգեստով, բոսորագույն հագած ֆիլիստերը՝ զրպարտիչ էությանմբ արբեցած: Չարենցի զրույցն այլևս զալիքի քաղաքացու հետ է, իսկ գեղարվեստի տարածքը նրա անմահ **«Մահվան տեսիլ»**, **«Պատմության քառուղիներով»**, **«Ղեպի լյառը Մասիս»**, **«Նորք»** երկերը:

Մեծերի հետ հոգևոր բոլոր առնչություններն անչափելի հոգեբանական, գաղափարական, գեղագիտական, բարոյագիտական բարձրագույն արժեք են ներկայացնում: Այդ երկերում տեսանելի են դառնում ապրած ժամանակի ահավոր կերպավորումը, ազգի, մարդու, հայրենիքի դառնամրմուռ ճակատագիրն իր բարդ անցումներով, անհատի ողբերգական դրաման և ժողովրդի կերպարի դրսևորումները:

«Հայնրիխ Հայնեի» հերոսը՝ զրպարտության մեջ չգերազանցված ֆիլիստերն է՝ 30-ականների շանտաժիստն ու անողորմ սաղիստը, լուսավոր մարդկանց սևացնող, մատնող, բզկտող սովահար գայլը, իսկ Չարենցի հերոսը ողբերգականորեն թիրախավորված դարի մեծագույն ուսուցիչ Չարենցն է:

«Գիրք ճանապարհի»-ն հիրավի խիզախ ճանապարհորդի հանճարի գեղարվեստական կտավի բացառիկ դրսևորում է, ժամանակի, հասարակարգի, գրական միջավայրի, խավարի և լույսի, մարդկային թուլությունների, անորոշությունների վկայագիր,

առաքինությունների կործանման, լուսավոր մարդկանց ճակատագրերի որոշման, խեղման ժամանակների գիր, որը լեցուն է ստալինյան անհատի պաշտամունքից եկող սարսափներով, զոհերով:

Այն իր ներկայացրած ծրագրայնությամբ շարունակությունն է «Էպիկական լուսաբացի»:

Չարենցի մտախոհերի, մտահանգումների օբյեկտը, հերքումների բանալին, անչափելի երևակայությունն ու հետաքրքրությունները, մտաշարժերը թևին են տալիս յուր ժողովրդի հազարամյա պատմության պարույրներում, պատմաքաղաքական, գեղարվեստի, գեղագիտական, փիլիսոփայական հարցադրումների դրնեդոները բացում՝ մեկնության դաշտ նախանշելով, իր արտասովոր հանդեսին հրավերք հղում հայրենի և օտար գրական մեծերին՝ հերքումի և հաստատումի նպատակով:

Մյուս կողմից՝ արվեստի դեմ իր շուրջն ստեղծված անբարենպաստ մթնոլորտը, տեսաքննական մտքի մեջ իշխող գոեհիկ-սոցիոլոգիզմն իրենց անբարո հետքն են թողնում Չարենցի հոգևոր աշխարհի վրա, նրան անլուր տառապանքի և հոգեկան տվայտումների, խաթարման, մեկուսացածության մղելով, իսկ այդ ամենի թոհ ու բոհում, բանաստեղծի նորաոճ, նորարար արարումներն առճակատման են գնում բոլոր ստահակների, գրականության աճպարարների, սև ու մուր, բանասերկու, մատնիչ ուժերի դեմ, որոնց համար նույնիսկ Չարենցի երկերի բառերն էին «անհարկի», վտանգավոր ոճով ստեղծված հոչակվում:

Կամա թե ակամա, բանաստեղծական շարերում Չարենցի քերթողական միտքը անընդհատական շարժով պոետական խոսքի նորանոր հորիզոններ է բացում, իմաստասիրական նորանոր վերլուծականներ առաջադրում, հայրենիքի, բանաստեղծության ճակատագրի ուղիներ նախանշում, հոգևորի ու մարմնավորի ներդաշնակ շերտեր առաջադրում, ինչու չէ՝ նաև հող նախապատրաստում 60-ականների սկսվելիք բանավեճին: Այն շոշափելի է «Տաղեր և խորհուրդներ» բանաստեղծական շարահյուսվածքում:

Գրքի ոճավորումն ու հյուսվածքը, տարբեր երկերի օրգանական կապը՝ մեկ վերնագրի, մեկ ստեղծագործության մեջ, կերպարաստեղծ համակարգը, բազմապլանայնությունը, ներկայացման գաղափարական նորովի ձևայնությունը, մեթոդաբանական, փիլիսոփայական, գեղարվեստի, գեղագիտական անցումները, ժամանակի անսովոր հակասականությունը՝ բանասերկու հոգեբանությամբ, բոլորով խոսվում է Չարենցի նորարար լինելու և գրքում նորովի մտահղացումներ, կատարողական նոր անցումներ, բանաստեղծական բարձր կուլտուրա ներկայացնելու փաստի մասին:

Այդ ամենի կիզակետում հայ ժողովրդի պատմության, անցյալի դժվարագնա ժամանակների, ողբերգականությամբ լի ճանապարհի, վերընթաց ու վարընթաց նոր ժամանակների, գալիքի փիլիսոփայական, բանաստեղծական ընթերցումների, արվեստափայլ արարումների, լուսավոր ապագայի նկարագիրն է ցուցում «Գիրք ճանապարհի»-ն:

Իր ճակատագիրը նախանշող բանաստեղծը, ամենայն հավանականությամբ, գիտեր, որ «Գիրք ճանապարհի»-ն լինելու է իր վերջին մատյանը, ուստի մտահոգ էր

գիրքը ստեղծել դարերի համար՝ դարերին վկայախոսելով իր մտահանգումները, իր պատգամները, իր համատ կամքը: Ո՞րն է «Գիրք ճանապարհի» ժողովածուի ուղեցույց աստղը: Ի՞նչ խոհ ու խորհուրդ է ամփոփում իր մեջ: Ինչպիսի՞ հարցադրումներ, ընտրված վերնագրի ինչպիսի՞ բացատրություն:

Հնագույն ժամանակներից եկող չինական փիլիսոփայության՝ դասականության հիմնադիր Լաո-Յզին՝ իմաստասիրության-փիլիսոփայության խոշորագույն ներկայացուցիչներից մեկը, ստեղծել էր իր երկերի պսակ հանդիսացող «Դաո Դի Յզին»: «Դաո»-ն նշանակում է **«Ճանապարհ»**, որն իր ամբողջական ու անթերի, եզակի ուղղվածությամբ դարձել է ուսմունք:

Չարենցը, որ դեռ պարմանի հասակից կլաներ էր հայ և համաշխարհային գրականության մեծերից շատերի երկերը, ծանոթ էր նաև Լաո-Յզիի մեծ տարածում, հեղինակություն գտած գրքին և նրա ուսմունքին:

Համաշխարհային, հայրենական գրականության մեջ առկա են գրական առնչությունների, կապերի բազմապիսի օրինակներ, որոնք որպես գրական երևույթ բացասական չեն ընկալվել տեսաբանների կողմից: Այն անընդհատական գրական-գեղարվեստական, գրականագիտական, մշակութաբանական ընթացք է:

Նման երևույթների առկայության դեպքերում ստեղծագործող հեղինակներից շատերը որդեգրել են ազդեցություններ կրած հեղինակներից շատ գաղափարներ, մտքեր և այլն: Բայց եղել են նաև այլ օրինակներ. իրենց նախասիրած հեղինակներից ոչ թե կրել են ազդեցություններ, այլ գրական որևէ երևույթի հանդեպ ունեցել են նմանատիպ գաղափարներ, ընդհանրություններ, քննումներ:

Հզոր ինտուիցիա, անսովոր մտածելակերպ, ոչ մեկին չնմանվող ստեղծագործական ջիղ ու եզակի տեսողական, վերլուծական, քննական միտք ունեցող Չարենցին՝յուր ժողովրդի պատմության քառուղիների բոլոր տեսանելի ու անտեսանելի գեղարվեստական լանդշաֆտը լավագույնս ուսումնասիրած, իր հայրենիքի ողբերգական ճակատագրի մութ ու լուսավոր սուր անկյունները քննած քաղաքացի-մարտիկ-տրիբուն բանաստեղծին է, անշուշտ, վերապահված արարել գրական նախադեպը չունեցող իր վերջին Մատյանը՝ հայրենի պատմության, գեղարվեստի, մշակույթի, մանրանկարչության, կորուստների, սայթաքումների, իմաստուն մատյաններ արարողների՝ հայրենի «ճորտերի» երկերի ընդհանրականը՝ ապագայի տեսլականով:

«Գիրք ճանապարհի՛»-ն...

Հայ ժողովրդի գոյաբանության, արարչագործ էության, փիլիսոփայական ընդհանրությունների ոսկե բիլագույլը, ազգային գաղափարաբանության շարունակական շղթան՝ ժամանակների անխափան կտրվածքով, տիեզերագնմամբ ու ապագային ցուցված հզորագոր տեսլականով, բանաբանությամբ՝ «Արվեստ քերթության», «Արվեստ իմացության» պարույրներով, անընդհատության օրենքներով միաձուլվ է:

Հատկանշելով՝ հաստատենք, որ «Գիրք ճանապարհի»-ի առանձնացող բաղադրամասերը հիմնականում բանաստեղծի նորարարական նշանաձողներն

էին՝ փիլիսոփայության և գեղագիտության տարընթերցումները:

«Գիրք ճանապարհի» ժողովածուի հերոսները հայ ու Հայաստանն է՝ իր արարչագործ գավակներով (և ոչ միայն՝ աշխարհն է՝ իր ստեղծագործ մտքով), չափի միավորները՝ հնագույն ժամանակներից մինչև ապագայի տիեզերախոյակները՝ ընդգծված ծրագրայնությամբ, խնդիրների բարդակուտակով, ազգային գաղափարա-կառույցի անփոփոխ նշանաձուլով, գոյի պայքարի տեսիլաժամերով, անողոք ժամա-նակների մեկնաչափերով:

Այս բոլոր բաղադրիչներն ի մի բերող գրիչը Ե. Չարենցն է՝ ժամանակակիցների, իշխող էլիտայի, ստալինյան ռեժիմի կամակատարներ Բերիայի, Մուղդուսու արյունաքամ հաշվարկների գոհը: Սև հովվապետի դատավճիռը հասավ նաև վերջիններիս՝ գնդակահարության դատավճռով:

Դառնանք չարենցագետների տված որոշ եզրահանգումներին.

Ս. Աղաբաբյան. «Այդ վերնագիրն (**«Գիրք ճանապարհի»**)՝ ընդգծ.՝ Զ. Բ.), անշուշտ, պատահական ընտրություն չէր», միտքը ուներ հետևյալ եզրույթները. «Ձևավորվելով մ. թ. ա.՝ 5-6-րդ դարերում (**եթե մ. թ. ա., ապա պետք է լինի ոչ թե 5-6-րդ, այլ՝ 6-5-րդ դդ.**՝ ընդգծ.՝ Զ. Բ.)», իբրև կոնֆիցիուսականությանը հակադրվող ուսմունք, «դասակա-նությունը» սկզբնապես նշանակել է ճանապարհի (Դաո-ի) ուսմունք, հետագայում հեռանալով նախնական «ճանապարհ», «ուղի», «երթ», «ուղղություն» իմաստներից, նշանակել է բնության օրինաչափությունների ճանապարհ, մարդկային կյանքի ճանապարհ («Դաո-դի»), իրերի բնական ճանապարհ (մատերիալիստ Լաո-Յզիի մոտ), «աստվածային, իդեալական սկիզբ (դաոսականության թևի մոտ) և այլն և այլն»:

Թե ինչ գաղափարաշերտեր, թեմաներ են հետաքրքրել, ինչին հանգեցրել Չարենցին՝ Ս. Աղաբաբյանը հետևյալն է հատկանշում. «Երան ամենից ավելի հետաքրքրում են ժողովրդի պատմական երթի՝ Պատմության ճանապարհի, Գոյի էության՝ Կյանքի ճանապարհի, արվեստի նշանակության՝ Արվեստի ճանապարհի, խնդիրները»:

Որոշակի ճշգրիտ գնահատումներում անբնական համարելով Չարենցի համաշխարհային առնչությունները, Հր. Թամրազյանը բանավեճի փոքրիկ առանցքում անդրադարձ կատարելով Ս. Աղաբաբյանի քննումներին՝ «Գիրք ճանապարհի»-ն բացառիկ երևույթ համարելով և «թերևս ամենանորարարական երևույթը՝ 20-րդ դարի հայ գրականության մեջ, միաժամանակ ամենահայկականը և ազգայինը»՝ նկատում է. «... Ինձ այնպես է թվում, թե նա երբեմն չափազանցում է օտար գործոնների ազդեցությունն այս գրքի վրա, Չարենցի առնչությունների շառավղի մի կետը գտնելով Չինաստանում, մյուսը՝ Իտալիայում, ժամանակակից հայ գրքի փիլիսոփայությունը և կոնցեպցիան կապելով Լաո-Յզիի «Դաո Յզի» (Գիրք ճանապարհի մասին) գրքի հետ (մ.թ.ա. 6-րդ դար), իսկ «Մահվան տեսիլ» պոեմի ոճական յուրահատկությունները, չարչարանքի ծանր ու մռայլ պատկերները Դանթեի և Ֆոսկոլոյի հետ...»²:

«Ճանապարհ» կատեգորիայի տեսական հիմնավորմանը հետամուտ՝

¹ Աղաբաբյան Ս., *Եղիշե Չարենց, գիրք երկրորդ, ՀՍՍՀ ԳԱ հր., Ե., 1977, էջ 253-254:*

² Թամրազյան Հր., *Եղիշե Չարենց, Ե., «Սովետական գրող» հր., 1981, էջ 386:*

Թամրազյանը ավելացնում է. «... Ըստ երևույթին Ս. Աղաբաբյանը ուզում է տեսնել նմանություն հայ ազգային շարժման ներքին ընթացքի մեկնաբանության և փիլիսոփայության միջև: Բայց նշենք,- շարունակում է տեսաբանը՝ հերքումի իր խոսքը ընդհանրացնելով,- որ ամեն ինչից անկախ, Չարենցը այս դիալեկտիկան վա-
ցուց սովորել էր Հերակլիտից ու Հեգելից: Լավագույն ապացույցը ռուբայաթներն են: Մյուս կողմից, ըստ էության «Գիրք ճանապարհին» չի ենթակվում նման կարգի որևէ սխեմայի և կոնցեպցիայի: Մեր ազգային շարժման քննությունը նա սկսել է մինչև այդ գիրքը կարդալը, պատանի հասակից («Դանթեական առասպել», «Վահագն», «Ազգային երազ», «Երկիր Նաիրի» և այլն)»³:

Չարենցի վերջին (համաշխարհային առնչությունների հետ կապված) ընդհանրական Մատյանի շուրջ ծագած տեսական մտքի անդրադարձներում չպետք է անտեսվեն բանաստեղծի ժողովածուի շուրջ կարևորագույն կետեր հանդիսացող նորարարական մեկնումները՝ գրական երևույթները քննելու ժամանակ թե՛ ազգային, թե՛ համազգային փիլիսոփայական և գեղագիտական մտքի շարժերում: Այս դիտանկյունից ավելի կողմնորոշիչ է Թամրազյանի եզրահանգումը. «Բնչո՞ւ ենք մենք այսպես վճռականորեն առարկում Աղաբաբյանին: Բանն այն է, որ այդ անհիմն զու-
գահեռների պատճառով ընթերցողի ուշադրությունից դուրս են մնում գիրքի երկու կարևոր հատկանիշները: Խոսքը վերաբերում է գեղարվեստական հատկանիշներին և գրքի արյունատար համակարգին, ժամանակակից բաղադրությանը: **«Գիրք ճա-
նապարհին» տառապած կյանքի, շիկացած մտքի և արյան գիրք է»**⁴:

«Ճանապարհ» դեպի լուսին, աստղեր, արեգակ, տիեզերք, հարևան երկրներ, մշակութային երկերի առանցքներ՝ քննելի է: Գտածո և դեռևս անգտանելի նյութերը, մարդկային հոգևոր աշխարհներում և բնության գաղտնաբաններում եղել, կան ու կլինեն Քրոնոսի ժամանակադիր արքայության ներքո, բայց թե ո՞ւմ կհաջողվի նման երևույթների ջիղը շոշափել ու հում կավից երևակայական ու շոշափելի արվեստի եզակի արժեքներ ստեղծել, դա հազվագյուտ տաղանդով օժտված անհատներին կարող է վերաբերվել. մեր պարագայում բացառիկ օրինակը Չարենցն է, միջնադարյան կործանիչ ինկվիզիցիայից առավել չարագործ Ստալինի անձի պաշտամունքի տարի-
ներին ու նրա իշխանության ներքո, նրա հրահանգով, նրա մոզոնած սև ու մուր ժամա-
նակների հարահոսքում՝ խավարի զոհ դարձած:

Ամբողջ գերմանական փիլիսոփայական գրականության մեջ առաջադրված հարցադրմանն առնչվող հետաքրքիր բնորոշ վերնագրեր կան՝ կապված գաղափար ներկայացնող **«Ճանապարհ»** խորհրդանիշի հետ:

Է աշխատել Արևմտյան Հայաստանում), ականատեսի վկայությամբ՝ Հայոց ցե-
ղասպանության թեմայով գիրք է գրել՝ «Ճանապարհ՝ առանց տունդարձի» վեր-
նագրով: Վեգները ևս գաղափարական իմաստավորում է տվել **«Ճանապարհ»** հասկա-
ցությանը՝ հատկանշելով նրա գեղարվեստական, փիլիսոփայական բացառիկ արժեքը:

³ Նույն տեղում, էջ 386-387:

⁴ Նույն տեղում, էջ 386-387:

Դարը, ժամանակի դաժան, խռովահույզ ոգին, հայ ժողովրդի ճակատագրի քաղաքական, հասարակական, ստեղծաբանական անցումները, իրար հաջորդող ֆորմացիաների դաժան գաղափարակարգը, դրանցից առաջացած ցնցումները, այդ ամենի խեղդող օղակում ողբերգական անհատն է՝ իմաստնացած Չարենցը՝ մենության երկաթե շղթաներին գամված:

Չարենցին մտահոգել է գրականության նախորդ շրջանների, ներկայի, գալիք ժամանակների հոգևոր կապի, առնչությունների հարցը: Գրական մեծերին վերադառնալու հրամայականը հասնում է ազգային հոգևոր արժեքներին սեփական ստեղծագործական պրիզմայով նայելու և իր երգերի մեջ խտացնելու պահանջին:

Յուրացնելով ազգային հարուստ արժեքները, Չարենցը մնացել է ապրած ժամանակի քաղաքացին և բանաստեղծը, մշակութային գործիչը, հայրենապաշտ զինվորը. «Ես տեսնում եմ, որ այնպիսի վարպետներ, ինչպիսիք են մեր միջնադարյան աշխարհիկ բանաստեղծները», «այդ հանճարեղ ճորտերը», չի կարելի գտնել ուրիշ ոչ մի գրականության մեջ, իհարկե, ոչ թե նրանց հանճարեղության, այլ գույների ու երանգների, ձևի և նյութի մշակման ինքնատիպության իմաստով: Այսօր նրանք մեծ օգնություն են ցույց տալիս ինձ կերտելու այնպիսի ձևեր, որոնք արմատապես տարբեր են խորհրդային մյուս բոլոր պոետների գործածած ձևերից»⁵:

Այդ իսկ հարցադրման հետևանքը եղան բանաստեղծի լուսավոր և իմաստասիրական, գեղագիտական, փիլիսոփայական անդրադարձները՝ միջնադարյան արվեստի և նրա տաղանդաշատ ներկայացուցիչների կերպարների կերտումը՝ նորարարական տիպաբանությամբ:

Այդ ամենի խորքում տաղանդափայլ անցյալով ներկան արգասավորելու հիմնախնդիրն էր Չարենցին առաջնորդում, իսկ արդյունքն՝ ապշեցուցիչ էր:

Մեկ-մեկին ընդհառաջելով լույս ազդարարեցին «Գիրք ճանապարհի»-ի անկյունաքարեր հանդիսացող երկերը՝ **«Գուլք խաղողի, զինու և գեղեցիկ դպրության», «Նորք», «Տաղ՝ ձոնված գրքերին», «Տաղ՝ ձոնված մանրանկարիչներին», «Ուղերձ մեր հանճարեղ վարպետներին», «Յոթ խորհուրդ քաղաք կառուցողներին», «Արվեստ քերթության»,** ապա դիստիքոսների, ռուբայիների, բեյթերի մի զգալի մասը և այլն:

Այդ երկերում Չարենցը զրույց բացելով ընթերցողի հետ, անմնացորդ կերպով ցուցաբերում է պոետական բարձր մշակույթ, ոգու անմեկնելի պայծառություն, գեղեցիկի, վեհի, վսեմի գեղագիտական հայեցումներ, արվեստի գոհարակերտ անդրադարձներ, իմացության անսպառ ուժ, փիլիսոփայական անմեկնելի խորքեր, վերլուծական նորարարական շերտեր, հերքումի-հաստատումի հզոր շղթա՝ բացելով խոսքարվեստի նորովի անցումներ, տիպաբանական եզրեր: Իսկ պոետական խոսքը շատ խոսուն է.

**Տքնացե՛ք տքնաջան ու հնչյուններ ցանք՝
Հերկելով հերկերն անցյալի՝ հանուն գալիք օրվա...**

⁵ Եղիշե Չարենց, ԵԺ, հ. 6, Ե., ՀՄՄՀ ԳԱ հր., 1967, էջ 273 (802 էջ):

Դրանք հայոց ողու հերկերն են, որոնց վկայակոչում է բանաստեղծը նվիրական ու խոնարհումի ձայնով՝ տրիտուր.

Ու՛ժ ներշնչեք իմ երգին, որ ընթացքը իր չշեղի,
Որ ժառանգորդը դառնամ հանճարեղ արվեստի ձեր ոսկյա...
Դամ՝ Այքերս հառել եմ անցյալին՝ ապագայի նժույգը հեծած...

НОВОВВЕДЕНИЕ ПИСАТЕЛЯ В КНИГЕ «КНИГА ДОРОГ». ФИЛОСОФИЯ И ЭСТЕТИКА - ЗИНАИДА БАЛАЯН - «Книга дорог» Егише Чаренца в 30-е гг. Это одно из уникальных и всеобъемлющих явлений советской армянской литературы. В армянской и мировой литературе она отличается типологическими признаками, она многослойна, многосодержательна, многогранна, многозначна, с точки зрения жанра очевидна разнообразными и исключительными выражениями, поэтому требует литературоведческой оценки, которая не вписывается в одну оценку.

Ключевые слова: *Философия, эстетика, армянская литература, жанр, литературная оценка, «Норк», Егише Согомонян, Армения, спор.*

THE WRITER'S INNOVATION IN THE BOOK "THE BOOK OF ROADS". PHILOSOPHY AND AESTHETICS - ZINAIDA BALAYAN - "The Book of Roads" by Egishe Charents in the 30s. is one of the unique and comprehensive phenomena of Soviet Armenian literature. It differs in typological features in Armenian and world literature, it is also multi-layered, multi-faceted, multi-valued, it is obvious with diverse and exceptional expressions from the point of view of the genre. Therefore it requires a literary assessment that does not fit into one assessment.

Keywords: *Philosophy, aesthetics, Armenian literature, genre, literary assessment, "Nork", Egishe Sogomonyan, Armenia, dispute.*

ԳՐԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻԱՄԱՆՈՒԹԵԱՆ ՆՇԱՆԱԲԱՆՈՎ

(Գրախօսության փոխարեն)

Բանալի բառեր. *Լատուրա Մուրադեան, գրականագիտություն, արելեյահայ եւ արեւմտահայ գրապատմական շրջաններ, համեմատական քննություն, տեսաբանական որոնումներ, «վաղուան գրականություն», հայ եւ եւրոպական մտածողություն եւ փիլիսոփայություն:*

Յօդուածում քննուած է գրականագէտ Լատուրա Մուրադեանի անցած գիտական հարուստ ճանապարհը «Գրականագիտական դիտումներ ժամանակի մէջ/ ուսումնասիրություններ եւ յօդուածներ» գրքի կապակցութեամբ, ուր ի մի են բերուած նրա՝ արեւմտահայ բազմաթիւ հեղինակների մասին (Վրթանէս Փափագեան, Արփիար Արփիարեան, Արտաշէս Յարութիւնեան եւ շատ ուրիշներ) ըստ էութեան գրական շարժում ընդգրկող եւ դիմանկար պարզող բազմաբնոյթ յօդուածներ: Առիթը օգտագործել է երեւան հանելու հայ եւ եւրոպական մտածողութեան ու փիլիսոփայութեան հետ առնչուող խնդիրներ: Անտեսելու չէ, որ գրականագէտը գրքում ընդգրկել է նաեւ արելեյահայ հեղինակների՝ Ռաֆայէլ Պատկանեան, Բաֆֆի, Դերենիկ Դէմիրճեան եւ ուրիշներ, որոնց մասին տուել է սպառնիչ բնութագրականներ:

Մեր առջեւ ժամանակի մէջ նոյն ժամանակի առումով դիմակայություն բռնած արեւմտահայ եւ արելեյահայ գրական աշխարհների համակարգուած քննություն է, որին տասնամեակներ հաւատարմութեամբ ծառայել ու համահայկական չափանիշների համաբնագրում շարունակաբար բացայայտել է գրական արժէքները բանասիրական գիտությունների դոկտոր, Պրօֆեսոր Լատուրա Մուրադեանը:

Նախ, քաջ յայտնի է, որ նրա՝ 1991 թ. լոյս տեսած «Արփիար Արփիարեան. կեանքը եւ ստեղծագործությունը» մենագրութեամբ ազգային գրականութեան պատմութեան երկու ակունքներում ամրագրուեց Արփիար Արփիարեանի ճանաչողութեան դերը իբրեւ արեւմտահայ ութսունականների իրապաշտական ուղղութեան սկզբնաւորողի՝ դիտելով նրան առաջին հերթին գրական շարժման միասնական ընկալման խորքերում: Դեռեւս 1960-ականների վերջերին սկիզբ առած գիտական երկայն արդիւնաւոր ճանապարհը այսօր էլ անցնում է նուիրումի խորը գիտակցումով: Վրթանէս Փափագեանի, այնուհետեւ Արփիարեանի գործերի մեկնությունները գիտական ծառայութեան մէջ նուաճումի լրջմիտ յայտեր էին, ինչի շնորհիւ նա անմիջապէս ներգրաւուեց մեր առաջատար հետազոտողների այն փաղանգի մէջ, որոնց հաւասարապէս էին տրուում արեւմտահայ եւ արելեյահայ գրապատմական շրջանների սահմանները եւ համեմատական քննութեան ոչ հեշտին հանգոյցները:

Պատահական չէ, որ գիտական վաստակը ամփոփող եւ ամբողջացնող նորերս լոյս տեսած «Գրականագիտական դիտումներ ժամանակի մէջ / ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ» (Եր., «Հայաստան», 2021) աշխատասիրութեան մէջ Լ. Մուրադեանը հիմնարար դեր է յատկացրել հենց Ա. Արփիարեանին, որին նուիրուած քննական հին ու նոր հայեացքը գերակայ դիրք է գրաւել, վերհանման «դիտումների» նոր կերպեր: Յատկապէս հարկ է ընդգծել Արփիարեան-Բաֆֆի, Փափագեան-Բաֆֆի զուգահեռների հնարաւորինս ամբողջական ընկալման նորատես կառոյցը, որտեղ նոր փաստարկումների շաղախով անդրադարձել է ներքին շերտերի բացայայտումների, կարելորել «Խաչագողի յիշատակարանը» եւ դրան յաջորդող «Խամսայի մելիքութիւնները» ծրագրային գործերի հրատարակումների պատմութեան խաչողողուած դրուագները, որոնք գալիս էին 19-րդ դարավերջի «Արեւելք»ի էջերի տպագրութեան գրաքննութեան յայտնի եւ անյայտ խոչընդոտներից ու դրանք յաղթահարելու Արփիարեանի յամառ ճիգերին ու խաղացած դերից:

Էական պիտի դիտել Լ. Մուրադեանի՝ մեր գրասեղանին դրուած աշխատասիրութեան գտնուած խորագիրը, ուր ժամանակի մէջ դիտումները ըստ էութեան բացում են գրական աշխարհատեսութեան շարունակական պատուհաններ արեւմտահայ եւ ժամանակակից ընթացքների վրայ: Մի կողմ դնելով դասական հեղինակների նախասիրութիւնների ընտրութեան գործօնը՝ նկատենք գրականագէտի ակնյայտ հակումը շարժումների ներքին ուղղութիւնները ճշդորոշելու ջանքերին, որ եկել է վաղուց, դարձել իր համար գիտական յիստն եւ աւելի տարիների փորձառութեան յաջողուած տեսանկիւն: Դա վերաբերել է, ի դէպ, հաւասարապէս եւ՝ արեւմտահայ, եւ՝ արեւելահայ գրական հատուածներին:

Նրա գրոյ սեղանի գիտական կշիռը հարստացրել են բազում գրքեր, որոնց թուով հարկ է առանձնացնել հայ նոր գրականութեան եւ քննադատութեան պատմութեան երկհատոր ակադեմիական աշխատասիրութեան մէջ տեղ գտած Վրթանէս Փափագեանի, Արտաշէս Յարութիւնեանի, Արսէն Տէրտէրեանի, հայ վէպի զարգացման ուրուագծերի (Ռափայէլ Պատկանեան, Սրբուհի Տիւսաբ, Արփիար Արփիարեան), «Մուրճ» հանդէսի (Աւետիս Արասխանեան) քննադատական հարուստ պատմութիւնների բարձր ուղեգծերը, գրականագէտ Նելլի Անանեանի հետ համահեղինակած հայ քննադատական մտքի մատենագիտական պատմութիւնը: Սրանք դարձել են արդիւնաւոր որոնումների մէջ լրջագոյն աւանդ, հայ գրականագիտական մտքի զարգացման համակողմանի պատմութիւնն ամփոփող բազմաձայլ աշխատասիրութիւններ, այն ամէնը, ինչն ընդգրկել է ազգային վիպագրութեան պատմական տեղաշարժերը:

Ճիշդ է այն նկատառումը, որ 19-րդ դարավերջի եւ 20-րդ դարասկզբի մեր գրական զարգացումների ուսումնասիրման տեսլականը գրաճանաչողական ընկալումների տեսանկիւնից համաչափ չի իւրացուել, կրել է սոցիոլոգիական վերանայումների յաղթահարման պարտադիր քայլերի կնիք, բայց հենց այս առումով էլ գուցէ արդէն խիստ կարելորդում է Լաուրա Մուրադեանի տեւական տեսական ուշադրութիւնը նկատելի չափով ստուերի տակ մնացած մեր վիպագիրների հանդէպ

ու գրականության պատմության ազգային իմացության եւ գնահատության նոր սկզբունքների հանդեպ սթափ մօտեցումների հակակշիռը:

Այսպէս, Վրթ. Փափազեանի համեմատաբար վաղ շրջանի վեպերն ու վիպակները, որոնց թուով՝ ութսունականների կեսերին Թիֆլիսի կեանքից վերցուած «Գնանք ընթերել» եւ դրանից երկու տարի անց «Սոխակի տղան» գործերին, որոնք լոյս տեսան Պոլսի եւ Իզմիրի ընթացիկ պարբերականներում («Մասիս» եւ «Արեւելեան մամուլ»), յատկապէս արեւմտահայ ընթերցողին ծանօթացնում էին իրենց ապրած օրերի մտաւորականների առօրեային, արովեանական շնչի մոհիկաններից՝ Աղասու արկածային դեգերումները եւ դաւադիր մահը կազակների հետապնդումների արդիւնքում: Մինչդէռ հերոսը՝ երբեմնի ներսիսեանցին, իմացական իր ներուժով կարող էր լրացնել 19-րդ դարի երկրորդ կեսի արեւելահայ գրագէտների շարքը:

Տեսաբանական ուշագրաւ որոնումներում կարող ենք հետեւել նաեւ «Մուրճ»-ում եւ «Տարազ»-ում իննսունական եւ ինըհարիւրական թուականների Վրթ. Փափազեան-Նիցշէ գուգահեռներին, հակառակ նոյն ժամանակի մէջ յընթացս հերքումի կամ կոյր հետեւորդի նկատելի ջանքերի (Շուրի Վեսելովսկի, Լէօ, յետագայում՝ Աշոտ Օհանեան եւ ուրիշներ): Քննական ազդեցութիւնների վիճարկումը Լ. Մուրադեանի կողմից անցել է հաստատման դժուարին ճանապարհ, ինչի առիթով մերօրեայ գիտնականը ստիպուած է եղել յաղթահարելու աւանդոյթի եւ նախապաշարումի դիմադարձութիւնը. «Ակնյայտ է,- գրում է նա իրաւացիօրէն,- որ (Նիցշէի հանդեպ –Ս.Դ.) Փափազեանի ուշադրութիւնը պարզ հրապուրանք չէր, եւ դրա հաստատումն են նաեւ նրա գեղարուեստական այն նոր յղացքները, որոնք կարելուրէլ է ինքը՝ գրողը, իբրեւ իր ստեղծագործական կենսագրութեան ուրոյն արտայայտութիւններ» (տե՛ս էջ 42): Եւ աւելին՝ գրում է, թէ՛ «Նիցշէի ուսմունքի մեկնութիւնը մի նոր կողմով է բացայայտում-լրացնում Փափազեանի հայեացքների միասնութիւնը՝ մի անգամ եւս ապացուցելով դրանց հումանիզմը, դեմոկրատական բնոյթը, հասարակական տարբեր երեւոյթների մէջ թափանցելու ունակութիւնն ու ըմբռնումը» (էջ 43): Դա կապուով է Բաֆֆու «Խենթ»-ից սկիզբ առնող եւ Վ. Փափազեանի «Ըմբոստ երգեր»-ում կատարեալ մարմնաւորումի» (**Նոյն տեղում**) հասած մեր գրականագէտի նկատած «կեցութեան հանգանակների» հետ:

Այս հատուածում ընթերցողին գրաւում է փափազեանական թատրերգութեան առանձնայատկութիւնների քննութիւնը, որտեղ գրականագէտը յանգում է այն հետեւութեան, որ «գրողի պատկերացումները ելնում էին ազգային իրականութեան խնդիրներից՝ որպէս օրինակելի նմուշներ ունենալով եւրոպական եւ ռուսական թատրոնների ձեռքբերումները»՝ Իբսեն, Հաուպտման, Մետերլինկ եւ յատկապէս Մաքսիմ Գորկի, որին Փափազեանը համարում է «միակ մեծը, միակ անընկճելի բոլոր այդ ժամանակուայ գեղագէտների մէջ»՝ ի մտի ունենալով առաջին հերթին «Խորքում» («Յատակում») եւ «Քաղքենիներ» գործերը (էջ 45):

Գեղագիտական բարձրագոյն արժէքներին հետամուտ բանաստեղծ եւ քննադատ Արտաշէս Յարութիւնեանը իր ժառանգութեան մէջ ներառել էր եւրոպական գրական հարուստ ուղու լայնախոհ իմացութիւնն ու դրանից բխող կենսափորձի

վկայությունը՝ դրանով իսկ հայ գրական հետաքրքրության «անմիջական տուեալները» տանելով համաշխարհային գրական ընթացքի դռները:

Կարելի է ընդունել,– եւ դա գալիս էր նաեւ Յակոբ Օշականի՝ Արտ. Յարութիւնեանից ուսած-ստացած համակարգային բնութագրումի տեսողութիւնից, որն ափ ի բերան կլանում էր Մալկարայում 1911-ին ռուս եւ ֆրանսիական վիպագրութեան համակարգուած վարպետաց դասերը, այն ամէնը, ինչն ըստ էութեան՝ իրացրել էր նաեւ Արտ. Յարութիւնեանի ճոխ գրադարանից, որի գրքերը սիրով փռուած էին սէօլեօզցի տաղանդաւոր երիտասարդի առջեւ,– որ Լ. Մուրադեանը գաղափարական յայտարարի սկզբունքով է ձեւակերպում «վաղուան» գրականութեան իմաստների մէջ յարութիւնեանական առաջնային ազգայինի նախապայմանը՝ իրբէլ իր ժամանակի գրական-տեսական զարգացման գլխաւոր գործակից, որը ծնունդ էր առել դեռ «Մեհեան»ի խմբագրական սենեակներից:

Յիրաւի, մեր առջեւ գեղարուեստական մտածողութեան զարգացման անցեալն ու ներկան ազգային փիլիսոփայական խորաչափերի փնտռութիւն հասցնող «գրականագիտական դիտումներ» են, որոնք «վաղուան» գրականութեան նոր սահմաններ են ուղենշում, այդ սահմաններում՝ արեւմտահայ հոգեւոր տարածքի իրացումը՝ լեզուական, ռճային հարստութեան մեկնութիւններով, որն առանձնացնում է Լ. Մուրադեանին այսօրուայ գրականագիտական խայտաբղէտ աշխարհում: Այստեղ է նաեւ սոյն գրքի արժանիքը:

ПОД ДЕВИЗОМ КУЛЬТУРНО-ПИСЬМЕННОГО ЕДИНСТВА - СУРЕН ДАНИЕЛЯН - В статье рассматривается богатый научный путь, пройденный литературоведом Лаурой Мурадян в связи с книгой “Литературоведческие взгляды во времени: исследования и статьи”, где представлены многочисленные работы Л. Мурадян о западно-армянских авторах (Вртанес Папазян, Арпиар Арпиарян, Арташес Арутюнян и многие другие), охватывающие, по существу, литературное движение и проясняющие портреты писателей. В статьях выявлены проблемы, связанные с армянским и европейским мышлением и философией. Нельзя обойти вниманием тот факт, что Л. Мурадян включила в книгу также восточно-армянских авторов - Рафаела Патканяна, Раффи, Дереника Демирчяна и других и дала их исчерпывающие характеристики.

Ключевые слова: *Лаура Мурадян, литературоведение, восточно-армянские и западно-армянские книжно-исторические периоды, сравнительное исследование, теоретические поиски, “литература будущего”, армянское и европейское мышление и философия.*

WITH THE MOTTO OF LITERARY-CULTURAL UNITY- **SUREN DANIELYAN-**

The article examines the rich scientific path taken by literary critic Laura Muradyan on connection with the book “Literary Observations in Time: Studies and Articles”, which contains a variety of her articles related to many of Western Armenian authors (Vrtanes Papazian, Arpiar Arpiarian, Artashes Harutyunian and others), covering literary movements and revealing features of literary figures. They address issues related to Armenian and European thinking and philosophy. It should not be ignored that the literary critic also included Eastern Armenian authors (Raphayel Patkanian, Raffi, Derenik Demirchian and others) in the book giving exhaustive descriptions about them.

Keywords: *Laura Muradyan, literary criticism, Eastern Armenian and Western Armenian literary-historical periods, comparative examination, theoretical searches, “tomorrow’s literature”, Armenian and European thinking and philosophy.*

ԱՐՑԱԽԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ՝
ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Ժամանակակից հայ պոեզիայի ականավոր ներկայացուցիչներից է Վարդան Հակոբյանը: Նրա երկերն արժանացել են մեր օրերի հայտնի գրականագետների բարձր գնահատականին: Ծնունդով՝ արցախցի, Հակոբյանը նվիրյալ որդու սիրով ու հպարտությամբ, արվեստի առինքնող ուժով ստեղծել է մայր օրրանի անկրկնելի գեղարվեստական պատկերը՝ որպես պատմական Հայաստանի անբաժանելի մաս: Պատահական չեն նրա պոեզիայի մասին հնչեցված բարձր գնահատականները հանրահայտ գրականագետների կողմից:

Բանալի բառեր՝ Վարդան Հակոբյան, հայոց պոեզիա, տաղանդ, ժողովածուներ. «Մեղեդիներ», «Արցախա ծուխ», «Ամարասի զանգերը», «Խորանի առաջ» շարքը, ակադեմիկոս Սերգեյ Սարինյան:

Դեռևս դպրոցական տարիներին Վարդան Հակոբյանը Աստծո օրհնանքով բարձրաձայնել է. «Եվ ոչ թե իր հետ իմ ճանապարհն է տանում ինձ հեռուն, Այլ ես եմ ինձ հետ ճանապարհ տանում»:

Աստվածային շնորհք ունեցող պատանին միայն կարող էր այսպես Աստվածահաճո իմաստությամբ ազդարարել իր մուտքը գրական աշխարհ, գրական աշխարհից էլ՝ պոեզիայի ծարավ սրտեր:

Ասենք, որ Հակոբյանը պատանեկան թոթովանքների ուղի չի անցել: Նրա մուտքը սրտերի միջով եղավ դեպի քնարերգություն ու քնարերգությունից՝ սրտեր: Նշենք նաև, որ Արցախի Վարդան որդին ի ծնե հաղորդակցվել է տիեզերական արարող ուժերի հետ, ստացել նրանց օրհնանքը, ճամփա ընկել ծննդավայր Արցախից դեպի Հայոց աշխարհ՝ ազդարարելով Վահագն Դիցի ժառանգորդը լինելու իր պատրաստակամությունը: Նման դեպքում են արձանագրում գրողի Հայտնություն լինելը:

Այո, Վարդան Հակոբյանի մուտքը պոեզիա աստղաշող հայտնություն է: Նա եկավ հաստատելու, որ Աստված իր երկնային աստղածիր բարձունքներից նայում է երկրածիր բարձունքներին, արարելու ոսկեփոշով օծում այն Անհատներին, ովքեր աշխարհ են գալիս՝ իրենց հոգու երանգներով ծիածանելու աշխարհը:

Սակայն միաժամանակ Աստված պատվիրում է իր արարող նվիրյալներին՝ երբեք չմոռանալ այն հողն ու ջուրը, որոնց ծնունդն է ինքը, քանզի անհատի արարող կարողության աղբյուրը հարազատ ծննդավայրն է, այն օրորոցը, որի մեջ լսել է մայրական հավերժածուփ օրորը:

Նշենք, որ Վարդան-բանաստեղծի մայրական օրորոցը Արցախ աշխարհն է: Այդ է վկայում Վարդանված պոեզիայի այն աշխարհը, որ հայտնի է Արցախ անունով:

Վ. Հակոբյանի երգերի առաջին գիրքը «Մեղեդիներ» խորագրով ազդարարեց, որ նրա քնարական հերոսի ոգևորությունը թնում է հոգու խորքից, գնում փարվում է Աստածանվեր բնություն ունեցող Արցախ աշխարհին, որտեղ ոգևորության ու բնության եզրերը միաձուլվում են և այնպես են փարվում իրարու, որ դժվարանում ես կռահել՝ բանաստեղծն է ծնվում բնությունից, թե՞ բնությունն է ակունքվում բանաս-

տեղծից, կյա՞նքն է թելադրում բնության իմաստը, թե՞ հակառակը: Լսենք բանաստեղծին.

*Կորընթաց ժայռին՝ մի անձրևոտված
Ու մենավոր ծառ.*

Տերների մեջ արտացոլանքը

վառվող աստղերի:

Եվ ծառ չէ ծառը,

Մի կանաչ-կանաչ լուսամտի տի է նա՝

Բնության ձեռքով

Կախված իտր ձորի մթության վրա:

Բնությունից դեպի մարդկային արարքներ կոնկրետ գնահատականը բանաստեղծի մոտ տեղի է ունենում դարձյալ բնության միջոցով, և նրա աշխարհի սահմաններն ընդգծվում են բնությունից մարդ, մարդուց՝ բնություն եզրերով, և որ շատ կարևոր է, հատկանշվում են նրա ոճը, հղացումների դրսևորման ձևերը, նյութի և մտածողության ներդաշնակությունը: Այդ առումով հաջող օրինակ է «Քայլերս» բանաստեղծությունը: Երգիչը, որպես քնարական հերոս, իր քայլերը համեմատում է կանաչ ձեռքերի, կանաչ երգերի, սուրբ ճշմարտության վերընձյուղումների հետ: Դրանով, սակայն, չի բավարարվում պոետը: Գունային համակարգից ծնվում է բանաստեղծական գյուտ-ընդհանրացումը, որով հաստատվում է առողջ քայլերից սկիզբ առնող հավիտենության գաղափարը.

Եվ դրա համար քայլում եմ ես միշտ:

Բայց կկարողանա՞մ

Մի փոքրիկ քայլ դառնալ աշխարհի

Հավիտենության ճանապարհին...

1989թ. Երևանում «Լույս» հրատարակչությունը տպագրեց Վ. Հակոբյանի «Արցախա ծուխ» ժողովածուն: «Արցախա ծուխ»-ը արարելու-հարատևելու, սիրելու-սիրվելու, մաքառելու թևավոր ծուխ է: Այն երևում է հեռվից: Աչքերից դառն արցունքներ բերող ծուխ չէ դա, այլ մեռնի բույր է, պապ ու տատի շունչ, հոր ու մոր շոյանք, մանկանց ժպիտ, հայրենի հողի գարնանային ցող, ապագային հառած աչքերի շող, ժողովրդական սիրո փայլատակում: «Արցախա ծուխ» գրքում Հակոբյանի քնարական հերոսը ջերմությամբ, արյան եռքով Արցախի հետ է: Նա իր երակների մեջ զգում է հողի ծլարձակումը, լեռների աստղագնա ընթացքը, ժամանակների իմաստը.

Փռիվել է ժամը, դասը չի փոխվել,

զանգում ձուլվել է Սարդարապատը...

(«Որդան կարմիր»)

Բանաստեղծը եզրակացնում է, որ մղձավանջը պետք է մարի տան լույսից, ամեն մի նահատակ դառնա «գոյության վճիռ», «հավատը՝ սուրբ տուն», առավոտը՝ «հառնումի բաց դաս», «և դարձն արմատանց, մարտիրոսություն» («Մղձավանջ»): «Ձգված աղեղներ» երգում բանաստեղծը դառն ու հուսադրող զգացումների մի թարմ պատկեր է հյուսում, ուր արմատը խրվում է ամպի մեջ, ձորում խրիսիջը կորցնում է ձիուն, «օրվա մտքի մեջ խայտում է սուտը»: Քնարական հերոսի աչքին լեռնագագաթները աստղերի գոհասեղան են թվում, «խիղճը փնտրում է ու չի գտնում տեր», այդ պատճառով էլ «օրերն անցնող՝ սլացող նետ են»: Սակայն չի հուսալքվում քնարական հերոսը.

*Զանգը արթնացավ արյան խորքերում,
գոհերը ելնում, միանում են մեզ,
անթիվ ձեռքերով գրկվել է Քիրսը,
և լեռան փեշից մեռն է թափվում,
Ինչ էլ որ լինի, մենք լինելու ենք:*

Վ. Հակոբյանը՝ որպես կարոտի ու սիրո երգիչ, տեսավ 20-րդ դարի մղձավանջը արցախցիների ազատաբաղձ ոգու դեմ, դառնությամբ ու ցասումով խարազանեց ուժերի ցինիզմն ու դաժանությունը: «1988 թիվ, փետրվար» բանաստեղծության մեջ հեղինակն արևը պատկերում է իբրև «պատուհանից դուրս նետված» արյունաքամ մանուկ, իսկ «երկինքը՝ սարդի մի ցանց»: Բացվում է կապանքի սուտը, ավարտվում է ամեն մի դիմակահանդես, և պարզվում է, որ ընդհանուր բացակայությունների տակ ոչինչ չի փոխվել. «գայլը գայլն է նույն բնույթով պատիր՝ գառան մորթու մեջ, թե որջում անտես»: Նկատի ունենալով նոր զգեստներ հագած դաժան ուժերի վայրենությունը՝ բանաստեղծը գրում է.

*Ատամը արյան համ առավ կրկին,
Նորից երևաց մոռուքը գայլի...*

Բանաստեղծը միաժամանակ հնչեցնում է հարատևելու կոչը՝ ընդգծելով, որ հողը պետք է բերդ դարձնել, դուռը չբացել, սրբել մամուռը, չմոռանալ, որ՝

*Մենք որդիք Հայկի, արդար ու վսեմ,
Ցավ ու դառնություն այդ ե՞րբ չենք տեսել,
Բայց ոչ մի անգամ, Աստված է վկա,
Արցախին հաղթող չի եղել, չկա...*

1989թ. Վ. Հակոբյանը ընթերցողի սեղանին դրեց նաև «Ամարասի գանգերը» խորագրով գիրքը: Ծանոթանալով գրքի «Այս խաչքարը ես եմ» շարքին՝ զգում ես Արցախի համակող շունչը, լսում արդարության կանչը: Հակոբյանի երգերում գոյատևելու ճշմարտությունը բանաստեղծական ենթագիտակցությունից վերածվում է հույսի և հավատի: Այդ հույսն ու հավատը բխում են բանաստեղծի լեռնաշխարհից, ուր «քարերն էլ հասցե են ու գիր», ուր «ճամփաներ են ծորում արյունից, և քայլը սիրո նշան է հողին»: Ուրբերի տակ ունենալով հողը սրբազան՝ արցախցին՝ ճամփա պահելով, տեսնում է, որ «ընձյուղվում է օրը տաք ափից», և «խորքերով է արմատը երգում»:

«Այս խաչքարը ես եմ» բանաստեղծությունը ծնված է ցավից: Այդ ցավը, բանաստեղծի համոզմամբ, «մեր ժողովրդի կրկնվող պատմության դասն է»: Այդ ցավ-դասը, որպես հոգու ճրագ, մերվել է բանաստեղծի երգերին ու դարձել մաքառման խռովը: Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման հերոսները հառնեցին Վ.Հակոբյանի նոր երգերում: Նա առաջինը ձեռք մեկնեց Սոսեի կերպարին: Ամեն մի հայի համար թանկ ու հարազատ այդ անունը առաջին հերթին խորհրդանշում է հայ ֆիդայուհուն: Ահա ինչու բանաստեղծը նրան ներկայացրեց որպես սիրո ու հայրենիքի ամբողջություն, այսինքն՝ պայքար:

Ըստ բանաստեղծի՝ Աղբյուր Սերոբին ժողովրդի հանդեպ եղած նվիրումից բացի ֆիդայական հրաշքների է տարել նաև Սոսեի մեծ սերը: Պատահական չէ, որ Սոսեն վերածնվեց հայ ժողովրդի ազգային-ազատագրական նորօրյա պայքարում: Շարքը ծնվեց ժամանակին: Որոշ ժամանակ անց բանաստեղծը հրատարակեց երգերի ժողովածու «Սոսե» խորագրով, որի միջով ընդգծված անցնում է պայքարի գաղափարը: Գիրքը բացվում է «Բանաստեղծության համար չեմ ասում...» երգով: Այն հայրենասիրության և ազատասիրության դարավոր զգացումից ծնված խոսք է՝ ասված Արցախյան գոյամարտի ամենաթեժ պահին.

*Մեկ-մեկ թվում է՝ Դավիթն էմ, վրասս
Քառասուն ջաղացքար.
Ձենով Օհանի ձենն է ինձ հասնում:
Մեկ-մեկ թվում է, թե Ավարայրի
հողն է ոտքիս տակ,
Վարդանանց կռվի ձենն է ինձ հասնում:
Մեկ-մեկ թվում է, թե Ճգնավոր էմ՝
Փակված մի վանքում.
Խալխի դուրս կանչող ձենն է ինձ հասնում:
Մեկ-մեկ թվում է՝ Մարդարասպատում
Ընկած զինվոր էմ.
Հաղթանակի սուրբ ձենն է ինձ հասնում:
Մեկ-մեկ թվում է՝ Արցախի սրտից
Կաթած արյուն էմ.
Չմեռնող հույսի ձենն է ինձ հասնում...*

Արցախի սրտից հոսող արյան առաջն առնելու, չմեռնող հույսի ձայնը անկաշկանդ ու հնչեղ դարձնելու միակ ճանապարհը բանաստեղծը համարում է պայքարը ու իրեն նետում մաքառումների հորձանուտը.

*Ժամանակը թռչում է հավքի պես, -
Երկինքը թն է գտնում իր համար,
Թախիծը վարդ է գտնում իր համար,
Հողը երազ է գտնում իր համար,
Եվ ես անունն էմ դառնում մաքառման:
(«Մաքառումներ»)*

Արցախն իր գույներով Վ. Հակոբյանի գեղարվեստական փիլիսոփայության ակունքն է: Պատահական չէ 1989թ. «Լույս» հրատարակչության կողմից տպագրված ընտրանու վերնագիրը. «Արցախա ծուխ»: Ճիշտ ու տեղին է գտել բանաստեղծն իր հոգու ծաղկեփնջի անունը: Հայրենի երկրից մանկության հուշեր ժողովելով՝ հայրական օջախից առնելով անմարում կրակներ, բնության երանգներով լցնելով հոգու շերտերը, ժողովրդի դարավոր ցավն ու չխամրող հավատն առած սրտի ծալքերում, աշխարհի աչքերին համարձակ նայելով, արդարության խիղճը շոշափելով՝ Վ. Հակոբյանը ինքնամոռաց երգի աշխարհն էր մտել ու պիտի վերջապես ասեր իր խոսքը և ասաց:

«Արցախա ծուխը» արարելու-հարատևելու, սիրելու-սիրվելու, մաքառելու-թևավորվելու ծուխ է: Այն երևում է հեռվից: Աչքերից դառն արցունքներ բերող ծուխ չէ դա, այլ մեռնի բույր է, պապ ու տատի շունչ, հոր ու մոր շոյանք, մանկանց ժպիտ, հայրենի հողի գարնանային ցող, ապագային հառած աչքերի շող, ժողովրդական սիրո փայլատակում: Ինչպես անվանի բանաստեղծ Ռ. Դավոյանն է նկատել, «Առանց պաթետիկ խոստովանությունների, վերամբարձ հայտարարությունների, քայլում է բանաստեղծը իր հարազատների ու հարազատ բնաշխարհի միջով ու գրեթե մրմունջով հայտնաբերում է սերերի անեզր մի աշխարհ, խոս ու ծաղկի հետ զրույցից մինչև Արցախ աշխարհի ճակատագրի բարդ ու աննկատելի հանգույցները վերածնելը, չափազանց ժամանակակից հնչողությամբ...

...Վարդան Հակոբյանը մեզ է փոխանցում բանաստեղծական կենդանի, ապրող մի

աշխարհ, որի գոյությունն անժխտելի է» (Ռ. Դավոյան, «Վարդան Հակոբյանի «Ծաղիկ բիբլիական»-ը, «Արցախա ծուխ» ժողովածու, 1989, էջ 277-278):

«Արցախա ծուխ» ժողովածուն բաղկացած է բանաստեղծությունների ութ շարքից և քնարական պոեմներից: Դրանց մի մասի գնահատականները տրված են առանձին-առանձին գրքերի ներկա վերլուծություններում, ուստի դրանց չենք վերադառնա: Ուշադրություն կդարձնենք ընտրանու հավաքական որակին, երգերի ընդհանուր փնջի մեջ բանաստեղծի ստեղծագործական խառնվածքին, գեղագիտական-փիլիսոփայական ընդհանրացումներին: Բիարկե, միաժամանակ կգնահատենք այն ստեղծագործությունները, որոնք նոր են և տեղ չեն գտել նախորդ ժողովածուներում: Գիրքն ամբողջության մեջ առաջին հերթին հնարավորություն է ընձեռում տեսնելու, շոշափելու բանաստեղծի աշխարհընկալման նախնական և նոր միտումները: «Արցախա ծուխ» գրքում կարևորվում է Արցախ և Հակոբյան-բանաստեղծ փոխհարաբերությունը, այն ներհյուսման աստղծը, որ նկատվում է նրա բանաստեղծություններում: Արցախի հանդեպ եղած երախտագետ որդու սերը պարզապես բուրվառվում է որպես բանաստեղծական ներշնչանք: Դրանով էլ պայմանավորվում են բանաստեղծի ինքնատիպության չափն ու կշիռը, գույնն ու փայլը: Ժողովածուի տարբեր մոտիվներ ընդգրկող շարքերում Վ. Հակոբյանը սրտի դողով, հոգու ջերմությամբ, արյան եռքով Արցախի հետ է: Սիրո մեջ էլ երևում է նրա արցախցի լինելը: Իսկ այդ զգացումն արմատներ ունի՝ ձգված մեր պատմության շերտերի մեջ: Այդ արմատները շնչառություն ունեն, սերունդների համար զարկերակ են ու պատվով ապրելու կոչ:

***Տիարք, քարերին ասում եմ՝ ելե՛ք,
և բլուրն ինքը իրեն բացում է,
և երկինքն իրեն հանում է հողից,
և հողում թաղված Խաչը ելնում է,
և ոտք է բռնում ճամփան Արցախա:***

(«Վարդանա բլուր»)

Կյանքը Վ. Հակոբյանի պատկերացմամբ անընդհատ ընթացք է, և այդ կյանքն ասես պորտալարով իր շնչառությունն առնում է Հայոց աշխարհի հին ու նոր գոյամարտերից, պատիվ դարձած հողից, դրոշի ու սիրո փոխված անուններից: Անսովոր պատկերներ է ստեղծում նա, իր երակների մեջ զգում հողի ծլարձակումը, լեռների սանձակոտոր լինելը, օրվա քունքերում բարի բաբախումը, որոնք թրթիռներ են դառնում քնարական հերոսի շուրթերին:

***Փոխվել է ժամը, դասը չի փոխվել,
Ջանգում ձուլվել է Մարդարապատը,
Աչքերս հողում ցանկած կարոտ են,
Մեսրոպ դպիրի ձեռքի մեջ՝ Սուրբ Գիր,
և Ամարասն է իմ դեմից գալիս:***

(«Որդան կարմիր»)

Բանաստեղծը եզրակացնում է, որ մղձավանջը պետք է մարի տան լույսից, ամեն մի նահատակ դառնա «գոյության վճիռ», հավատը՝ «սուրբ տուն», առավոտը՝ հառնումի բաց դաս, «և դարձն արմատանց՝ մարտիրոսություն» («Մղձավանջ»):

Վ. Հակոբյանի պոեզիայում ամեն ինչ շարժման մեջ է: Մեր հին և նոր գրերի ճակատագիրը նույնպես ընթացք է, մինչդեռ, ավաղ, ծանր: Եվ այդ ընթացքը բանաստեղծին թելադրում է զգոնացնող տագնապ, որի միտումն ապրելու ծարավն է: «Ձգված աղեղներ» երգում բանաստեղծը դառն ու հուսադրող զգացումների մի թարմ պատկեր է հյուսում, ուր անտառը երգվում է ամպի մեջ, ձորում խրխինջը կորցնում է

ծիուն: Քնարական հերոսի աչքին լեռնագագաթները աստղերի գոհասեղան են թվում, «խիղճը փնտրում է ու չի գտնում տեր», այդ պատճառով էլ «օրերն անցնող՝ սլացող նետ են»: Սակայն չի հուսալքվում քնարական հերոսը, նա իր աշխարհին նայում է հույսով.

***Չանգը արթնացավ արյան խորքերում,
գոհերը ելնում, միանում են մեզ,
անթիվ ձեռքերով գրկվել է Քիրսը,
և լեռան փեշից մեռն է թափվում.
ինչ էլ որ լինի՝ մենք լինելու ենք:***

Արցախյան շարժումը Հակոբյանի բանաստեղծական խառնարանում նոր երանգներ է առաջացրել: Կարոտի և սիրո երգիչը, տեսնելով 20-րդ դարի մղձավանջը մեր ազատաբաղձ ոգու դեմ, ցատումով խարազանում է չար ուժերի ցինիզմն ու դաժանությունը: «1988 թիվ, փետրվար» բանաստեղծության մեջ հեղինակն արևը պատկերում է իբրև «պատուհանից դուրս նետված» արյունաքամ մանուկ, իսկ երկինքը՝ «սարդի մի ցանց»: Բացվում է կապանքի տուտը, ավարտվում է ամեն մի դիմակահանդես, և պարզվում է, որ ընդհանուր բացականչությունների տակ ոչինչ չի փոխվել, «գայլը գայլն է նույն՝ բնությունը պատիր, գառան մորթու մեջ, թե որջում անտես»: Նկատի ունենալով նոր զգեստներ հագած դաժան ուժերի վայրենությունը՝ բանաստեղծը գրում է.

***Ատամը արյան համ առավ կրկին,
Նորից երևաց մոռոթը գայլի...***

Բանաստեղծը միաժամանակ հնչեցնում է հարատևելու կոչը՝ ընդգծելով, որ հողը պետք է բերդ դարձնել, դուռը չբացել: Սրբել մամուռը, չմոռանալ, որ՝

***Մենք՝ որդիք Հայկի, արդար ու վսեմ,
ցավ ու դատնություն այդ ե՞րբ չենք տեսել,
բայց ոչ մի անգամ, Աստված է վկա,
Արցախին հաղթող չի եղել, չկա...***

Ըստ էության, «Խորանի առաջ» շարքը «Ձգված մեղեդիներ»-ի շարունակությունն է: Այստեղ ևս Արցախ աշխարհն է՝ իր անկրկնելի բնակարանով ու ներկայով, ակնկալություններով ու տվայտանքներով, մաքառումներով և հույսի կրակներով: Այստեղ ևս բանաստեղծի ակննջը Գանձասարի ու Ամարասի զանգերին է, մեր քաջ պապերի ձայնին: Հակոբյանի հայրենասիրական երգերի հյուսվածքը բազմաշերտ է: Նրանցում նա իր միջոցով գնահատում է Հայրենիքը, իսկ Հայրենիքի միջոցով՝ իրեն: Այդ դաշնությունը խենթացնող ուժ ունի, քանի որ Արցախը միայն ապրելու վայր չէ, այլև մեր ազգային գոյության խորհրդանիշը: Դրա շնորհիվ էլ բանաստեղծի գրույցը Արցախ-մոր հետ անմիջական է, փիլիսոփայորեն ներհուն, զգացմունքներով՝ ջերմացնող.

***Բացում եմ սրտիս ծայրերը բոլոր,-
Ո՞վ է, տալիս է անունս, գնամ,
օրն ու գարունը պահն են անհունի,
թե ես քո ցավին տեր չեմ կանգնելու,
գնամ Թարթառը ընկնեմ՝ ինձ տանի,
Սրտի պես բաց են ծայրերը բոլոր:***

Հղանալով հայրենի օջախի հետ զրուցելու տարբեր վիճակներ՝ Հակոբյանը բանաստեղծական տաղաչափական բազմազան խմորումներով ստեղծում է Հայրենիքի կերպարը: Պատկերային նատյուրմորտների մի-մի հիանալի օրինակներ են նրա

շատ բանաստեղծություններ: Շարժման ընթացքի մեջ իրենց վեհությունն են ներկայացնում Արցախի հին ու նոր կոթողները, որոնք բանաստեղծի համար և՛ շոշափելի են, և՛ հոգևոր նախշեր՝ հայրենիքի հայացքով: Բերենք «Գանձասարում» բանաստեղծության ավարտը.

***Արթնացել է Արեգակը ծեզր-ծեզին,-
Ցողը կաթեց խաչքարին ու արցունք դարձավ,
սահեց ամեն տառ ու նախշով, հարցմունք դարձավ,
և Արևը երկնքի մեջ մոմեր վառեց:***

Խորն է բանաստեղծի ցավը: Հեշտ չէ հաշտվել այն մտքի հետ, որ հարազատ Արցախը կարող է կորցնել իր ինքնությունն ու լեզուն: Այդ ցավից է ծնված Վ. Հակոբյանի Արցախապատումը: Դրանով են բացատրվում նրա ընդգծումները՝ բխած հայրենի օջախի անկրկնելի գեղեցկությունից ու քնարական հերոսի ներքին հպարտությունից.

***Չի հոգնում ճամփան ուխտավորների,
մատուռ կա ամեն մի լեռան վրա,
ամեն մի գազաթ զմբեթ է վանքի,
ահա թե ինչու
խաբեությունը խորթ է լեռներին,
և ամեն մի խոսք բառ է սուրբ երգի:***

Երգ է ոչ միայն բառը: Վ. Հակոբյանը Արցախի բոլոր մասունքներում և արցախցու երթ ու եռքի մեջ էլ երգ է տեսնում: Դա սովորական երգ չէ, այլ բերկրանքի ու թախծի, նվիրումի ու արևելու տենչ: Այդ տեսանկյունից էլ բանաստեղծն իր մի շարք հյուսվածքների շաղախը դարձյալ համարում է Հայրենիքի հանդեպ եղած վերաբերմունքը և սերը: Վերցնենք «Արցախուհին» բանաստեղծությունը: Ճիշտ է, նրանում պատկերված է արցախուհու հրաշք պարը, սակայն ոտանավորի ենթատեսքային հոսքը դարձյալ տանում է դեպի Արցախ: Եվ Արցախուհին դառնում է Արցախի խորհրդանշը: Այսպիսով, մարդն ու իր օջախը ներկայացվում են միաձույլ ճակատագրով.

***Արցախուհին... Վանքի զմբեթ-Աստվածամերձ
և մատուռ է անմատչելի, լուսադավան...
Արցախաբույր իր այդ պարով ամենամեծ
լեռը ոտքի տակ կբերի նա խոնարհման,
և՛ հզոր է, և՛ թույլ է նա, և՛ սուրբ, սակայն:***

Հորիզոններ են ընդգրկում Վ. Հակոբյանի հայրենասիրական երգերի շառավիղները: Հայրենիք ասելով նա հասկանում է այն ամենը, ինչով տարածքը և ժողովուրդը միասնանում են ու ստանում իմաստ, ձեռք բերում դիմագիծ, ծիածանվում որպես ազգային ոգի: Առանց հայրենի երկրի իմաստագրվելու է հայրենի օջախն անգամ: Նրանով է գեղեցկանում և արարելու մղում յուրաքանչյուր գործ ու խոսք: Այդ գաղափարն է նշված «Հայոց լեզու» երգում, որ բանաստեղծը նվիրել է ուսուցիչ հորը՝ Սարգիս Հակոբյանին: Մեսրոպատառ մայրենին՝ «Հայերենը, հրաշքներ է գործում: Հայերենն է սերունդներին տարել դեպի հորիզոններ, հայերենն է կոչել՝ սերմացուն հանձնել հողին, ձիգ սլացել է առաջ-հայերենն է, չես բռնացել բարու ոգուն-հայերենն է, վերջին պատառն ես կիսել ընկերներիդ հետ-հայերենն է, «Երբ քայլելիս Քիրս-Մասիսի փայլը կա դեմքիդ, ու մորմոք կա անմեկնելի-հայերենն է, վերջապես՝

*Երբ մայրենի բառի համար,
Երբ մայրենի տառի համար,
տակից քառսուն
ջաղացքարի
կարող ես դու վեր համբառնալ,
անգամ շունչդ ու հոգիդ տալ -
Հայերենն է...
Որն է, ահա, մեր սուրբ լեզուն,
Մեքոպատառ հայերենը,
իմ մայրենին:*

Վ. Հակոբյանի համար հայրենիքն ունի իր պատկերն ու կենսագրությունը: ԱՐՅԱՆ է նրա սուրբ օջախի անունը, որից սկիզբ առած սիրո ծփանքները գնդում-հասնում են գալիքին:

Բանաստեղծի Արցախապատումն ունի կոնկրետ առանձնահատկություններ ու թարմության երանգներ: Ինքնատիպության այդ կողմերն է նկատի ունեցել անվանի գրականագետ Ս. Սարինյանը՝ գրելով. «Մինչև հիմա բանաստեղծների երգը եղել է Ղարաբաղի մասին, բայց այժմ Ղարաբաղն ինքն է դառնում երգ, և Հակոբյանի ինքներգությունն արդեն Ղարաբաղի երգն է: Տեղի է ունենում օբյեկտի և սուբյեկտի ներհյուսումը բանաստեղծական գաղափարի մեջ: Եվ երևի այս ներհյուսումն է, որ արտակարգ շոայլություն է տալիս բանաստեղծի ներշնչանքին՝ բանաստեղծությունը գրեթե դարձնելով կեցության ձև, անհատականության հատկանիշ և լինելության պարագա»:

Վ. Հակոբյանի տաղանդը, հիրավի, աչքի է ընկնում անհատականության հատկանիշներով: Դրանք երևում են և՛ բանաստեղծությունների ձևերի, և՛ արտահայտած գաղափարների խորքերի մեջ: Նրա երգը զգացմունքների և իմաստությունների ներդաշնակ ամբողջականություն է: Ինչի մասին էլ խոսում է նա, դատում է պատկերներով, հոգեբանական շեշտերով, անմիջական ներշնչանքով.

*Անհաղորդ՝ ժայռին ծվարած ծաղկի
ծարավ տենչանքին,
Ձորն ի վար ձգվում ու հեռանում է
գետակը փոքրիկ...
ծաղիկը, սակայն, թևը երկարում,
Ու խորն է ձգվում արմատն ավելի,
Ականջը լարած
կարծես շատ հեռվից, հեռվից ճաճանչող
ինչ-որ ձայների,
Դե ի՞նչ, ձորակով հեռացող ջրի
Գարկաչն է միշտ նրան դալար պահում:*

Ժամանակն է բարձրաձայնելու, որ Վարդան Հակոբյանի պոեզիան Արցախ աշխարհի գեղեցկության, իմաստության, խիզախության, հույսի և հավատի աստվածահաճո պատկերն է՝ միտված գալիք սերունդներին:

Художественный образ Арцаха в поэзии Вардана Акопяна - **СОКРАТ ХАНЫАН**- Вардан Акопян является одним из выдающихся представителей современной армянской поэзии. Его произведения удостоились высокой оценки со стороны известных выдающихся литературоведов. Рожденный в Арцахе, Акопян любовью и гордостью преданного сына, очарованный силой искусства, создал неповторимый художественный образ материнской колыбели: как неотделимая часть исторической Армении. Неслучайно озвучены высокие оценки о его поэзии со стороны общеизвестных литературоведов.

Ключевые слова: Вардан Акопян, Армянская поэзия, талант, сборники: “Мелодии”, “Дым Арцаха”, “Колокола Арцаха”, цикл: “Перед ризницей”, академик Сергей Саринян, поэзия В. Акопяна.

THE ARTISTIC IMAGE OF ARTSAKH IN VARDAN HAKOBYAN'S POETRY – **SOKRAT KHANYAN** - Vardan Hakobyan is one of the prominent representatives of modern Armenian poetry. His works have been highly praised by famous literary critics of our time. Born in Artsakh, Hakobyan, with the love and a pride of the devoted son, with the power of art, created the unique artistic image of the cradle as an inseparable part of historical Armenia. It is no coincidence that his poetry is highly praised by famous literary critics.

Keywords: Vardan Hakobyan, Armenian Poetry, a talent, collections: Melodies, The Smoke of Artsakh , "The bells of Amaras " , "In front of the Tabernacle" series, Academician Sergey Sarinyan

ԱՔՐԱՀԱՄ ԵՐԵՎԱՆՑԻՆ ԵՎ ՆՐԱ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊԱՏԵՐԱԳՄԱՑՆ» ԵՐԿԸ

Հոդվածում ներկայացվում են 18-րդ դարի պատմիչ Աբրահամ Երևանցու կենսագրության ժլատ ուրվագծերն ու նրա «Պատմութիւն Պատերազմացն» երկի ընդհանուր, բայց հատկանշական բովանդակությունը: Երկի՝ հատկապես գրական արժեքի վերլուծության տեսանկյունից հաշվի են առնվել հրատարակված երկու բնագրերն էլ: Քննվում են բանասիրական, արժեքանական, գաղափարական, թեմատիկ, լեզվաոճական բազմաթիվ հարցեր:

Բանալի բառեր. պատմագրություն, ինքնագիր, արտագրություն, աղբյուրներ, ժանր, ընդօրինակություն, հիշատակարան:

Աբրահամ Երևանցու «Պատմութիւն պատերազմացն» երկը, թեպետ ուշ հայտնաբերվելու պատճառով որոշակիորեն չի ենթարկվել բանասիրական և պատմագրական կոնկրետ դասակարգումների, և համեմատաբար սակավ է շրջանառվել, այնուամենայնիվ, իր ժամանակաշրջանի հայ պատմագրության կարևոր երկերից մեկն է: Ստեղծված լինելով հայ դասական պատմագրության ժանրային անկման և, ըստ էության, վերացման շրջանում, Աբրահամ Երևանցու Պատմությունը յուրովի ամբողջացնում է ժանրի այսպես կոչված «պարտությունը» գիտական պատմագրությանը: Մյուս կողմից՝ Աբրահամ Երևանցին, դրսևորելով պատմագրության ժանրի երբեմն թեպետ ինտուիտիվ գիտակցություն, ստեղծել է մի երկ, որը, արժեքավոր լինելով պատմագիտական տեսանկյունից, միաժամանակ ուշագրավ հատկանիշներ է երևան բերում նաև որպես գրական երկ: Նրա «Պատմութիւն պատերազմացն» երկը, այդ առումով, որոշակի հատույթներում նախանշում է նաև ձևավորվող հայ նոր գրականությանը հետագայում բնորոշող երևույթներ:

1.

Նույնիսկ այն դեպքում, երբ 1938 թվականին առաջին անգամ լույս տեսավ Աբրահամ Երևանցու «Պատմութիւն պատերազմացն» աշխատությունը, նրա մասին կենսագրական չնչին իսկ տվյալներ հայտնի չէին: Այդ պատճառով է նաև, որ Պատմության առաջին հրատարակության նախաբանում անգամ ոչ մի խոսք չկա նրա անձի մասին: Ուշագրավ է, որ այն ձեռագրի ընդօրինակությունում, որի հիման վրա կատարվել էր այդ հրատարակությունը, Աբրահամ Երևանցի անունն իսկ չի հիշատակվում¹: Հետագայում էլ, մոտ 40 տարի Աբրահամ Երևանցու անձը պարուրված էր

¹ «...պատճենն արտագրողը բաց է թողել հեղինակի անունը», – գրում են հրատարակիչները (տե՛ս **Աբրահամ Երևանցի**, Պատմութիւն պատերազմացն, 1721-1736 թ., Երևան, ԱրմՖանի հրատարակչություն, 1938, էջ 5): Հ. Սահակ Ճեմճեմեանը, որի աշխատասիրությամբ հետագայում լույս տեսավ Աբրահամ Երևանցու Պատմության երկրորդ հրատարակությունը, այս առումով հակված է ենթադրելու, որ «շատ հաւանաբար՝ նիւթին տեղեակ անձ մը տուած է հեղինակին ճշգրիտ անունը, եւ այն

որոշակի մշուշով²: 1977 թվականին նրա աշխատության բուն բնագրի հրապարակումը Վենետիկում՝ Շ. Սահակ Ճեմճեմյանի աշխատասիրությամբ, երևան բերեց թեպետ ժլատ, բայց, այնուամենայնիվ, կարևոր ու ինչ-որ առումով ողբերգական կենսագրական մանրամասներ: Պարզվեց, որ Պատմության ինքնագիրը ձեռագրում պահպանվել է Աբրահամ Երևանցու թողած մի փոքրիկ հիշատակարան, որտեղ մի կողմից՝ առկա են կենսագրական որոշ տվյալներ, մյուս կողմից՝ նշվում են այն շարժառիթները, որոնք դրդել են շարադրելու Պատմությունը, որը նույնպես պակաս կարևոր հանգամանք չէ. «Վերջ եղավ զայս պատմութիւնիս բանըն, այլ ոչ գիտեմ քան սիս յառայվել. այս էր որ տեսի աչաց իմոյ գրեցի եւ յիշեցի, թվ. ՌՃՀԳ (=1724) ումն մինչ ի 1183 (=1734): Շուրջ եկի ի մէջ օսմանցու, ի մէջ պարսոյ, տեսի եւ գրեցի, եւ Երեւանցի Յօհանէս որդի Աբրահամ, որ զայս յիշեցի այս պատմութիւնըս: Օվ աստուածայսէր քրիստոնէս, կարոյայ զայս պատմութիւնըս, ողորմիս ասէ իմ հօր Յօհանին, իմ մայր Մարամին եւ քույր Դարոյայ խաթունին, իմ քոյր Շահումին, իմ եխպար Կոստանդին, եխպար Ղարայկօզին, եխպար Ատի բէկին, եխպար Փիլումին, եխպար Պետրոսին, եխպար Փանոսին: Զայս անունքս որ յիշեցի, ի ձեռն օսմանցու մարտիրոսայցան, թէ մայր, թէ հայր, թէ եխպար»³:

Այս ժլատ, բայց չափազանց խոսուն հիշատակարանային վկայագրությունը երևանում է մի մեծ ընտանիքի ողբերգական պատմություն: Հստ ամենայնի՝ Աբրահամ Երևանցու բոլոր հարազատները օսմանյան սրի զոհեր են դարձել:

Իր կրթության, գործունեության բնույթի մասին Երևանցին չի խոսում, սակայն դատելով պատերազմական գործի վերաբերյալ նրա հստակ իմացություններից, դրանց մեկնաբանություններից, գենքերի, զինատեսակների մասին գիտելիքներից, կարելի է ասել, որ ռազմական գործում ինչ-որ առումով թրծված, գուցե չափազանց հմուտ աշխարհիկ անձնավորություն է եղել: Կրթությունն, ըստ ամենայնի, թերի է, քանզի նրա Պատմության ինքնագիրը բնագիրը լեցուն է հազարավոր ուղղագրական, ոճական սխալներով, թեպետ պատումը շատ կենդանի է, և երևում է, որ Աբրահամ Երևանցին լավ պատմող է եղել: Պատմությունը գրելուց հետո նրա ճակատագիրը նույնպես անհայտ է:

2.

Աբրահամ Երևանցու մեզ հասած միակ աշխատությունը «Պատմութիւն պատերազմացն» վերնագրով երկն է: Այն բավական ուշագրավ և հետաքրքիր հրատարակչական պատմություն ունի: Առաջին անգամ լույս է տեսել 1938 թվականին, Երևանում, Արմֆանի հրատարակչությամբ, պրոֆ. Սմբատ Տեր-Ավետիսյանի խմբագրությամբ: Հրատարակության կարճ առաջաբանում պարզաբանվում են երկի ձեռագրի հետ կապված որոշ հարցեր: Նշվում է, որ ձեռագիրը Ազգային ընկերության

Լեոյի միջոցով ելած է հրապարակ» (տե՛ս՝ **Աբրահամ Երևանցի**, Պատմութիւն պատերազմացն, 1721-1736 թուի, պատրաստեց՝ Շ. Սահակ Ճեմճեմյան, Վենետիկ-Ս. Ղազար, 1977, էջ 6:

² Իր 1971 թվականին լույս տեսած «Երևանի պատմությունը. 1500-1800 թթ.» գրքում, օրինակ, Թադևոս Հակոբյանը հետևյալն է գրում. «Նա (Աբրահամ Երևանցին.՝ Ա.Ն.) իր մասին կենսագրական տեղեկություններ չի հաղորդել: Նրա կյանքի վերաբերյալ ընդհանրապես հիշատակություններ չկան: Միայն հայտնի է, որ նա Երևանցի պատմագիր է, ապրել է XVIII դարում և գրել է «Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թթ.» վերնագիրը կրող պատմագրական երկը» (տե՛ս՝ էջ 411):

³ Տե՛ս՝ **Աբրահամ Երևանցի**, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի, պատրաստեց՝ Շ. Սահակ Ճեմճեմյան, Վենետիկ-Ս. Ղազար, 1977, էջ 6:

մատենադարանին նվիրել է Լեոն՝ 1928 թվականի հունվարի 13-ին, «սակայն առանց տպագրության իրավունքի»⁴, որի հիման վրա էլ իրականացվել է երևանյան հրատարակությունը: 1939 թվականին Երևանցու Պատմությունը թարգմանվել և լույս է տեսել նաև ռուսերեն⁵:

Հետագայում, 1977 թվականին, Հ. Սահակ Ճեմճեմյանի աշխատասիրությամբ իրականացվեց Աբրահամ Երևանցու Պատմության մի նոր հրատարակություն (լույս է տեսել Վենետիկում), որի նախաբանում լույս սփռվեց մի շարք դեռևս անհայտ հանգամանքների վրա: Պարզվեց, որ 1938 թվականի հրատարակությունն իրականում կատարվել է ոչ թե Աբրահամ Երևանցու ինքնագրի պատճեն-արտագրությունից, այլ Մխիթար Աբրահոբ աշակերտներից Հ. Մատթեոս Եվդոկացի Գարագաշյանի (1691-1772) կողմից կատարված խմբագրության պատճեն-արտագրությունից: Ստացվում է, որ Աբրահամ Երևանցու Պատմությունն ունի երկու բնագիր՝

ա) ինքնագիր բնագիր, որն ունի «Պատմութիւն թագայորի Պարսից» կամ «Պատմութիւն Պարսոյ» վերնագիրը,

բ) խմբագրություն բնագիր:

Հ. Սահակ Ճեմճեմյանն այսպես է բացատրում այդ խմբագրության անհրաժեշտությունը. «ԺՀ. դարու գրական ըմբռնումով՝ չէր կարելի հրապարակ հանել Աբրահամ Երևանցիի ինքնագիր օրինակը ինչպես որ էր: Միւս կողմէ, սակայն, Մխիթարեան վարդապետ մը, չուզելով որ պատմութիւնը մնար փոշիներու տակ ու անծանօթ, ձեռքի տակ ունենալով Աբրահամի ինքնագիր օրինակը, կենդանացուցած է զայն, շարադրելով ամբողջապես նոր»⁶: Այս առումով, կարծում ենք, շատ կարևոր է, որ Հ. Սահակ Ճեմճեմյանը նույն գրքում հրատարակել է Պատմության երկու տեքստերն էլ:

Այս հանգամանքը, բնականաբար, չի փոխում Աբրահամ Երևանցու Պատմության **բովանդակությունը**, սակայն պատմահայեցողության, իրադարձությունների տրված գնահատականների, պատճառահետևանքային կապերի բացահայտման և առավել ևս՝ պատմագրության ժանրային օրենքներին և տրամաբանությանը ենթարկվելու, գրական-գեղարվեստական հատկականությունների երևանման տեսանկյունից, իրականում գործ ունենք երկու **տարբեր** աշխատությունների հետ: Ուստի բուն գնահատում-արժևորումի տեսանկյունից նախնառաջ պետք է դիտարկել Աբրահամ Երևանցու Պատմության **ինքնագիր բնօրինակը**, բնականաբար, արժանին մատուցելով նաև Հ. Մատթեոս Եվդոկացի Գարագաշյանին և նրա կատարած աշխատանքին և ըստ հարկի անդրադառնալով ու արժևորելով:

Ժամանակագրական տեսանկյունից ընդգրկելով ավդանների ապստամբությունից մինչև Նադիր Շահի գահակալությունը կատարված դեպքերը (1721-1736 թթ.)՝ Աբրահամ Երևանցու «Պատմութիւն պատերազմացն» երկը արժեքավոր աղբյուր

⁴ Տե՛ս **Աբրահամ Երևանցի**, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թ., Երևան, ԱրմՖանի հրատարակչություն, 1938, էջ V:

⁵ **Абраам Ереванци**, История войн (1721-1736 г.г.), Ереван, 1939.

⁶ **Աբրահամ Երևանցի**, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի, պատրաստեց՝ Հ. Սահակ Ճեմճեմյան, Վենետիկ-Ս. Ղազար, 1977, էջ 8: Աբրահամ Երևանցու Պատմության այս հրատարակությունը պարունակում է բավական հանգամանալից առաջարան, որում մանրամասն ներկայացված են երկի ձեռագրերի և խմբագրումների հետ կապված բոլոր մանրամասները՝ ընդհուպ ձեռագրերի մանրակրկիտ նկարագրությունը:

Է Անդրկովկասի և ռուս-պարսկական հարաբերությունների պատմության համար: Պատմության կարևոր վկայագրություններից է Բ գլուխը, որտեղ մանրամասն նկարագրված է 1724 թվականի Երևանի պաշտպանությունը: Եվ ընդհանրապես Երևանցու Պատմությունը հետաքրքիր տեղագրական տվյալներ է պարունակում հին Երևանի մասին, որոնք հատկապես այսօր շատ արժեքավոր են: Եվ ընդհանրապես XVIII դարի այդ 15 տարիներին Մերձավոր Արևելքի քաղաքական իրադարձությունների, տարբեր ժողովուրդների փոխհարաբերությունների, նրանց մղած պատերազմների ուսումնասիրության առումով Աբրահամ Երևանցու Պատմությունը չափազանց արժեքավոր աղբյուր է, մանավանդ որ պատմիչը՝ բավական այսպես ասած՝ անպաճույճ ոճ ունի և պատմելու նյութի հանդեպ անսեթևեթ վերաբերմունք, որը մղում է վկայագրել գրույցներ, դեպքեր, որոնք, այսպես կոչված՝ քննական, կանոնիկ պատմագրությունը զանց կառնեք, և որոնք հետաքրքիր են նաև ազգագրական տեսանկյունից:

Ըստ էության անհայտ լինելով՝ Աբրահամ Երևանցու պատմությունն, այնուամենայնիվ, մինչ հրատարակվելը հիշատակվում է տարբեր աշխատություններում: Նախ՝ Ղևոնդ Ալիշանն է օգտվել Երևանցու աշխատության Վենետիկում պահվող ձեռագրից՝ առանց աղբյուրը նշելու⁷, այնուհետև Լեոն է իր տարբեր աշխատություններում քաղվածքներ արել: Մասնավորապես «Պատմութիւն Երևանի Հայոց թեմական հոգևոր դպրոցի (1837-1912)» աշխատության մեջ նա գրում է. «...Աբրահամ Երևանցին, մինչև այժմ անհայտ մնացած մի հայ պատմագիր, որի գործը դեռ ձեռագիր, գտնվում է Վենետիկի Մխիթարյան վանքի մատենադարանում»⁸: Այնուհետև ծանոթագրության կարգով հավելում է. «...պատմությունը գրված է մաքուր գրաբար լեզվով և պարունակում է իր մեջ շատ հետաքրքրական, մինչև այժմ անծանոթ մնացած մանրամասնություններ»⁹: Ըստ էության, Լեոյի այս գնահատականը առաջինն է Աբրահամ Երևանցու և նրա աշխատության մասին, թեպետ «գրված է մաքուր գրաբար լեզվով» արտահայտությունը վկայում է, որ նրան ծանոթ տեքստը Հ. Մատթեոս Եվդոկացի Գարագաշյանի խմբագրածն է:

Ինչևէ, Ալիշանի և Լեոյի աշխատություններում կիրառությունները արդեն իսկ վկայություն են Աբրահամ Երևանցու վկայագրած տեղեկությունների պատմագիտական արժեքի:

Մյուս կողմից՝ հիշատակարանում հավաստված այն փաստը, որ ինքը նկարագրված իրադարձությունների ականատեսն է, ինչպես նաև այն հանգամանքը, որ նա ձգտում է բոլոր մանրամասներով ու նրբերանգներով ներկայացնել իրադարձությունների ժամանակագրությունը տարիներով, ամիսներով, օրերով ու նույնիսկ երբեմն ժամերով, մի խոսքով՝ հնարավոր ամենայն ստույգությամբ, Աբրահամ Երևանցու Պատմությունն ինքնին արժևորում է որպես սկզբնաղբյուր: Ավելորդ չէ նշել, որ աշխատության այս առանձնահատկությունները պատմագիտական արժեքի տեսանկյունից ընդհանրական են այն յուրահատկություններին, որոնցով բնորոշվում է հայ պատմագրությունը իր այսպես կոչված՝ անկման շրջանում: Այն է՝ առավել քիչ գեղարվեստականություն, առավել քիչ վերլուծություն, և գլխավորաբար՝ ժամանա-

⁷ Տե՛ս **Ալիշան Ղևոնդ**, Այրարատ, Վենետիկ-Սուրբ Ղազար, 1890, էջ 305:

⁸ **Լեո**, Պատմութիւն Երևանի Հայոց թեմական հոգևոր դպրոցի (1837-1912), Թիֆլիս, 1914, էջ 72:

⁹ Տե՛ս նույն տեղը:

կագրություն: Սա կարելի է ասել, ժանրային առանձնահատկություն է: Այստեսակ ժանրային մոտեցումը, բնականաբար, ազդում է երկի գրական արժեքի վրա, գուցա հեռ՝ բարձրացնելով պատմագիտական արժեքը: Այս առումով հատկանշական է նաև Երևանցու՝ իբրև պատմողի դիրքավորումը: Նա ձգտում է վկայագրել գլխավորապես պատմությունը՝ առանց ոճական ու լեզվական խնամքի: Եվ, ինչպես իրավացիորեն նկատում է Հ. Սահակ Ճեմճեմյանը, «Աբրահամ գրած է ԺԸ. դարու առաջին կեսին, երեւանեան գաւառաբարբառով, բացատրութիւններով եւ բառաթերքով... Այս երեւոյթն ալ գիրքին կուտ ալ հարազատութեան նոր փաստ մը եւ միաժամանակ վստահութիւն, թէ հեղինակը հետամուտ չէ եղած խնամելու լեզուն եւ բացատրութիւնները, այլ **ուզած է աւանդել մեզի լոկ պատմութիւնը**, ինչպէս որ տեսած է եւ լսած»¹⁰:

Ամեն դեպքում, այն հանգամանքը, որ Աբրահամ Երևանցին, այսպես ասած՝ բնատուր պատմիչ է և ներկայացնում է բացառապես իր տեսածն ու լսածը՝ հիմնականում հենվելով բանավոր աղբյուրների վրա, առավել հաճախ՝ առանց քննաբանական մոտեցման ու հայացքի, կարող է երկակի տպավորություն ստեղծել՝ նրա պատմագրական երկի պատմագիտական արժեքի շուրջ: Նախ՝ այն պարագան, որ Աբրահամ Երևանցին բացարձակապես ոչ մի նախընթաց կամ զուգընթաց գրավոր աղբյուր չի վկայակոչում, նրա երկը դուրս է թողնում այսպես կոչված՝ քննաբանական հատույթից: Մյուս կողմից՝ թե՛ իր՝ որպես ականատես պատմիչի հանգամանքը, թե՛ նրա հաղորդած տարբեր տեղեկությունների ստույգության փաստարկումը հետագա այլ աղբյուրներով, մղում են արժանահավատ համարել նրա երկի վավերագրումները, ընդհանրության մեջ նրա պատմագիտական արժեքը համարել բարձր:

Այնուամենայնիվ, Աբրահամ Երևանցու Պատմության պատմագիտական արժեքի մասին խոսելիս, հատկապես վերլուծականության, ընդհանրացումների, գնահատումների տեսանկյունից, պետք է հաշվի առնել ուշագրավ մի հանգամանք: Հարցն այն է, որ նրա Պատմության ինքնագրի հետագա խմբագրողը ոչ միայն ոճական ու լեզվական առումով է շտկել տեքստը, այլև հավելել է որոշ գնահատականներ և մեկնաբանություններ՝ հենց պատմական իրադարձությունների գնահատման տեսանկյունից: Ուստի ստացվում է, որ մի շարք դեպքերի ու իրադարձությունների գնահատականը, ըստ էության, ոչ թե Աբրահամ Երևանցունն է, այլ նրա ձեռագրի խմբագրին: Իհարկե, ինչպես նշում է Լևոն Բաբայանը՝ «Այդ լրացումներն ու մեկնաբանությունները ոչ միայն ամբողջացնում են Երևանցու բնագիրը, այլև իրենց պարունակած բովանդակությամբ նոր իմաստ են տալիս առանձին իրադարձություններին ու երևույթներին, ավելի որոշակի բացահայտում դրանց պատճառները»¹¹, սակայն **նոր իմաստ** ասվածն ամեն դեպքում խմբագրի միջամտությունն է, ընդ որում՝ հետահայաց, երբ արդեն այլ աղբյուրներով, վերլուծություններով ու գնահատումներով արժևորվել էր կատարվածը: Այլ խոսքով՝ նման դեպքերում Աբրահամ Երևանցու գնահատումները դառնում են **վերագրելի** և չեն արտահայտում նրա իմացությունն ու

¹⁰ **Աբրահամ Երևանցի**, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի, պատրաստեց՝ Հ. Սահակ Ճեմճեմյան, Վենետիկ-Ս. Ղազար, 1977, էջ 7-8 (ընդգծումը մերն է. – Ա.Ն.):

¹¹ **Բաբայան Լևոն**, Աբրահամ Երևանցու «Պատմութիւնը», «Պատմաբանասիրական հանդես», 1981, թիվ 3, էջ 145:

հայացքները: Մասնավորապես Աբրահամ Երևանցին իր վկայագրությունների շրջարկում փաստագրելով, որ օսմանցիները Էջմիածինը չեն գրավել, գրում է. «Է [=7] օր անցավ, օսմանցին չէր գնացել յԷջմիածին. Ըստամբօլու մին Ֆարման Էկավ թէ՝ «ՅԷջմիածնու հեղ բան չունէք»»¹²: Սա ընդհանրացում է տեղեկության մակարդակով, որն ընդհանրապես բնորոշ է Աբրահամ Երևանցուն: Նա շատ հաճախ չի խորանում պատճառահետևանքային կապերի մեջ, պատմաքաղաքական էքսկուրսներ չի կատարում, հավելյալ աղբյուրներ չի վկայակոչում, նա պարզ վկայագրող է ընդհանրապես: Սակայն նրա Պատմության խմբագիրը հետահայաց անում է նաև որոշակի համադրումներ ու վերլուծություններ, որոնք ի վերջո Պատմության տեքստին հաղորդում են որոշակի վերլուծականություն: Բերված հատվածի խմբագրումն այդ առումով չափազանց խոստն է. «Զի ի Ժամանակին, յորում լինէր զօրացն օսմանցոց ի Հայաստան միսիլ, ոմն Բարեպաշտ մեծատուն ի հայոց ազգէ, Սեղբոս անուանեալ, որ իրաց պիտոյից արքունի պաղատանն ծառայելով, շնորհս գտեալ էր եւ էր ինքն անուանի քան զամենայն մեծամեծս հայոց, որք ի Կոստանդնուպօլիս են, բարեխօս եղեալ էր վասն Էջմիածնին, որպէսզի առ խնամս ազգիս հայոց եւ առ օգուտն արքունի հրաման տացէ սուլտանն եւ պատուիրեսցէ փաշային՝ ի սուրբ Էջմիածինն անխալել, եւ ոչ թոյլ տալ զօրաց իւրոց զայն սուրբ տեղին ասպատակել: Եւ փաշայն, ըստ բանից սուլտանին հրովարտակի, զգուշացոյց զգօրսն յասպատակելոյ, եւ եղ անդէն գունդս զինուորաց ի պահպանութիւն»¹³:

Ընդհանրապես, նման օրինակները Աբրահամ Երևանցու Պատմության բնագրի և խմբագրման միջև տարբերությունների առումով շատ-շատ են: Դրանք պետք է վերլուծվեն պատմագիտական տեղեկության ընդհանրական գնահատումի մեջ, բայց ոչ երբեք որպես Աբրահամ Երևանցու աշխատանք, գնահատական, տեղեկությոյ կամ տեսակետ:

3.

Պատմության ձեռագիր հիշատակարանում Աբրահամ Երևանցին վկայում է, որ ականատեսն է այն բոլոր իրադարձությունների, որոնք շարադրել է: Ականատեսություն փաստարկող և հայ պատմագրական տեքստին բնորոշ այնպիսի ներտեքստային միավոր, ինչպիսին է «ասացանք», «յիշեցանք» և այլն, այս առումով ամենատարածվածն է Երևանցու Պատմության մեջ: Մյուս կողմից՝ առկա են նաև ներբերվող տեքստին բնորոշ կաղապարներ՝ «եւ լսեցի», «այլոց խօսելովն» և այլն, վկայում են այն մասին, որ Պատմության որոշ դրվագներ նա գրի է առել ուրիշներից լսելով: Այլ խոսքով՝ Երևանցու Պատմության մեջ առկա են նաև **բանավոր աղբյուրներ**: Ըստ էության այս դեպքում գրեթե բացառապես գործ չունենք **գրավոր աղբյուրների** հետ, քանզի Երևանցու Պատմությանը բնորոշ է նաև այսպես կոչված՝ շտապությունը, այն է՝ արագորեն վկայագրել այն ամենն, ինչ այդ պահին հասանելի է: Գրավոր աղբյուրների հետ լրացուցիչ աշխատանք, եթե դրանք, իհարկե, եղել են, Երևանցին չի տարել և իր ունեցած տեղեկությունները ստուգելու, փաստարկելու կարիք չի ունեցել:

¹² **Աբրահամ Երևանցի**, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի, պատրաստեց՝ Հ. Սահակ Ճեմճեմեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1977, էջ 25:

¹³ **Աբրահամ Երևանցի**, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի, պատրաստեց՝ Հ. Սահակ Ճեմճեմեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1977, էջ 99-100:

Աղբյուրների առումով հարկ է նշել ևս մեկ կարևոր հանգամանք: Եթե բանավոր աղբյուրներին դիմելիս հայ պատմագիրները, ընդհուպ մինչև ժանրի անկման շրջանում երևումները, յուրօրինակ **գրական** աշխատանք էին տանում՝ այն է, լսածը տեղադրում էին որոշակի ներժանրային հատույթի մեջ (գրույց, վարք, վկայաբանություն և այլն), ապա Աբրահամ Երևանցուն եթե չասենք անձանոթ, ապա գոնե խորթ է աշխատանոցային այդ մանրամասնը: Լսած տեղեկությունը նա միայն վերաշարադրում է՝ այն պարզապես ենթարկելով իր պատմելու ոճին:

Աբրահամ Երևանցու Պատմության աղբյուրների քննության տեսանկյունից առանձին թեմա է խմբագրված տարբերակի հարցը: Այստեղ Հ. Մատթեոս Եվդոկացի Գարագաշյանը, բնականաբար, անխուսափելիորեն օգտվել է **Պատմության ստեղծումից հետո հատկապես Երևան եկած** գրավոր և բանավոր աղբյուրներից՝ այդ կերպ հարթելով Աբրահամ Երևանցու վկայագրությունների որոշ խտրեր:

Աբրահամ Երևանցու Պատմության կառուցվածքը տարբեր հրատարակություններում ներկայացվում է տարբեր կերպ: 1938 թվականի երևանյան հրատարակության մեջ Պատմությունը բաղկացած է 7 գլխից, որոնցից յուրաքանչյուրը վերնագրված է այդ գլխի բովանդակության, այսպես կոչված, անոտացիայով: Նույն սկզբունքը պահպանված է 1977 թվականի վենետիկյան հրատարակության՝ Հ. Մատթեոս Եվդոկացի Գարագաշյանի խմբագրած տարբերակում, բայց այս դեպքում գլուխների թիվը 21 է (ԲՄ): Աբրահամ Երևանցու Պատմության ինքնագիր բնագիրը նույնպես բաղկացած է 21 (ԲՄ) գլխից, սակայն բացակայում են վերնագրերը: Վերնագրերի գոյությունը բովանդակային առումով ոչինչ չի փոխում, բնականաբար, սակայն ի ցույց է դնում Երևանցու Պատմության խմբագրի քաջատեղյակությունը պատմագրության ժանրային օրինաչափություններին, մասնավորապես վերնագրային պոետիկայի յուրահատկություններին:

Ամեն դեպքում նույնիսկ առանց գլուխների վերնագրումների Աբրահամ Երևանցին բավական տրամաբանված անցումներով և կենտրոնացվածության ձգտող պատումով է շարադրում իրադարձությունները՝ միշտ կարևորել ժամանակագրական հստակ ընթացքը, իսկ դրանից կամ իրադարձություններից երբեմն հարկադրյալ շեղումները մշտապես արձանագրում է և կրկին այդ կետին վերադառնալիս կրկին շեշտում:

«Հայ պատմագիրներից և ոչ մեկը պատերազմները, բանակների տեղաշարժերը, արշավանքները, անցած ուղիները, քաղաքների ու բերդերի պաշարումն ու գրավումը, զորամիավորումների մարտական ուժերի ու զենքերի տեսակների քանակական տվյալները, զորավարների կիրառած տակտիկան ու ստրատեգիան այնքան մանրամասն չի նկարագրել, ինչպես այդ արել է Աբրահամ Երևանցին»¹⁴, գրում է Լևոն Բաբայանն ու ըստ այդմ կատարում ուշագրավ մի եզրահանգում. «Փաստորեն նա **պատերազմների պատմության պատմագիր** է, ինչը և հանդիսանում է նրա՝ իբրև պատմագրի, առանձնահատուկ կողմը»¹⁵:

Եվ ահա, պատերազմների այս պատմությունը սկսվում է ավդանների՝

¹⁴ **Բաբայան Լևոն**, Աբրահամ Երևանցու «Պատմությունը», «Պատմաբանասիրական հանդես», 1981, թիվ 3, էջ 149:

¹⁵ Նույն տեղում: Ընդգծումը մերն է.՝ Ա. Ն.:

Պարսկաստան արշավանքի դրվագումով և ավարտվում Նադիր խանի թագադրության և օսմանցիների հետ հաշտության փաստով: Ընդ որում՝ հետաքրքիր է, որ Երևանցին Նադիր խանի գործունեությանն ավելի հանգամանալից է անդրադառնում, քան, օրինակ, Հայաստանում այդ նույն ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձություններին: Այդ դրվագներում Երևանցին բավական համառոտում է իր խոսքը:

Աբրահամ Երևանցու համար, իբրև պատմության մեկնակետ, ընտրում է 1721 թվականին ավղանների Միր-Մահմուդ շահի կողմից Սպահան քաղաքի գրավումը և Հուսեյն շահի սպանությունը: Ըստ ամենայնի՝ այսպիսի մեկնակետը պայմանավորված է Երևանցու այն ըմբռնմամբ, որ հենց այդ իրադարձությունը հիմք դրեց Սեֆյան հարստության անկմանը: Հուսեյն շահի՝ մի կերպ փախուստի դիմած Թահմազ որդին, ժառանգելով հոր գահը, զորք է հավաքում և սկսում պատերազմել ավղանների դեմ: Պարտվելով՝ նա դիմում է վրաց Վախթանգ թագավորին՝ օգնության համար, իսկ վերջինս մերժում է՝ պատճառաբանելով, որ ինքն էլ է պատերազմի մեջ օսմանցիների հետ: Թահմազի հրամանով Մահմադ կուլի խանը, որ մահմեդականությունն ընդունած վրացի էր, իր զորքով հարձակվում է Վախթանգի վրա և պարտություն կրում:

Իրադարձությունների վկայագրումը այնուհետև հերթագայվում է Վրաստանում տեղի ունեցող իրադարձություններով, օսմանցիների կողմից Թիֆլիսի, այնուհետև Կարբի գյուղի գրավումով: Աբրահամ Երևանցին առանձին գլխով ներկայացնում է 1724 թվականի Երևանի պաշարումը: Սա Երևանցու պատմության թերևս լավագույն հատվածներից մեկն է և՛ բովանդակային ընդգրկմամբ, և՛ թե մանրամասնությունների առատությամբ, և՛ հատկապես ողբերգական մանրամասների պատկերավոր նկարագրությամբ. «Օրն ուրբաթ, մտան քաղաքն: Աստուած փրկէ, Տէրն ազատէ. կռիվ էլաւ յառավօտուն մինչ ի յերիզվայ պահն, զպանելօլ օսմանցի քրիստոնէն, քրիստոնէն օսմանցուն, մինչ ի *հղ* [=24] պահն: Աստուած ազատէ, Տէր փրկէ, այնչաբ յարուն թաբեց որ Ջանկու ջուրն կամրայծառեց, յարունայ հոտն ի մէջ քաղաքէն կը բուրէ, ողորմելի քրիստոնէքն բովանդակ գտուրն քաշեցին, ոչ մնաց քրիստոնայ. անմեղ արդարներըն գերի վարեցին, կուս աղչիքունքն ջրում խեղդեցվալ, այսչաբ գերի գնաց ի ձեռն օսմանցու: Գերիքն լեցվեց օսմանցու չատիրներն, մնացել անտէր եւ անճաճանչ ողորմելի արդարբոյ: Եղալ պղծութիւն, անօրէնութիւն, վասն քրիստոնի մեղացն, որ մեղքն բազմացալ քրիստոնի:

Թվին ՌՃՀԳ [1724]ումն, ունիսի է [=7]ումն, օսմանցին առաւ քաղաքն, նստաւ: Մնաց բերդն»¹⁶:

Երևանի գրավումի նկարագրությունից հետո Աբրահամ Երևանցին պատմում է նաև օսմանցիների և պարսիկների միջև մղված պատերազմները: Այնուհետև բավական շատ կրկին անդրադառնում է Նադիրին՝ և՛ նրա մղած կռիվներին, և՛ նրա նյութած դավաղություններին: Իսկ պատմության վերջում Աբրահամ Երևանցին ներկայացնում է Մուղանի դաշտում Նադիրին Իրանի շահ հռչակելու դրվագը:

Բովանդակային այս ընթացքը ներառում է ամենատարբեր պատմական կերպարներ, հարաբերություններ, տեղանքի, պատերազմների, զորքի ու զինատեսակների նկարագրություններ, որոնք է՛լ ավելի են արժևորվում այն հանգամանքով, որ

¹⁶ *Աբրահամ Երևանցի, Պատմություն պատերազմացն 1721-1736 թուի, պատրաստեց՝ Հ. Սահակ Ճեմճեմեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1977, էջ 31:*

վկայագրված են ականատեսի կողմից:

4.

Աբրահամ Երևանցու երկի գրական արժեքի խնդիրը քննաբանելի է երկու հատույթով՝ բուն բնագիրը և հետագա խմբագրումը, որը կատարել է Հ. Մատթեոս Եվդոկացի Գարագաշյանը: Հարցն այն է, որ Աբրահամ Երևանցու աշխատության բնագիր օրինակը երևան է հանում լեզվի, ոճի, պատումի, անգամ՝ շարահյուսական ձևերի միանգամայն այլ պատկեր, քան, բնականաբար, հետագա խմբագրումը: Ինչպես իրավացիորեն այս առումով նշում է Հ. Մահակ Ճեմճեմյանը՝ «Աբրահամ Երևանցիի պատմությունը (խոսքը վերաբերում է ինքնագիր բնագրին. – Ա.Ն.) կը ներկայանայ մեզի սաղմնային վիճակի մեջ, գրուած առանց ոճի եւ ընթերցողի հաճելի դառնալու մտահոգութեան: Կու գայ բուն պատմագիրը (նկատի ունի խմբագրության հեղինակին. – Ա.Ն.), կ'առնէ նոյն նիւթը, կը կենդանացնէ, կուտայ անոր ոգի ու կենսունակութիւն»¹⁷:

Ընդ որում՝ բնականաբար, այս խնդրադրության պարագային նախևառաջ դիտարկելի է բնագիր տեքստը: Այստեղ նախ պետք է նշել, որ այսպես ասած գրագիտության տեսանկյունից Աբրահամ Երևանցին, մեղմ ասած, չի փայլում, և առկա են լեզվական, ուղղագրական, ոճական հարյուրավոր սխալներ: Բայց գրական տեսանկյունից չափազանց հետաքրքիր է նրա պատումն ինքնին, որ բնական է, և նույնիսկ կարելի է ասել չի ենթարկվում ոճական որևէ օրինաչափության: Այստեղ գործ ունենք յուրօրինակ ասացողի հետ, որի համար կարևորը տեղեկատվություն փոխանցելու գործառնություն է:

Մյուս կողմից՝ Աբրահամ Երևանցու Պատմությունն ունի *գրական արժեք* թեկուզև այն տեսանկյունից, որ շարադրված է կոնկրետ ժանրի՝ պատմագրության տիրույթում՝ անկախ պատմիչի ժանրագագացողության մակարդակից: Հայ պատմագրությանը բնորոշ այնպիսի հատկանշական կողմեր, ինչպիսիք են պատմական դեմքերի կերպավորումը, գեղարվեստական որոշակի տարրերի կիրառումը և այլն, բնորոշ են Աբրահամ Երևանցու Պատմությանը: Այլ խոսքով՝ այն պարզապես զուտ ժամանակագրություն չէ: Այս առումով՝ ուշագրավ է նաև պատմիչի լեզուն, որն ըստ էության, Երևանի գավառաբարբառն է: Գրականության լեզվի աշխարհիկացման միտումը, որ հետագայում Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի հենքը դարձավ, Աբրահամ Երևանցու Պատմության մեջ արդեն լայնորեն կիրառվում է:

Պատմության խմբագրված, և ըստ ամենայնի, որոշակի կանոնիկություն հաղորդած տեքստը, բնականաբար, երևան է բերում գրական այլ հատկանանություններ, նախևառաջ՝ ոճի տեսանկյունից: Այստեղ հարկ է նշել, որ խմբագիրը բավական ազատ է եղել իր գործողություններում, չի խորշել անգամ կրճատումներից և հավելումներից: «...նիւթին ներկայացուցած կարեւորութեան համաձայն ընդարձակուած են կամ համառոտուած,- պարզաբանուած է Հ. Մահակ Ճեմճեմյանը,- ...խմբագրողը վարդապետ մը ըլլալով, ինքն իր կողմէ աւելցուցած է հոգեւոր խորհրդածութիւններ, խրատական տողեր, որոնք ամբողջովին իրն են եւ ոչ թէ Աբրահամ Երևանցիի»¹⁸: Մյուս կողմից՝ Հ.

¹⁷ Տե՛ս **Աբրահամ Երևանցի**, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի, պատրաստեց՝ Հ. Մահակ Ճեմճեմեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1977, էջ 8-9:

¹⁸ Տե՛ս **Աբրահամ Երևանցի**, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի, պատրաստեց՝ Հ. Մահակ Ճեմճեմեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1977, էջ 9-10:

Մատթեոս Եվդոկացի Գարագաշյանը քաջաճանոթ է գրականությանը, տիրապետում է պատմագրության ժանրի օրինաչափություններին և յուրահատկություններին, և ձգտել է այսպես ասած՝ հում նյութից ձևել նաև պատմագրական երկ:

АБРААМ ЕРЕВАНЦИ И ЕГО ТВОРЧЕСТВО «ИСТОРИЯ ВОЙН» - АРКМЕНИК НИКОГОСЯН - В статье представлены скудные сведения о биографии историографа 18 века Абраама Ереванци; представлено общее, но характерное изложение его труда "История войн". При анализе труда, особенно его ценности как литературного произведения, рассматриваются оба изданных первоисточника. Рассматриваются различные филологические, аксиологические, идеологические, тематические, лингвостилистические вопросы.

Ключевые слова: историография, автограф, стенограмма, источники, жанр, подражание, мемуары.

ABRAHAM OF YEREVAN AND HIS WORK "HISTORY OF WARS"- ARKMENIK NIKOGHOSYAN- The article presents meager information about the biography of the 18th century historiographer Abraham Yerevantsi; a general but characteristic exposition of his work "History of Wars" is presented. When analyzing the work, especially its value as a literary work, both published primary sources are considered. Various philological, axiological, ideological, thematic, linguo-stylistic issues are considered.

Keywords: historiography, autograph, transcript, sources, genre, imitation, memoirs.

Ռ. ՀԱՏՏԵՃՅԱՆ. ԿԵՐՊԱՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՄԱՀՄԱՆՆԵՐԸ

Միյուռքահայ նշանավոր արձակագիր Ռ. Հատտեճյանի բոլոր հերոսներին հատուկ են ներանձնացումը, ապրելու ձգտումը, դժվարությունները հաղթահարելու կամքը: Գեղարվեստական նույն սկզբունքներով իր մի քանի ստեղծագործություններում Հատտեճյանը պատկերել է ծերունու ապրումները, կյանքի և մահվան առեղծվածի շուրջ նրա մտորումներն ու եզրահանգումները:

Շողվածում քննության են առնված ճանաչված հեղինակի այն գեղարվեստական երկերը, որոնցում կերպավորված է կենսափորձով իմաստնացած անհատը:

Մարդու ներաշխարհի քննությունը Հատտեճյանի ստեղծագործություններում տրվում է բազմաշերտ հարթություններում: Այն առնչվում է կերպարի մտածողության անսահմանափակ հնարավորություններին, մտասկզբումի և վերլուծության տիրույթների անպարագիծ հոլովությունն ու կենսական անհրաժեշտություններին, դրանց հարմարվելու ճիգին ու տառապանքին:

Երևակայության ու կամքի դրսևորման տիրույթները միշտ չէ, որ համահունչ են առարկայական ստորոգումներին. հեղինակը պատճառաբանել է անխուսափելի բախումը ազգային ողբերգության գիտակցման և ընդվզումի հարակայության միջև:

Բանալի բառեր. ներանձնացում, մտասկզբում, ձևապաշտական ըմբռնում, գեղարվեստական հարցադրում, ինքնաբացահայտում, գոյութենապաշտություն, պատկեր-ապրում, պատկեր-գործողություն, հոգեվերլուծական մտահղացում, ինքնորոնում:

Միյուռքահայ նշանավոր արձակագիր, «Մտածումի անգուգական վարպետ»¹ անվանյալ Ռ. Հատտեճյանը իր գրական սերնդի գրիչը բնորոշում է նախ և առաջ անցյալի ավանդների գնահատմամբ ու արժևորմամբ, ներկայի հանդեպ համակերպվածությամբ, ապագայի նկատմամբ հույսի և հավատի հաստատմամբ: Այս սկզբունքներով նա գրեց արձակի համարյա բոլոր ժանրերով, ստեղծեց գեղարվեստական և վերլուծական գրականություն, կյանքի անակնկալներին համահունչ՝ իր խմբագրած «Մարմարա»-ում կյանքի կոչեց «Յուշատետր» սյունակը, որը տարիներ շարունակ ներկայացնում է ն՝ գրականություն, ն՝ քննադատություն, ն՝ հուշագրություն, և էսսե:

Լուրջ, համակարգված ստեղծագործ աշխատանքը, հստակ աշխարհայացքի, նաև մտածողության կենտրոնացումը, տարբեր փիլիսոփայական ձևակերպումների ուսումնասիրությունը, ոլորտային բազմաշերտ գիտելիքների ձեռքբերումը նշանակալից ազդեցություն ու նշանակություն ունեցան Հատտեճյանի գրական ճաշակի, գեղա-

¹ Ռ. Հատտեճյանի գրական գործունեության 40-ամեյ հանգրուանին, Բոթանայու, 1987, էջ 55

գիտական հիմնարար սկզբունքների ձևավորման և զարգացման գործում:

Իր ամբողջ կյանքն ապրելով Կ.Պոլսում՝ Ռ. Հատտեճյանը տասնամյակներ շարունակ հայ համայնքի գրական-մշակութային առօրյայի համակարգողն ու կազմակերպիչն է, 1967-ից մինչև օրս անխափան վարում է «Մարմարա» հայերեն օրաթերթի խմբագրապետի պաշտոնը՝ մնալով նույն մտքի մարդը, որ երբեք տուրք չի տվել ձևապաշտական ըմբռնումներին, խնամքով ու ճաշակով առաջ է տարել գրողի իր անհատական ոճը՝ գրական երկերում կարևորելով հոգեփոխտիպայական խորքն ու բովանդակությունը:

Հատտեճյան հեղինակին ներկայացնելու համար ասվածը միշտ թերի է, քանզի նրա բեղուն գրիչը ամեն օր շարունակում է զարմացնել նոր դրսևորումներով ու վերլուծություններով:

Նշանավոր արձակագրի գրական մեթոդի ակունքը հոգու տառապանքից սկզբնավորվող հույսն է: Գոյատևելու կամքը և փրկվելու հավատը ստեղծում են մի տարօրինակ աշխարհ, որտեղ անխուսափելի է դառնում իրականի և երևակայականի բախումը: Եվ այս պարագայում ամեն ինչի շարժիչ ուժը մարդն է, մարդկային մտածողությունը, ներաշխարհի տվայտանքը, որն իր մեջ կրում է անցյալի հիշողությունը, ներկայի անխուսափելի հաշտվողականությունը և ապագայի մտայնությունն ու հույսը:

Հատտեճյանի բոլոր հերոսներին հատուկ է ներանձնացումը, նույնիսկ ամբոխի մեջ միայնակ և յուրօրինակ լինելը: Սակայն հաճախ այդ առանձնությունն այնքան ապրված ու զգայական է ներկայացվում, այնքան համոզիչ և իրական, որ թվում է՝ յուրաքանչյուրի կյանքում այդպես զգալն ու արտահայտվելը պարտադիր պայման է, անխուսափելի ապրում: Նույն հիմունքով և նպատակադրումով իր ստեղծագործական ճանապարհին Ռ. Հատտեճյանը մի քանի անգամ անդրադարձել է կյանքն ապրած ծերունու գեղարվեստական կերպարին, հոգեբանական տարբեր տեսանկյուններից ներկայացրել նրա ապրումները, կյանքի և մահվան առեղծվածի շուրջ մտորումներն ու եզրահանգումները:

Նման օրինակ է «Բառասխալ» ժողովածուի «Ծերունիի մը օրագիրը» պատմվածքը, որն առաջին անգամ տպագրվել է «Մարմարա»-ում 1960 թ.:

Պատումը ներկայացված է օրագրային գրառումների տեսքով: Իր տառապանքն ու շրջապատի անտարբերությունը գիտակցորեն ընդունող մեկն է կյանքի հետ բոլոր հաշիվներն ավարտած ծերունին: Նրան այլևս չի այցելում մտերիմ ընկերը, դուստրն ու տնեցիներն անգամ իր տարեդարձն են մոռանում, իսկ մնացյալ բոլոր օրերին ձգտում են նրա համար հանգիստ ապահովել, չներգրավել տնային գործերում՝ չհասկանալով, որ դա ավելի շատ է վշտացնում ծեր մարդուն:

Վերջին ճիգով նա, այնուամենայնիվ, փորձում է կապվել կյանքին, ապրեցնել իր կամքը և գիրք գրել, որով, թվում է, կզարմացնի մարդկանց: Սակայն առողջական խնդիրներն է՛լ ավելի են խորացնում տառապանքն ու անկումը. նա այլևս անելիք չունի:

«Ծերացանք, ըսել է՝ եկանք, հասանք ծերին: Ամեն բանի ծերին, կյանքի ծերին, աշխարհի ծերին...»² , - կարծես հենց Հատտեճյանի այս կերպարի մասին են ասված Ավ. Բասիակյանի «Համբերանքի չիբուխը» պատմվածքի հերոսի խոսքերը:

Մարդու երևակայության ու կամքի դրսևորման ոլորտները սահմաններ չունեն, սակայն նույն այդ կամքի և ձգտման տիրույթները միշտ չէ, որ համահունչ են առարկայական պատճառներին, մասնավորապես՝ անհատի ֆիզիկական հնարավորություններին:

Պատումի վերջին տողերը ընդհանրացնում են մարդ-մահկանացուն վիճակված ողբերգությունը: «Մինչդեռ տարիք մը կայ, ուրկէ վերջ մարդ կը վերածուի ամայի եւ անպտուղ կղզիի մը,- խորհում է մաքառելուց հոգնած ութսունեկամյա ծերունին.- բոլորս ալ դատապարտուած ենք ընկղմելու, առանց բացառութեան»³:

Ռ. Հատտեճյանի խորքային մտահղացումների արդյունքում հաճախ միահյուսվում են հոգեբանական դիպուկ նկարագրություններն ու փիլիսոփայական ընդհանրացումները: Կյանքի և մահվան հոգեբանական ձևակերպումները հենց այս տեսանկյունից են մեկնաբանվում «Երազ» պատմվածքում, որը տպագրվել է 1946-ին «Անի» պարբերականում, այնուհետև տեղ է գտել «Բառասխալ» ժողովածուում (1972թ.):

Իր խորքում փիլիսոփայական բարդ հարցադրում ունի «Երազը». արդյո՞ք մարդը կարող է ապրել միաժամանակ երկու աշխարհներում՝ իրական ու երևակայական, և այդ դեպքում կարո՞ղ է երջանիկ զգալ:

Պատմվածքում երազը՝ շոշափելի և ապրված, դառնում է ծերունու առանձնության լուսավոր պառի:

Երազում իր երիտասարդությունն էր, վաղեմի պայծառ ու մտերիմ պատկերները: Հոգու թրթռումով ամենօրյա սպասված երազներն աստիճանաբար դառնում են երկրորդ կյանք, իրական կյանքի հակադարձը, ուր ինքը աստիճանաբար ավելի ու ավելի երիտասարդ ու անհոգ էր երևում:

Սակայն ամեն սկիզբ ունի վերջ. սա է հատտեճյանական լուծումը: Երազի՝ դեպի անցյալը գահավիժող երկրորդ կյանքը՝ իրականի հակադարձը, ի վերջո պետք է հանգեցնե՞ր ծնունդ-մահ բախմանը, որն էլ դառնում է ավարտը՝ սկզբի և վերջի նույնացումը:

Իր կերպավորման արվեստով, գեղարվեստական հարցադրմամբ և այուժետային յուրօրինակությամբ առանձնանում է Հատտեճյանի «Վաստակ» դրաման, որտեղ ներկայացված է Մփյուռքի գոյատևման դժվարին պայմաններում իր ողջ կյանքը հայ դպրոցին նվիրաբերած ծերունի ուսուցչի կերպարը:

Պատմվածքներում ներկայացված փիլիսոփայական պատկեր-ապրումը դրամատիկական երկում համադրվում է պատկեր-գործողությանը, սակայն երկու դեպքում էլ հեղինակը հավատարիմ է մնում իր դավանած սկզբունքին՝ մարդու ներաշխարհի և միջավայրի ներդաշնակությանը հասնելու բանաձևի որոնմանը:

² Բասիակյան Ա., *Երկեր, Երևան, 1987, էջ 531*

³ Հատտեճյան Ռ. , *Բառասխալ, Բաթանպուլ, 1972, էջ 159*

«Հատտեճեան կ'ապրի դարուն խռովքը. կ'ուզէ քանդուած տեսնել անխորտակելի, անբռնաբարելի այն բերդը՝ որ բարձրացած է մարդոց միջեւ, զանոնք բաժանելու համար իրարմէ եւ դատապարտելու համար առանձնութեան»⁴, - բնութագրում է Մ. Թեղեղյանը:

«Վաստակը» Ռ. Հատտեճյանի առաջին թատերգությունն է, գրվել է մինչև 1958 թվականը, բայց տպագրվել մոտ տասը տարի անց և 1973-ին արժանացել «Ալեք Մանուկեան» գրական մրցանակի:

Դրամայի հերոսը յոթնասունամյա բազմավաստակ ուսուցիչն է՝ Վահե Ծերյանը: Ի դեպ, նա Հատտեճյանի՝ ծերունու կերպարներից միակն է, որ անուն ունի, և այն, մեր կարծիքով, պատահական չէ ընտրված: «Ըստ էության, դրամայի մեջ «Ծերեան»-ը մականունն չէ, պարզապես «ծերունի» է, որ զգացական խոր տպավորության կողքին ունի նաև ապրած կեանքը իմաստաւորելու յայտնի փորձը»⁵, - գրել է գրականագետ Ս. Դանիելյանը գրողին նվիրված մենագրության մեջ:

Դիպաշարը ներկայացնում է Սփյուռքի մտավորականի կյանքի իրական պատմությունը՝ համեմված խոր հոգեբանական զեղումներով, բախումներով և ընդհանրացումներով:

Ծեր ուսուցիչը վերջապես մի անգամ մեծարված ու գոհ է: Նա պատրաստվում է նոր եռանդով ու սիրով նվիրվել աշխատանքին, սակայն կյանքի հարվածներից առանց այն էլ դառնացած մարդուն (տարիներ առաջ նա կորցրել էր տասնհինգամյա որդուն) վիճակված էր նորից ըմպել դառնության մրուրը. պարզվում է՝ հոբելյանական փառահեղ երեկոն կազմակերպվել է իրեն աշխատանքից ազատելու և վաստակած հանգստի ուղարկելու համար:

Որդու՝ Ատրուշանի կորստից սփոփվելու միակ հանգրվանը դպրոցն էր ու նվիրումը իր աշխատանքին, և փլուզվում է վերջին հույսը. Ծերյանին չեն կարող շահագրգռել անգամ նրան ապահով ծերություն խոստացող դրամն ու նվերները:

Հատտեճյանը ստեղծել է անձնուրաց նվիրումով ապրած մարդու այն կերպարը, որն իր մտապատկերում կառուցում է տարիների վաստակը գնահատող, մանուկների գունագեղ ժպիտներով լեցուն մի լուսավոր աշխարհ: Սակայն փշրվում է երևակայական աշխարհը՝ բախվելով միջավայրի հաշվենկատ ու սառնասիրտ վերաբերմունքին:

«...Ասիկա կատակերգութիւն մըն էր, զոր այլեւս մոռնալ կ'ուզեմ: Այլեւս կ'ուզեմ որ մենք մեզի մնանք, իրարմով զբաղինք, իրարու համար ապրինք: Թող ոչ ոք զայ մեր դուռը զարնելու, մեզ անհանգիստ ընելու»⁶, - ընտանիքի գրկում փրկության ելք է փնտրում վշտացած ծերունին:

«Վաստակ» դրաման սերտորեն առնչվում է «Երագ» պատմվածքի հիմքում դրված հարցադրմանը. արդյո՞ք մարդը կարող է ապրել միաժամանակ երկու աշխարհներում՝ իրական ու երևակայական:

⁴ Թեղեղյան Մ., *Դար մը գրականութիւն, հտ. Բ, Նիւ Եորք, 1977, էջ 444*

⁵ Դանիելյան Ս., *Ռոպէր Հատտեճեան. ներաշխարհի գեղարուեստական քննութիւն, Բյթանպոլ, 1996, էջ 131*

⁶ *Հատտեճեան Ռ., Թատերախաղեր, Բյթանպոլ, 2002, էջ 3*

Դրամայում Հատտեճյանը ընտրության առաջ է կանգնեցնում կյանքի լավ ու վատը տեսած բազմափորձ մարդուն, և լուծումն այս դեպքում կանխատեսելի է. Իրականությունից վտարված հույսը կառչում է երևակայականին:

Ծերյանը վաղամեղիկ որդու երևակայական ներկայությունը գերադասում է նյութականի վրա կառուցված մարդկային իրական հարաբերություններից:

Քննության առնված կերպարների յուրօրինակ համադրությամբ Ռ. Հատտեճյանը կերտեց իր գլուխգործոց կերպարը՝ «Առաստաղ» վեպի ծերունուն՝ որպես մարդկային հզոր կամքի և մաքառման արտահայտություն, որը հաստատում է ապրելու իր բանաձևը՝ աշխարհի բոլոր մարտահրավերներին ի պատասխան. «Մենք դատապարտում ենք ապրելու»⁷:

Մեծ քաղաքում ապրող, հարազատների սիրով շրջապատված ծերունին իր մտածումների հետ մենակ է՝ դժբախտ պատահարի արդյունքում գամված անկողնուն, հայացքը հառած առաստաղի փոքրիկ մի հատվածի, որի վրայով կինոժապավենի պես սահում են անցյալի պատկերները՝ առինքնող ու ապրեցնող:

Առաստաղի գեղարվեստական հնարանքը բացահայտում է ծերունու մտածողության ու հիշողության շերտերը՝ կապված հայրենի տան, հոր, կնոջ և ընդհանրապես անցյալի երանելի օրերին, երբ կային միայն ապագային նայող հայացքը, ապրելու ձգտումը, դժվարությունները հաղթահարելու տոկուն կամքն ու արարելու ջիղը: Հեղինակի մտահղացմամբ՝ առաստաղը հերոսի մտածողության նյութեղեն արտահայտությունն է, նրան ոչ միայն անցյալին, այլև ներկային ու ապագային կապող շերտը:

Ներշնչանքով ու հզոր ներուժի պոթեկումով զրված «Առաստաղ» վեպի առաջին գիրքը լույս է տեսել 1983-ին, մյուսը՝ «Առաստաղին միւս կողմը»՝ երկար ընդմիջումից հետո՝ 2000-ին: 2006թ. «Մփիւռք» գիտաուսումնական կենտրոնի տնօրեն, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանի ջանքերով «Առաստաղ» երկհատոր վեպը լույս է տեսել Երևանում:

Եթե պատմվածքներում կերպարների բացահայտման հնարանքը պարզ օրագրությունն է կամ երազը, ապա վեպի հերոսի դեպքում հեղինակի հոգեվերլուծական մտահղացումն առնչվում է կերպարի մտածողության անսահմանափակ հնարավորություններին, մտասնեռումի և վերլուծության տիրույթների անպարագիծ հոլովույթին և կենսական անհրաժեշտություններին, դրանց հարմարվելու ճիգի գերմարդկային տառապանքին:

«Երեւակայութիւնս կ'եռեւեփէր հազարումեկ պատկերներով, որոնք ինծի կուգային իմ ապրումած օրերէս, - խորհում է անշարժության դատապարտված ծերունին .- զօրութիւն մը կը տեսնէի այդ անցեալի օրերուն մէջ»⁸:

Էջ առ էջ բացահայտվում են ծերունու մտահոգությունները, որ կապված են աղջկա, թոռան ու փեսայի առօրյային, և անհանգստությունները, որոնք սևեռված են իր հիվանդության պատճառով ուրիշներին չխանգարելու անհրաժեշտությամբ:

⁷ Հատտեճեան Ռ., *Առաստաղ*, Երևան, 2006, էջ 391

⁸ Հատտեճեան Ռ., *Առաստաղ*, Երևան, 2006, էջ 101-102

«Առաստաղ» վեպում ծերունու կերպավորման առանցքային գծերից է ազգային ողբերգության և նահանջի գիտակցումը: Ազգային խնդիրներին անդրադարձող դրվագներ կան նաև «Վաստակ» դրամայում, սակայն դրանք սոսկ մարդկային վերաբերմունքի տեսանկյունից դիտարկվող կամ սոցիալական խնդիրներին առնչվող հարցեր են:

«Առաստաղ»-ում հերոսն ինքնորոնման ուղիներում բացահայտում է հոր՝ գավառում ապրող մեծ ընտանիքից մնացած միակ վկայի ողբերգությունը:

«Իսթանպուլ ծնած ու հասակ առած գրագետ մը թեեւ չի գործածեր եղեռն ու ցեղասպանութիւն բառերը, բայց հերոսին հօր վախճանման պատկերման մեջէն, մոխիրներէն յարութիւն առնել կուտայ երկրի գաղափարը, գաւառը, ուր ապրած էին ո՛վ գիտէ քանի՛-քանի սերունդներ մեր մեծ հայրերէն ու մեծ մայրերէն»⁹, - գրել է Թ. Թորանյանը Ռ. Հատտէճյանին նվիրված մենագրության մեջ:

Հոր մահով կտրվում է հիշողության վերջին թելը, որ կապում էր գավառի հետ: «Ծերունին ինքը դառնում է լքումի խորհրդանիշ՝ իր գոյութեամբ, ապրելու դատապարտուածութեան էկզիստենցիալիստական հաճումներով: Ամէն մի յիշողութիւնից, ամէն մի մանրամասնից ամէն օր նրա մեջ փրթում է մի ծուէն եւ գնում դէպի ապագայ, դէպի անյայտութիւն»¹⁰-գրել է Ս. Դանիելյանը «Առաստաղ» վեպի առաջաբանում:

Ծերունու կերպարով Ռ. Հատտէճյանը ներկայացնում է Սփյուռքի ճակատագիրը՝ կաթվածահար ու մենակ: Աղջկա՝ Սաթենիկի ընտանիքի Կանադա մեկնելը կատարյալ է դարձնում լքումն ու մենությունը:

Հարազատ մնալով իր որդեգրած գրական մեթոդին՝ գոյութենապաշտական հոգեվերլուծական փիլիսոփայության սկզբունքներին՝ նշանավոր արձակագիրը պատկերում է արտաքին աշխարհի և անհատի ներաշխարհի ալեբախումները՝ կարևորելով ինքնաբացահայտման ու ինքնադրսևորման կամքն ու ոգորումները:

«Մարմարա»-ի «Յուշատետր» սյունակում ժամանակին անդրադառնալով գուրգուրանքով ստեղծած կերպարների նախատիպերին՝ Ռ. Հատտէճյանը գրել է. «Որքա՛ն աւելի շատ պիտի սիրէինք ծերունիները, եթէ անոնք գիտնային ամէն վայրկեան մեզի յիշեցնել՝ թէ իրենք ալ մեզի պէս էին, դեռ՝ երեք չորս տասնամեակ առաջ»¹¹:

Р. АТЕЧЯН. РАСКРЫТИЕ ГРАНИЦ ОБРАЗА - МАНУШ БАЛАЯН - Всем героям известного армянского писателя Диаспоры Р. Аттечяна присущи замкнутость, стремление к жизни, воля к преодолению трудностей. В нескольких своих произведениях Аттечян описал чувства старика, его мысли и выводы о тайне жизни и смерти на основании тех же художественных принципов.

В статье рассматриваются те художественные произведения признанного

⁹ Թորանեան Թ., Սփյուռքական գրագետը. Ռոպեր Հատտէճեան, Հալէպ, 2002, էջ 51

¹⁰ Հատտէճեան Ռ., Առաստաղ, Երևան, 2006, էջ 6

¹¹ Հատտէճեան Ռ., Յուշատետր, հտ. Գ, Իսթանպուլ, էջ 103

автора, в которых отображается умудренный жизненным опытом человек.

Исследование внутреннего мира человека в произведениях Атечяна дается в многослойных плоскостях. Он связан с неограниченными возможностями мышления образа, размытым потоком полей сосредоточенности и анализа и жизненными потребностями, стремлением и усилиям адаптироваться к ним.

Сферы воображения и волеизъявления не всегда соответствуют предметным предикациям: автор аргументировал неизбежное столкновение между осознанием национальной трагедии и присутствием бунта.

Ключевые слова: замкнутость, сосредоточенность, формалистическое понимание, художественная постановка вопроса, самораскрытие, экзистенциализм, образ-переживание, образ-действие, психоаналитический замысел, самопоиск.

R. HADDECIYAN THE LIMITS OF DISCOVERING A CHARACTER - MANOUSH BALAYAN - All the heroes of the famous Armenian writer of the Diaspora R. Hatechyan are characterized by isolation, the desire for life, the will to overcome difficulties. In several of his works Hatechyan described the feelings of the old man, his thoughts and conclusions about the mystery of life and death on the basis of the same artistic principles.

The article examines those works of art by a recognized author, in which a wise person with life experience is displayed.

The study of the inner world of man in Hatechyan's works is given in multi-layered planes. It is associated with the unlimited possibilities of image thinking, the blurred flow of fields of concentration and analysis and life needs, the desire and efforts to adapt to them.

The spheres of imagination and expression of will do not always correspond to objective predications: the author argued for the inevitable clash between the awareness of a national tragedy and the presence of a riot.

Keywords: *isolation, concentration, formalistic understanding, artistic statement of the question, self-disclosure, existentialism, image-experience, image-action, psychoanalytic intent, self-search.*

ԼԻՄԻՆԱԼՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ «ԿԱՅԱՐԱՆ» ՊԱՏՄՎԱԾՔՈՒՄ

Հոդվածի նպատակն է առաջ քաշել և հիմնավորել այն մոտեցումը, ըստ որի՝ Հրանտ Մաթևոսյանի «Կայարան» պատմվածքի հղացքի հիմքում լիմինալությունն է՝ իր տարատեսակ դրսևորումներով, լիմինալ փորձառության պատկերումը ինչպես քաղաք-գյուղ հարցի, այնպես էլ առհասարակ արդիականացման, տեխնոլոգիականացման գործընթացների, հասարակական տեղաշարժերի համատեքստում: Մեր խնդիրն է կիրարկել Ա. վան Գեննեպի և Վ. Թրրների կողմից առաջ քաշված լիմինալություն հասկացությունը Մաթևոսյանի այս պատմվածքում՝ դիտարկելով այն ինչպես պատմվածքի ներքին կառույցի տրամաբանության մեջ, այնպես էլ առհասարակ մաթևոսյանական արձակի: Պատմվածքը վերլուծվում է արդիականացման, տեխնոլոգիականացման, օտարի փորձընկալման խնդիրների համաձիգում, ինչպես նաև անդրադարձ է կատարվում 60-ականների իրականությանը՝ իբրև երկարատև լիմինալության շրջան:

Հետազոտության իրականացման ընթացքում կիրառվել են ինչպես համագիտական (անալիզ, սինթեզ, վերացարկում), այնպես էլ հատուկ (միֆաքննադատություն) մեթոդներ:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ Հրանտ Մաթևոսյանի «Կայարան» պատմվածքում կայարանը հանդես է գալիս իբրև լիմինալ տարածություն՝ միաժամանակ մարմնավորելով պատմվածքի հերոս Հրանտ Քառյանի սեփական լիմինալ փորձառությունը՝ իբրև քաղաքի և գյուղի, արդիականության և նախնականության միջև գտնվող մարդու, որը մշտապես ռեֆլեքսիայի է ենթարկում սեփական դրությունը:

Բանալի բառեր. լիմինալություն, լիմինալ փորձառություն, լիմինալ տարածություն, քաղաք-գյուղ հարց, Հրանտ Մաթևոսյան, արդիականացում, տեխնոլոգիականացում:

Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործության առանցքը սովորաբար համարվում է գյուղը. գրականագիտության մեջ սա հաստատված է այնքան, որ Մաթևոսյանի գործերում քաղաքի պատկերումը հաճախ կա՝ մ պարզապես մոռացության է տրվում, կա՝ մ հիշվում միայն իբրև գյուղին սպառնացող վտանգի մարմնացում:

Գյուղագրություն-քաղաքագրություն բանավեճը կենտրոնական նշանակություն ուներ 20-րդ դարի կեսի խորհրդային գրական մտքի մեջ. խորհրդահայ գրականությունը բացառություն չէր: Ռուս գրականության մեջ գյուղագրությունը կամ գյուղական արձակը (деревенская литература, деревенская проза) որպես երևույթ սկիզբ է առնում 50-ականներից, երբ տարածում է գտնում այսպես կոչված գյուղական ակնարկը. մի շարք գրողներ, որ ծագումով գյուղից էին, գյուղում էին անցկացրել իրենց կյանքի որոշակի ժամանակահատված, փորձում էին վավերականորեն պատկերել ժամանակի գյուղը, դրա ներքին կառուցվածքը և փոխակերպումները: Այսպիսի ակնարկներով հանդես են գալիս Վ. Օվեչկինը, Ե. Դորոշը, Ա. Յաշինը և այլք: Այս գրողների կենտրոնական մտահոգություններից մեկը կոլեկտիվիզացիայի արդյունքում

ձևավորված՝ նոր գյուղական կյանքի քննական պատկերումն էր, կոլխոզային փորձառության ներքերումը գրականություն: Բնական է, որ հաջորդ քայլը պիտի լիներ գեղարվեստական ընդհանրացումը արձակի, մեծավ մասամբ՝ պատմվածքի միջոցով: Այս գծին են հետևում Վ. Շուշկինը, Վ. Բելովը, Ֆ. Աբրամովը, Վ. Աստաֆևը: Այս և մի շարք այլ գրողների բերած նոր գրականությունը շուտով հայտնվում է քննադատության ուշադրության կենտրոնում՝ գրական, մշակութային, անգամ աշխարհայացքային բանավեճեր խթանելով: Գյուղագրական արձակը բնորոշվում էր գրողների հայրենի գյուղի մանրամասն, «ներսի հայացքով» պատկերմամբ, հերոսը մեծավ մասամբ աշխատավոր գյուղացին էր, հաճախ՝ տարեց մեկը, որ ամբողջությամբ նախորդ աշխարհի գավակ էր: Այն տեսակետը կա, որ գյուղագրությունը գաղափարապես պահպանողական է, քանի որ ուղղված է որոշակի ավանդական աշխարհակարգի պահպանմանը՝ առանց խնդրականացնելու դրա հիերարխիկ բնույթը: Պատահական չէ, որ գյուղագրության քննադատները հաճախ գյուղի հետամնաց, ժողովմենտալ սովորույթներն էին հիշեցնում գյուղագիրներին: Այս պահպանողականությամբ է բացատրվում նաև այն, որ ռուս գյուղագիրներից շատերը, ինչպես, օրինակ, Վ. Ռասպուտինը, շարունակեցին որոշակի ազատություն, անգամ պետական հովանավորություն վայելել Լճացման տարիներին, մինչդեռ քաղաքագրության (городская проза), երիտասարդական արձակի (молодежная проза) և այլ ուղղությունների ներկայացուցիչները ենթարկվում էին խիստ գրաքննության¹:

Այս պահպանողականությանն էին հաճախ հղվում Հր. Մաթևոսյանի քննադատները, երբ, որպես խորհրդահայ իրականության մեջ այս ուղղության գլխավոր ներկայացուցիչ, մերժում էին նրա ստեղծագործությունը: Այսպես, Վ. Պետրոսյանն իր «Ինչպե՞ս ստանալ միջին ազգային կերպար» հոդվածում անդրադառնում է հերոսի խնդրին. «Ես ինչպե՞ս իրար գումարեմ ֆիզիկոս Ալիխանյանին, լեռնագործ Աշոտ Մելքոնյանին, մեր գյուղացի Աթանես պապին, երաժիշտ Առնո Բաբաջանյանին, օդաչու Էդիկ Բախչինյանին, գրող Պերճ Զեյթունցյանին, գրող Հրանտ Մաթևոսյանին: Ես ինչպե՞ս գումարեմ, ինչի՞ վրա բաժանեմ, որ քանտրոլում ստացվի այսօրվա հայի միջին ազգային կերպար»²: Քննադատությունն ուղղված է այն դիրքորոշման դեմ, որի համաձայն կա հայի՝ հստակ տարանջատելի մի կերպար: Հատկանշական է, սակայն, Մաթևոսյանի պատասխանը. «Բանն այն է, որ Ալիխանյանը, Բախչինյանը, Զեյթունցյանը, Աթանես պապը և մյուսներն այնքան հակադիր որակներ չեն, ինչքան Պետրոսյանն է կարծում, և կարիք չկա նրանց գումարելու իրար և բաժանելու՝ ստանալու համար միջին ազգային կերպար»³: Մաթևոսյանը խոսում է գրողի և գրականության՝ ընդհանրացումներ անելու ունակության մասին, բայց նաև արմատական կերպով լուծում է քաղաքացի-գյուղացի հակադրության հարցը. այն պարզապես կեղծ է: Նույն հոդվածում նա պնդում է. «Բակունցը չի օգնում ոչ մի գրողի, իսկ եթե օգնում է որևէ գյուղագրի, կարող է օգնել նաեւ քաղաքագիրներին, որովհետև ոչ գյուղն ու քաղաքն են սոցիալական հակադիր բևեռներ, ոչ գյուղացին ու քաղաքացին են մարդկայնորեն հակադիր որակներ»⁴: Այսպիսով, Հր. Մաթևոսյանն ինքն է մերժում այն տեսակետը, թե իր ստեղծագործու-

¹ Simon Cosgrove, *Russian Nationalism and the Politics of Soviet Literature: The Case of Nash sovremennik, 1981-1991*, Palgrave Macmillan, New York, NY: 2004

² Վ. Պետրոսյան, *Ինչպե՞ս ստանալ միջին ազգային կերպար*, «Սովետական Հայաստան», Եր., 1966, թ. 287

³ Հր. Մաթևոսյան, *Այսպես կոչված գյուղագրության մասին*, «Գրական թերթ», 1968, սեպտեմբեր 13

⁴ Նույն տեղում

յան մեջ քաղաքը ծառայում է միայն որպես գյուղի պարզ հակապատկեր: Այդ դեպքում ի՞նչ է քաղաքը Հր. Մաթևոսյանի համար:

Խոսելով Ծմակուտի՝ որպես գյուղի վավերական պատկերումից տարբեր, դրանից անդին գնացող մի գրական տարածության մասին, Մաթևոսյանը ասում է. «Ծմակուտը իմ սերն է, իմ վերաբերմունքն, իմ տազնապը մարդու համար: ԾՄԱԿՈՒՏԸ ԵՍ ԵՄ»⁵:

Գյուղ-քաղաք հարցի սրումը խորհրդային 60-ականներին արդիականացման, տեխնոլոգիականացման ուղղակի հետևանքն էր, ուստի գյուղի՝ որպես բնության ու մարդու սինկրետիկ գոյակցության մոդելի, և արդյունաբերական արդի քաղաքի՝ որպես տեխնոլոգիականացած աշխարհի միջև մեծ լարումը ենթադրելի է: Քաղաքը, ուրեմն, որպես տեխնոլոգիականացման մարմնավորում, ուր աշխատանքը ի սկզբանե օտարված է աշխատողից, և ուր մարդը, ճարտարապետության նորմավորող ճնշման տակ, օտարված է բնությունից, կերպավորվում է իբրև այլության, օտարության տարածություն: Եթե հեղինակը ստանձնում է գյուղը՝ Ծմակուտը, նույնանում նրա հետ, ուրեմն քաղաք գնալը՝ զիտակցված, թե ակամա, նշանակում է, որոշ իմաստով, գնալ դեպի օտարության փորձառությունը, ի տար աշխարհի⁶:

1967 թ. «Մովետական գրականություն» ամսագրում տպագրվում է Մաթևոսյանի «Կայարան» պատմվածքը⁷, ապա նույն տարում ներառվում է «Օգոստոս» ժողովածուի մեջ: «Բեռնաձիեր» շարքի պատմվածքների մեջ այն միակն է, որի տարածությունը գյուղը չէ, ավելին՝ Մաթևոսյանի հազվադեպ գործերից է, որի նշանակալի մասի տարածքը քաղաքն է: Մա հատկապես կարևոր է դառնում այն համատեքստում, որ «Բեռնաձիերը» մի կուռ համակարգ է՝ վիպակ-շարք, որի պատմվածքները միահյուսված են ինչպես սյուժետային տարրերով ու հերոսներով, այնպես էլ գաղափարական հարցադրումներով, և մի ամբողջական հղացքի մաս են կազմում:

«Կայարանի» սյուժեն բավականին պարզ է. ծմակուտցի Հրանտ Քառյանը գնացել է Երևան՝ սովորելու, քաղաքում նրան փայլուն ապագա են գուշակում, նրա ստեղծագործական տաղանդով, կեցվածքով, անգամ արտաքինով հիանում են բոլորը, նա «արժանի էր Փարիզին»: «Երևան-Մոսկվա» գնացքով նա քաղաքից հասնում է Քոլազերան կայարան, որտեղից պիտի շարունակի ճամփան դեպի հայրենի Ծմակուտ, ուր, իհարկե, երկաթգիծը չի ձգվում: Մի քանի օր շարունակ, սակայն, Հրանտ Քառյանը չի կարողանում կայարանից դուրս գալ ու հասնել գյուղ: Այս ընթացքում նա հիշում է քաղաքի կյանքը, մտածում իր անցյալի, ապագայի, ընտանիքի ու գյուղի մասին, վերհուշն ու երևակայությունը անտարանջատ կերպով խառնվում են ներկա իրականությանը: Ի վերջո, Արայիկ եղբայրը կայարան է հասցնում Ալիտ ձիուն: Պատմվածքն ավարտվում է եղբայրների տխուր-առօրեական զրույցով:

Գյուղից քաղաք գնացած մարդու՝ գյուղ վերադառնալու անհնարինությունը հեղինակը ներկայացնում է այնպիսի խիստ պայմանականացմամբ, որ պատմվածքի հղացքի մասին երկմտելու առիթ չի մնում: Ուշադրություն դարձնենք, թե ինչպես է հեղինակը նկարագրում կայարանը. «Կայարանը նեղ է: Ծայրահեղ անհրաժեշտությունն ստիպել էր ռուս ինժեներներին կայարան կանգնեցնել անհնար տեղը. երկու գծի լայ-

⁵ «Ար», 01.03.1995

⁶ Հատկանշական է, որ «Խումհար» վիպակում, որի գործողությունները ամբողջությամբ քաղաքում են ծավալվում, և որը Մ. Մարինյանն իր «Տաղանդի ուղղությունը» հոդվածում անվանում է ծրագրային ստեղծագործություն, Մաթևոսյանն իր հերոսին դնում է կրկնակի օտարության մեջ՝ Մոսկվայում:

⁷ «Մովետական գրականություն», թիվ 2, էջ 56-77

նությամբ ժայռերը ետ էին գնացել»⁸։ Քուլագերան կայարանի նկարագրության առաջին տողերից իսկ ուրվագծվում է անհարմարության, «անհնար տեղը» լինելու այն մթնոլորտը, որում էլ պիտի ծավալվի պատմվածքի մեծ մասը, իսկ կայարանի՝ որպես քաղաքի և գյուղի միջև գտնվող «անցումային» տարածության խորհրդանշին էլ՝ իր հրաշալի բառացիությամբ, ընթերցողի համակ ուշադրությունն է հրավիրում պատմվածքում *լիմինալություն*⁹ արտահայտությունների վրա։

Լիմինալություն տերմինն առաջարկել է ազգագրագետ, բանագետ Առնոլդ վան Գեննեպը 1909 թ.-ին իր «Անցումային ծեսեր» աշխատության մեջ։ Վան Գեննեպը անցումային ծեսերը բաժանում է երեք փուլերի՝ անջատման կամ նախալիմինալ, լիմինալ և միավորման կամ հետլիմինալ¹⁰։ Լիմինալությունը, հետևապես, լիմինալ փուլով անցնելու ընթացքի մեջ գտնվող մարդու վիճակն է, երբ մի հին վիճակից անցում է կատարվում նորին։ Այս շղթան ենթադրում է համայնքից անջատվելու, առօրեականից, սովորականից դեպի օտարն ու անհայտը շարժվելու, այդ օտարի մեջ հին վիճակի կամ ինքնության կազմաքանդման գործընթացներ, որի արդյունքում պիտի ձևավորվի մի նոր վիճակ կամ ինքնություն, և ի վերջո անհատը պիտի վերադառնա դեպի սովորականը, միավորվի համայնքի հետ, բայց արդեն՝ որպես վերափոխված մեկը։ Վան Գեննեպը մանրամասնությամբ ներկայացնում է անցումային ծեսերի տեսակները տարբեր մշակույթներում՝ առավել տիպական համարելով ինդիգիացիայի ծեսերը, որոնցով անցնողը բառացիորեն, ֆիզիկապես անջատվում է համայնքից, հաճախ տեղափոխվում լիմինալ ծեսերի համար նախատեսված հատուկ տարածք, ապա վերադառնում համայնք՝ որպես նոր մարդ։ Այս սխեման շատ տարածված է բանահյուսության մեջ. հերոսը ճամփորդում է, արտաքսվում է կամ այլ հանգամանքների բերումով հայտնվում անծանոթ միջավայրում, փորձությունների ենթարկվելով՝ նոր որակներ է ձեռք բերում և վերադառնում հայրենի տուն, ուր հաճախ նրան չեն ճանաչում, ինչը անցումային ծեսերի վերջին՝ հետլիմինալ կամ միավորման փուլի առանձնահատկություններից է։

Այսօր Վան Գեննեպի «Անցումային ծեսեր» աշխատությունը և դրանում առաջ քաշված՝ լիմինալություն հասկացությունը մեծ տարածում ունեն մարդաբանության, սոցիոլոգիայի, արվեստի տեսության ոլորտներում, սակայն լիմինալության գաղափարը տարածելու, դրա սահմաններն ընդլայնելու գործում որոշիչ դեր կատարեց նշանավոր մշակութային մարդաբան Վ. Թըրները, որը 1967 թ.-ին լույս տեսած իր «Խորհրդանշանների անտառը» գրքում զետեղված «Մեջ և միջև. լիմինալ շրջանը անցումային ծեսերում» հոդվածով կրկին շրջանառության մեջ է դնում լիմինալության խնդիրը։ Այս և հետագա աշխատություններում Թըրները լիմինալությունը դիտարկում է ավելի լայն համատեքստում՝ նկատելով, որ լիմինալությունը «ոչ միայն միջանկյալ շրջանները, այլև լիմինալ փորձառություններին մարդու արձագանքները բացահայտելուն է ծառայում. թե ինչպես է լիմինալությունը ձևավորում անհատականությունը, ինչպես է գործառույթը հանկարծակի առաջին պլան մղվում, և երբեմն՝ ինչպես են դրամատիկ կերպով միահյուսվում միտքն ու փորձառությունը»¹¹։

Հր. Մաթևոսյանի «Կայարան» պատմվածքում հստակ ուրվագծվում է անցում-

⁸ Հր. Մաթևոսյան, «Օգոստոս», Հայաստանի հրատարակչություն, Ե., 1967 թ., էջ 224

⁹ անգլ. *liminality* (լատ. *limen*՝ սեմ, նախաստիճան բառից), թերևս կարելի է թարգմանել իբրև սեմայնություն, սակայն հոդվածի շրջանակներում խրթնաբանությունից խուսափելու համար կկիրառվի լիմինալություն ձևը

¹⁰ Gennep, Arnold Van. *The Rites of Passage.*, Chicago: University of Chicago, 1960, p. 21

¹¹ Thomassen, B. "The Uses and Meanings of Liminality", in *International Political Anthropology* 2 (1), 2009, 16

մային ծեսի կաղապարը՝ որոշակիորեն փոխակերպված տեսքով, բայց նույնքան կարևոր է դիտարկել լիմինալ փորձառությունն ինքնին՝ որպես «անհատականությունը ձևավորող», «միտքն ու փորձառությունը դրամատիկ կերպով միահյուսող», «գործառույթը հանկարծակի առաջին պլան մղող» մի երևույթ:

Նախ՝ պատմվածքում անցումային ծեսի և դրա փոխակերպման մասին. ավանդական պատումի դեպքում, բնական է, հերոսը հաջողությամբ հաղթահարում է լիմինալ շրջանը, որից հետո արդեն վերափոխված վերադառնում է համայնք¹²: Հր. Մաթևոսյանը անմիագիծ պնդեի, գիտակցության հոսքի որոշ տարրերի կիրարկմամբ ստեղծում է այս ավանդական կաղապարի վերարտադրման պատրանքը. Հրանտ Քառյանը հիշում է իր հաջողությունները քաղաքում, «հիշում է», թե ինչպես է պոլիտեխնիկի Կարինեի հետ ժողովում Բաղրամյան կայարան՝ այն խեղճ է համարում, քաղաքացու հաղթական մեծամտությամբ խղճում ու կարեկցում է գավառի «թշվառությանը». տպավորություն է ստեղծվում, թե սա մի «դասական» պատմություն է քաղաք գնացած, «մարդ դարձած» երիտասարդի մասին, բայց այս պատկերը սկսում է կազմաքանդվել կայարանում հայտնվելու առաջին պահից իսկ: Հրանտ Քառյանը պատկերում է կայարանում՝ թողնելով, որ իր վերնաշապիկը կեղտոտվի, բայց շուտով նրան տեղից հանում է միլիցիոները. «Ջարգացած էլ մարդ ես երևում, չի կարելի պառկել»¹³, «Էս՝ գնում երևաններում խեղճները թողնում գալիս են»¹⁴: Անմիջապես այս կարճ խոսակցությունից հետո հերոսը հիշում է, որ իրականում ժողովում չի պարել պոլիտեխնիկի Կարինեի հետ: Հրաչ Բալայանն իր «Այլակերպման մղումը» հոդվածում քննում է Մաթևոսյանի ստեղծագործության մեջ տեխնոլոգիականացման և մարմնի փոխհարաբերությունների խնդիրը՝ կապելով տեխնոլոգիականացման հետ եկող հոգսի թեթևացումը մարմնի գործառույթների, ուստի՝ նաև մարմնի ընկալման փոխակերպումների հետ¹⁵: Այս համատեքստում աղջկա հետ ժողովում պարելը ոչ միայն սեփական առնականության հաստատման, կնոջ նվաճման խորհրդանշական գործողություն է, այլև նոր մարմնի յուրացման հաստատում. զարմանալի չէ, որ նախորդող հատվածներում Հրանտ Քառյանը շարունակաբար խոսում է իր արտաքինի ու կեցվածքի, իր հագուստի, դրանում իրեն հարմար զգալու մասին: Հիշելով, որ իրականում ինքը ժողովում չի պարել, հերոսը հիշում է, որ իր փոխակերպումը չի կայացել: Կայարանում անցկացրած մնացած ամբողջ ընթացքում այս կազմաքանդման գործընթացը շարունակվում է:

Խոսելով լիմինալության տարատեսակ դրսևորումների մասին՝ ծիսականության սահմաններից անդին, Վ. Թըրներն առաջ է քաշում լիմինալ էակների գաղափարը: Սրանք «տան և օտարության մեջ և միջև են. մասն են ամբողջության, բայց երբեք լիարժեքորեն ինտեգրված չեն»¹⁶: Այսպիսին են, օրինակ, տարագիրները (երկու մշակույթների միջև են), խառը ազգային ծագում ունեցողները (երկու ազգային ինքնությունների միջև են), դեռահասները (երկու տարիքային խմբերի միջև են) և այլք¹⁷:

Լիարժեքորեն քաղաքացի չդարձած, բայց արդեն լիարժեքորեն գյուղացի լինելու անընդունակ հերոսը արդեն իսկ լիմինալ էակ է: Հայտնվելով լիմինալ տարածքում՝

¹² Վ. Թըրները կիրառում է բառի լատիներեն տարբերակը՝ *communitas*

¹³ Հր. Մաթևոսյան, «Օգոստոս», Հայաստան հրատարակչություն, Ե., 1967 թ., էջ 225

¹⁴ Նույն տեղում

¹⁵ <https://hetq.am/hy/article/57298>

¹⁶ Thomassen, B. "The Uses and Meanings of Liminality", in *International Political Anthropology* 2 (1), 2009, p. 19

¹⁷ Նույն տեղում

նա բախվում է սեփական դրության հետ: Վ. Թըրներն այս բախումը համարում է լիմինալ փորձառության ամենակարևոր կողմերից մեկը. մարդը, խումբը, անգամ ամբողջ հասարակությունը դիմում է ռեֆլեքսիայի, հայացքը շրջում ինքն իր վրա՝ քննելով և կասկածի տակ դնելով սեփական ինքնությունը, տեղն ու դերը¹⁸: Այստեղ է ի հայտ գալիս «մտքի և փորձառության դրամատիկ միահյուսումը»։ Լիմինալ վիճակում գտնվող միաժամանակ ապրում է իր դրությունը և ներհայեցողությամբ փորձում հասկանալ այն: Քառյանի մտքերը գնալով ավելի ու ավելի խառն ու անմիագիծ են դառնում, տարբեր հիշողություններ, առանձին պատկերներ ու ձայներ սկսում են հաջորդել միմյանց, և այս հոսքին զուգահեռ գնում է նաև հերոս-հեղինակի մտածական աշխատանքը:

Քանի որ անջատումը լիարժեք չէ, և հերոսը ամբողջությամբ չի յուրացրել քաղաքացու ինքնությունը, վերադարձն ու միավորումը դառնում են անհնար. պատմվածքի մեջ հերոսը բառացիորեն չի կարողանում լքել կայարանը և գնալ գյուղ: Թըրներն այն կարծիքն է հայտնում, որ յուրաքանչյուր լիմինալություն պիտի որոշակի լուծում ստանա. լիմինալ տարածությունը բարձր լարման տարածություն է, ուստի մարդը չի կարող երկար ժամանակ մնալ դրա մեջ՝ առանց ինչ-որ կարգավորող կառույցների առկայության, ուստի նա կա մ պիտի հենվի սովորական սոցիալական կառույցների վրա, կա մ ձևավորի նոր սոցիալական կառույցներ. Թըրները սա կոչում է նորմատիվ համայնք¹⁹:

Ի՞նչ կլինի, սակայն, եթե լիմինալությունը լուծում չստանա, եթե չնշմարվի նորմատիվ համայնքը: Մաթևոսյանն այս հարցի պատասխանը պատկերավոր կերպով տալիս է պատմվածքում. հերոսը պատկերացնում է, թե ինչպես է ինքը հաջողության հասնում քաղաքում, ինչպես է ռոկ-ըն-ռոկ պարում Կարինեի հետ, ինչպես է իր անունը հռչակվում միութենական խոշոր քաղաքներում, և ապա «այդպես բարձրահասակ ու գեղեցիկ, քսանութ-երեսուն տարեկան, փողկապը թույլ՝ գրասեղանի ետև նստած, դարակից հանեց ատրճանակը և կրակեց բերանի մեջ»²⁰: Կործանման, այս դեպքում՝ ինքնապառնության պատկերը բերվում է միջնորդված կերպով՝ որպես երևակայական պատկեր, այն էլ՝ վերականգնողական վերափոխված իբրև սեփական հաղթանակի ծանրությանը չդիմացողի քայլ, բայց էականը ինքնառնչացման ցանկությունն է, որ պատմվածքի այլ տեսարաններում ևս երևում է, ինչպես, օրինակ, երբ հռետորական հարց է տալիս, թե ինչու մարդիկ իրենց լավությամբ չեն կանխում հրեշի (իր) ծնունդը:

Լուծումն, ի վերջո, գալիս է. «Բեռնաձիերի» հերոսներ Ալխոն ու եղբայր Արայիկը՝ իբրև նախնական գյուղի ներկայացուցիչներ, գալիս են հերոսին գյուղ տանելու, սակայն այս լուծումն էլ վերջնական չէ, քանի որ հերոսի վերափոխումը լիարժեք չէ, և նա պատրաստ չէ միավորմանը՝ ո՛չ որպես նախնական գյուղական համայնքի լիարժեք անդամ, ո՛չ որպես լիարժեքորեն օտարված, «զարգացած» քաղաքացի: Սա է վկայում պատմվածքի անորոշ վերջաբանը. հերոսն անգամ բառացիորեն հարցնում է. «Բա ո՞նց ենք անելու»²¹:

Վերջապես, լիմինալության հարցը կարևորվում է նաև ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական, մշակութային համատեքստը հաշվի առնելիս:

¹⁸ Turner, Victor W., *The Anthropology of Performance* New York: PAJ Publications., 1988, p. 24

¹⁹ Homans, Peter. *Jung in Context: Modernity and the Making of a Psychology*. Chicago: University of Chicago, 1979., p. 207

²⁰ Հր. Մաթևոսյան, «Օգոստոս», Հայաստան հրատարակչություն, Ե., 1967 թ., էջ 243

²¹ Նույն տեղում, էջ 255

Բ. Թոմասսենն ամբողջացնում է Թըրների՝ լիմինալության դասակարգումները, և հասարակության մակարդակում լիմինալության դրսևորում համարում կառնավալները՝ որպես լիմինալ պահեր, հեղափոխությունները՝ որպես պատմության կարճ լիմինալ շրջաններ, և արդիությունն ինքնին՝ իբրև «հարատև լիմինալություն» (“permanent liminality”)²²:

Հր. Մաթևոսյանի ստեղծագործությունն ի հայտ է եկել խորհրդային 60-ականների իրականության համատեքստում: Համաշխարհային մշակույթում 60-ականները նշանավորվեցին մեծ տեղաշարժերով ու փոխակերպումներով. Հետպատերազմյան «վերականգնման» շրջանի որոշակի պահպանողական միտումների հաղթահարմամբ արդիությունն իր վերջին հզոր վերելքն ունեցավ (այն, ինչ անվանում ենք ուշ մոդեռնիզմ), դրվեցին հետարդիության հիմքերը, սոցիալ-քաղաքական նշանակալի տեղաշարժերն անդարձ փոխեցին արևմտյան հասարակությունը: Այս առիթով հիշատակման արժանի է ֆրանսիացի փիլիսոփա Լուի Ալթյուսերի այն տեսակետը, թե 1968 թ.-ի մայիսյան իրադարձությունները «ամենանշանակալի երևույթն էին Արևմուտքի պատմության մեջ նացիզմի հանդեպ հաղթանակից ի վեր»²³: 60-ականները, այսպիսով, հեղափոխական ժամանակներ են, ընդ որում՝ հեղափոխությունը մշակութային է և, որպես այդպիսին, խորապես կապված է արդիության հարցերին:

Խորհրդային իրականության մեջ ևս 60-ականները մեծ տեղաշարժերի ժամանակաշրջան է. արդիության հարցերին այստեղ միանում է խրոնոշոկյան ձևակերպում: Պատմական այս շրջանի մաթևոսյանական ընկալման մասին խոսում է Ս. Դվոյանն իր «Նախնականի հնարավորությունը» գեկուցման մեջ՝ բնութագրելով Ձնհալի ընկալումը մի կողմից՝ իբրև հեղափոխական-հերոսական, մյուս կողմից՝ խեղկատակային-կառնավալային իրողություն²⁴: Այսպես, 1967 թ.-ին տպագրված «Կայարան» պատմվածքը, անկախ հեղինակի դիտավորությունից, ոչ թե պարզապես անհատական լիմինալ փորձառության մասին է, այլ գոյություն ունի հասարակական լիմինալության, հասարակության լիմինալ վիճակի համատեքստում:

Այսպիսով, Հր. Մաթևոսյանի «Կայարան» պատմվածքում արդիականացման, տեխնոլոգիականացման գործընթացների արդյունքում սրված քաղաք-գյուղ հարցն ի հայտ է գալիս լիովին նոր լույսի ներքո. դեպի քաղաք՝ որպես օտարի և օտարացման տարածություն հերոսի անցումը չի հասնում սպասված հանգուցալուծմանը, Հրանտ Քառյանը չի կարողանում ամբողջությամբ յուրացնել քաղաքացու ինքնությունը, ուստի չի կարող վերադառնալ դեպի գյուղն ու գյուղականը: Լինելով լիմինալ էակ՝ նա հայտնվում է լիմինալ տարածքում, որտեղ ռեֆլեքսիայի է ենթարկում սեփական դրությունն ու ինքնությունը: Ի վերջո, կայարանից միակ ելքը նորմատիվ համայնքի միջոցով է. եղբայր Արայիկը բերում է Ալիսո ձիուն, որով Քառյանը վերջապես կարող է վերադառնալ գյուղ, սակայն լիմինալությունը վերջնական լուծում չի ստանում, և պատմվածքն ավարտվում է անորոշության զգացողությամբ: Տպագրված լինելով 1967 թ.-ին՝ «Կայարանը» արտացոլում է ինչպես տեղային, այնպես էլ համաշխարհային սոցիալ-քաղաքական, մշակութային այն լիմինալ դրությունն ու մթնոլորտը, որ ձևավորվել էր 20-րդ դարի կեսերին՝ կապված մեծ մշակութային և հասարակական տեղաշարժերի հետ:

²² Thomassen, B. "The Uses and Meanings of Liminality", in *International Political Anthropology* 2 (1), 2009, p. 16

²³ Jay, Martin "Louis Althusser and The Structuralist Reading of Marx". *Marxism and Totality: The Adventures of a Concept from Lukács to Habermas*. Berkley, Los Angeles: University of California Press, 1984, pp. 395-396

²⁴ Մաթևոսյանական ընթերցումներ 3, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, էջ 159-160

ЛИМИНАЛЬНОСТЬ В РАССКАЗЕ ГРАНТА МАТЕВОСЯНА «СТАНЦИЯ» - АРТУР МИРЗОЯН - Цель статьи - выдвинуть и обосновать подход, согласно которому рассказ Грант Матевосяна «Станция» основана на лиминальности с ее различными проявлениями, и изображении лиминального опыта как в контексте вопроса города-деревни, так и модернизации, технологизации и социальных сдвигов в целом. Наша задача – применить концепцию лиминальности, предложенную А. ван Геннепом и В. Тернером, к этому рассказу Матевосяна, рассматривая его как в логике внутренней структуры истории, так и в общей прозе Матевосяна. История анализируется в контексте проблем модернизации, технологизации, опыта чужого, а также реальности 60-х годов как периода долгосрочной лиминальности.

В ходе исследования были применены как научные (анализ, синтез, абстракция), так и специальные (мифокритика) методы.

В результате исследования было сформировано следующее заключение: В результате исследования был сделан следующий вывод: в рассказе Гранта Матевосяна «Станция», станция действует как лиминальное пространство, в то же время воплощая собственный лиминальный опыт Гранта Каряна, как человека, оказавшегося между городом и деревней, между современностью и первобытностью, который постоянно размышляет над своей ситуацией.

Ключевые слова: лиминальность, лиминальный опыт, лиминальное пространство, вопрос города-деревни, Грант Матевосян, модернизация, технологизация.

LIMINALITY IN THE SHORT STORY “STATION” BY HRANT MATEVOSYAN- ARTHUR MIRZOYAN - The purpose of the article is to put forward and justify the approach according to which the concept of Hrant Matevosyan’s short story “Station” is based on liminality with its various manifestations, and the portrayal of the liminal experience in the context of the city-village question, as well as modernization, technologization and social shifts in general. Our task is to apply the concept of liminality, as proposed by A. van Gennep and W. Turner, considering it both in the logic of the internal structure of the story and Matevosyan’s prose in general. The story is analyzed in the context of the problems of modernization, technologization, the experience of the other, as well as the reality of the 60’s as a period of long-term liminality.

In the course of the study, both scientific (analysis, synthesis, abstraction) and special (myth-criticism) methods were applied.

As a result of the study, the following conclusion was formed: in the short-story “Station” by Hrant Matevosyan, the station acts as a liminal space, while at the same time embodying Hrant Qaryan’s own liminal experience as someone caught between the city and the village, between modernity and primordiality, who constantly reflects on his situation.

Key words: Liminality, liminal experience, liminal space, the city-village question, Hrant Matevosyan, modernization, technologization.

**ԲԱՌԻՄԱՍՆԵՐԻ ՓՈԽՆԵՐԹԱՓԱՆՑՄԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՆԱՍԵՂԾԱԿԱՆ ՏԵՔՍՏՈՒՄ**

Իրականության միևնույն ազդակները գեղարվեստական ստեղծագործության ներքին և արտաքին մակարդակներում պահանջում են լեզվական տարբեր միավորներ, ըստ այդմ նաև՝ բառիմաստի ծավալման տարբեր գործառնություններ, որոնք էլ սահմանում են ստեղծագործության ինֆորմացիոն դաշտի տարածությունը: Իրենց անտեսանելի հարաբերություններում բառերը ձեռք են բերում իմաստային նոր կոնցեպցիաներ, որոնց ստեղծած հոգեբանական իրադրությունից դուրս են մղվում նույն այդ բառերի նախնական ազդակները՝ որպես ավելորդ գործակիցներ:

Ստեղծագործության գեղագիտական, հոգեբանական-փիլիսոփայական ուղղվածությունը պայմանավորված է բառիմաստային փոխներթափանցումներում ինֆորմացիայի մշակման գործընթացով, մեթոդներով ու եղանակներով, որոնք (մասնավորապես պոեզիայում) իրագործվում են միկրոպլանային համակարգով՝ ածանցելով արտատեքստային բոլոր այն տարրերը, որոնք նախապես սնել էին ենթատեքստի գաղտնիքը:

Ստեղծված հերմետիկ միջավայրում և բովանդակային ինքնուրույնության մեջ, ինչպես թրթուրը բոժոժում, բառը կերպարանափոխվում է, սևեղծվում դեպի գոյության սեփական միջուկը՝ կեցության տարբեր մակարդակներում իր ցույց դնելով նշանակիչ բոլոր այն իմաստները, որոնց նա հանդիպել է ինքնակենտրոնացման վերջնական փուլից առաջ: «Խոսքի բազմիմաստությունը, - գրում է Հ. Էդոյանը, - ստեղծվում է լեզվի սոցիալական-հոգեբանական-փիլիսոփայական շերտերի միաձուլումից մեկ նշանի մեջ, որը եզակի և միասնական լինելով, իր մեջ պահպանում է և զարգացնում այդ շերտերից յուրաքանչյուրի նշանակությունը»:

Բանալի բառեր. պոեզիա, մտածողություն, արդի, կառուցվածք, ժամանակ, անկախություն, մետաֆոր, տիպաբանություն հիմնախնդիր:

Ենթատեքստի գաղտնիքը, որը, մեծ հաշվով, պոեզիայի վերջնական նպատակն է, «ինքնաբացահայտման» յուրաքանչյուր քայլ անուղղակիորեն նպատակամղում է իր իսկ «թաքստոցների» ապահովությանը, նույնն է թե՝ պոետական իրադրության տևականությանը՝ այսպիսով ձեռք բերելով անկախ գոյակցություն: Իր ներսում բանաստեղծական տեքստը ձեռք է բերում նոր հնարավորություններ, որոնք նախատեսված չէին հեղինակի կողմից և գտնվում են իրենց սեմանտիկ տեղաշարժերի նկատմամբ նրա առարկայական պատկերացումներից դուրս: Մակայն դա չի նշանակում, թե հեղինակն ի նկատի չի ունեցել ստեղծագործության ազատության այսօրինակ հեռանկարը. նա պարզապես ի գործու չէ ճշգրտորեն անվանակոչելու այն երևույթները, որոնք լեզվական տարրերի փոխհամագործակցության արդյունքում

վերածվում են նշանների և իրենց բազմիմաստության շնորհիվ դուրս մնում իր հոգևոր-մտահայեցողական տիրապետության սահմաններից: Այսքանով հանդերձ, ինչքան բանաստեղծությունը հեռանում է հեղինակից, այնքան մեծանում է վերջինիս ներկայությունը նրա ներքին շերտերում: Սա նախ և առաջ ժամանակակից բանաստեղծության տիպաբանական առանձնահատկությունն է, նրա օրգանիզմի կառուցվածքային մեխանիզմը, որ անհանդուրժողական է կանոնիկ-էկզալտացված ընկալումների նկատմամբ և ներհակ՝ գոյության ռացիոնալ ինքնագիտակցությանը:

Մուտք գործելով բանաստեղծության ներքին մակարդակ՝ ինֆորմացիան հավաքագրում է հեղինակի հոգևոր փորձի ազդանշանները և կողավորվելով՝ ստանձնում տեքստի մեջ այդ փորձի իրացման նախաձեռնությունը: Արտաքին և ներքին ինֆորմացիաները, այսինքն՝ առարկայական աշխարհի կենդանի ազդակներն ու պատմության փորձով ամրագրված հեղինակի հոգևոր արժեհամակարգը բանաստեղծական տեքստում ձգտում են միասնության, փորձում հանդես գալ մեկ ընդհանրական նպատակի հանգույն: Մակայն նրանց դերակատարությունը ստեղծագործական գործընթացում հետզհետե փոխվում է. ներքին ինֆորմացիան իր ազդեցությունը տարածում է արտաքինի վրա, ամրապնդում իր իշխանությունը կառուցվածքային ներքին հարաբերություններում, քանզի այն արդեն ունի արժեքների փորձարկման որոշակի ընդհանրացվածություն, ինչի շնորհիվ դասակարգում և իրեն է ենթարկեցնում դեռևս չմարմնավորված արտաքին դրսևորումները: Այս հատկանիշն առավել տիպական բնույթ է կրում հատկապես ժամանակաշրջանի պատմական-հասարակական-քաղաքական ֆորմացիաների փոփոխության ու դրանով պայմանավորված հոգևոր-մշակութային արժեքների ձևախեղման հետևանքով, ինչի պատճառը նոր ժամանակների անխուսափելի անդեմությունն է և այն ներկայացնել փորձող ինֆորմացիոն սլաքի ուղղության անորոշությունը:

Գեղարվեստական ինֆորմացիան, որն իր մեջ կրում է հեղինակի հոգևոր նկարագիրը, աշխարհայեցման կերպն ու ինտելեկտուալ փորձը, գտնվում է տեքստի ներքին մակարդակում, որտեղ նրան կյանք են տալիս բառիմաստների փոխհարաբերություններն իրենց տարբեր աստիճաններով՝ կապված գեղարվեստական հնարքի և դրանով պայմանավորված լեզվական միավորի բազմանշանակության հետ: Գեղարվեստական հնարքը բոլոր իրավիճակներում գործում է հանուն իրեն՝ այդ ընթացքում տեքստի մեջ տեղի ունեցող բոլոր տեղաշարժերը ներառելով իր կողմից սկսած խաղի մեջ, որի դրսևորման տարբեր շերտերում էլ ինֆորմացիան բացվում է իր նոր կողմերով: Այն, ինչ ձեռք է բերում ինֆորմացիան ներտեքստային հարաբերություններում՝ պայմանավորված է այդ խաղի բնույթով, նրա կազմակերպման մեթոդներով ու եղանակներով, որոնց արդյունքի իրացման աստիճաններում էլ սկսվում է լեզվի շերտավորման գործընթացը: Գեղարվեստական հնարքի շնորհիվ բառը երբեմն «դիմակավորվում է»՝ կապված հեղինակի ներքին ժեստի և նրանով պայմանավորված լեզվական իրավիճակի նպատակի և ուղղության հետ: Այս հանգամանքն, օրինակ, ակնհայտ է դառնում Հովհաննես Գրիգորյանի պոեզիայում, որը կառուցված է լեզվական իրավիճակի արտաքին պլանում՝ նպատակ ունենալով բառիմաստային փոխանցումների արտաքին ձևախեղմամբ այլընտրանք ապահովել նրանց նոր հարաբերությունների համար.

*Հետո գալիս է կիրակի օրվա ամենահրաշայի պահը՝
ես մաքուր սափրվում եմ, հագնում եմ տոնական
կոստյումն և օղակն անցկացնելով վիզս, հրում եմ
աթոռը ռոտերիս տակից և սկսում եմ խաղաղ ճոճվել*

*առաստաղի կեռիկին ամրացված պարանից, մինչև որ
կինս վերադառնում է խանութից, զգուշորեն իջեցնում է
ինձ, հարմար նստեցնում է աթոռին ու միասին
անշտապ վայելում ենք
մեր հրաշալի իրիկնային սուրճը...*

«Կիրակի»

Իրենց տրված ազատության շնորհիվ բառերն այստեղ գտնում են միմյանց հետ հաղորդակցվելու այնպիսի եզրեր, որոնցում աղավաղվում է իրենց պատմական-իմաստային նշանակությունը, առանց որոնց և նրանք ձեռք են բերում թեթև խաղի մեջ մտնելու հնարավորություն՝ հանձն առնելով իրենցից ակնկալվող իրավիճակի կայացման պատասխանատվությունը:

Հովհ. Գրիգորյանի վերոհիշյալ հատվածում, օրինակ, նյութն արդեն գործում է իրավիճակի ներսում, ուստի և, որպես այդպիսին, տեղ չի զբաղեցնում կոմպոզիցիոն համակարգում: Իրավիճակը նյութից վերցրել է նրա այն մասը, որը նրան անհրաժեշտ էր՝ իրականացնելու գեղարվեստական հնարքի ծրագիրը, իսկ մնացած մասը նա դուրս է մղել տեքստից՝ որպես ավելորդ հանգամանք: Նյութի և իրավիճակի փոխհարաբերության բնույթը պայմանավորված է հեղինակի հոգեկերտվածքով՝ կապված գեղարվեստական հնարքի տիրապետման նրա ձիրքի և օժտվածության հետ, իսկ վերջիններիս իրացումը՝ բառիմաստների փոխհաղորդակցության բազմապլան համակարգումների:

Նույնը, թերևս, կարելի է ասել Հր. Սարուխանի պարագայում, որի գրեթե բոլոր ստեղծագործություններում գործում են բառիմաստի փոխհարաբերության ներքին կանոնները, համաձայն որոնց՝ լեզվական ֆիգուրի ձայնային ազդանշանները միմյանց հետ հաղորդակցվում են կոմպոզիցիոն երկակի պլանում՝ արտաքին և ներքին: Արտաքին պլանում գործում է լեզվական նշանի փոխանցման ճշգրիտ մեխանիզմը. իմաստային նշանակության ծավալման նպատակով բառերն ավելորդ ճիգ չեն գործադրում, ինչի արդյունքում միմյանց հետ հաղորդակցվելու գործընթացում նրանք մնում են անվնաս: Միննույն ժամանակ՝ հաճախակի կիառվող նորակազմությունները նրա բանաստեղծություններում չեն ուղեկցվում բառիմաստի շեղումներով, այլ ընդարձակելով նրա միջուկային նշանակությունը՝ միաժամանակ ընդարձակում են հարաբերության մեջ մտնելու նրա ներքին հնարավորությունները: Պլաստիկան Սարուխանի պոեզիայում ապահովում է բառային արտաքին շերտերի հաղորդակցական ֆունկցիան, որտեղ յուրովի արտահայտվում է բանաստեղծի հոգևոր կառուցվածքը, աշխարհի հետ փոխհարաբերության նրա դիրքը՝ առանց ավելորդ որևէ նախապայմանների: Այս «դիրքը», առհասարակ, շատ կարևոր է ստեղծագործության ներքին ժամանակի և տարածության համար. կախված հեղինակի անձնական ճակատագրից, մշակութային պատկանելիությունից, հոգեմնացական փորձի իրացման աստիճանից և այլն՝ ստեղծագործությունը ձեռք է բերում սեփական կյանքի իր մոդելը՝ պատմական տարբեր ժամանակներում ի ցույց դնելով բազմաթիվ նորահայտ կողմեր, որոնք նոր միջավայրում վերալիցքավորում են նրա ինֆորմացիոն ներքին ազդակները՝ բացահայտելով ստեղծագործության՝ նոր իրականության հետ հարաբերվելու այլևայլ եզրեր:

Ներքին պլանում Հր. Սարուխանի պոեզիան հիմնականում կառուցված է ներտեքստային շարժման մեջ բառի նախնական իմաստի պահպանման սկզբունքով. հանգամանք, որը բառային ֆիգուրին հնարավորություն է տալիս հաղորդակցման գործընթացում էներգետիկ նոր լիցքեր ձեռք բերելով հանդերձ՝ պահպանել սեփական

էներգիան: Սա նախ և առաջ տեղի է ունենում բառերի հարկանությամբ կոմպոզիցիոն ներքին համակարգի անձեռնմխելիության շնորհիվ. որքան ներհյուսված են բառ-իմաստներն ու լեզվական նշանի ձայնային կոդերը՝ այնքան ազատ է մնում տեքստի մեջ նրանց առարկայական նշանակյալի զբաղեցրած տարածությունը, որտեղ և նույն սկզբունքներով կարելի է տեղադրել իմաստային-էներգետիկ նոր շերտեր՝ տեքստի հերմետիկ միջավայրում շարժման մեջ դնելով ստեղծագործության գաղտնի հնարավորությունները: Ներքին տարածության այսօրինակ բնույթով է պայմանավորված բառերի կյանքը, որով սնվում է տեքստը՝ ձեռք բերելով հոգեբանական անհրաժեշտ ուղղվածություն.

*Կանաչ էր ձյունը աշունքվա կեսին,
Եվ կորուստ ուներ յուրաքանչյուր ծառ:
Եվ հավքեր էին բներից թափվում,
Եվ տեր չունեին բառերը պայծառ:*

«Էլեգիա»

Սարուխանի այս տողերում արտաքին-նկարագրականն ավարտվում է տաղաչափական ռիթմի և բառերի արտաքին կենսագրության համատեղ ներգործության մեջ՝ ստեղծելով որոշակի երաժշտականություն և նրան համընթաց տրամադրություն: Բայց այստեղից բանաստեղծությունը նոր միայն սկսվում է, մտնում բառերի ինֆորմացիոն-իմաստային հակադրությունների մեջ, վերջիններիս միջոցով ձեռք բերում իմաստային նոր շերտեր, որոնց շնորհիվ և, մտնելով հարաբերությունների նոր համակարգ, նորոգում ներտեքստային համընդհանուր շարժումը: Առաջին տողի մեջ արդեն իսկ առկա է երևույթների ընդգծված հակադրությունը. իմաստային առումով «կանաչը» և «ձյունը» չեն կարող հանդես գալ գործողության միևնույն հարթության մեջ, քանի որ նրանք բնության երկու հակադիր իրավիճակներն են և նույնատիպ ուղղություն են ստանում նաև իրենցով արտահայտված հոգեբանական այս կամ այն իրադրության մեջ. (կանաչը խորհրդանշում է կյանքի զարթոնքը, ձյունը՝ նրա մայրամուտը): Հետևաբար՝ ձյունը չի կարող լինել կանաչ, իսկ եթե դա իրոք այդպես է՝ նշանակում է խախտվել է բնության ներդաշնակությունը, նույնն է թե՝ բանականության նախասահմանված կարգը և այդ համատեքստում՝ մարդկային գոյության տարածաժամանակային ռիթմը: Եթե ձյունը կարող է լինել կանաչ, ուրեմն մահը կարող է լինել մի նոր ծննդի սկիզբ, որը կարող է ընկալվել սոսկ մետաֆիզիկորեն («Ես փնտրում եմ սկիզբն ու վերջն եմ գտնում», Հ. Էդոյան)՝ աշխարհայեցման սուբյեկտիվ մակարդակներում ընդգծելով «ես»-ի ողբերգականության գիտակցումը: «Կանաչը» և «ձյունը» կապված են «երկրորդ լեզվի» իմաստային նշանակության մեջ, և այդ կապի հնարավոր արդյունքն իրացվում է «աշունքվա կեսին» բառակապակցության կողմից: Վերջինս բանաստեղծության մեջ հանդես է գալիս որպես իմաստային հակադրության երկրորդ կողմ և, հանդիպելով «կանաչ ձյան»՝ արտաքին հակադրության ներքին միասնությանը՝ ընդունում ընդդիմադիր որոշակի կեցվածք. «կանաչ ձյունը» (մեռնող-հառնող աշխարհը), գտնվելով գոյության դիալեկտիկական հարաշարժության մեջ, պահանջում է տարածաժամանակային անհրաժեշտ հարթություն, որի դերակատարությունը (տվյալ դեպքում) պետք է ստանձնի «աշունքվա կեսին» բառակապակցությունն իր իմաստային և հոգեբանական նշանակության մեջ, ինչը տեղի չի ունենում, քանի որ բնության այս վիճակը («աշունքվա կեսին») շարժում չի ենթադրում և չի կարող հանդուրժել բնության նախորդ վիճակը՝ որպես շարժում և գործողություն: Այսպիսով, առաջին տողի մեջ արդեն իսկ ակնհայտ հակադրությունն ի ցույց է դնում տիեզերական համընդհանրությո-

յան ներքին «պառակտումը», որին էլ (ինչպես ներկայացված է քառատողի մյուս երեք տողերում) հետևում է անխուսափելի անկումը:

Ժամանակակից հայ պոեզիայում ներտեքստային համակարգի ինֆորմացիոն բազմիմաստությամբ առանձնանում է հատկապես Հ. Էդոյանի, որոշ առումով նաև՝ Հ. Մովսեսի պոեզիան: Իհարկե, հարաբերական իմաստով այս երևույթը կարելի է տարածել շատերի վրա, բայց այն, ինչ ակնկալում է տեքստը ստեղծագործությունից «անկախ»՝ բարդ և բազմահամակարգ մի երևույթ է, որ պահանջում է լեզվամտա-ծողության առանձնահատուկ կառույց և աշխարհընկալման՝ նրանում իրացվող հոգևոր փորձի բազմակողմանի համակարգում: Հ. Մովսեսի պոեզիայում, օրինակ, տեքստը չի սահմանափակվում հեղինակի կողմից իրեն ընձեռված հնարավորություններով. բառային փոխհարաբերություններում վերակողավորված ինֆորմացիոն համակարգն ստեղծում է մի տարածություն, որը, որպես այդպիսին, նախքան այդ գոյություն չունեի և չէր էլ կարող մտահայվել ճանաչողական որևէ մակարդակում, բայց, իրեն վերապահված դերակատարության մեջ, հնարավոր է դարձնում մի իրականություն, որն առավել իրեղեն ու ներգգայական է, քան առարկայական աշխարհն ու նրա ազդակները.

*Ես կարծում էի՞ կորցրել եմ ինձ,
ես իմ մարմինն էի վախժվ շոշափում,
ես ոլորտներն էի երազում տեսել,
որտեղ լռության դիպակն է ծփում:
«Երգասացություն»*

Բառերի նախասահմանված տարածությունն այստեղ հրաժարվում է ինքն իրենից, անցյալում թողնում իրենով արտահայտված իմաստներն ու տրամադրությունները՝ տիեզերական նոր կշռույթի մեջ մոտենալով իր իսկ միջուկի արարչագործ էությանը: Մարմինը կորցնելու «վախը» («Ես իմ մարմինն էի վախժվ շոշափում») «ես»-ի հավերժական բացակայության այնկողմնային գիտակցումն է, ինքնըմբռնման միատիկական «երկյուղը», որի միջոցով բանաստեղծը մշտապես նորոգում է աշխարհի տեսիլքը, նրանում նաև՝ բառի երկրորդ նշանակությունը:

Ինչպես վերոբերյալ բանաստեղծության, այնպես էլ, առհասարակ, Հ. Մովսեսի գրեթե ողջ ստեղծագործության մեջ բառիմաստային փոխանցումները կատարվում են լեզվազգացողության ենթագիտակցական շերտերում, ինչի շնորհիվ նրա պոեզիան սկիզբ է առնում տեքստի երկրորդ իմաստի մեջ՝ նրա միջոցով ձեռք բերելով մի տարածություն, որ հասու չէ ստեղծագործության արտաքին մակարդակի համար:

Բառերի առարկայական կշռույթից զատվում է Ա. Ավդալյանի, երբեմն նաև՝ Ղ. Սիրունյանի պոեզիան: Վերջինիս պարագայում ստեղծագործությունը հիմնականում կառուցվում է ռելիեֆային էֆեկտների վրա, որտեղ գրեթե չեն կարևորվում բառիմաստների փոխանցման ներքին գործոնները: Իրերի ու երևույթների ոչ սովորական զգացողությունը Սիրունյանի բանաստեղծության համար դառնում է հիմնական ելակետ և, հանձն առնելով նրա առանցքային նպատակի իրագործման պատասխանատվությունը, ստեղծագործությունը հանգեցնում ավարտուն լուծումների: Ահավասիկ՝ «Երեխաները» վերնագրով գողտրիկ բանաստեղծությունը.

*Երեխաները ծնվում են աստղերի մեջ,
Նրանք խաղում են աստղերի հետ, խառում նրանց լեզվով:
Մենք չենք հասկանում նրանց,*

*և նրանք մեզ մի բան հասկացնելու համար
իջնում են մեզ մոտ՝ Երկիր,
ավադ, արդեն ասելիքը
մոռացած:*

Հանուն գեղագիտական էֆեկտի՝ տեքստն այստեղ հրաժարվում է կառուցվածքային ներփակ հարաբերություններից, և բանաստեղծության միապլան զարգացման մեջ լեզվական նշանակյալի բազմիմաստության պահանջը փոխարինվում է ինտուիցիոն անհրաժեշտությամբ: Ինտուիցիան և աշխարհի իմաստի ներքին մտահայտումը Ղ. Միրունյանի ստեղծագործության հիմնական նախապայմաններն են, որոնց համար տեքստը սոսկ միջոց է, արտաքին հանգամանք, որը պարզապես ստեղծված է նրա համար, որպեսզի ստեղծագործությունը նրանից «հեռանա»:

ТИПОЛОГИЯ ВЗАИМОПРОНИКНОВЕНИЯ СЕМАНТИКИ СЛОВ В ПОЭТИЧЕСКОМ ТЕКСТЕ - ОВИК МУСАЕЛЯН - В данной статье рассматриваются типологические проблемы и особенности взаимопроникновения семантики слов в поэтическом тексте. Текст и произведение, на первый взгляд, находятся в одной плоскости восприятия, и, казалось бы, выполняют одни и те же функции. Однако природа их включения различна: возможности текста «ограничиваются» в данном произведении, а последнее (в метафизическом плане восприятия) берет начало там, где кончается текст.

Проникая в смысловые значения друг друга, слова в поэтическом тексте перестают использоваться в своих словарных значениях, расширяют содержательное пространство восприятия, в результате чего, как сказал бы Гораций, «слова удивляются соседству друг друга».

В результате взаимопроникновения слов текст становится более герметичным, требующим графической и вертикальной методологии анализа – обстоятельство, которое, в свою очередь, обеспечивает основу эстетического восприятия произведения и его про

Исследования были проведены на основе единого образа современного армянского поэтического мышления.

Ключевые слова: поэзия, мышление, актуальный, строение, жаманак, независимость, метафора, типология, проблема.

TYPOLOGY OF MUTUAL TRANSFER IN POETRY TEXT-HOVIK MUSAYELYAN - This article examines the typological problems and peculiarities of word penetration in a poetic text.

At first glance, the text and the work are in the same plane of perception, as if they perform the same functions. However, the geography of their inclusion is different. The possibilities of the text are "limited" in the given work, and the latter (in the metaphysical plane of perception) starts from where the text ends.

In the poetic text, penetrating each other in the semantic meaning of each other, the words give up their dictionary lexical meaning, expand the content space of their perception,

as a result of which, as Horace would say, "the words are surprised by the proximity of each other".

As a result of the mutual penetration of words, the text becomes more hermetic, requiring a graphic-vertical methodology of analysis. This circumstance, which, in turn, provides the basis for the aesthetic perception of the work and the spatial inclusions.

Studies have been conducted on the general context of modern Armenian poetic thinking.

Key words: *poetry, thinking, nowadays, structure, time, independence, metaphor, typology, problem.*

ԼՈՒՍԻՆԷ ԱԻԵՏԻՍԵԱՆ

«ԱՐԿԱՆՔ» ԵՐԳԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԵՒ ՁԵԻԱԻՄԱՍՏԱՑԻՆ
ՑԵՆԱԿԷՏԵՐԸ¹

Քննության առնելով երկանքի մասին Արցախի բարբառով գրուած բանաստեղծութիւնը՝ նախ վերլուծել ենք նրա գաղափարական կիզակէտերը, այսինքն՝ առանձնացրել ստեղծագործութեան բովանդակութեան արժեհամակարգային այն հենքը, որ առաւրեայ հոգսերը հոգալուն գուգադրում ու համակշռում է աշխարհաճանաչողութեան եւ ինքնաճանաչման կարելորդ նպատակներ: Միաժամանակ մատուցել ենք ստեղծագործութեան քննութեան մի կերպաբանութիւն (methodology), որ բնական գիտութիւնների եւ ազգային կենսիմաստասիրութեան համադրութեամբ հնարաւորութիւն է տալիս համակողմանիաւ ճանաչելու ստեղծագործութեան էութիւնը, նրա ներքին ու արտաքին կառոյցները կապող աներեւոյթ «ատամնանիւններ»: Այդ կերպ նաեւ բնագիտական աշխարհաճանաչողութեան նորագոյն դրոյթներ ենք յայտաւծում ստեղծագործութեան մէջ՝ որպէս քնարական հերոսի՝ ժողովրդի փիղիսոփայութիւն, որի բովանդակութիւնը նա՝ ժողովուրդը, գիտի ապրիորի (նախքան փորձը):

Գրական երկը քննելով արուեստ-գիտութիւն-իմաստասիրութիւն համադրութեամբ եւ գիտութիւն հասկացութեան մէջ ընդգրկելով նաեւ բնական ու ճշգրիտ գիտութիւնները՝ յայտնաբերում ենք այն ճշմարտութիւնը, որ փոքր թուացող իւրաքանչիւր երեւոյթ ըստ էութեան՝ մեծ երեւոյթի խորհրդանշանն է, ինչպէս երկանքի պտոյտն է ակնյայտ խորհրդանշումը արեւի շուրջ երկրի, կամ Ծիր կաթնի կենտրոնի շուրջ Արեգակնային համակարգի շրջաբերութեան: Երկանքը ներկայանում է որպէս ստոյգ մանրակերտը տիեզերքի (երկինք-երկիր համակարգի), մարդը՝ աստծու:

¹ Յաղումածի ուղղագրութիւնը՝ ըստ դասական ուղղագրութեան կանոնարկման համար որդեգրած առաջնորդող սկզբունքների, որոնք փաստագրուած են հնագոյն ձեռագիր վկայութիւններով, հիմնաւորուած եւ շարադրուած հեղինակի «Երբ յայտաւծում է մաշտցեան տրամաբանութիւնը» (2018) գրքում: Հեղինակի սկզբունքային մատենցման առանցքային նպատակն է գրական հայերէնի բոլոր լեզուավիճակների (գրաբար, միջին հայերէն, արեւելահայերէն, արեւմտահայերէն) համար ապահովել ուղղագրական մեկ համարինակ:

Մասնաւորապէս, «աւ» երկբարբառին փոխարինող **օ**-ն աւտար նշան է, եւ տրամաբանական ու հաւանական է, որ ԺԱ դարից այս կողմ լատինական այբուբենից յատկապէս մատենագրութիւն է ներմուծուել՝ զուտ ձեպագրութեան համար, քանի որ նրա շնորհիւ գրչի քառակի շարժումը փոխարինուել է գրչի մեկ պտոյտով, ինչպէս ուսանողներն են դասախաւսութիւն սղագրելիս աւգտագործում պայմանական նշանային համակարգ՝ -ութիւն, -ային, -ական եւ այդ ածանցները արագ նշանակելու համար: Մինչդէռ վիմագիր արձանագրութիւններում գրեթէ սրբաւրէն պահպանուել է երկբարբառը:

Ուղղագրական համակարգի նախնական կանոններից իւրաքանչիւր շեղում պարտութեան տանող չգիտակցուած նահանջ է: Երբ ոտքդ մեկ քայլ յետ ես տանում, ուրեմն պատրաստ ես զիջելու: Քեզ առաւրեայում ամէն ինչ համոզում է, թէ աշխարհը դէպի հեշտն է ընթանում, պէտք է թաթափել ծանրութիւնները: Խաբէութիւն է՝ Նահանջն, այո՛, արձանագրուել է ԺԱ դարում: Յետոյ, երբ շահախնդիր իրականութեան մէջ ջանքերից յոգնած՝ դէպի դիրիճն ենք ընթացել, զեղչել ենք բարձունքը յաղթահարելու կամքը եւ հերթով տանուլ տուել փոքրիկ թուացող ներքին ճակատարմարտերը, եւ ի վերջոյ, պարտում ենք մեծ պատերազմներում:

Մինչդէռ մշակոյթը փրկչական ջանքի ու սխրանքի պատմութիւնն է...

Երկանքն ու նրա շարժումը նոյնապատկեր կոտորակումն ու փոքրաչափ ընդարինակումն են տիեզերական մեծադիր հանդէսի, որ արինաչափաւրէն ինքնակրկնող պատկերների բազմութիւն է՝ փրակտալ (fractal): Եւ այդ փոխկապակցուած համակարգում մարդու միտքը, խաւսքն ու գործը ի զարու են առաջ բերելու տիեզերական արձագանգներ, դառնալով մեծ շրջադարձների սկիզբն ու պատճառը:

Յաւորուածն ունի նաեւ գրականագիտութեան շրջանակներից դուրս թուացող ռազմավարական նպատակներ՝

ա. խրախուսել ստեղծագործել բարբառով,

բ. բարբառը պահպանել նաեւ որպէս գրականութեան լեզու, եւ սա չի նշանակում, թե բարբառը հաւանկում է վերածուելու գրական լեզուի:

գ. փոխազդու դարձնել բարբառի եւ գրական լեզուի միջեւ կապը եւ այդ կերպ ապահովել միմեանց կենսական ոյժեր փոխանցելու հնարաւորութիւնը:

Բանալի բառեր՝ ստեղծագործութիւն բարբառով, գրականութեան հայեցակարգ, քննութեան կերպաբանութիւն, արուեստ-գիտութիւն-իմաստասիրութիւն համադրութիւն, երկանք՝ երկիր-երկինք համակարգ, փրակտալ (fractal), թիթեռի արդիւնք:

ԱՐԿԱՆՔ

«Ա՛դէ, արկանք, մա՛դէ, արկանք,

Քըզանում կա էլհա հարզանք»²:

Իրիքնակը՝³ մար մտաւ,

Ժրմածենք⁴ ա, տոն յեկեք,

Յորենն էն ա հընդրած,

Ըղընձիլի ա մըհենգ:

² Ձեռագիր աղբերից: Տես՝ Ա. Սարգսեան, Ղարաբաղի բարբառի բառարան, Երեւան, 2013, էջ 76:

Բանաստեղծ, մանկագիր, բանահաւաք եւ երգահան Գուրգէն Գաբրիելեանի մշակմամբ լոյս է տեսել «Ղարաբաղի հորովել» գրքում, Երեւան 2003:

³ **Իրիքնակ** – արեգակ:

⁴ **Ժրմածենք** – աղջամուղջ, մթնշաղ: Ինչպէս Հր. Մարտիրոսեանն է իրաւամբ պնդում, «աղջամուղջ» բառի բարբառային պահպանումը մի տարբերակ է (Martirosyan Hr., Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon, Leiden, Boston: Brill. (Leiden Indo-European Etymological Dictionary Series; Nr. 8), 2010, 37):

Ի դէպ, «ժրմածենք» բառը համարելով «աղջամուղջ»-ի բարբառային բացարձակ համանիշը, զուտ կազմութեան տեսանկիւնից՝ եւ այնտեղ ոչ թէ «աղջ», այլ «ժամ» արմատի կրկնութիւն եւ տեսնում՝ ձայնաւորի հնչիւնափոխութեամբ՝ ժամ+ա+ժամ(ք) (մ>ն անցումը կարող է մեկնաբանուել «եւ» աւժանդակ բայի եմք>ենք, կամ բայական վերջաւորութեան՝ –ամք>–անք (գրաբար՝ գամք > աշխարհաբար՝ գանք) համաբանութեամբ), բայց ոչ պարզ կրկնութիւն, այլ՝ երկրորդ արմատը պահ իմաստով, այսինքն՝ ժրմածենք՝ երեկոյեան ժամերգութեան, ժամասացութեան, ժամի պահ, պարզապէս բարբառում «ժամ» բառը շեշտագուրկ դիրքում ունի «ժրմ», իսկ շեշտայաջորդ վանգում՝ դարձեալ անշեշտ դիրքում՝ «ժեւ» ձեւերը: Բարբառում գրաբարեան «ժամ» բառը երեւում է երեք ձեւով՝ ժամ (ժամ, ժամանակ), ժեւ, ժում (անգամ, պահ): «ժամ»-ը կարող է կապուել ինչպէս եկեղեցու ժողովրդական անուան հետ, որ ինքնին ժամացոյց էր, կամ՝ ժամասացութեան հետ, այնպէս էլ՝ զուտ սահմանային պահի, ուշ լինելու հետ՝ ոչ եկեղեցու միջնորդաւորմամբ: Ժողովուրդն ունի «ժամը ժամից անցնել» արտայայտութիւնը, որ ուշացման ընդունելի սահմանն անցած լինելու, վերջնաժամկէտը խախտելու իմաստն ունի: Արմատի կրկնութիւնը «ժրմածենք» բարբառեանը «տարածամ» իմաստ է հաղորդում, այդ իմաստը ընդգծուում է մեկի մահամերձ լինելը նկարագրող ասոյթում՝ «ժրմածենքան ձո՛ւր ա ողո՛ւմ»:

Մորվի արկանքը պատրաստ ա,
Ցորենն աղինք օրթնիկավ,
Վեր հրվաքվինք ուղթանա՜հ,
Փառավերվինք խաշիկավ...

Մինչեւ մին հը՛տ շոռ ա տամ
Աստուծ ո՛ւրան արկանքը,
Մունք քանե՛ հետ շոռ ընք կամ,
Խոխեք, հատե մը՛ր կյանքը...

Ուրխոթուն կա ամմը՛ն տը՛դ,
Կյանքը լիգն ա ըրեկավ,
Մինակ կյանքին ճը՛ղացէն
Ես է՛լ բիղի ոժըս տամ...

Ըշխարքումը ըրկանքավ
Մը՛ր ապրուստն ընք ըրարում.
Աստուծ ո՛ւրան հըղացքավ՞
Էս աշխարքն ա ըրորում:

Մին աշխարք ա, մին արկանք՝
Կապած սըզնե՛ մի՛ն սըռնավ՞,
Վը՛շ արկանքը, վը՛շ աշխարք
Տո՛ւրո՛ւր չըն կալ մին կըռնավ՞:

Աստուծ փոնալ ա կոթան,
Տու վէլ փոնե, ճեւլ ըրա՞¹⁰,
Մեր ծեռքավն ընք հըլ՝ո՛ր տամ¹¹
Տիյեր¹² յերկինք, մը՛գ յըրա...

Լ. ԱԼ

Գրական ստեղծագործութիւն բարբառով: Բարբառները լեզուի հարուստ շտեմարան են, բոլոր ժամանակների համար նրանք ունեցել եւ ունենալու են գրական լեզուին փոխանցելու ահռելի նիւթ: Բարբառով՝ որպէս բանաւոր կերպով փոխանցուող լեզուավիճակով, ստեղծուող գեղարուեստական խաւսքն ինքնին բանահիւսութիւն է:

⁵ Ուղթանա – առաւաւտեան:

⁶ Հըղացք – մտայղացում:

⁷ Սըզնե – գրաբարում՝ սնձնի, վարդագգիների ընտանիքին պատկանող բոյս, սզնենի:

⁸ Մըռնե – գրաբարում՝ սեռն, անշարժ առանցք:

⁹ Կոռնը – գրաբարում՝ կուռն, ձեռք, թեւ:

¹⁰ Ճեւլ ըրա – շտապի ը:

¹¹ Հըլ՝ո՛ր տալ – պտտել:

¹² Տիյեր – վերք, վերելում:

Եւ, սովորաբար, բանահիւսութիւնը չունի հեղինակ, բայց մեւս¹³ կողմից՝ ունի, այն էլ ինչպիսի՝ հեղինակ, ժողովուրդը: Ճշմարտութիւնն այն է, որ ի սկզբանէ բանահիւսական որեւէ երկի հեղինակ ժողովրդի ծոցից ելած տաղանդաւոր մեկն է, որի ստեղծագործութիւնը սիրուել է բանաւոր կերպով տարածուել է, իսկ նրա հեղինակութիւնը՝ մոռացուել:

Առհասարակ գրական լեզուն յանիրաւի, բայց բնականաւրէն նուաճել է բարբառային ստեղծագործութիւնների տիրոջը: Այսաւր նոյնիսկ բանահիւսական նոր ստեղծագործութիւններ չեն ծնուում, թերեւս միայն անեկդտոն է որպէս բանահիւսական ամենակենսունակ ժանր մնացել: Մինչդեռ անհրաժեշտ է բարբառների վերադարձնել բնաշխարհիկ արարումների ոգին. նրանցում լեզուիմաստասիրական զարմանալի խտացումներ եւ կազդուրիչ կենսանիւթեր (վիտամին) կան, որոնք պարզապէս անփոխարինելի են: Նրանց շնորհիւ ստեղծագործութիւնն անկրկնելի ու ինքնատիպ յարկնուածք է դառնում, որն **անհնար է առանց կորուստների վերածել գրական լեզուի**, եւ լաւ է, որ այդպէս է: Այդպիսի ստեղծագործութիւնները ոչ միայն լեզուական մշակոյթի առկայծուն գոհարներ են, այդ¹⁴ եւ խրախոյս բարբառակիր համայնքին՝ առաւել մեծ հոգածութիւն ցուցաբերելու իր մայրենի լեզուի հանդէպ եւ պատասխանատու զգալու շքեղ ու հարուստ իր գանձարանը պահպանելու համար:

Կարելոյր է բանահաւաքների աշխատանքը: Յատկապէս փրկչական է եղել գրառումն այն երգերի, որոնց նիւթը վերաբերում է ժողովրդի կենցաղից արդէն դուրս մղուած երեւոյթներին ու առարկաներին: Բնականաբար, առանց գրի առնելու՝ դրանք ժամանակի մէջ անհետ կորչելու էին: Սակայն առաւել կարելոյր ու անգնահատելի գործ են արել նրանք, ովքեր ոչ միայն գրառել, այդ եւ գրական մշակման են ենթարկել այդ երգերը՝ բիրեղացած վերադարձնելով ժողովրդին, իսկ երգիչները տարբեր մեկնաբանութիւններով հնչեցնում ու տարածում են դրանք՝ ի լուր ներկայ եւ գալիք սերունդների: Այս առումով մեծ է բանաստեղծ, բանահաւաք, երգահան Գուրգէն Գաբրիելեանի աւանդը արցախեան բառ ու բանի գրառման ու մշակման գործում: Նա ոչ միայն բանաստեղծականացրել է Արցախի բնաշխարհն ու արցախցու կերպարը, այդ եւ հեղինակային մշակմամբ գրականութիւն է բերել նրա խաւաքն ու լեզուն: Այնպիսի երգեր, ինչպիսիք են «Ղարաբաղի հորովել»-ը, «Խնեցուն երգը», «Շրկանքն երգը», «Կալին երգը»¹⁵, այսաւր մոռացութեան փոշուց դուրս են բերում խնոցին ու երկանքը՝ միաժամանակ ներկայացնելով գեղացու կեանքը, արծարծելով նաեւ հասարակական խնդիրներ:

¹³ Այսաւր *ակնյայտ* է [յու] *հնչմամբ բառերի ուղղագրութեան միաւրինակացման փաստը. տիրապետող է դարձել իւ երկրաբարը: Սակայն ոչ միայն լեզուում գոյութիւն ունեցող գրառման ձեռի տարաշխարհիկ հմայքը պահպանելու, այդ եւ լեզուական կարելոյր իրողութիւններ չանտեսելու համար անհրաժեշտ է բառային մի շերտի համար վերականգնել եւ երկրաբարառով գրառութեան նախնական կերպը՝ գեղ, այլեր, աղբեր, հարեր, հեւր, մեւս, թեր եւ այլն: Տեւ Լ. Աւետիսեան, «Երբ յայտաձուում է մաշտոցեան տրամաբանութիւնը», Երեւան 2018, էջ 10-12:*

¹⁴ Ձեռագիր հնագոյն վկայութիւնները հաւաստում են, որ *այդ, գայդ, փայդ, սայդ, նշոյդ, բոյդ, թոյլ* եւ մի շարք այդ բառերի նախնական հաւատարմագոյն ձեւը եղել է *դ-ով՝ այդ, գայդ, փայդ, սայդ, բոյդ, նշոյդ, թոյդ* եւ այդն, որ թերեւս հնչել են ինչիւնի նման, *գուցէ փոքր-ինչ կոշտ: Այսաւր էլ ունենք բառագոյգեր, որոնցից մեկը պահպանել է իր հնագոյն ձեւը՝ մառախուղ - մառախլապատ, աղ - անալի, խուղ - խլանալ, ջիղ - ջլատել, գայթաղել - գլել - գլորել, աղաւաղել - ալլալլել եւ այլն:*

¹⁵ Այս երգերը տեւ Գուրգէն Գաբրիելեան, *Ղարաբաղի հորովել*, Երեւան 2003:

Այս ենթապատկերին յատկանշական է արկանքի մասին եւս մի երգ, որի հեղինակը յաղուածագիրս է: «Արկանք»-ը գրական ստեղծագործութիւն է՝ գրուած բարբառով: Ամէն ինչի մասին էլ կարելի է գրել բարբառով, բայց բարբառը՝ որպէս գրական ստեղծագործութեան լեզու, առաւել յագեցած ու հիւթել է ներկայացնում բնաշխարհիկ կենցաղն ու կենցաղավարութիւնը, բարբառակիր մարդկանց կենսիմաստասիրութիւնը, տրամադրութիւններն ու միջավայրը: Ճիշդ է, բնաշխարհիկ այդ կենցաղն ու փիղիստփայութիւնն իրենց հերթին կարելի է նաեւ գրական լեզուով ներկայացնել: Սակայն պարզ ճշմարտութիւն է, որ երկանքի, ժենգեալաւ հացի, խնոցու, թոնրի մասին գրական լեզուով ստեղծուած երկը այն ազդեցութիւնը չի ունենայ, ինչ հէնց միջավայրի լեզուով ստեղծագործութիւնը:

Այդպիսի գրական երկի համար **բարբառը լեզուական գործիքների անփոխարինելի այն համալիրն է, որ ճկունաւրէն փնտրում-գտնում է բովանդակութեան դրսևորման յարմարագոյն ձևերը:**

Ինչո՞ւ չափածոյ: Յատկապէս աշխատանքային երգերը՝ իրենց չափածոյ ձեւի, կշռոյթի ու յանգի պատկերաւոր միջնորդութեամբ ներկայացնում են հէնց աշխատանքի կշռոյթը, բազմաթիւ կրկնուող գործողութիւնների յաճախութիւնն ու պարբերութիւնը: Եւ ստեղծագործութեան չափածոյ ձեւը, այս իմաստով, թերեւս լաւագոյնս արդարացուած է նախ եւ առաջ աշխատանքային երգերում եւ առաւելագոյնս է պատշաճում բովանդակութեանը՝ հաղորդելով այդ կերպ անարտայայտելի տեղեկութիւն: Այդպէս ձեւը կատարում է բովանդակութեանը գրեթէ հաւասարազար առաքելութիւն՝ դուրս գալով խաւսքարուեստի հնարաւորութիւնների սահմաններից եւ ձեռք բերելով ցուցադրելի ու լսելի արուեստների բնորոշ գծեր, միաժամանակ ստեղծագործութեանը հաղորդելով տարածականութիւն:

Բանաստեղծութեան եւ վերլուծութեան նպատակը: Այսաւր, երբ գոյութենական մեծ աղէտների առջեւ է յայտնուել Հայոց ազգը, թե՛ գրականութիւնը, թե՛ գրականագիտութիւնը մեծ ու կարելոր առաքելութիւն ունեն, որը չպէտք է անտեսել կամ նիւթապաշտաւրէն նսեմացնել: Եթե գրականութիւնը կոչուած է կազդուրիչ ու ամոքիչ գաղափարներով բարձրացնելու եւ ամրացնելու մարդու հոգեւոր կառոյցը, անխոցելի պահելու ազգային արժեհամակարգը, ապա գրականագիտութիւնը ոչ միայն պէտք է որոշակի սկզբունքների հաւատարմութեամբ ընտրի եւ մատուցի հասարակութեանն առաջարկելիք գրականութիւնը, այդ եւ բանաստեղծին ու գրողին ուղղորդի ու յուշի սնուցիչ գրականութեան գիտակցուած պահանջարկի մասին, այսինքն՝ մի կողմից ներկայացնի հայեցակարգեր՝ գրականութեան ներկայի եւ գալիքի համար, մեւս կողմից՝ կերպաբանութիւն (methodology) ու սկզբունքներ՝ գրականագիտական ուսումնասիրութեան համար:

Մեկ ստեղծագործութեան վերլուծութեամբ կարող ենք առանձնացնել նրա գաղափարական կիզակէտերը, միաժամանակ մատուցել ստեղծագործութեան քննութեան մի կերպաբանութիւն, որ բնական գիտութիւնների եւ ազգային կենսիմաստասիրութեան համադրութեամբ հնարաւորութիւն է տալիս համակողմանիաւրէն ճանաչելու ստեղծագործութեան էութիւնը, նրա ներքին ու արտաքին կառոյցները կապող աներեւոյթ «ատամնանիւները», բնագիտական աշխարհաճանաչողութեան նորագոյն դրոյթներ երեւակել ստեղծագործութեան մէջ՝ որպէս քնարական հերոսի

փիղիսոփայություն, որի բովանդակությունը ժողովուրդը գիտի ապրիորի (նախքան փորձը), այդ դրոյթների ճշմարիտությունը նրա համար ակնյայտ է առանց գիտափորձերի, ինքն իրեն ու իր ստեղծարար գործունեությունը ճանաչելով՝ նա հասել է տիեզերքի եւ Աստծու ճանաչողության, որովհետեւ նոյնպէս ապրիորի՝ առանց ապացուցման, նա գիտի, որ փոքր թուացող բաները մեծ երեւոյթների խորհրդանշաններն են: Նոյն դրոյթները կիրառելի են նա եւ որպէս գրականութեան իմաստասիրութեան հիմունքներ: Գրականագիտական աշխարհայեացքն այսպէս ենթադրում է հրաշագործ համադրություն: Եւ այդ համադրությունը պէտք է լինի գրականագիտութեան նոր կերպարանութեան հիմնասիւնը: Դեռեւս Շառլ Բոդլերն է առողջ գրականութեան ընթացքն ուղենշել. «Գրականությունը պէտք է իր ուժերը կոփի լաւագոյն մթնոլորտում: Հեռու չէ այն ժամանակը, երբ բոլորը կը հասկանան, որ եթէ գրականությունը հրաժարուի ուս ուսի քայղել գիտութեան ու փիղիսոփայութեան կողքին, ապա դա կը լինի սպանիչ եւ ինքնասպան գրականություն»¹⁶:

Իւրաքանչիւր ստեղծագործություն ինքնին գեղարուեստական նախագիծ ու ծրագիր է: Նա կ'ամ պատկերում է իրականությունն՝ ինչպիսին կայ, կ'ամ ստեղծում է գոյություն չունեցող, բայց ցանկալի մի իրականություն, սակայն ամէն դէպքում կողմնացոյց է ընթերցողի ձեռքին՝ կեղծ կամ ճշմարիտ, նենգ կամ վստահելի: Միայն յստակ գաղափարախաւսութեամբ առաջնորդուող գրականագիտությունը ունակ կը լինի տարբերակել կեղծ ու ճշդապահ, նենգ ու վստահելի կողմնացոյցները:

Ստեղծագործութեան գաղափարական կիզակէտերը

Համատեղ աշխատանքի գովք

Վրէ՛չ արկանքը, վրէ՛չ աշխարք

Տո՛ւրո՛ւր չըն կ'ալ մին կըռնալ...

Երգի մէջ մի քանի ուրուագծերով ներկայացուում է խաշիլ պատրաստելու արարողությունը, որի ընթացքում ցորենը մաքրում են, ապա՝ աղանձում, այսինքն՝ բովում կրակի վրայ, յետոյ պէտք է երկանքով աղան եւ այդն: Աշխատանքի գովքը բանաստեղծութեան մէջ ակնյայտ երեւում է բոլոր տողերից: Հենց առաջին երկու տողերից կարելի է հասկանալ, որ թե եւ արեգակն անցել է հորիզոնից այն կողմ, եւ արդէն մթնշաղ է, բայց գերդաստանի անդամների մի մասը դեռ տուն չի մտել հանդերից: Ի հարկէ, տուն կանչուողների մի մասն էլ դրսում խաղացող երեխաներն են, որոնք նոյնպէս պիտի հաղորդակից դառնան աշխատանք կոչուող հնաւանդ տաւնին՝ իր բոլոր ծիսակատարություններով:

Պէտք է նկատել, որ բանաստեղծությունը յատկապէս համատե՛ղ աշխատանքն է գովերգում, որի ընթացքում ոչ միայն աւելի թեթեւանում է իւրաքանչիւրի գործը, այդ եւ կեանքի իմաստություններն են միմեանց փոխանցում խաւսք ու գրոյցի միջոցով, եւ դրանք աննկատ կերպով ժառանգում լուռ լսող երեխաներին: Այս գաղափարի գեղարուեստական ձեւակերպման մէջ միաժամանակ խիստ ընդգծուած է մարդուն խրախուսող ու առաջ մղող այն միտքը, որ առանց իրեն գործն իսկապէս տեղից չի շարժուի, եւ ուրեմն իւրաքանչիւրը կարելոր դեր ունի: Այդ մասին է վկայում ոչ միայն ցորեն աղացողի՝ «Մինակ կյանքին ճը՛ղացեն / Յըս է՛լ բիղի ոժըս տամ» նախադասությունը,

¹⁶ Բոդլեր Շ., *Եսթետիկայ, Քննադատություն, Երեւան, 1999, էջ 156:*

այդ եւ այդ նախադասութեան մէջ գործածուած՝ այս բանաստեղծութեան միակ «**եւ**»-ը, որ իրաւամբ չի հակադրուում «**մունք**»-ին, այդ միահիւստուած է նրան, բայց ոչ դիմագուրկ կերպով, այդ՝ անհատականութեան ընդգծմամբ:

Եգիպտոսի Ամենհոթեպ փարաւոնն իր ստեղծագործութեան մէջ ասում է.

*Բնչպէս մարգարիտ,
Հանճարեղ խաւսքը
Թաքնուած է պարկում,
Դա կը գտնես անգամ
Յորեն աղացող ստրկուհու մաւտ¹⁷:*

Կարելի է վստահեցնել, որ իրերի բերմամբ՝ հէնց ցորեն աղացողինն են հանճարեղ մտքերը (ցորեն աղացող է առհասարակ սեպհական աշխատանքով ամեն մի բարիք արարող). նրա համար բնականական է ներդաշնակաւրէն տեղաւորուած է բնութեան մէջ, եւ նա ջանք չի գործադրում տեսնելու համար երեւոյթների եւ իրերի բազմաբնոյթ կապերը, դրանք նրա համար բացայայտ են՝ առանց զննութեան ու քննիքի:

Համատեղ աշխատանքի գովքն ու նրա սուրբ լինելն առաւել ցայտուն կերպով նկարագրուած եւ փիղիսոփայական¹⁸ թանձրացման է հասցուած յաւորածագրիս «Ժենգյալաւ հաց» բանաստեղծութեան մէջ՝ հետեւեալ տողում՝ «**Մին տըդ ըրած կործն ա սորփ/ Հունցու հացը մըր, ըղորթ**»: Թե եւ այստեղ չեմ անդրադառնալու այս բանաստեղծութեանը, սակայն զետեղեմ այն ամբողջութեամբ՝ հնարաւորութիւն տալով ծանալթանալու:

ԺԵՆԳՅԱԼԱՎ ՀԱՅ

*Թոռը կըտրից, հինչ ա՛նինք,
Թընըխարաւ ծո՛ւն ոտինք,
Հաց ու պաներ յոր ոնինք,
Քինինք, ժենգյալ հրվաքինք...*

*Մըհենգ, կյարունքն ամմը՛ն տը՛դ
Վը՛ր ա ածալ մըշտըլըդ.
Հանց կընձմընձո՛ւկ ա փըսալ,
Վը՛տը աշխարք ա փըռնալ:*

*Ծ՛որը լի՛ գը ճըռճըռոկ,
Վը՛չ ճոնդ ոնէ, վը՛չ պըտոկ,*

¹⁷ Հին Արեւելքի պոեզիա, Երեւան, 1982, էջ 28:

¹⁸ Մաշտոցի եւ նրա աշակերտների տառադարձումների հիման վրայ կարելի է կորակացնել, որ յունարէնի **λ**-ին համապատասխանել է հայերէն **լ**-ն՝ *Ὀλυμπος* – *Ողիմպոս*, *Ἀσκληπιός* – *Ասկղեպիոս*, *Ιεροουσαλήμ* – *Երուսաղէմ*, *Γολγοθᾶς* – *Գողգոթա*, *βήρυλλος* – *բիրլեղ*, *φιδόσοφος* – *փիղիսոփայ* եւ այլն: Իսկ մեր այբուբենի **լ**-ի դիմաց յունարէնը գիր չունի:

Մը՛ր վը՛դն էն ա օրթնըված,
Նանա-սինծավ պը՛ռնըված:

Քարեն տակեն պենջար ա,
Ամմը՛ն ցավու մին ճար ա,
Քաղինք, սամը՛թը ճոկ-ճոկ,
Տակեն թիվերը ձոթ-ձոթ:

Կինձ ու սողան էն ա լիգը,
Թըրթընջուկ էլ վը՛ր պըտահինք,
Երգ ու խաղավ հրվաքինք,
Տանինք, տանը բըջարինք:

Հընդըրինք, խոսք զըրո "ւցավ,
Փոնջ-փոնջ, թիվ-թիվ մըքրելավ,
Լըվանանք ըխպըրեն ցորտ ճիրաւ,
Աստ էլ կըտորինք, տըշտերավ:

Խըմոռն արթեն յեկալ ա,
Տատին դաշանգ, պո "ւլալ ա,
Մինը ժենգյալը շաղե,
Ծեթը ածե, շըղախե...

Պապին կըրական ըրալ ա,
Մարըս պո "ւլը պեցալ ա,
Հափոտալ ժենգյալն ածում ա
Ու մըններալ կապում ա...

Հացը հըցեն քըմական
Կիրմիրո "ւմ ա կըրական,
Հի՛ նչ օրթնանք ա պիցրանում,
Վը՛տը աշխարք ա փըռնում...

Հուվ ա՞ ֆիրում սանա մը՛ծ
Ուրխտթուն ըշխարքին մը՛չ.
Մին տը՛դ ըրած կործն ա տորի,
Հունցու հացը մը՛ր, ըղորթ...

Լ. ԱԼ., 15.03.2017

Ինքնագիտակցութեան բարձրացում
Ես է՛լ բիղի ոժըս տաւ...

Այն, ինչ ցորեն աղացողը գիտի ընդհանուր գործում սեպհական դերի եւ նշանակութեան մասին, քիչ է, քանի դեռ նա այդ ճշմարտութիւնը գործնականաւորէն չի ցուցադրել նոր սերնդին: Ու թե եւ այդ ճշմարտութեան տեսանկի աւրինակները կենցաղում բազմաթիւ են, բայց յատկապէս ակնառու է ծանր երկանքը միասին պտտելը: Եւ այդ միտքը երեխայի յիշողութեան մէջ երգի պէս անջնջելիաւորէն դրոշմելու համար բաւական է աննկատելի խրատական հնչերանգով արտասանել **«կյանքին ճշդացեն յըս է՛լ բիդի ոժըս տամ»**, ընդ որում, հերոսը կեանքի արեւը վայելելու համար ջանք ներդնելու անհրաժեշտութեան մասին խաւսում է առաջին դէմքով: Ի հարկէ, կարող էր ասել՝ «տուվ է՛լ բիդի ոժըս տամ», բայց հասկանալի է, որ այդ դէպքում խիստ կընդգծուէր խաւսքի դաստիարակչական հնչերանգը՝ տողի իմաստասիրական բնոյթը փոխարինելով գուտ խրատականով: Մինչդեռ խրատը այս տողի ենթաշերտն է, եւ բանաստեղծութեան մէջ նրբանկատաւորէն գործում է «Կո՛ւժ, քեզ եմ ասում, կուլա՛, դո՛ւ հասկացիր» առածը՝ «իմ մասին եմ ասում (ինքդ կը հասկանաս)» տարբերակով:

Աշխատանքային գործիքների սրբացումը

Մորի արկանքը պատրաստ ա...

Քանի որ սրբացման մասին է խաւսքը, ուրեմն պէտք է առնչուի հաւատի եւ աստուածայինի մասին մարդու պատկերացումների հետ: Մարդու հաւատը զաւրաւոր էութեան կամ էութիւնների հանդէպ ստեղծել է բազմաթիւ կրօններ եւ ուսմունքներ, որոնք գրեթե միաբերան պնդում են, որ աստուած կամ աստուածներն են ստեղծել աշխարհը, եւ նրանց կամքից է կախուած ամէն ինչ աշխարհում: Մինչդեռ յիշենք, գութանի մասին աշխատանքային երգը հաւաստիացնում է. «Աշխարհքի շէն վեր գութնին էր, գութան չեղներ՝ աշխարհ ինչ էր»: Եւ սա ինչ է, եթե ոչ աշխատանքային գործիքի աստուածացում, քանի որ նա է կանգուն պահում աշխարհը:

Երկանքի մասին բանաստեղծութեան մէջ եւս երկանքն աստուածային է: Նա սրբազան ծէսի առանցքային առարկան է՝ բնապաշտական ու արեւապաշտական ժամանակներից մնացած: Նրանով բազմիցս գծուում է այն շրջանը, որ Հայոց պատկերացումներում արեւի խորհրդանշանն է՝ ե՛ւ ծիսական շուրջապարով կենդանագրուող, ե՛ւ յաւերժութեան նշանի պտոյտում վերահաստատուող, ե՛ւ սրբավայրի շուրջ երիցս կամ եւթնիցս պտոյտով վերաիմաստաւորուող, նա՛ եւ «Կըլխավըտ շոռ տամ»¹⁹ աւրինանքի մէջ արձագանգուող, որ հաստատում է շրջան-արեւ-կեանք խորհրդաբանութիւնը եւ միաժամանակ ցոյց տալիս սիրել-պաշտելու աստիճանը:

Ի դէպ, հետաքրքիր մի դարձուածք կայ Արցախի բարբառում, որ սերտաւորէն կապում-գուգորդում է երկանքը աւետարանի հետ՝ **«կըլխն արկանք աղալ»**: Ա. Մարգսեան իր «Ղարաբաղի բարբառի բառարան»-ում առաջին իմաստով բացատրում է որպէս տանջել, չարչարել, երկրորդով՝ նախատել, պատժել²¹: Մակայն երկրորդ

¹⁹ *Կըլխավըտ շոռ տամ՝ պտտուեմ գլխիդ շուրջ, այսինքն՝ մատաղ լինեմ քեզ, պաշտեմ քեզ: Ա. Մարգսեան, Ղարաբաղի բարբառի բառարան, Երեւան 2013, էջ 346: Կարելի է նաեւ մեկնաբանել որպէս՝ արեւս քեզ նուիրաբերեմ (Լ. Աւ.):*

²¹ *Նոյն տեղում:*

իմաստը բացատրելու համար բերում է մի դարձումաձև՝ «Կող կընգանը կըլինեն հիշքան ոգո՞ւմ ըս արկանք աղե, օքուտ չի», որը հնչում է որպես լիարժեք հոմանիշ «գայլի գլխին աւետարան» դարձումաձևին:

Տարածությունը լցնել մաղթանքով

Յորենն աղինք, օրթնիլավ...

Սուրբ երկանքը աշխատեցնել, նշանակում է՝ պատարագ մատուցել, սրբազան ծես կատարել: Յորենը պետք է աղալ՝ պայծառ լիցքեր ու մտալիքներ յղելով տարածություն, մաղթանքներ խառնելով հանապազարեայ հացին: Գիտությունը եւս ապացուցում է, եւ դեռ ինչե՛ր է բացայայտելու խաւքի ու մտքի զարութեան մասին, որոնք նիւթական տիեզերքի ընթացքը փոխելու աներեւակայելի ներուժ ունեն: Մինչդեռ կրանական համակարգերը այդ զարութիւնը հազարամեակներ առաջ են յայտնաբերել եւ հիւսել ներագոյու աղաւթներ:

Մարդու եւ տիեզերքի կապը

Մինչեւ մին հը՛տ շոռ ա տամ

Աստուծ ո՞ւրան արկանքը...

Այդ կապը բանաստեղծութեան մէջ յստակ է, այնքան յստակ, որ աւելի նման է մեծ մի համակարգի ատամնանիւների կապին: Ասում է, թե՛ մինչեւ Աստուծ մեկ անգամ պտտում է իր երկանքը, մարդը հազար անգամ է պտտում իրենը:

Թերեւս պատահական չէ, որ երկանքի մասին բանաստեղծութիւնը սկստում է արեգակի՝ հորիզոնից այն կողմ անցնելու պահի նկարագրութեամբ. «Իրիքնակը մար մըտավ»: Դա բանաստեղծական վկայութիւնն է այն մեծ պտոյտի, որն ստեղծում է ամենաւրեայ չափաբերութիւն՝ արուայ պարբերութիւնը: Այդ տողը միաժամանակ երկանքի շարժման տիեզերական այդաբանութիւնն է: Մարդու եւ տիեզերքի կապի յայտնաբերումը կեանքի ամենաւրեայ կշռոյթում եղել է ազգային կենսիմաստասիրութեան հիմքը:

Զուգակշռութիւն

Համեմատութիւնը եւ համաբանութիւնը (անալոգիա) բանաստեղծութեան մէջ կարեւոր գաղափարներ են հաստատում: Մարդն ստեղծուած է Աստծու պատկերով եւ նմանութեամբ, եւ երկանքը ընդարինակումն է տիեզերքի՝ երկիր-երկինք երկուութեան, որոնք նոյնպէս ջաղացքաբեր են եւ նոյնպէս կեանք են արարում. նրանց պտոյտով է մաղուում ժամանակը:

Գրաբար մի պատմութեամբ՝ «Քարայր», աստղերի շարժումը հսկող իմաստուն նախահար մասին պատմելիս հերոսն ասում է. «Հաւ իմ՝ Հայկ անուն՝ էր հովիւ աստեղադէտ: Ջններ գերկին, հետեւէր շարժմանց մոլորակաց, դիտէր զծնունդ աստեղաց եւ պայծառ աչաւք տեսանէր զանցս ապայի: Ժամապահ էր եւ գիտէր զարեւնս տիեզերաց... Եւ գտիեզր կարի մեծ երկանի նմանեցուցանէր, որոյ քարինք են երկիր եւ երկին, դաշնաւոր բնութենակցութեամբն եւ սերտիւ շփմամբն որոց գոյանան եւ հանապազորդէն կեանք, եւ իմանայր՝ զի չէ անկ գատուցանել զնոսա ի միմեանց, այդ հնար է մարդոյ լինել զկապ՝ զոգեղէն զարացուցիչ ընդ երկիր եւ ընդ երկին,

ինքեամբ լինել առհաստաչեայ դաշինն այնորիկ...»²²:

Նոյն առանցքի շուրջ են պտտում երկանքն ու երկինքը

Մին արկանք ա, մին աշխարք՝

Կապած սրզնե մին սրռնալ...

Այս միտքն է արտայայտում բանաստեղծությունը՝ համոզմունքով, որ մեր ձեռքով ենք պտտում երկինքը մեզ վրայ: Յանկարծագիտ ճշմարտություն բացայայտած ժողովուրդը բնականաբար էն մտորում է, թե մինչ երկանքը պտտելով ինքն իր ամենալուրջ ապրուստն է հոգում, թերեւս իր այդ ջանքով նաեւ հաստատուն է պահում տիեզերքը, հէնց իրենից ու իր աշխատանքից են կախուած նաեւ գոյությունն ու յաւերժական շարժումը ամբողջ տիեզերքի, որի առանցքը լիովին համընկնում է երկանքի առանցքին, նրանք երկուսն էլ նոյն սզնենու սռնիով են կապուած: Եւ այստեղ նաեւ բնապաշտութեան դրսեւորում կայ՝ ծառն է երկանք-երկիր-երկինք միաւորող առանցքը:

Մակածություններ (եզրակացություններ)

Կարելի է եզրակացնել, որ աշխատանքի շնորհիւ մենք ոչ միայն հոգում ենք մեր նիւթեղէն գոյութեան մասին, այդ եւ հաստատուն ենք պահում տիեզերքը, տիեզերական ւարէնքն ու կարգը: Այս միտքը երկանքի քարերի պէս միմեանց է շաղկապում երկու հակադիր գաղափարներ: Մի կողմից՝ տիեզերքն ու նրա իւրաքանչիւր փոփոխություն լիովին կանխատեսելի են, քանի որ մենք հզար մի համակարգի շարակցուած ատամնանիւններն ենք, ուստի մեր շարժումները ենթարկուում են տիեզերքին, իսկ մեւս կողմից՝ տիեզերքի վրայ կարող է ներագդել մեր իւրաքանչիւր միտքն ու գործը, մեզնից է կախուած, թե վաղը արդեւք կը պտտուի մեզ վրայ երկինքը, մեր իւրաքանչիւր գործողություն կարող է առաջացնել թիթեռի ներագդեցություն (թիթեռի եֆեկտ - գաղափար այն մասին, որ փոքրիկ իրադարձությունները կարող են ունենալ մեծ, բազմաձաւալ հետեանքներ. վիթխարի փոթորկի առաջացման պատճառ կարող է լինել հեռու մի թիթեռի թռելի շարժումը): Այսպէս, երկու քարի արանքում՝ կանխատեսելի տիեզերքի նիւտոնեան տեսութեան եւ լորենցեան²³ թիթեռի ներագդեցութեան երկբեւեռ, բայց ներդաշնակ իր վարկածն է առաջարկում բանաստեղծութեան հերոսը՝ ժողովուրդը: Այդպէս վերահաստատում է նաեւ պատճառահետեանքային կապի տիեզերական ւարէնքը:

Ճապոնական մի առած ասում է.

²² <https://www.grakanter.am/archives/13776>

Իմ պապը, որի անունը Հայկ էր, հովիւ աստղադէտ էր: Ձենում էր երկինքը, հետեւում մոլորակների շարժմանը, դիտում էր աստղերի ծնունդը եւ պայծառ աչքով տեսնում ապագայի դէպքերը: Ժամապահ էր եւ գիտէր տիեզերքի ւարէնքները... Եւ տիեզերքը հսկայ երկանքի էր նմանեցնում, որի քարերը երկինքն ու երկիրն են, որոնց ներդաշնակ բնութենակցութեամբ եւ սերտ շփմամբ գոյանում եւ շարունակուում է կեանքը: Եւ գիտէր, որ պէտք չէ գատել նրանք միմեանցից, այդ մարդը կարող է շաղկապ, ողբէն զարագուցիչ լինել երկրի եւ երկնի միջեւ, ինքնին լինել այդ դաշինքի առհաստաչեան...

²³ Երուարդ Լորենց – 1917-2008, ամերիկացի մաթեմատիկոս, արեւելագետ, քառուի տեսութեան հիմնադիրներից, «թիթեռի եֆեկտ» արտայայտութեան հեղինակը:

Մի մեխի պատճառով, մի պայտ ընկաւ:

Մի պայտի պատճառով մի ձի ընկաւ:

Մի ձիու պատճառով մի ձիաւոր ընկաւ:

Մի ձիաւորի պատճառով մի ճակատամարտ տանուլ տրուեց:

Մի ճակատամարտի պատճառով մի պատերազմ տանուլ տրուեց:

Մի պատերազմի պատճառով մի հայրենիք ոչնչացաւ:

Եւ այս բոլորը այն մարդու պատճառով, որ պայտը լաւ չէր ամրացրել մեխով²⁴:

Սա մեզ առաջնորդող գաղափարներից մեկը թող լինի, որ իւրաքանչիւրն իր գործը բարեխղճաւորէն անի, եւ՝ ամէն աւր աւելի լաւ, քան նախորդ աւրը: Իւրաքանչիւրս իր մեխով պատասխանատու է հայրենիքի եւ տիեզերքի համար:

Ինքնակրկնարինակում (fraktal)

Ըշխարքումը ըրկանքալ

Մը՛ր ապրուստն ընք ըրարում.

Աստուծ ո՞ւրան հղացքալ

Էս աշխարքն ա ըրորում:

Բանաստեղծութեան՝ «մինչեւ աստուած մեկ անգամ պտտում է իր երկանքը, մենք բազում անգամներ ենք պտտուում» դրուագից ծնունդ են դէպի անվերջ մեծն ու դէպի անվերջ փոքրը տանող խորհրդածութիւններ, որոնք յանգեցնում են ինքնակրկնարինակման (fraktal) գաղափարին: Սա նա էւ բանաստեղծութեան ներքին կառուցուածքն է պատկերում: Փրակտալը²⁵ բազմաչափ տարածութեան մէջ երկրաչափական այնպիսի պատկեր է, որի իւրաքանչիւր բաղադրիչ կրկնարինակում է ամբողջ պատկերի ձևը: Մենք մեր կեանքի կշռոյթով եւ թողած հետագծով ստեղծում ենք որոշակի պատկեր, որ լիակատար համաբանութիւնն (analogue) ու նմանակումն է մեկ այլ պատկերի, պարզապէս տարբեր են տարածական եւ ժամանակային չափերը: Մեր երկանքի բազում պտոյտներ կազմում են Աստծու երկանքի մեկ պտոյտը կամ երկրային մեկ աւրը: Աստուծային երկանքի՝ Երկիր մոլորակի 365 պտոյտը կազմում է արեգակնային երկանքի՝ մեր համակարգի մեկ պտոյտ, Ծիր Կաթին երկանքի մեկ լրիւ դարձը, որ արեգակնային համակարգի մեկ պտոյտն է Ծիր Կաթին գալակտիկայի կենտրոնի շուրջ, հաւասար է 250 միլիոն երկրային երկանքի պտոյտի...

Հայեացքը երկնքին

Բանաստեղծութեան մէջ հրաւեր կայ հայեացքն ուղղելու երկնքին: Այդպէս է ապրել հայ մարդը, որ հոգալով ամէնաւերայ հացը, ոչ միայն չի մոռացել, այլ եւ մշտապէս զուգահեռել է իրեն եւ աստուածներին: Դեռ աւելին, հէնց հասարակ կենցաղից է նայել աստղերին, հսկել նրանց շարժումները եւ պտտել քաղաքակրթութեան անիւր դէպի նոր յայտնագործութիւններ...

²⁴ Վերցուած է համացանցից: Մամուլէ Մարշակն (1887-1964) ունի նոյն բովանդակութեամբ բանաստեղծութիւն՝ «Մեխը եւ պայտը»:

²⁵ Մաշտոցեան այրութենում բացակայում է **Տ** տառը: Այն այրութեն է մտել միայն աւտար բառեր տառադարձելու համար, հայերէնում ոչ մի բառ չկայ այդ հնչիւնով: Բսկ հնում **Տ** հնչիւնը տառադարձուում էր փ-ով՝ Ափրիկէ, փիղիսոփայ եւ այլն:

ИДЕЙНЫЕ И СЕМАНТИЧЕСКИЕ ОСНОВЫ ПЕСНИ "ЖЕРНОВА" – ЛУСИНЕ АВЕТИСЯН - Изучая стихотворение, написанное на арцахском диалекте, мы прежде всего проанализировали его идейную направленность, то есть выделили ценностную основу содержания, сочетающую и уравнивающую в себе повседневные житейские заботы и важные цели познания мира и самопознания.

При этом мы предоставили методологию исследования, которая, объединив естествознание с национальной философией жизни, позволяет всесторонне распознать сущность произведения, заметить невидимые «шестерни», соединяющие его внутреннюю и внешнюю структуры. Тем самым в этом произведении проявляются тезисы новейшего естествоведческого миропознания, как философия лирического героя, содержание которой этот герой – народ – знает априори, независимо от научного опыта, не опираясь на изучение фактов.

Изучая литературное произведение с сочетанием искусства, философии и науки, включая естественные и точные науки, мы обнаруживаем ту истину, что каждое, казалось бы, малое на самом деле является символом великого, как вращение ручного жернова есть очевидный символ вращения земли вокруг солнца или аналогичное вращение солнечной системы вокруг центра Млечного пути.

Жернов представлен как точная модель мироздания – системы небо-земля, а человек – Бога. Жернов и его вращение — это фрагментация и маленькая имитация большого космического торжества, представляющего собой набор фрактальных самовоспроизводящихся образов. И в этой взаимосвязанной системе человеческая мысль, сказанное слово или незначительное дело вызывают могущественные космические отголоски, становясь началом и причиной великих перемен и поворотов. В статье также есть стратегические цели, которые кажутся выходящими за рамки литературоведения:

а. поощрять творчество в диалекте

б. сохранить диалект, как язык литературы, и это не значит, что диалект стремится стать литературным языком.

в. сделать связь между диалектом и литературным языком интерактивной и таким образом обеспечить возможность передачи жизненных сил друг другу.

Ключевые слова: диалектное произведение, литературная концепция, типология анализа, комбинация: искусство- наука-семантика, система: земля-небо, эффект фрактальной(fract) бабочки.

THE IDEOLOGICAL AND SEMANTIC CONCEPT OF THE SONG “ARKANQ”- LUSINE AVETISIAN- Studying the poem written in the Artsakh dialect, we first of all analyzed its ideological orientation, that is, we singled out the value basis of the content, which combines and balances everyday worries and important goals of world-knowledge and self-knowledge.

At the same time, we provided a research methodology that, by combining natural science with the national philosophy of life, allows us to comprehensively recognize the essence of the work, to notice the invisible “gears” connecting its internal and external structures. Thus, in this work, the newest theses of the natural sciences are manifested as the philosophy of a lyrical hero, the content of which this hero - the people - knows a priori, regardless of scientific experience, without relying on the study of facts.

Studying a literary work with a combination of art, philosophy and science, including natural and exact sciences, we discover the truth that every seemingly small thing is actually a symbol of the great. Just as the rotation of a hand millstone is an obvious symbol of the rotation of the earth around the sun or a rotation solar system around the center of the Milky Way.

The hand millstone is presented as an exact model of the universe - the sky-earth system, and man - as God. The millstone and its rotation is a fragmentation and a small imitation of a large cosmic celebration, which is a fractal, totality of self-reproducing images. And in this interconnected system, a human thought, spoken word or insignificant deed evokes powerful cosmic echoes, becoming the beginning and cause of great changes and turns.

The article also has strategic goals that seem to go beyond literary criticism:

- a. encourage creat in dialect,*
- b. keep the dialect as the language of literature, and this does not mean that the dialect is striving to become a literary language,*
- c. to make the connection between the dialect and the literary language interactive and thus to ensure the possibility of transferring vitality to each other.*

Keywords: *a creation in dialect, a concept of Literature, an analysis of Typology, a combination of art- science-philosoph , a hand millstone:a system of earth-sky, fractal, the butterfly effect.*

ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄՆ ԸՍՏ ԿԵՆՍԱԳԻՐ ԿՈՐՅՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Հոդվածագիրը քաջատեղյակ լինելով Մաշտոցի կյանքին և գործունեությանը, Վաղարշապատից կատարած վեց ուղևորություններին, կյանքի բոլոր դրվագներին հոդվածում նկատի է ունեցել միայն այն դրվագները, որոնք անմիջական կապ ունեն գրերի ստեղծման հետ՝ բացառող գրերի օգտագործման, թարգմանության, դպրոցավարության, ուսուցման և այլ խնդիրների հետ առնչվող դրվագները:

Քննության նյութ դարձնելով հայոց գրերի գյուտի, այսինքն՝ նրանց ստեղծման հետ առնչվող և այնքան ուշադրության ու հետազոտության արժանացած հարցը, հոդվածագիրը հանգում է մի այնպիսի կացության, որից դուրս գալու համար կիրթ համոզմունքով առավել հանգամանորեն պարզում է, թե ինչ հիմքով և ինչպիսի պատճառներով իրականություն դարձավ այդ աստվածային և պատմական հրաշքը:

Բանալի բառեր. ձուլման քաղաքականություն, լեզվի խնդիր, կրոնափոխության վտանգ, հոգեկան վեհություն, ազգային ոգի, գերագույն ճշմարտություն, հոգևոր շրջադարձ, ճգնափուլ, քարոզական աշխատանք, սեփական գիր, հանկարծագյուտ տառեր, ստեղծագործական գյուտ, հնչյունական համակարգ, աջընթաց գրություն, անջատական համակարգ:

Որևէ բարդ և էական հարցի քննության անդրադառնալիս մեր հանդեպ առաջնակարգ ու կարևոր խնդիրներ են ծառանում, թե որո՞նք են նրա առաջացման հիմքն ու պատճառները, որոնց բացահայտմամբ գործ ենք ունենում տարակուսանքից զերծ երևույթի և իրողության հետ:

Այժմ, քննության նյութ դարձնելով հայոց գրերի գյուտի, այսինքն՝ նրանց ստեղծման հետ առնչվող և այնքան ուշադրության ու հետազոտության արժանացած հարցը, հանգում ենք մի այնպիսի կացության, որից դուրս գալու համար մտածում ենք կիրթ համոզմունքով առավել հանգամանորեն պարզել, թե ի՞նչ հիմունքով և ինչպիսի՞ պատճառներով իրականություն դարձավ այդ աստվածային և պատմական հրաշքը:

Մտքի ոգորումները մեզ հեռու են տանում, թե, օրինակ, Տիգրան Մեծի օրոք ամենակարող և ամենաբար Հայաստանում ինչպե՞ս եղավ, որ հայ գրեր ստեղծող մի Մեսրոպ չգտնվեց կամ չծնվեց, ի՞նչ է, անհրաժեշտություն չկա՞ր, թե՞ հիմքեր և պատճառներ չկային. հարկ չկա դրանց պատասխաններին անդրադառնալ: Այդ հիմքեր կամ հիմունքներ և պատճառներ ասվածները միմյանցից գատ, անջատ հասկացություններ չեն, ընդհակառակը, դրանք միմյանց պայմանավորող իրողություններ

են, որ կարող են ընդհանուր բնույթի արդյունք սերմանել ժամանակի գալարվող հոլովույթում:

Բանն այդպես եղավ 4-րդ դարի վերջի և 5-րդ դարի սկզբի Հայաստանում, երբ հիմքեր և պատճառներ գտնվեցին հայոց գրեր ստեղծելու համար:

Այստեղ արդեն խոսք է գնում երկու ցայտուն կովանների մասին, որոնցից մեկը իշխողի դերում է, վճռական, ազդեցիկ ու փաստական պատկերով, որից ծնվում և ստորադասվում է մյուսը՝ իբրև նրա համար անընդունելի և ապօրինի տարր:

Արդ որո՞նք են այդ երկու կովանները.

1. Սա գլխավորն է և փաստացի, վճռական, որ բովանդակում է պատճառների պատճառ և էլի պատճառներ:

ա) 4-րդ դարի վերջին՝ 387 թվականին, Հայաստանը բաժանվում է երկու խոշոր պետությունների՝ Պարսկաստանի և Հռոմա-բյուզանդական կայսրության միջև, և քայքայվում է հայոց պետական համակարգը, բյուզանդական մասում շտապ վերացնում են հայոց պետական համակարգը, իսկ Պարսկաստանում թեև մնում է մինչև 428 թվականը, սակայն հարկատու էր, կախում ուներ պարսից իշխանությունից և գործում էր նրա պահանջներով.

բ) Երկու պետություններ հայերի նկատմամբ ձուլման քաղաքականություն են վարում, և վտանգի տակ էր հայոց լեզվի խնդիրը, մանավանդ որ նրանով գիր ու գրականություն չկային, իսկ պետաուսումնական և կրոնապաշտամունքային լեզուներ էին հունարենը, ասորերենը և պարսկերենը.

գ) Հայության գլխին կրոնափոխության վտանգ էր կախված. եկեղեցական արարողություններն ու քարոզչական գործառնություններն ընդունելի չէին օտարների համար, պարսիկները ձգտում էին քրիստոնեությունը փոխել Զրադաշտի հավատին:

Նշված կովանը ահավոր պատճառի և պատճառների տեսքով ցանկացած մարդու համար սոսկալի է, եթե ցանկանում է հայերեն գրեր ստեղծել:

2. Սա էլ այն կովանն է, որ բացարձակապես վերաբերում է անձի կատարելության աստիճանին, ներքին՝ գիտակցական աշխարհին, հոգեկան վեհությանն ու համառությանը, անդուլ տառապանք կրելու կարողությանը, բախտորոշ և պաշտամունքային երևույթների նվիրյալին, անսպասելին շարժման մեջ դնողին, տոկունությանն ու աներկյուղությանը, ամուր կեցվածքին ու բազմահայեցողությանը, խելամտությանն ու ազգային ոգու երկրպագությանը:

Սա այն կովանն է՝ այն հիմքը կամ հիմունքը, որ աշխարհի հայության միջից վիճակվեց միայն մեկին՝ աստվածածին Մեսրոպ Մաշտոցին:

Մաշտոցը գրերը ստեղծելիս շատերի հետ է շփվել, մասնակից դարձրել: Ուրեմն գերագույն ճշմարտությունն այն է, որ գրերի ստեղծման համար նշված կովաններից առաջինը՝ պատճառ և պատճառներ բովանդակողը, պատճառ է դարձել, գրեր ստեղծելու համար հիմքեր են ծնունդ առել՝ անհերքելի մատուցելով հայ ժողովրդին:

Մեսրոպ Մաշտոցի կենսագիրը նրա աշակերտն է՝ Կորյուն վարդապետը, որի գիրքը¹ հայերեն տառերով առաջինն է և Մաշտոցի կյանքի ու գործունեության, գրերի գյուտի ամենահավաստի աղբյուրը:

Որպես հայոց լեզվի պատմության մասնագետ ու դասախոս՝ քաջատեղյակ ենք Մաշտոցի կյանքին ու գործունեությանը, Վաղարշապատից կատարած վեց ուղևորություններին, կյանքի բոլոր դրվագներին: Սակայն այստեղ նկատի ենք ունենում միայն այն դրվագները, որոնք անմիջական կապ ունեն գրերի ստեղծման հետ՝ բացառյալ գրերի օգտագործման, թարգմանության, դպրոցավարության, ուսուցման և այլ խնդիրների հետ առնչվող դրվագները:

Մեսրոպ Մաշտոցը ծնվել է Հայաստանի **Տուրուբերան նահանգի Տարոն գավառի** (Տորոսյան լեռներից հյուսիս, Վանա լճից դեպի արևմուտք) **Հացեկաց գյուղում**² (Մուշից 40 կմ արևելք՝ Հացեկ գյուղում կամ քրդերեն Խասիկ), կարճագատ «կիսազատ», «ստորին ազնվական», երանելի (ըստ ոմանց՝ երևելի) մարդու՝ Վարդանի ընտանիքում 362 թվականին³:

«**Ի մանկության տարիներին հայրենի Տարոն գավառում հունական կրթություն է ստացել, հետո գնացել է Մեծ Հայաստանի Արշակունի թագավորների դուռը՝ Վաղարշապատ մայրաքաղաքը և պաշտոնավարել Խոսրով Գ-ի արքունիքում՝ որպես դիվանատան ատենադպիր՝ արքայի տված հրամանի սպասավոր:** Միաժամանակ դարձել է ոչ շարքային զինվորական ու **«ցանկալի եղեալ զինուորական արուեստին իւրոց զօրականացն»** (ն. տ.)՝ Զինվորական արվեստով սիրելի էր դարձել իր զորականներին: Հանգամանորեն ծանոթ էր «աշխարհական կարգերին» և կրոնական գրականությանը, գիտեր մի քանի լեզու՝ հունարեն, ասորերեն, պարսկերեն, մասամբ՝ վրացերեն:

Ստույգ հայտնի չեն արքունիքում պաշտոնավարելու տարիները, սակայն որոշակի էր պաշտոնի մեջ ունեցած առաջադիմությունը, որը նրա համար մշտական զբաղմունք չդարձավ, և նրա ուղեղում հոգևոր շրջադարձ եղավ. **«մերկանայր այնուհետև զիշխանակիր ցանկութիւնսն, և առեալ զխաչն պարծանաց, ելանէր զկնի ամենակեցոյց խաչելոյն»** (Կոր., 10): Այնուհետև իրենից վանեց իշխանական ցանկությունները և պարծանքի խաչն առնելով՝ ելավ-գնաց ամենակեցոյց խաչվածի՝ Քրիստոսի հետևից: **Սա, մեր կարծիքով, գրեր ստեղծելու հիմքի, նվիրվածության և կարողության սաղմն է:**

¹ Կորին, Պատմութիւն վարուց և մահուան առն սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի, Թիֆլիս, 1913, (այսուհետ՝ Կոր.):

² **Հացեկաց** գյուղը մինչև 1915թ. դեռևս մնում էր (Տե՛ս «Կորյուն», «Վարք Մաշտոցի», աշխ. թարգմ.-ը Մ. Աբեղյանի, Ե., 1979, էջ 62. Այսուհետ՝ ՄԱ):

³ **Էդ. Աղայանը** նշում է, որ «Մեսրոպ Մաշտոցի ծննդյան տարին ընդունված է համարել 362 թվականը», (Տե՛ս Է. Բ. Աղայան, Մեսրոպ Մաշտոց, Ե., 1986, էջ 9-10. Այսուհետ՝ ԷԱ). Մաշտոցի ծննդյան տարվա մասին Աճառյանը և այլք նշում են 361 թվականը:

Ըստ Աճառյանի՝ 395թ. Մաշտոցը թողնում է արքունական պաշտոնը, զինվորական ծառայությունը, մտնում վանք, ընդունում հոգևոր կոչում, դառնում ճգնավոր՝ անցկացնելով ծանր, դառն, անսովոր ու խղճալի օրեր: Կորյունն ասում է.

«Անդէն վաղվադակի ի միայնակեցական կարգ մտանէր. բազում և ազգի ազգի վշտակեցութիւն ըստ աւետարանին կրէր ամենայն իրաց. ամենայն կրթութեամբ հոգևորացն գանձն տուեալ՝ միաւորութեամբ, լեռնակեցութեան, քաղցի և ծարաւոյ և բանջարաճաշակութեանց, արգելանաց անլուսից, խարազնազգեստ և գետնատարած անկողնոց» (Կոր., 10). Այսինքն՝ մենակեցությամբ, մարդկանցից հեռու, լեռնակեցությամբ՝ քարանձավներում, հոգևոր վարժությունների է անցնում՝ քաղցի, ծարաւի, բանջարաճաշակության, անլուսյա արգելարանների, մազեղեն կոշտ կտորից հագուստի և գետնին փռված անկողնու:

Ճգնավոր Մաշտոցը ընկերակիցներ է ունենում, որոնք, հավանաբար, նրա հետևորդները, աշակերտներն են դառնում:

«Առեալ այնուհետև երանելոյն զհաւատացեալս իւր, դիմեալ իջանէր յանկարգ և յանդարման տեղիս Գողթան» (Կոր., 10): Այնուհետև երանելին վերցնում է իր հավատացյալներին՝ աշակերտներին, իջնում գնում Գողթն գավառի⁴ անկարգ ու անխնամ մնացած տեղերը: Գավառի իշխան Շաբիթը սիրով հյուրընկալում է և հնարավորություն ստեղծում քարոզչական աշխատանք կատարելու. Մաշտոցին հաջողվում է քրիստոնեական դավանանքի բերել գավառի ժողովրդին, իսկ հեթանոս կրոնավոր առաջնորդներին քշել Մարաստան⁵: Գավառի տարբեր վայրերում հեթանոսությունը դեռ մնում էր, իսկ եկեղեցիներում արարողությունները, աղոթքները, քարոզները վարում էին հունարեն և ասորերեն լեզուներով, որից ժողովուրդը ոչինչ չէր հասկանում:

Մաշտոցը խոր մտախոգությունների հորձանուտն է ընկնում.

«Եւ այնպէս արամական հոգովք պաշարեալ և թակարդապատեալ և անկեալ ի ծուփս խորհրդոց, եթերայիս իրադեօքելս իրացնգտանիցէ» (Կոր., 11) մտածմունքների ծիփանքի մեջ էր ընկել, թե արդյոք ինչպիսի՞ էլք գտնի այդ (ծանր) իրողության համար:

Մաշտոցը քարոզչական գործունեության ընթացքից ու փորձից հանգում է այն գաղափարին, որ ժողովրդի քրիստոնեական դավանանքի խնդիրը կարելի է լուծել միայն սեփական գիր ու գրականության միջոցով, և նրա ուղեղում գրեր ստեղծելու «ռացիոնալ հատիկը» զարթոնք է ապրում: Կորյունը գրում է.

«Եւ իբրև աւուրս բազումս անդէն ի նմին դեգերէր, յարուցեալ այնուհետև հասանէր առ սուրբ կաթողիկոսն Հայոց մեծաց, որոյ անունն ճանաչէր Մահակ, զոր պատրաստական գտանէր նմին փութոյ հաւանեալ» (Կոր., 11-12). ... գնաց հասավ Մեծ Հայաստանի սուրբ

⁴ «Գողթն գավառ. Մյունիքում, այժմյան Ագուլիսն իր շրջակա գյուղերով» (ՄԱ, 62):

⁵ «Արաքսից հարավ գտնվող լեռնային Ղարաղաղը, որը հին Հայաստանի Վասպուրական նահանգի մաս էր, Պարսպատունիք և Մարանդ գավառները» (ՄԱ, 62):

կաթողիկոս Սահակ Պարթևի մոտ, որին և պատրաստ ու հավան գտավ նույն հոգսի վերաբերմամբ:

Եվ առավոտյան շուտ երկուսով միասին աղոթքներով Աստծուն են դիմում խնդրանքով, որ քրիստոսաբեր փրկություն հասնի բոլոր մարդկանց, հարցուփորձ, որոնումներ են անում, նեղություններ կրում, եկեղեցական ժողով հրավիրում և կրոնավոր դարձած, երկրի մասին հոգացող երանելի միաբանների հետ անդրադառնում հայ ազգի համար նշանագրեր գտնելու խնդրին: Այնուհետև գրեթե ստեղծելու իրենց մտահոգությունը հայտնում են հայոց Վոսմաշապուհ թագավորին: Նա էլ Սահակին և Մաշտոցին պատմում է, թե տեղյակ է, որ Դանիել անունով մի ազնվական ասորի եպիսկոպոս հանկարծ գտել է հայերեն լեզվի ալփաբետներ՝ նշանագրեր (տառեր): Մեսրոպն ու Սահակը արքային խնդրում և համաձայնեցնում են, որ Դանիելի գտած տառերը բերել տա: Արքան Դանիելին չէր ճանաչում, ծանոթ չէր, ուստի Վահրիճին է ուղարկում, որ Հաբելի՝ մի երեց մարդու միջոցով Դանիելից գրերը բերի: Վահրիճը Հաբելի միջոցով Դանիելի հանկարծ գտած գրերը բերում է, տալիս Վոսմաշապուհին: «**Իսկ արքային հանդերձ միաբան սրբովն Սահակաւ և Մաշթոցիւ՝ ընկալեալ զնշանագիրսն ի Հաբելէ, ուրախ լինէին**» (Կոր., 13):

Պարզվում է, որ Դանիելյան նշանագրերի մասին Հաբելն է հայտնել արքային: Երանելի հոգաբարձուները, վերցնելով հանկարծացյալ տառերը, արքայից խնդրում են մատաղ մանուկներ, որ կարողանան նշանագրերը սովորեցնել: Արքան կարգադրում է, որ բոլոր տեղերում այդ տառերով ուսուցանեն: «**որով և յաստիճան իսկ վարդապետութեան զեղեցիկ երանելին հասանէր**» (ն.տ.). Մաշտոցը փայլում է ուսուցման գործում, որը տևում է մոտ երկու տարի:

Այդ ընթացքում նկատում և համոզվում են, որ այդ նշանագրերը բավական չեն հայոց լեզվի սիդոբաները (հուն. սիդոբա «կապ»)՝ կապերը, ամբողջությամբ արտահայտելու համար, «**մանաւանդ զի և նշանագիրքն իսկ այլոց դպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան**» (ն.տ.). մանավանդ որ նշանագրերն էլ, իսկապես ուրիշ դպրություններից թաղված, այսինքն՝ մոռացված, և հետո լույս աշխարհ եկած, հանդիպեցին: «Դանիելյան գրեր» կոչվածը հայերենի հարուստ հնչյունական համակարգի համար անկատար, թերի այբուբեն էր, որից Մաշտոցն ու Սահակը հրաժարվում են՝ դարձյալ ընկնելով նույն հոգսի մեջ:

Սուրբ Սահակի համաձայնությամբ և Վոսմաշապուհ թագավորի հրամանով, հրաժեշտ տալով համբույրներով, Վոսմաշապուհի թագավորության երրորդ տարում Մեսրոպը մի խումբ մանուկների հետ գնում է Արամի կողմերը՝ ասորոց երկու քաղաքները՝ Ամիդ և Եդեսիա, որոնց եպիսկոպոսներ Ակակիոսն ու Բաբիլասը (կղերականներ) իշխանների հետ մեծարանքներով, քրիստոնյաների կարգի համաձայն, հոգ տանելով ընդունում են իրենց մոտ հասնողներին:

Աշակերտասեր ուսուցիչ Մաշտոցը իր հետ տարածներին երկու խմբի է բաժանում. մի մասին ասորական դպրության է կարգում Եդեսիա քաղաքում, մյուսին կարգում է հունական դպրության և այնտեղից ուղարկում Մամոսատ(ական) քաղաքը:

Եղեսիայում իր ընկերների հետ սկսում է գործադրել իր սովորական աղոթքները, տրնությունները, արտասովորական պաղատանքները, ճգնությունները, աշխարհահեծ հոգսերը և հիշում է մարգարեի խոսքը. «**Յորժամ հեծեծեսցես, յայնժամ կեցցես**» (Կոր., 14). Երբ որ հեծեծես, այն ժամանակ կապրես:

Մաշտոցն անսահման նեղություններ ու տառապանքներ է կրում իր ազգին մի բարի օգնություն պարգևելու համար, և ամենակարող Աստված նրան օժտեց ցանկալին ստեղծելու հրաշք կարողություն. «...**հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին**» (Կոր., 14): Նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ՝ հայերեն լեզվի նշանագրեր:

Ասում ենք՝ սա հրաշք է, որը դրվատական արտահայտություն է, իրականում՝ Մաշտոցի ուղեղի «ստեղծագործական գյուտը» (ԷԱ, 42-43):

Ապա Կորյունը գրում է. «**Եւ անդ վաղվաղակի նշանակեալ անուանեալ և կարգեալ, յօրինէր սիդոբայիւք և կապօք**» (ն.տ.): Եվ այնտեղ շտապ **նշանակեց** «գրեց, գծագրեց», **անվանեց** «գրեց տառերի անունները՝ այբ, բեն, գիմ...», **դասավորեց, կարգեց** «տառերի կարգը, շարքը որոշեց» (հունարենի այբուբենի համեմատ է, շարքի մեջ կան ավելացրած տառեր), **հորինեց** «գրերով վանկ կազմել կամ «գիր-կապ» կարդալու համար դասագիրք»:

Եղեսիայում գրեր ստեղծելուց և կարգի բերելուց հետո այդտեղ թողնելով սուրբ եպիսկոպոսին՝ Բաբիլասին, Մաշտոցն իր օգնականների հետ իջնում է Մամուստ քաղաքը, որտեղ մեծարվում է մեծապատիվ եպիսկոպոսից և եկեղեցուց:

Մամուսատում Մաշտոցը մի հույն գրագիր է գտնում Հռոփանոս անունով, որպեսզի պատրաստի գրերը գեղագրական, վայելչագրական նշումների ենթարկի, որի մասին Կորյունը այսպես է գրում.

«**Եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ ոմն հելլենական դպրութեան Հռոփանոս անուն գտեալ. որով զամենայն ընտրութիւնս նշանագրոյն՝ զնորագոյնսն և զլայնագոյնն, զկարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն, միանգամայն յօրինեալ և յանկուցեալ**» (Կոր., 15):

Այս հատվածի թարգմանություն, բառերի բացատրություն կատարել են բազմաթիվ հեղինակներ, սակայն էդ. Աղայանն անընդունելի է համարել դրանք, օրինակ՝ նշում է, որ Ստ. Նազարյանը, Հ. Մարկվարտը, Գ. Սևակը և ուրիշներ այդ նախադասության տերմինները նույնացնում են Դիոնիսիոսի քերականության թարգմանության մեջ գործածված տերմինների հետ... (ԷԱ, 51): Դիտարկումներ է անում Հ. Աճառյանի, Մ. Աբեղյանի և այլոց բացատրությունների վերաբերյալ և նշում, թե ինչպես պիտի թարգմանել հասկանալով հանդերձ.

«Տառերի ավելի **նուրբ** և ավելի **լայն** (= համեմատաբար բարակ և հաստ), **կարճ** և **երկար** (գծերը), **առանձինը** և **կրկնավորը** (= առանձին տառերը և տառակապակցությունները, այսինքն՝ երկբարբառները) ամբողջապես կազմելով և հարմարեցնելով...» (ԷԱ, 58):

Էդ. Աղայանը նշում է, որ Մաշտոցը Տարոնում, գուցե և Անատոլիայում, Վաղարշապատում, Գողթնում լավ է տիրապետում հայերենին, ուշի ուշով յուրացնում է հունարենի, ասորերենի, պահլավերենի հնչյունական համակար-

գերը, և եթե Գողթնից Վաղարշապատ անցնելու շրջանում դեռ հնչյունաբան չէր, ապա Եղեսիա քաղաքը սիրով անցնելով՝ զինված էր հնչյունաբանական գիտելիքներով, և հենց այդտեղ էլ վստահությամբ ստեղծում է հայոց գրերը՝ այբուբենը՝ իր բոլոր առանձնահատկություններով⁶։ Նա ընդօրինակում է հունարենի հնչյունների կազմությունը, սակայն մեծ մասամբ արարում է ինքնուրույն կազմություններով՝ ուղղահայաց սյունագծերով (Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, Ժ, Ի, Լ, Խ, Կ, Դ, Մ, Ռ, Պ, Ս, Վ, Տ, Ը, Ի, Փ, Թ), զույգ սյունագծերով՝ դրանք միացնող նուրբ կորագիծներքնից կամ վերնից, աջակողմյան տարբերակիչ թևիկներ (Ա, Մ, Վ՝ ի հակադրություն Ս-ի և Ռ-ի), մեկ սյունագծով՝ աջակողմյան թևիկներ, կորագծեր (Դ, Ե, Զ, Է, Ը, Լ, Դ, Տ, Ի), սյունագիծ, փակ գծեր, աջակողմյան թևիկ (Թ, Ժ, Գ), սյունագծից զուրկ, աջ և ձախ ելնող թևիկներ (Ձ, Ծ, Զ, Ը, Զ, Ծ...) (ԷԱ, 86)։

Մաշտոցը մեկ հնչյունին մեկ տառի համապատասխանության սկզբունքով է ստեղծել տառերը, սակայն սկզբունքը խախտվել է ու ձայնավորի (ո+ւ) և լ, վ (v հնչյուն) բաղաձայնների հարցում, ստեղծել է երկբարբառներ, կարգել ուղղագրություն, դասավորությունը՝ հիմնականում հունարենի հետևողությամբ։

Ըստ գրության ուղղության՝ այբուբենները երեք տեսակ են՝ **աջընթաց, ձախընթաց, վայրընթաց**։ Մաշտոցին ծանոթ և նրա օգտագործած այբուբեններից ասորերենն ու պահլավերենը ձախընթաց գրությամբ են, հունարենը՝ աջընթաց, և Մաշտոցը հայերենի համար ընտրում է աջընթաց գրություն՝ հետևելով հունարենին։ Այբուբեններն ըստ գրության ունեն **կցողական և անջատական** համակարգեր. կցողականի անհարմարությունը տառի բազմաձևությունն է, օրինակ՝ արաբերենը, որ տարբեր դիրքերում տառի չորս ձև է ունենում, նման համակարգեր ունեն պահլավերենն ու ասորերենը, իսկ հունարենը անջատական համակարգ ուներ, որին հետևեց Մաշտոցը. «Մեսրոպյան այբուբենի ու գրության երկու առավելություններն են **առաջընթաց գրությունը և անջատական համակարգը**» (ԷԱ, 99)։

Մեսրոպի ստեղծած այբուբենում հնչյունական տարբերակներ չեն, այլ նրանց ընդհանրություններն են՝ հնչյութները, որ նշանակում է, թե **հնչյութաբանական այբուբեն** է։ Մեսրոպ Մաշտոցի ստեղծագործական գյուտի մանրագին և գիտական խոր վերլուծություններից ու բնութագրումներից հետո դասական ամփոփիչ խոսք է ասում Էդ. Աղայանը. «Մեսրոպը միայն **հնչյութաբան չի եղել, նա եղել է իր ժամանակի մեծագույն լեզվաբանը բառիս ամենալայն իմաստով**, որ հիանալի կերպով կարողացել է ուսումնասիրել տարբեր վայրերի խոսվածքները և հստակ պատկերացում կազմել հայերենի ընդհանուր, այսպես ասած՝ համահայկական հնչյունական համակարգի մասին, որ խորապես ուսումնասիրել է մեր լեզվի քերականական կառուցվածքը և ուղղագրական կանոնները որոշելիս հիմնվել նաև քերականական տվյալների վրա» (ընդգծ. - ԷԱ՝ ԷԱ, 108)։

⁶ Տե՛ս մանրամասն քննությունը. Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., 40-111։

СОЗДАНИЕ АРМЯНСКОГО ПИСЬМА ПО БИОГРАФУ КОРЮНУ ВАРДАПЕТУ - ЭДУАРД МКРТЧЯН - Будучи хорошо осведомленным жизнью и деятельностью Маштоца, автор статьи рассматривает те фрагменты, которые непосредственно связаны с созданием исключительного письма, соприкасающиеся с проблемами изучения и перевода. Ставя предметом исследования создание письма, а именно вопрос, заслуживающий особого внимания, автор статьи останавливается на той мысли, которая дает объяснение тому, как это историческое и божественное чудо стало истиной.

Ключевые слова: политика ассимиляции, проблема языка, опасность смены религии, психологическое величие, национальный дух, верховная правда, отшельник, собственное письмо, художественное изобретение, фонетическая система.

Creation of Armenian Letters According to the Biographer Koryun Vardapet- EDUARD MKRTCHYAN - Being well aware of the life and work of Mashtots, the author of the article considers those fragments that are directly related to the creation of an exceptional letter, which are in contact with the problems of study and translation. Setting the subject of research on the creation of a letter, namely, a question that deserves special attention, the author of the article dwells on the thought that explains how this historical and divine miracle became true.

Keywords: assimilation policy, language problem, danger of changing religion, psychological greatness, national spirit, supreme truth, hermit, own writing, artistic invention, phonetic system.

RHETORICAL TROPES IN FAIRY TALE NARRATIVE (WITH SPECIAL REFERENCE TO HYPERBOLE)

Language is not a neutral means of communication, rhetorical tropes are deeply and necessarily involved in the forming of realities. The investigation of the rhetorical features of the fairy tale shows that certain tropes appear often and repeatedly, while others are rather infrequent. Hyperbole is ranked among the widespread specific fairy tale tropes aimed at obvious and intentional exaggeration. Fairy tale genre is hyperbolic by its nature.

An important stylistic feature of the fairy tale hyperbole is its tendency to animating. Neutralized hyperbole, like other neutralized rhetorical tropes requires literal interpretation, in case of alternative, i.e. metaphoric interpretation, the following narration can be under threat of logical and semantic collapse.

Keywords: rhetorical trope, stylistic device, hyperbole, fairy tale, narrative, exaggeration, emphasis, animation, neutralization.

Rhetoric (comes from the Greek word for “speech” or “spoken”) studies the efficacy of language extensively, including its emotional effect, as much as its propositional content. The origin of rhetorical tropes goes back to the early Greek rhetoric, as they were first identified by rhetorical philosophers such as Aristotle, Quintillion and Cicero; the study of tropes was of great significance in classical rhetoric.

R. Nordquist reveals three main purposes of rhetorical figures of speech: to train and amuse people through the play of language, to convince people of the truth or value of the message that a figure expresses, to help people to have in mind both the meaning of the message and its figurative expression (Nordquist 2015: 115).

On the one hand, rhetoric has often been discounted as something only concerned with style or appearances, on the other hand most contemporary semioticians regard rhetoric as falling within the domain of semiotics (Nöth 1990: 338).

Tropes convey meanings of words that vary from their direct literal meanings. There is an obvious shift to figurative, non-literal meanings in tropes. The trope, in fact, is a figurative expression intended to create artistic effects. Its main purpose is to give new meaning to the texts. Using tropes people intensify their feelings, emotions and passions (<https://literarydevices.net/trope/>).

The importance of rhetorical tropes was discussed by D. Chandler in his “Semiotics for Beginners”: language is not a neutral means, rhetorical forms are deeply and necessarily involved in the forming of realities. “All discourse is unavoidably rhetorical, though academic writers often deny its presence in their writing. Rhetoric does not merely shows how thoughts are presented but it is an influence on ways of thinking which deserves serious attention” (Chandler 1995: 95).

According to T. Hawkes “figurative language is a language which doesn’t mean what it says in contrast to literal language which is at least intended to be, or taken as, purely denotative” (Hawkes 1972: 1).

Rhetorical tropes can be regarded as providing us with a diversity of ways of expressing “this is (or is like) that”. Trope may be significant to comprehension if we describe it as a means of delivering the unfamiliar more familiar. Moreover, however they are defined, the conventions of transferred language constitute a rhetorical code, and understanding this code is part of the culture in which it is employed. It is a code which refers to how things are represented rather than to what is represented (Chandler 1995: 97).

Tropes originate “imagery” with connotations over and above any “literal” meaning. When we use a trope, our statement becomes part of a much wider system of associations which is beyond our control. Yet the use of tropes is inevitable. Rhetorical tropes permit us to see one thing in terms of another. Tropes “orchestrate the interactions of signifiers and signifieds” in discourse (Silverman 1983: 87).

In their landmark work “General Rhetoric”, the Belgian theorists of style argue that what is renounced by logic is of interest for rhetoric (Dubois 1986: 236). In such an approach “the fairy tale text with its remarkable disregard for norms of logic and the creation of an alternative one should be a most appropriate subject for rhetorical study” (Jivanyan 2007: 44).

The significance of a rhetorical approach to the investigation of the folk tale was mentioned by V. Propp and M. Lüthi. In his structural analysis of the Russian fairy tale, V. Propp states: “It is possible to accurately demarcate those areas in which the folk narrator never creates, and areas in which he creates more or less freely... The storyteller is free in his choice of linguistic means. This highly rich area is not subject to the morphologist’s study. The style of a tale is a phenomenon which must be studied separately” (Propp 2001: 112-113).

The study of the fairy tale style is of great importance for providing necessary knowledge of its national spirit. This statement is viewed by B. Holbek:

...in the first place, folktales – and particularly fairy tales do not respect regional or national borders. Nothing essential in their contents has any relation to the language, culture, history, environment, social and religious institutions of any particular nation. If tales from several nations are translated into a language foreign to them all, only name and superficial details will remain to indicate their origin. The truly national characteristics are found at the level of language and style (Holbek 1987: 28).

M. Lüthi very often stressed the significance of taking into consideration the style of the fairy tale as essentially distinct from that of other genres. It is doubtful that each separate fairy tale has its own unique style. However, in “Once upon a Time: on the Nature of the Fairy Tales”, M. Lüthi mentioned: “The fairy-tale genre has its own style, which is clearly visible despite the individual and national characteristics of the narrative, from which a good portion of the fairy tale’s charm emanates” (Lüthi 1976: 48). The scholar prefers to “hold fast to what remains constant while disregarding the superficial differences that vary from one tale to another” (Lüthi 1986: 3).

A. Jivanyan states that M. Lüthi's observation concerning fairy tale tropes can be viewed as supporting the genre theory of tropes (Jivanyan 2007: 47).

The investigation of the rhetorical features of the fairy tale shows that certain tropes appear often and repeatedly, while others are rather infrequent.

Among the widely used rhetorical tropes hyperbole can be distinguished.

Hyperbole is a rhetorical trope aimed at obvious and intentional exaggeration in order to achieve emphasis or effect. Hyperbole comes from the Greek *hyper*, "over" and *bollein*, "to throw". Hyperbole has a long tradition; it passed through the ancient era and is found numerous times in Greek texts.

Aristotle defines the application of hyperbole through metaphors and similes. In his work "The 'Art' of Rhetoric" he writes: "There is something youthful about hyperboles; for they show vehemence. Wherefore those who are in a passion most frequently make use of them" (Aristotle 1926: 409).

The concept of hyperbole was further on commented by the Roman rhetoricians. In the first century Quintilian observed that hyperbole is "commonly used even by ignorant people and peasants, which is understandable, as all people are by nature inclined to magnify or to minimize things and nobody is content to stick to what is really the case. But such departure from the truth is pardoned, because we do not affirm what is false. In a word, the hyperbole is a beauty, when the thing itself, of which we have to speak, is in its nature extraordinary; for we are then allowed to say a little more than the truth, because the exact truth cannot be said; and language is more efficient when it goes beyond reality than when it stops short of it" (Quintilian 1977: 75). He introduces hyperbole as a kind of joke and offers an example about a man so tall he hit his head on the arch of Fabius (ibid: 67).

According to Seneca the purpose of any hyperbole is to arrive at the truth by falsehood. Some rules are overstated in order that in the end they may reach their true value, hyperbole never expects to attain all that it ventures, but asserts the incredible in order to arrive at the credible (Webb 1993: 10).

Hyperbole was widely spread throughout the Renaissance, though Erasmus and T. Wilson were against hyperbole's common usage, as it confused the truth and reality (Stanivukovic 2007: 9).

W. Safire in his book "How Not to Write: The Essential Misrules of Grammar" states that the trick to real hyperbole is to give a specific twist to evidently fantastic exaggeration (Safire 1990: 58).

In defense of hyperbole as a forceful rhetorical trope, we shall introduce the following definition: "Hyperbole is the polished mirror into which the black imagination gazes with every other rhyme, laughing as it sees itself refracted and distorted in a phantasmagorical kaleidoscope. The language of hyperbole amplifies reality by carrying us beyond the boundaries of rational thought, past the limits of the real into surreal, into a universe are literally far-fetched, unexpected, wild, extraordinary. Their impact is surprise, a function of their freshness and power. Hyperbole makes extraordinary demands on the imagination: the

lines start here, and before you know it they are out there, way out, pushed to their extremest possibility, beyond earth-sense into rare cosmic time-space” (Onwuchekwa 2003: 3-4).

In order to reveal essential role of hyperbole in fairy tale texts we shall consider some fairy tale features introduced by M. Luthi. The scientist characterizes fairy tale as a form of wish fulfillment where man’s last and eternal wish can be fulfilled. The folktale portrays world that is in order and believes that the world is truly the way it perceives and shows it to be (Luthi 1986: 89).

In “Function and Significance of the Folktale” M. Luthi considers folktale as a dream of the powerless, the poor, and the oppressed, to whom the idea of mastering the world through action is alien. “And this dreamlike vision of the world, a vision that demands nothing of us, neither faith nor avowal, accepts itself so matter-of-factly and is given verbal expression so unerringly that we let ourselves be carried away by it in a state of bliss” (ibid: 85-87).

M. Luthi's characteristics permits to assume that fairy tale genre is hyperbolic by its nature. If we compare characteristic features of hyperbole and fairy tale narrative, an obvious similarity between them is undoubted. We shall consider the following examples: departure from the truth, magnification of things, fanciful overstatement, assertion of incredible in order to arrive at the credible, beyond reality, beyond the boundaries of rational thought, beyond the limits of the real into surreal, unexpected, extraordinary.

Therefore, it is natural that hyperbole is one of the specific widespread tropes in fairy tale narrative.

Below we shall give some examples of hyperbole from J. Jacob’s collection of English fairy tales. In the fairy tale “Jack and the Beanstalk” the beans grow and reach the sky in a night:

*“Ah! you don’t know what these beans are”, said the man; “if you plant them overnight, **by morning they grow right up to the sky.**”*

*...So Jack jumped up and dressed himself and went to the window. And what do you think he saw? Why, **the beans** his mother had thrown out of the window into the garden **had sprung up into a big beanstalk which went up and up and up till it reached the sky.***

So Jack climbed, and he climbed and he climbed and he climbed and he climbed and he climbed and he climbed till at last he reached the sky (Jacobs 1968: 54-55).

We meet a character “Know-it-all” in “The Master and His Pupil”:

*There was once a very learned man in the north country **who knew all the languages under the sun, and who was acquainted with all the mysteries of creation*** (ibid: 154).

In the fairy tale “Mr Fox” Lady Mary had more lovers than she could count:

*Lady Mary was young, and Lady Mary was fair. She had two brothers, and **more lovers than she could count*** (ibid: 109).

The hyperbole “streets paved with gold” makes a humorous effect in fairy tale “Whittington and his Cat”:

Now Dick had heard many, many very strange things about the great city called

*London; for the country people at that time thought that **folks in London were all fine gentlemen and ladies; and that there was singing and music there all day long; and that the streets were all paved with gold.***

*So Dick got safe to London, and was in such a hurry to see **the fine street paved all over with gold** that he did not even stay to thank the kind waggoner; but ran off as fast as his legs would carry him, through many of the streets, thinking every moment to come to those **that were paved with gold** (ibid: 122-123).*

Very often in fairy tales hyperbole is on the verge of fantasy. A passage from “Nix Nought Nothing” may serve as a bright example:

*The giant’s daughter said she would help him, and **she cried all the beasts in the field, and all the fowls in the air, and in a minute they all came, and carried away everything that was in the stable and made it all clean before the giant came home.***

...the giant’s daughter called on all the fish in the sea to come and drink the water, and very soon they drank it dry.

Nix Nought Nothing threw down the hair dagger and out of it grew as quick as lightning a thick hedge of sharp razors placed cuss-cross (ibid: 38-39).

Hyperbole is widely used in Armenian fairy tales. Below we shall introduce some examples from the Artsakh versions:

*Էտ Կքավա սարը Էնքան դաշանգյ սար ա, վեր ամսեն մին հղե քյնոդ ընդրա պեցուր քրերեն, թխպըմը կորած սրերեն **յըշիս ա, դորթ-դորթ վեր պըռըշեն ճուրը քյինիս ա** (ՀԺՀ հ. V, 1966: 469):*

*Վըեր կյարունքը յասամանին պենվում չա՛ր, **վըետը աշխարքըս յոր ար օնըս** (ՀԺՀ հ. V, 1966: 83):*

Ախճիգը տափան մինչև երգյինք ուրախացավ, աշխարքըս ուրանը տըռեավ, փըթաթվից էտ տըղին վիզավը, կուլավըն ընգավ, պըչպըչորից (ՀԺՀ հ. V, 1966: 91):

The expressions *վեր յըշիս ա, պըռըշեն ճուրը քյինիս ա* (when they see it they are drooling), *վըետը աշխարքըս յոր ար օնըս* (the smell spreads all over the world), *տափան մինչև երգյինք* (from the earth to the sky), *աշխարքըս ուրանը տըռեավ* (he owned the world) are examples of hyperboles.

A. Jivanyan states that an important stylistic feature of the fairy tale is its tendency to neutralize tropes by animating them. She considers the appearance of some distinctive fairy tale devices at the expense of the intentional enlivening of the worn semantics of some hackneyed tropes. Neutralized tropes require literal interpretation, in case of alternative, i.e. metaphoric interpretation, the following narration will be under threat of logical and semantic collapse (Jivanyan 2007: 49-50).

Similar phenomenon is true concerning fairy tale hyperbole. We shall consider the following passage from L. Carroll’s “Alice in Wonderland”:

Poor Alice! It was as much as she could do, lying down on one side, to look through into the garden with one eye; but to get through was more hopeless than ever: she

*sat down and began to cry again...shedding **gallons of tears**, until there was a large pool around her (Carroll 1982: 24).*

The trope “gallons of tears” is not to be interpreted figuratively, otherwise the succeeding text may be under threat of logical and semantic collapse. As a result of enlivening the hyperbole “gallons of tears”, the trope is neutralized and changed into a narrative device, making possible realization of the further narration:

...her foot slipped, and in another moment, splash! she was up to her chin in salt-water.

*Her first idea was that she had somehow fallen into the sea...However, she soon made out that she was in **the pool of tears** which she had wept when she was nine feet high. I shall be punished for it now by being drowned in my own tears! (Carroll 1982: 27).*

The hyperbole “pool of tears” should be also interpreted literally. Otherwise, the fact of swimming and being drowned in salt water, described in the passage, would be nonsense. By the way, the idea of being drowned in one’s own tears is also introduced by H. Toumanyan in his legend “Parvana”.

The hyperbole “rivers of tears” is also observed in numerous folk tales. As an example let us take “Tattercoats” included in J. Jacob’s collection on English fairy tale:

So he turned his back, and sat by his window looking out over the sea, and weeping great tears for his lost daughter, till his white hair and beard grew down over his shoulders and twined round his chair and crept into the chinks of the floor, and his tears, dropping on to the window-ledge, wore a channel through the stone, and ran away in a little river to the great sea (Jacobs 1968: 185).

In the article “Neutralization of Tropes in Armenian Fairy Tale Narrative” A. Jivanyan claims that “the phrase **his tears, dropping on to the window-ledge, wore a channel through the stone, and ran away in a little river to the great sea** emerges at the expense of the animation of a trope (either a simile, tears flew like a river, or a hyperbole, a river of tears). The window through which the river of tears flows towards the sea may stand as a masked metaphor for the eye shedding tears” (Jivanyan 2007: 2).

To provide a comparative analysis we shall consider an analogous hyperbole in the Artsakh tale “Grimalkin” (Չաք պառաւլը), told by a peasant woman Araksya Hambardsumian and recorded by Margarit Grigorian in 1949:

*Ախչիզըը ընգիս ա ծակնեն, լաց ինիլավ շոռ կյաս, վեր հացը ճարի: Շատ վեր լաց ա ընիս, **ըրտտունքները մին կլետ ա տոնայս** ըսկսիս քյնալը: Էտ կլետետ ճուրը հսնիս ա մին չուրանու: Չորանը խմիս ա, տսնայս աղի: Էտ վեր տսնայս ա, զրմնայս ա: Եր ա կնայս էտ ճրիտ վարը յոր ունես քյիս... Շատ ա քյիս, իրեզյա քյիս, տսնայս ա մին ախչիզ իստած մուղուր, մուղուր կյալավ իւրըրվխարավ կյալավ լաց ա ինիս (ՀԺՀ հ. V, 1966: 616):*

Being persecuted by her wicked stepmother a girl cried so much that her tears turned into a river and flew to a shepherd. The trope “rivers of tears” should be taken literally, that is the

hyperbole is animated, neutralized. Only in this case it is evident that the shepherd tasted the salt water of the river and found the crying maiden.

The hyperbole “gallons of tears” is widely spread in the corpus of Armenian fairy tales. In the tale “Otsamanuk and Arevaat” by Gh. Aghayan the captive girls shed gallons of tears:

Այդ խեղճ աղջկերբը այնպես էին հեծկլտում, որ տեսնողի մազերը փշաքաղվում էր....ու արտասուքի հեղեղ էր, որ թափում էին հեկեկալով (Աղայան 1956: 224):

In some Armenian fairy tales the wicked stepmothers make their stepdaughters cry so much to fill the trough with tears. Such examples can be found in the Armenian tales «Ոսկեմազիկը» (Goldilocks), «Խորթ ախճիկն ու հալալ ախճիկն» (Own Daughter and Stepdaughter), «Վարդիկ եզան հեքիաթը» (Tale of the Ox Vardik), «Խորթ մոր հեքիաթը» (Stepmother), «Թանջյուման Խաթուն» (Tandguman Khatun).

Concluding the article we can state that rhetorical tropes constitute an integral part of any text, fairy tale texts in particular. Hyperbole is one of the widely recognized tropes in fairy tale narrative. Very often the nature of the “fairy tale” hyperbole varies, that is from stylistic device it turns into narrative one through animation or neutralization.

*ՀՌԵՏՈՐԱԿԱՆ ՀՆԱԲՔՆԵՐԸ ՀԵՔԻԱԹԻ ՊԱՏՈՒՄՈՒՄ (ՀԱՏՈՒԿ ՀՂՈՒՄՈՎ ՉԱՓԱԶԱՆՑՈՒԹՅԱՆԸ)- ԼՈՒՄԻՆԵ ԹՈՎՄԱՍՅԱՆ -*Լեզուն հաղորդակցության չեզոք միջոց չէ, իրականությունը ձևավորելու համար լայնորեն կիրառվում են հոետորական հնարքները: Հեքիաթի հոետորական առանձնահատկությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ հնարքներ օգտագործվում են հաճախակի և բազմիցս, իսկ մյուսները՝ բավականին հազվադեպ: Չափազանցությունը հեքիաթի հնարքներից ամենատարածվածներից է, որն ուղղված է բացահայտ և կանխամտածված ուռճացմանը: Հեքիաթի ժանրն իր բնույթով հիպերբոլիկ է:

Հեքիաթի չափազանցության ոճական կարևոր առանձնահատկությունը նրա անիմացիոն հակումն է: Չեզոքացված չափազանցությունը, ինչպես և հոետորական չեզոքացված մյուս հնարքները, պահանջում է բառացի մեկնաբանություն, այլընտրանքային՝ այսինքն փոխաբերական մեկնաբանության դեպքում հետագա շարադրանքը կարող է տրամաբանական և իմաստաբանական առումով չհիմնավորված լինել:

Բանալի բառեր. հոետորական հնարք, ոճական հնարք, չափազանցություն, հեքիաթ, պատում, ուռճացում, շեշտադրում, անիմացիա, չեզոքացում:

РИТОРИЧЕСКИЕ ТРОПЫ В СКАЗОЧНОМ НАРРАТИВЕ (С ОСОБОЙ ССЫЛКОЙ НА ГИПЕРБОЛУ)- ЛУСИНЕ ТОВМАСЯН- Язык не является нейтральным средством коммуникации, для формирования реалий широко используются риторические тропы. Изучение риторических особенностей сказки показывает, что некоторые тропы используются часто и неоднократно, а другие довольно редко. Гипербола относится к числу широко распространенных сказочных тропов, направленных на явное и преднамеренное преувеличение. Жанр сказки по своей природе гиперболичен.

Важной стилистической особенностью сказочной гиперболы является ее склонность к анимации. Нейтрализованная гипербола, как и другие нейтрализованные риторические тропы, требует буквальной интерпретации, в случае альтернативной, то есть метафорической интерпретации, последующее повествование может быть логически и семантически необоснованным.

Ключевые слова: риторический троп, стилистический прием, гипербола, сказка, повествование, преувеличение, акцент, анимация, нейтрализация.

ՀԻՔՐԻԴԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Հոդվածում ներկայացվում են հիբրիդային կամ խառը ուսուցման բնութագիրը, ընձեռած հնարավորությունները, արդյունավետության գործոնները, առաջարկվում են մի քանի տեխնիկաներ, որոնց կիրառումը թույլ կտա բարելավել խառն ուսուցումը: Բերվում են խառն ուսուցման հաջող ռազմավարության մի քանի բանալիներ՝ դասավանդողի աջակցություն, տվյալների վրա հենված հրահանգավորում, անհատականացված հրահանգներ խմբի ներսում, բարձրորակ տեխնոլոգիաներ:

Խառն ուսուցման վրա հիմնված դասընթացն արդյունավետ պլանավորելու և անցկացնելու համար մի շարք խորհուրդներ են տրվում դասախոսներին և ուսանողներին:

Բանալի բառեր. հիբրիդային (խառը) ուսուցում (ՀՈւ), ՀՈւ ռազմավարությունը, ՀՈւ արդյունավետության գործոնները, ուսուցման տեխնիկաներ, շրջված լսարան, խմբային համագործակցություն, ուսուցման ճկունություն, ուսուցման պլանավորում, անհատականացում:

Փոփոխվող աշխարհի պայմաններում կրթական համակարգին նետված մարտահրավերներից մեկը հիբրիդային կամ խառը (համակցված) ուսուցումն է: Ի սկզբանե խառն ուսուցումը վերաբերում էր առցանց բաղադրիչի ավելացմանը դասավանդողի ղեկավարած վերապատրաստմանը կամ լսարանային կրթությանը: Այժմ խառն ուսուցումը վերաբերում է մեկից ավելի մեթոդների կիրառմանը՝ ուսուցումն ու աջակցության տրամադրումն ավելի արդյունավետ դարձնելու համար: Մա մարդկանց կրթական ճամփորդության մեջ շարունակական աջակցություն տրամադրելու եղանակներից մեկն է:

Ցմահ ուսումնառության արդի դարաշրջանում խառն ուսուցումը միայն կրթական հաստատություններին չի վերաբերում, այլ նաև աշխատավայրում, արագորեն զարգացող աշխարհի մարտահրավերներին դիմակայելու և համընթաց շարժվելու համար, անդադար վերապատրաստվելուն և գիտելիքները հարմարեցնելուն:

Խառն ուսուցման, նրա առավելությունների և թերությունների մասին մանրամասն ներկայացվում է մեր՝ «Հիբրիդային ուսուցում. առավելություններն ու թերություններն ու թերությունները»¹ հոդվածում: Իսկ այստեղ կներկայացնենք խառն ուսուցման արդյունավետության բարձրացման ուղիները:

¹ Մանթրյան Լ., Հիբրիդային ուսուցում. առավելություններն ու թերությունները, Լեզուների ուսուցման խնդիրները համաշխարհայնացման արդի դարաշրջանում (կոլեկտիվ մենագրություն), Երևան, ՀՀ ԳԱԱՀ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2021, էջեր 128-138:

Խառը լսարանը ուսանողներին և դասախոսներին հնարավորություն է տալիս, թվային գործիքներ կիրառելով զգալիորեն բարելավել ուսումնական գործընթացը: Խառն ուսուցման հիմնական առավելություններից մեկն այն է, որ թույլ է տալիս ուսանողներին խուսափել լեզվ-լեզուն լսարաններից՝ միաժամանակ ներառելով տվյալ դասընթացն իրենց գրաֆիկներում: Բայց երբ խառն ուսուցումը սխալ է կազմակերպվում, այն ավելի շուտ խնդիր է դառնում, քան լուծում:

Այսպես՝ Oxford Group-ի (2013) զեկույցում նշվում է, որ որոշ ուսանողներ (16 %) բացասական վերաբերմունք ունեն խառն ուսուցման նկատմամբ, իսկ 26 %-ը մտավախություն ունի, որ չի ավարտի դասընթացի յուրացումը խառն ուսուցմամբ²:

Սա չի նշանակում, թե խառն ուսուցումը արդյունավետ չէ, պարզապես շատ կարևոր է ուսուցման ճիշտ կազմակերպումը: Իսկ արդյունավետության վերաբերյալ տվյալներ հաղորդում են Քեննիի և Նյուքոմբի (2011) իրականացրած համեմատական ուսումնասիրությունները, ըստ որոնց՝ գնահատականների տեսանկյունից խառն ուսուցումն ավելի բարձր միջին միավոր ունի, քան ոչ խառն ուսուցումը: Իսկ Հարիսոնն ու Կանուկան (2004) արձանագրել են խառն ուսուցմամբ ավարտված դասընթացների քանակի և որակի բարելավման աճ, ուսանողների բավարարվածության բարձրացում:

Այնուամենայնիվ, խառն ուսուցման արդյունավետությունը կարող է կախված լինել բազմաթիվ այլ գործոններից, որոնցից առավել կարևոր են դասախոսի բնութագրիչները, տեխնոլոգիաները, ուսանողի բնութագրերը: Ուսանողի բնութագրերն ազդում են տեխնոլոգիաների օգտագործման վրա: Այդ բնութագրերն են՝ հուզական ինտելեկտը, անհատականությունը, հաջողությունը առցանց ուսուցման համատեքստում (Berenson, Boyles & Weaver, 2008): Խառն ուսուցման մեջ սովորողի հաջողությունը կարող է էապես ազդվել համակարգի ֆունցիոնալությունից (Pituch & Lee, 2006) և կարող է հանգեցնել ուսուցման նախաձեռնությունների ձախողմանը (Shrain, 2012): Որպես խառն ուսուցման կառավարման ուժեղ գործոն նշվել է նաև ուսանողի գոհունակությունը (Wilging & Johnson, 2009), իսկ դժգոհությունը կարող է հանգեցնել անհաջողության: Դժգոհություններ կարող են առաջանալ տեխնիկական դժվարություններից, դասընթացի ոչ միանշանակ ուսուցումից:

Առցանց ուսուցումը ձախողելու պատճառ կարող են դառնալ նաև ընտանեկան աջակցության բացակայությունը, ծանրաբեռնվածության ավելացումը (Park & Choi, 2009), ուսման համար քիչ ժամանակը, դասախոսի հետ փոխհարաբերությունները և այլն³:

² Mugenyi Justice Kintu, Chang Zhu & Edmond Kagambe, *Blended learning effectiveness: the relationship and outcomes, number 7 (2017), International Journal of Educational Technology in Higher Education* educationaltechnologyjournal.springeropen.com/articles/10.1186/s41239-017-0043-4 (Որոնման ամսաթիվ՝ 04.11.2021):

³ Նույն տեղում:

Դեվիդ Վիլսոնը առաջարկում է մի քանի տեխնիկաներ, որոնց կիրառությունը թույլ կտա բարելավել խառն ուսուցումը⁴:

1. Որոշել դասընթացի ինտերակտիվությունը: Առաջինն, ինչ պետք է անել խառը լսարանն օպտիմալացնելիս, որոշել, թե դասընթացի որ մասն է լինելու ինտերակտիվ: Խառը լսարանները նախատեսված են դասընթացին էլեկտրոնային ուսուցման փորձ ներառելու և համացանցից օգտվելու համար, ինչպես նաև այն ուսանողների հետ հասանելիություն ունենալու համար, որոնք գտնվում են լսարանից դուրս: Բայց դրանք նախատեսված չեն ամբողջությամբ առցանց լինելու համար:

Հետևաբար, դասի լսարանային և առցանց բաղադրիչները որոշելը կօգնի արդյունավետ պլանավորել դասընթացը և ժամանակացույցը: Ուսանողները կհմանան, թե երբ պետք է ֆիզիկապես լսարանում լինել և երբ կարելի է առցանց սովորել:

2. Փորձել շրջված լսարանի մոդելը: Ավանդական ուսուցման ժամանակ դասավանդողը դասախոսությունը ներկայացնում է լսարանում, իսկ ուսանողները օգտագործում են իրենց ժամանակը դասընթացի նյութերն ուսումնասիրելու և վերանայելու համար: Շրջված լսարանում ուսանողները կարող են վերանայել նախօրոք ձայնագրված դասախոսություններն իրենց ազատ ժամանակ և օգտագործել դասաժամը՝ քննարկելու և առաջադրանքներ կատարելու համար:

Սա հատկապես լավ մոդել է ուսանողներին ստիպելու ակտիվորեն ուսումնասիրել դասընթացի նյութն իրենց ազատ ժամանակ: Այս կերպ նրանք լսարանում ավելի ակտիվ կլինեն:

3. Օգտագործել տեսանյութերը՝ որպես ուսուցման և ուսումնառության օժանդակ միջոցներ: Տեսաձեռնարկները կարող են հիանալի միջոց լինել ուսանողների համար դժվար թեման բացատրելիս: Այս տեսակետից հատկապես արդյունավետ են ցուցադրական տեսահոլովակները: Տեսանյութերն ապահովում են դասի ինտերակտիվությունը. ուսանողները կարող են կարծիքներ հայտնել տեսածի վերաբերյալ, հարցեր տալ:

Որպես առաջադրանք կարելի է ուսանողներին խնդրել ներկայացնել դասընթացի՝ իրենց ըմբռնման տեսագրությունը: Այնուհետև կարելի է նվազարկել նրանց ուղարկված տեսանյութերը և գնահատել կատարված աշխատանքը:

4. Խմբային համագործակցություն և փոխազդեցություն: Որպեսզի խառը լսարանն արդյունավետ լինի, կարևոր է ոչ միայն ուսանող-դասախոս փոխհարաբերությունը, այլ նաև՝ ուսանող-ուսանող փոխազդեցությունը: Մրան հասնելը հեշտ է ֆիզիկական լսարանում և ավելի դժվար՝ առցանց լսարանում:

Առցանց հարթակում խմբային համագործակցությունն արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է ներդնել մուլտիմեդիայի բազմաթիվ գործիքներ և ծրագրակազմ: Երբ այդ ամենը ներդրվի, ուսանողները կարող են հեշտությամբ շփվել և համագործակցել լսարանից դուրս:

⁴ David Wilson, *How to Improve Blended Learning*, 2021-10-21
democrator.wondershare.com/elearning-tips/how-to-improve-blended-learning.html (Որոնման ամսաթիվ՝ 04.11.2021):

Բարեբախտաբար, այս նպատակի համար կան ուսուցման կառավարման բազմաթիվ համակարգեր:

5. Առաջադրանքներ և ստուգում: Կան թվային բազմաթիվ հարթակներ, որոնք հեշտացնում են դասավանդողի աշխատանքը, թույլ են տալիս իրական ժամանակում առաջարկել առաջադրանքներ և գնահատելուց հետո հնարավորություն են տալիս ուսանողին վերանայելու առաջադրանքը: Ուսանողները սովորում են իրենց սխալների վրա և բարելավում նոր դասընթացի ընկալման իրենց կարողությունը:

Խառն ուսուցման հաջող ռազմավարությունն ունի մի քանի բանալիներ⁵:

1. Դասավանդողի աջակցություն: Դասավանդողի հետ կանոնավոր հանդիպումները խթանում են խառն ուսուցման ռազմավարությունը և վերահսկում այն:

2. Տվյալների վրա հենված հրահանգավորում: Տվյալներն օգնում են ճիշտ ընտրություն կատարել, արագ նկատել փոփոխությունները և ընտրել առաջ շարժվելու ճանապարհը:

Տվյալների վերլուծությունը կարող է օգնել նաև նպատակներ ու խնդիրներ դնելիս:

3. Անհատականացված հրահանգներ խմբի ներսում: Փաստ է, որ փոքր խմբերն ավելի արդյունավետ են աշխատում: Լեզուների ակադեմիաներում խմբերում ընդունում են առավելագույնը 10-12 ուսանող: Սա թույլ է տալիս ուսանողների հետ անհատապես աշխատել: Dexway Station Rotation լաբորատորիաները խառն ուսուցման օպտիմալացված միջավայրեր են, որոնք անհատականացված ուսուցումը շատ ավելի հեշտ և կառավարելի են դարձնում:

4. Բարձրորակ տեխնոլոգիաներ: Խառն ուսուցման հաջող ռազմավարության բանալիներից մեկն էլ տեխնոլոգիաներն են, որոնք դասավանդողները կարող են օգտագործել լսարանում: Սակայն տեխնոլոգիաների առատությունը բավարար չէ, դրանք պետք է լինեն բարձրորակ և արդյունավետ:

Աշխարհի տարբեր համալսարաններ և ընկերություններ, որոնք վաղուց կիրառում են խառն ուսուցման մոդելը, բավականին փորձ են կուտակել և կարող են խորհուրդներ տալ դասավանդողներին դասընթացներն ավելի արդյունավետ պլանավորելու և անցկացնելու համար⁶: Ահա այդ խորհուրդներից մի քանիսը.

1. Ներառման և համակցման ճիշտ մոտեցում: Դասընթացի կառուցվածքը պետք է նախագծվի այնպես, որ հավասարակշռի ինչպես անկախ ուսուցումը, այնպես էլ

⁵ Keys to a successful Blended Learning Strategy

cae.net/successful-blended-learning-strategy/ (Որոնման ամսաթիվ՝ 07.11.2021)

⁶ David Wilson, How to Improve Blended Learning, 2021-10-21, democrator.wondershare.com/elearning-tips/how-to-improve-blended-learning.html (Որոնման ամսաթիվ՝ 04.11.2021): Stive McIntyre, 4 Tips to Create Better Blended Learning, 2017, elearningindustry.com/better-blended-learning-4-tips (Որոնման ամսաթիվ՝ 07.11.2021): Connie Malamed, 10 Best Practices for Designing Blended Learning, 2015, thelearningcoach.com/elearning2-0/best-practices-in-blended-learning/ (Որոնման ամսաթիվ՝ 07.11.2021): Amy Burroughs, 4 Ways to Elevate Your College's Blended Learning, edtechmagazine.com/higher/article/2020/08/4-ways-elevate-your-colleges-blended-learning-experience (Որոնման ամսաթիվ՝ 08.11.2021):

անհատական դասերը և ներգրավի բոլոր կողմերին: Սրան հասնելու ճանապարհին խոչընդոտ է ուսանողների մեծ թիվը (30 և ավելի):

Ըստ Կենտրոնական Ֆլորիդայի համալսարանի Բաշխված ուսուցման կենտրոնի գործադիր տնօրեն Քելվին Թոմսոնի՝ առցանց և դեմ առ դեմ ուսուցման տարրերի արդյունավետ ինտեգրումը շատ դասախոսների համար ամենամեծ մարտահրավերներից մեկն է: «Այն, ինչ դուք ցանկանում եք, անխափան փորձն է», - ասում է նա⁷: Ապա հավելում է, որ հաճախ դասախոսների համար հեշտ է մտածել լսարանային գործունեության մասին, բայց ավելի դժվար է բացահայտել ռազմավարությունները, որոնք աշխատում են առցանց կամ համատեղում են երկու տարածքները, օրինակ՝ քննարկում, որը սկսվում է լսարանում և շարունակվում առցանց, կամ հակառակը:

«Այս խաչմերուկները կարևոր են, - ասում է Թոմսոնը: - Եթե լավ են կազմակերպվում, թույլ են տալիս օգտագործել երկու մոդելների ուժեղ կողմերը և համատեղել դրանք փոխլրացնող ձևերով»⁸:

Դասախոսը, որը հաջողում է ուսանողներին քննարկումներին ներգրավելու հարցում, կարող է դա առաջնահերթություն դարձնել, օրինակ, անձնական հանդիպումների համար և կենտրոնացնել առցանց դասերը բովանդակության մատուցման վրա:

2. Անհատականության պահպանում: Խառն ուսուցման դասընթացի կառուցվածքը մշակելիս շատ կարևոր է հաշվի առնել սովորողների անհատական ուսուցման ոճերը: Դեմ առ դեմ ուսուցումը հնարավորություն է տալիս հարմարեցնել ուսուցումը սովորողի անհատական կարիքներին, հարց ու պատասխանի հիման վրա գնահատել նրանց գիտելիքները. սա թույլ է տալիս համակարգողին հասկանալ՝ արդյո՞ք դասընթացի բովանդակությունը տեղին է: Շատ ավելի հեշտ է պարզել, թե ինչ կցանկանային սովորել ուսանողները և ներգրավել նրանց այդ գործընթացում՝ կենտրոնանալով այն բանի վրա, թե ինչ պետք է անձն իմանա սովորելու, աշխատանքը կատարելու կամ քննությունները հանձնելու համար: Այս կերպ խուսափում ենք գերբեռնվածությունից, հիասթափվելուց և շփոթությունից:

Բոլոր ուսանողները նույնը չեն, և ոչ բոլորն են ընդունում ուսուցման նույն ոճը, ուստի հարկ է դա նկատի առնել դասընթացը պլանավորելիս:

3. Ճկունություն: Առկա ուսուցումը սահմանափակում է սովորողներին որոշակի օրերով, ժամերով և հիմնվում է հատուկ դասընթացների համար մշակված խմբային գրաֆիկների վրա:

Ի հակադրություն, առցանց ուսուցումն իրական ճկունություն է ապահովում բոլոր ներգրավվածների համար: Օգտատերերը կարող են տեղեկություն ստանալ տարբեր սարքերով այն ժամանակ, երբ հարմար է իրենց:

⁷ Amy Burroughs, *4 Ways to Elevate Your College's Blended Learning*, edtechmagazine.com/higher/article/2020/08/4-ways-elevate-your-colleges-blended-learning-experience (Որոնման ամսաթիվ՝ 08.11.2021):

⁸ Նույն տեղում:

4. Ճիշտ մարդկանց ներգրավում առցանց դասընթացներում: Բիզնես և կրթական միջավայրում շատ տեղեկություններ կան, որոնք պետք է պարզաբանվեն, երբ թիմին միանում է նոր անդամ: Նորեկին առցանց դասընթացներ տալ և թողնել միայնակ, նշանակում է ձախողել, քանի որ նա ի վիճակի չի լինի միայնակ մարսել մեծաքանակ տեղեկությունը: Ուստի շատ կարևոր է, որ դասավանդողն ու թիմակիցներն աջակցեն և ուղղորդեն նորեկին:

Սա շատ կարևոր է, քանի որ, ըստ ուսումնասիրությունների, նոր վարձված աշխատակիցներն ի վերջո լքում են աշխատավայրն այն պատճառով, որ չեն կարողանում միջանձնային ամուր հարաբերություններ ստեղծել գործընկերների հետ:

5. Պլանավորում ուսումնառության արդյունքներին համապատասխան, ոչ թե կոնկրետ տեխնոլոգիաներ օգտագործելու համար: Տեխնոլոգիան գործիք է, ոչ թե նպատակ:

6. Պլանավորում կազմակերպության նպատակներին համապատասխան: Պետք է հստակորեն որոշել՝ նպատակը լայն լսարանին հասնելն է, թե՞ բազմաթիվ սովորողների կարիքները բավարարելը: Եթե ձեր նպատակները համահունչ են կազմակերպության նպատակներին, դուք կարող եք աջակցություն ստանալ:

7. Պլանավորում համագործակցության համար: Որոշեք, թե ինչպես են խառը ռազմավարության բաղադրիչները համապատասխանելու որպես ամբողջություն: Համադրության յուրաքանչյուր բաղադրիչ պետք է աշխատի մյուսին ամրացնելու և արդյունավետությունը բարձրացնելու համար:

8. Պլանավորեք զրոյից, ոչ թե խմբագրեք գոյություն ունեցող դասընթացը: Եթե վերամշակեք գոյություն ունեցող դասընթացը, դուք կաշկանդված կլինեք նախորդ մոտեցմամբ:

9. Համագործակցային ուսուցում: Համագործակցային նախագծերի միջոցով խմբակային ուսուցումը կարող է հզոր միջոց լինել սոցիալական փոխազդեցության առավելություններն օգտագործելու համար:

10. Բոլոր բաղադրիչների հավասար արժեքում: Եթե կողմնակալ եք տեխնոլոգիաների վրա հիմնված ուսուցման նկատմամբ կամ կարծում եք, որ անհատական ուսուցումն ավելի արդյունավետ է, ապա կարևոր է օբյեկտիվ վերաբերմունք զարգացնել բոլոր մեթոդների նկատմամբ: Ընտրեք այն մեթոդները, որոնք լավագույնս են օգնում նպատակներին հասնելու: Բոլոր մեթոդներին վերաբերվեք որպես արժեքավոր բաղադրիչների:

11. Գնահատեք ծրագիրը փորձարկումով: Խառն ուսուցումը գնահատելու համար սկսեք փոքրից՝ փորձական կամ նախատիպային տարբերակով: Ստուգեք՝ արդյոք սովորողները հասկանում են՝ ինչպես են ուսուցման տարբեր ձևերը միմյանց համապատասխանում ու գործում և գտեք թերությունները: Հաշվի առեք՝ ո՞ր կողմերն են մոտիվացնող և արդյունավետ, որոնք՝ հիասթափեցնող: Իրականացրեք շարունակական բարելավման ռազմավարություն:

12. Պատրաստեք սովորողներին: Խառն ուսուցումը նորություն կլինի աշխատակիցներից շատերի համար: Տրամադրեք նրանց տեղեկություն և հիմնավորեք

այդ մոտեցման ընտրությունը: Մասնակիցները կարող են վայելել ազատությունն ու բազմազանությունը խառն ուսուցման մեջ: Տեղեկացրեք նրանց խառն ուսուցման առավելությունների մասին:

Խառն ուսուցման վերաբերյալ բազմաթիվ նյութեր կան դասավանդողների և քիչ՝ ուսանողների համար: Ահա մի քանի խորհուրդներ ուսանողներին:

Նախ՝ որո՞նք են խառն ուսուցման օգուտները:

1. Խառն ուսուցումը թույլ է տալիս սովորել քո տեղում, առանց հատուկ վայր հաճախելու:

2. Այն ավելի հասանելի է:

3 Խառն ուսուցումն ավելի բազմազան է, հետաքրքիր ու զվարճալի:

Խառն ուսուցման հնարավորություններն արդյունավետ օգտագործելու համար.

1. Դիտարկիր խառն ուսուցումը որպես զարգացման հնարավորություն:

2. Հավատարիմ մնա ժամանակացույցին և ինքդ քեզ մի «ծանրաբեռնիր»: Հանգիստն ու խորհելը ևս սովորելու և աճելու համար կարևոր են:

3. Կապի մեջ եղիր քո դասախոսի և դասընկերների հետ:

4. Նայիր ապագային և վայելիր: Հավանաբար, երբ դու անցնես աշխատանքի, ավելի քիչ ժամանակ կանցկացնես գրասենյակում և կաշխատես վիրտուալ: Այժմվանից պատրաստվիր դրան և դու կլինես անկախ, ինքնաբավ և ավելի հմուտ:

Ընդհանրացնելով՝ կարող ենք փաստել՝ խառն ուսուցումն արդի դարաշրջանում, անշուշտ, ունի բազմաթիվ առավելություններ և ուսուցման ճիշտ կազմակերպման, գործիքակազմի նպատակային կիրառության, հետևողական բարելավման պարագայում կգրանցի ավելի բարձր արդյունքներ, քան զուտ ավանդական կամ միայն առցանց ուսուցումը:

СПОСОБЫ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ ГИБРИДНОГО ОБУЧЕНИЯ-ЛИАНА САНТЯН - В статье представлены характеристика гибридного или смешанного обучения, предоставленные возможности, факторы эффективности, предложено несколько методик, применение которых позволит улучшить смешанное обучение. Предлагается несколько ключей к успешной стратегии смешанного обучения: поддержка преподавателей, обучение на основе данных, индивидуальное обучение в группе и высококачественные технологии.

Преподавателям и студентам дается ряд советов по эффективному планированию и проведению смешанного учебного курса.

Ключевые слова: гибридное (смешанное) обучение (СО), стратегия СО, факторы эффективности СО, методы обучения, перевернутый класс, групповое сотрудничество, гибкость обучения, планирование обучения, персонализация.

WAYS TO INCREASE THE EFFECTIVENESS OF HYBRID LEARNING - LIANA SANTRYAN - The article presents the characteristics of hybrid or blended learning, provided opportunities, the efficiency factors, suggests several techniques, the application of which will allow to improve blended learning. Here are some keys to a successful blended learning strategy: teacher support, data-driven instruction, personalized instruction within the group, and high-quality technology.

A number of tips are given to teachers and students for effective planning and delivering a blended learning course.

Keywords: Hybrid (blended) learning (BL), BL strategy, BL effectiveness factors, teaching techniques, flipped classroom, group collaboration, learning flexibility, learning planning, personalization.

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ

ՌԻԴԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ

ՆՐԱ ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

/Մանկավարժի դիտարկումներից/

Մույն հոդվածում ամփոփված է այն, որ բարձրագույն ուսումնական հաստատությունների ռազմավարական կառավարման գործընթացում առավել կարևոր է բուհի որակի կառավարման համակարգը, և այս բազմավեկտոր արժեքանության տիրույթներում կրթական անվտանգության ամրագրումը որպես ժամանակի հրամայական որը դրված է քաղաքական օրակարգում:

Բանալի բառեր. անվճար, կրթություն, պետական, բարձրագույն, ուսումնական, ռազմավարական, կառավարման, գործընթաց, պետություն, ազգային, կայունության, անվտանգության, երաշխիք, բարեփոխումներ, կրթական, տարածք, սպառնալիքներ, մարտահրավերներ:

Արցախի Հանրապետության Սահմանադրության 38-րդ հոդվածը յուրաքանչյուր քաղաքացու համար ամրագրում է մրցութային հիմունքներով անվճար կրթություն պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ օրենքով սահմանված կարգով: Ժամանակի պահանջներին համապատասխան ԱՀ-ում կրթության, մշակույթի փոփոխությամբ պայմանավորված՝ նոր մարտահրավերներին դիմակայելու և մրցունակությունը բարձրացնելու համար կրթական համակարգը ամրագրել է նորարարությունների բարձրորակ կրթության արդյունավետ կառավարման մոտեցումներ: Այսօր ԱՀ-ի բարձրագույն կրթական համակարգն իր վրա է վերցրել մի առաքելություն, որն ունի ռազմավարական ուղղություններ՝ բարձրագույն մասնագիտական կրթությունն է իր ՈԱՀ-ի¹ և գիտական հետազոտություններով աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների ռազմավարական կառավարման գործընթացում առավել կարևոր դեր ունի բուհի որակի կառավարման համակարգը, քանի որ այն հնարավորություն է տալիս արձագանքել ներքին և արտաքին միջավայրերի ազդակներին, ապահովել հաստատության շարունակական բարելավումը, մրցունակությունը՝ աշխատաշուկայի պահանջների հիման վրա ձևավորված կրթական ծրագրեր, աշխատաշուկայում պահանջված կադրեր, որակյալ պրոֆեսորադասախոսական կազմ, բարձրացնել տվյալ հաստատության արտաքին գրավչությունը:

Փաստ է այն, որ բնակչության կյանքը ձևավորողն ու իմաստավորողը առաջին

¹ ՈԱՀ-ի որակավորումների ազգային շրջանակ:

հերթին նրա կրթական համակարգն է, որով կրթում ենք սերունդներ, որոնք կլինեն գիտելիքի վրա հիմնված աշխարհի մի մասը: Մենք դեպի առաջ նայող հասարակություն ենք և մեր խնդիրների լուծումը տեսնում ենք այնպիսի սերունդ կրթելու մեջ, որը կունենա նորարար և հետազոտող հայացք: Ինչպես նշում է Ն.Մաքիավելին, <<Ով պետություն ազգային քո կայունության և անվտանգության երաշխիքը բարձրագույն և անվտանգ կրթությունն է>>: Կրթական համակարգի հիմնարար արժեք է հանդիսանում՝ ձևավորել մրցունակ գիտական և նորարարական մարդկային ներուժ, որը կկարողանա հետազոտել և շարունակական լուծումներ առաջարկել հիմնախնդիրների վերաբերյալ, այն կնպաստի հանրապետության անվտանգության ամրապնդմանը, կայուն զարգացմանը և միջազգային ինտեգրմանը:

Այս բազմավեկտոր արժեքանության տիրույթներում կրթական անվտանգության ամրագրումը ժամանակի հրամայականն է, որը դրված է քաղաքական օրակարգի մեջ:

Համաձայն Թ.Հոբսի տեսությանը՝ պետական քաղաքականության հիմնական խնդիրը միաժամանակ պետության հասարակական և անձի անվտանգության ապահովումը չէ, այլ անվտանգ կրթության մարտահրավերներն են՝ չխեղաթյուրելով ազգայինը: Ակնհայտ է, որ տեխնիկական հայտնագործություններն ու համակարգչային հեղափոխությունը արմատապես կարող են փոխել քաղաքական կայունության սկզբունքները, քանի որ համացանցի միջոցով լայն հնարավորություններ են ստեղծվել կարճ ժամանակաշրջանում ստանալու ինչպես ներդաշնակ, այնպես էլ այլ տեղեկություններ:

Փաստ է, որ գլոբալ վերազինումը, կրթական համակարգի արդիականացումը, առաջին հերթին ենթադրում են ոչ միայն նոր տեխնոլոգիաների ներդրում և բազմակողմանի մասնագետների պատրաստում, այլև բարձր մասնագիտական դիրքորոշում ունեցող մասնագետներ, որոնք իրենց իմացությամբ սերունդների համար բացահայտում են ազգային շահն ընկալելու անհրաժեշտությունը՝ իհարկե, հանուն ազգային անվտանգության ապահովման:

Կրթության համակարգում հայ մանկավարժական հանրությունը փորձ է անում հաշվի առնել զարգացած երկրներում մանկավարժի կուտակված առաջավոր փորձը և այն ներդնել մեր համակարգում: Ավելին, խնդիր է դրվում ինտեգրվել Բոլոնիայի հռչակագիրն ընդունած երկրներին, դառնալ այդ կրթական տարածքի լիարժեք անդամ:

Սակայն միշտ չէ, որ նմանակման, ընդօրինակման համապատասխան ունենում ենք բարեփոխումների կրթական տարածքում ցանկալի արդյունք: Այդ համատեքստում կարևոր է կրթական ավանդույթի դերը, որտեղ ձևավորվում է մենքալ դաշտ²: Կարևոր է այն, որ կրթության նոր ռազմավարությունում փորձ է արվում հաղթահարել խորհրդային կարծրատիպերը, իսկ գործընթացի վերջնարդյունքների ստուգման և գնահատման ռազմավարության մշակման տեսանկյունից արդեն ձևավորվում

² Մի տիրույթ, որտեղ ուսումնասիրում են կրթական ավանդույթները՝ հաշվի առնելով մասնագետների լեզվով, հոգեկան, սոցիալական մշակման առանձնահատկությունները:

են այսպես կոչված «երկրորդ սերնդի չափորոշիչներ»³:

Այսօր „երկրորդ սերնդի չափորոշիչները, առաջ են բերում Ազգային և կրթական անվտանգության⁴ (այսուհետ՝ ԱԿԱ) ապահովման ու այդ ոլորտի հիմնախնդիրների գիտական ուսումնասիրությանը ցանկացած երկրի ինքնիշխանության, տարածքային ամբողջականության պահպանման և կայուն զարգացման ապահովման համար կենսական նշանակություն: Այդ համատեքստում ԱԿԱ հիմնախնդիրների ակադեմիական մակարդակով ուսումնասիրությունն ու բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան ուղղվածությունը կարևորվում են հատկապես մեր երկրում՝ հաշվի առնելով ԱՀ -ի առջև ծառացած ներքին և արտաքին, այդ թվում՝ համաչափ և անհամաչափ սպառնալիքներն ու մարտահրավերները⁵:

Ազգային և կրթական անվտանգության ապահովման համատեքստերում պետական կրթական քաղաքականության մարտահրավերները պետք է լինեն հետևյալը. հասարակական, ինչպես նաև տնտեսական զարգացման պահանջներին համապատասխան որակյալ կրթության երաշխիքների ապահովումը, կրթության որակի բարձրացման անհրաժեշտ պայմանների ձևավորումը, կրթության համակարգում արդյունավետ տնտեսական կապերի ձևավորումը, ազգային կրթական համակարգը բարձր որակավորմամբ մասնագետներով համալրումը, կրթության սուբյեկտների միջև պատասխանատվության բաշխումը: Հենց վերոնշյալ հանգամանքներով պայմանավորված՝ ԱՀ-ում տարեցտարի օբյեկտիվորեն մեծանում է ԱԿԱ հիմնախնդիրների ուսումնասիրման պահանջարկը⁶:

Ներկա պայմաններում ԱԿԱ ապահովումն իրենից ներկայացնում է բավականին բարդ, բազմամակարդակ և բազմաշերտ խնդիր, որի լուծման արդյունավետությունն ուղղակիորեն կախված է գիտական, վերլուծական մտքի և ակադեմիական հանրության պատրաստվածության մակարդակից, կուտակված գիտելիքներից և այդ խնդիրների վերաբերյալ հասարակության իրազեկվածության մակարդակից: Ինչպես նշում է Մ. Մարգարյանը⁷ իր «Քաղաքական կայունության և ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրները» գրքում, կրթական գործընթացի հիմնական արժեքներն ապահովող կրթությունը՝ դա **քաղաքացիավարական** կրթությունն է, որն իր մեջ ներառում է քաղաքացիական գիտելիքներ, հմտություններ և արժանիքներ՝ հիմնվելով հանդուրժողականության և ինքնակարգապահության վրա: Փաստորեն կրթական կայունության ապահովումը նոր պահանջմունքներ է ներկայացնում դասախոսին, որի նյութը պետք է շարադրված լինի և

³ Նշանակում է հաղթահարել խորհրդային կարծրատիպերը և մշակել կրթական նոր ռազմավարություն (չափորոշիչներ):

⁴ ԱԿԱ - Ազգային և կրթական անվտանգություն:

⁵ Վարդան Աթոյան, «Դասախոս. դասընթաց. ազգային կրթ. անվտանգությունից», Երևան, 2014, էջ155:

⁶ Ռոբերտ Խաչատրյան, Բ.գ.թ., դոցենտ, - ԲԱՀՇԼԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ԿՐԹԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՆՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (2017).

⁷ Մ. Մարգարյան, Քաղաքական կայունության և ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրները, Եր., . 2018թ.

գիտելիքների, և նորագույն արժեքների ընկալմամբ: Նոր մարտահրավերներն ապահովում են կրթական համակարգի կառավարման, ուսումնական գործընթացի կազմակերպման և այդ համակարգում ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքների կատարման ընթացքը: Այն իր մեջ ներառում է նաև կրթական նոր ծրագրերի, դասագրքերի ստեղծում, դասավանդման գործընթացում մանկավարժական նոր մեթոդների օգտագործում: Այստեղ կարևոր է նշել, որ դասախոսը և ուսանողը՝ լինելով ազգային ինքնության կրողը և դառնալով ուսումնական գործընթացի *փոխընթացող* - *փոխհամագործակցող* մոդելառարները⁸, հնարավորություն են ստանում բացահայտելու իրենց մասնագիտական գիտելիքները և բարոյական այլ որակներ, որը սինթեզվում է անցյալ-ներկա-ապագա եռաչափության ձևաչափով:

Պետք է նշել որ Ազգային և կրթական անվտանգության ապահովումը պայմանավորված է մարդկային գործունեությամբ: Մարդը վտանգների ու սպառնալիքների և՛ օբյեկտն է, և՛ սուբյեկտը: Միաժամանակ մարդն ուղղակի կամ անուղղակի ներառված է հարաբերությունների և գործընթացների բազմազան, բարդ համակարգում՝ ունենալով ակտիվ ստեղծարար, պասիվ հայեցողական կամ կործանիչ դեր⁹: Ազգային անվտանգության ապահովման համատեքստում կրթության համակարգը նպաստում է անհատի աշխարհայացքի և անհատականության, հասարակության ու պետության մտավոր և մարդկային ներուժի ձևավորմանն ու զարգացմանը, տնտեսության առաջընթացին, երկրի մրցունակության ապահովմանը, ինչպես նաև բարձրացնում է պետության մարտունակությունը և հնարավորություն է տալիս համակարգված կերպով կառավարել ճգնաժամային իրավիճակները: Ազգային անվտանգության ապահովման համար անհրաժեշտ են որակյալ մասնագետներ. այդ է պատճառը, որ ազգային մակարդակում հասարակության մտավոր և մասնագիտական ներուժի ձևավորումը, պահպանումն ու զարգացումն առաջնահերթ են համարվում:

Այսպիսով, ըստ մեր դիտարկումների, եկանք այն եզրահանգման, որ գերակա կրթական ռազմավարական ուղղվածությունը՝ *ձևավորել մրցունակ գիտական և նորարարական մարդկային ներուժ, ով շարունակական լուծումներ կտա նոր հիմնախնդիրներին, կնպաստի անվտանգության ամրապնդմանը, կայուն զարգացմանը, և ամենակարևորը՝ միջազգային ինտեգրմանը*:

СТРАТЕГИЧЕСКИЕ НАПРАВЛЕНИЯ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ И ЕЕ ОСНОВНЫЕ ЦЕННОСТИ /из наблюдений педагога/- АРМИНЕ БАГДАСАРЯН - В данной статье обобщен тот факт, что система управления качеством вуза имеет большее значение в процессе стратегического управления высшим учебным заведением.

⁸ Մոդելառար համակարգող:

Ключевые слова: свободное, образование, государство, высшее, образовательное, стратегическое, управление, процесс, государство, национальное, стабильность, безопасность, гарантия, реформа, образование, территория, угрозы, вызовы.

*STRATEGIC DIRECTIONS OF HIGHER EDUCATION AND ITS CORE VALUES/ from the pedagogue's observations - **ARMINE BAGHDASARYAN** - This article summarizes the fact that the quality management system of the university is more important in the process of strategic management of higher education institutions.*

Keywords: education, state, higher, educational, strategic, governance, process, state, national, stability, security, guarantee, reform, education, territory, threats, challenges.

ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԱԿՈՒՆՔՆԵՐԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մաս II
(11-15-րդ դարեր)

Հոդվածում ներկայացվում են հայերի ու Հայաստանի մասին նորահայտ հիշատակություններ, տեղեկություններ ռուսական պատմագիտական աշխատությունների և տարեգրության մեջ՝ շարունակելով համանուն վերտառությամբ հոդվածի առաջին մասի ժամանակագրական տրամաբանությունը: Ռուսական աղբյուրների հարուստ փաստագրական նյութի հիման վրա հայոց պատմության մեջ հանրահռչակ հարցերն այլ անկյան տակ են վերլուծվում, ինչը երևան է հանում այսրկովկասյան տարածաշրջանի դերի կարևորությունը ռուսական հարավ-արևելյան քաղաքական կողմնորշման գործում դեռ 11-15-րդ դարերում՝ արտաքին տարածաշրջանային քաղաքականության մեջ սաղմնային փուլից դուրս գալուց:

Հոդվածի շրջանակներում առաջադրված խնդիրների ուսումնասիրության ընթացքում կիրառվել են ընդհանուր գիտական՝ դիալեկտիկական, տրամաբանական, պատմական, ինչպես նաև մասնավոր կամ հատուկ մեթոդներ, որպիսիք են պատմահամեմատական, վերլուծական, վիճակագրական, համակարգակառուցվածքային մեթոդները:

Բանալի բառեր. զինական համագործակցություն, հայ-ռուսական հարաբերություններ, Ռուսիա, արտագաղթ, առևտրային հարաբերություններ, վաճառականություն, ճանապարհորդներ:

Շարունակելով նյութի ժամանակագրական տրամաբանությունը՝ ներկայացնում ենք 10-րդ դարի վերջերից ու 11-րդ դարի սկզբից ռուս-հայկական շփումների նոր եզրագծերը:

Հայ-ռուսական հարաբերությունների դրվագներից են զինական շփումները դեռ 10-րդ դարի վերջերին ու 11-րդ դարի սկզբներին, երբ Բյուզանդիայի Մակեդոնական դինաստիայից ծագումով հայ կայսր Բարսեղ (Վասիլ) II Բուլղարասպանը (963-1025թթ.)¹ ռուսների մեծ իշխան Վլադիմիրից 6000-անոց զորաջոկատ զինական օգնություն է ստանում կապաղովկիական ծագմամբ հայ Վարդա Ֆոկայի² ապստամբությունը ճնշելու համար՝ դրա դիմաց Վլադիմիր Սվյատոսլավիչին

¹ **Васильев А.А.**, Происхождение императора Василья Македонянина, «Византийский временник», т. XII, выпуск 1-4, СПб, 1906, с. 154-155 (592 стр.). **Charanis P.**, The Armenians in the Byzantine Empire, Found Calouste Gulbenkian, Lissabon, 1963, p. 34-35.

² **Каждан А.П.**, Армяне в составе господствующего класса Византийской империи в XI-XII вв., Ереван, 1975, с. 73. Տե՛ս նաև **Литаврин Г.Г.**, История Византии, т. 2, М., 1967, с. 217-218.

կնության տալով իր քրոջը՝ Աննային³։ Ռուսական ջոկատի Հայաստանում գտնվելու մասին ռուսական աղբյուրներում որևէ տեղեկություն չի գտնվել, քանի որ ռուսական զորախմբի մասին ռուսական աղբյուրագիտական և պատմագիտական գրականության մեջ անդրադարձ է կատարվում ռուս-հունական պայմանագրերն ի կատար ածելու հարցերի շրջանակներում։ Իսկ ահա հայ պատմագիրներից Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը ռուսաց «հետեակային մարտիկներ»-ին անդրադառնում է «հունաց բանակում» տեղի ունեցած միջադեպի մասին խոսելիս. «ՆԽԹ, չորս հարյուր քառասունինը»՝ 1000 թվականին, առնելով Դավիթ կյուրապաղատի մահվան գույժը, Կիլիկիայի Տարսոն քաղաքից Մելիտինեով, Ադանիքով հասնելով Տայոց աշխարհի, Հավիճ լեռան ստորոտում կյուրապաղատության պաշտոնը «Ափխագաց Բագրատ թագաւորին» հանձնելուց հետո՝ բյուզանդական Վասիլ կայսրը մեկնում է և հենց նույն օրը «Ռուգաց հետեակագնդերից մեկում» ձիուն կերակրելու խոտի մի աննշան պատճառով «սաստիկ կոիվ է բռնվում» վրացիների հետ՝ «ռուգաց ամբողջ ազգը՝ այնտեղ գտնվող զինվորները, շարժվում են նրանց դեմ կովելու», իսկ վրացիներին օգնության են գալիս «Տայոց բոլոր իշխաններն ու ազատանին»։ Հետաքրքիր է, որ պատմագիրը ստույգ մատնանշում է ռուսական զորքի թիվը և Հայաստանում գնտվելու պատճառները. «...այնտեղ կային վեց հազար հետեակային մարտիկներ, նիզակներով և ասպարներով զինված, որոնց Վասիլ թագավորն էր խնդրել ռուսական թագավորից, երբ որ յուր քրոջը նրան կնության էր տվել, և դա նույն ժամանակ էր, երբ որ նրանք Քրիստոսի հավատն ընդունեցին»⁴։ Ընդ որում, Ռուսիայում քրիստոնեական հավատի արմատավորման, տարածման և ժողովրդայնացման համար՝ նույն այդ Աննա թագուհին⁵, եղբոր միջորդությամբ, իր հետ Ռուսիա տարավ «հույն, հայ քահանաներ, եպիսկոպոսներ և մետրոպոլիտ», ինչպես նաև եկեղեցաշինության համար ճարտարապետներ ու արհեստավորներ, որոնց մեջ ևս կային հայեր⁶։

11-րդ դարի երկրորդ կեսին հայ-ռուսական շփման ևս մի դրվագ հետաքրքիր մանրամասներով ներկայացնում է ռուս բյուզանդագետ, ակադեմիկոս Վ. Գ. Վասիլևսկին իր «Византия и печенеги; Варяго-русская и варяго-английская дружина в Константинополе; О варяго-руссах» աշխատության մեջ⁷. «1021 թվականին Վասիլի 2-

³ *Дяль III., История Византийской империи, перевод с франц. А.Е.Рогинской, М., 1948, с. 83-84.*

⁴ *Всеобщая история Степаноса Таронского, Асогика по прозванию, писателя XI столетия. Переведена с армянского и объяснена Н.Эминым. М. 1864. С. 200.*

⁵ *Աննային տարեգրության մեջ «իշխանուհի» անվանատիտղոսի փոխարեն շարունակում էին մեծարել «թագուհի-կայսրուհի» տիտղոսով՝ պահպանելով կայսրական ընտանիքից սերած լինելու պատիվը. ընդ որում, նա միակն էր ռուս իշխանների կանանցից, ով կրում էր այդ տիտղոսը մինչ Բվան Ահեղը, ում օրը և ումից հետո սկսեցին ռուսական տրիարկալների կանանց «թագուհի» կոչել։ Տե՛ս՝ Устав князя Владимира Святославича о десятинах, судах и людях церковных, Оленинска редакция, Российское законодательство X – XX веков: Законодательство Древней руси, т. 1, М., 1984, с. 139-140.*

⁶ *Розен В.Р., Император Василий Болгаробойца: Извлечения из летописи Яхи Антиохийского, СПб, 1883, с. 197-199, 217.*

⁷ *Василевский В.Г., Труды: Византия и печенеги; Варяго-русская и варяго-английская дружина в Константинополе; О варяго-руссах, т. 1, СПб, 1908, с. 210-221.*

րդ կայսրը կրկին Հայաստանում էր...Վասիլի 2-րդը հայտնվեց Հայաստանի և Վրաստանի սահմաններին Հունական ողջ զորքով և զգալի թվով օտարազգիներով»⁸: Բյուզանդական կայսրի Հայաստանում հայտնվելու պատճառը «այստեղ անբար-յացական զործողություններն էին» Վրաստանի՝ Աբխազիայի և Քարթլիի թագավոր Գեորգի (Գուրգեն) 1-ին Բագրատունու (1014-1027թթ.) կողմից, ով սասանել էր բյու-զանդական շահերը՝ գրավելով հարևան մի շարք մարզեր: Այս միջադեպն իր հանգու-ցալուծումը ստացավ, երբ «կայսրի ռուսական գնդերը հարձակում գործեցին, փրկվել հաջողվեց վրացական բանակի չնչին թվով զինվորների միայն»⁹: Վ.Գ.Վասիլևսկին որպես աղբյուր օգտագործել է նաև հայ պատմագիր Արիստակես Լաստիվերցու (1002-1080թթ.) «Պատմութիւն»-ը, որտեղ պատմիչը վերոհիշյալ դեպքերին երկու (Գ,Դ) գլուխ է հատկացնում՝ հաղորդելով, որ դրանք տեղի են ունեցել հայոց 471 (1022) թվականի սեպտեմբերի 11-ին «Շաղփա կոչված վայրում», սակայն Հայաստան եկած հունական (բյուզանդական) բանակի կազմում ռուսների՝ «փռանգներ» այս իրադարձությունների շրջանակներում պատմիչը չի հիշատակում:

1042 թվականին Վասպուրականի թագավոր Սենեքերիմ Արծրունու թոռ վրացական արքա Բագրատ 4-րդի (1027-1072) զորքերի կազմում հայերը՝ Վարյագների պահակախմբի շարքերում ընդգրկված ռուսների հետ միասին, մասնակցել են Կլադեկարիի կառավարիչ ապստամբ Լիպարիտ 4-րդի դեմ Սասիրեթի ճակատամարտին:

1054 թվականին հայ-ռուսական զորքերը համատեղ պայքարում էին սելջուկյան սուլթան Տուղրիլ բեկի (1038-1063) դեմ, ուր հայերի զինական տաղանդը չէր վրիպել ռուսների ուշադրությունից. նրանք հայերին համարում էին անձնուրաց, քաջ, ռազմարվեստին տիրապետող զինվորներ և դեռևս 11-րդ դարում արդեն հայկական զորքեր էին հրավիրվում Ռուսիա՝ թշնամու դեմ պայքարելու համար¹⁰:

Պետականության կորուստը, սոցիալ-տնտեսական դժվար կացությունը արտագաղթի պատճառ են դառնում, ինչը զանգվածային բնույթ է ստանում քոչվորների՝ սելջուկ-թուրքերի արշավանքների շրջանում: Արտագաղթն ուներ երկու հիմնական ուղղություն. հարավ՝ դեպի Կիլիկիա, և հյուսիս՝ դեպի Ղրիմ: Ա. Լ. Յակոբ-սոնը ենթադրում է, որ Ղրիմի թերակղզի հայերը բնակության տեղափոխվում են 13-րդ դարում, իսկ Ղրիմի առաջին՝ Կաֆայի հայկական գաղթավայրի հիմնադրումը թվագրում է 14-րդ դարով՝ ոչ ուշ քան 1316թ.¹¹: Արդեն 14-րդ դարի վերջին քառորդում հայերը բավական մեծաթիվ էին Ղրիմում, այնպես որ Ղրիմի հայերը Մամայ խանի (1361-1380թթ.) հարկադրանքով ընդգրկվել էին Ռուսիայի դեմ արշավող զորքի կազմում. «6888 թվականի»¹² ամռանը Հորդայի պիղծ իշխան Մամայն իր իշխանների հետ հարձակվեց ռուսական հողի վրա, և նրա հետ էին Բեսերմենները և Հայերը,

⁸ Նույն տեղում, էջ 211:

⁹ Նույն տեղում, էջ 211-212:

¹⁰ *Атаджанян И.А., Из истории русско-армянских взаимоотношений с X по XIII века, Ереван, 2006, с. 40-41.*

¹¹ *Якобсон А.Л., Средневековый Крым. Очерки истории и истории материальной культуры, Изд. «Наука», Москва-Ленинград, 1964, с. 96, 109, 111, 116.*

¹² Գրիգորյան տոմարով՝ 1380 թվական:

Չերքեզները...»¹³: Հայերը շուտով թերակղզու հարավ-արևելքից տարածվում են դեպի հյուսիս-արևմուտք՝ Խերսոն, Կաֆա (այժմյան Թեոդոսիան), Թավրիդ՝ վենետիկցիներից և հույներից հետո դառնալով երրորդն արհեստագործության և առևտրի մեջ, իսկ Դրիմի Սուդակ քաղաքն ընդհանրապես անվանում էին «Մերձծովյան Հայաստան»¹⁴:

Չնայած պարբերական դարձած քոչվորական հարձակումներին, առևտրային հարաբերությունները շարունակում էին 12-13-րդ դարերում. «անգամ Թաթարական արշավանքը Վոլգայով առևտրի աշխուժացում առաջացրեց»¹⁵: Ռուսիայի առևտրական նավերը շարունակում էին նավարկել Վոլգայի հոսանքով, «իսկ այդ նույն ժամանակ Վոլգայով գնում էին Թաթարական, Հայկական, Բուլղարական նավեր...»¹⁶: Հայ վաճառականների մասին հիշատակությունները, տեղեկություններն անհամեմատ հաճախակի են դառնում 14-րդ դարին վերաբերող պատմագիտական նյութերում, ինչը խոսում է հայ-ռուսական արդեն կայուն առևտրային կապերի մասին: Հայերը, օտարերկրյա վաճառականների միջնադարյան առևտրի «կանոնների» համաձայն, պարտավոր էին բնակվել քաղաքի (Նիժնի Նովգորոդ, Պսկով) հիմնական սահմաններից դուրս՝ հարակից արվարձաններում¹⁷, ինչը մի կողմից գոյուշավորություն էր օտարերկրյա վաճառականների հանդեպ, մյուս կողմից էլ՝ վտանգավոր էր հենց վաճառականների համար: Նիժնի Նովգորոդ քաղաքում հայ առևտրականների հետ կապված մի միջադեպի է անդրադառնում հին ռուսական քաղաքացիական իրավունքի դոկտոր, պատմաբան Ի.Դ.Բելյանը «Рассказы из Русской истории. (Кн.2) История Новгорода Великого отъ древнейших временъ до падения» աշխատության մեջ. 1366 թվականին պովոլնիկների¹⁸ արշավախումբը՝ Նովգորոդի երիտասարդ բոյար Ալեքսանդր Ավագունովիչի գլխավորությամբ, հասնում է մինչև բուլղարական Ժուկոտին քաղաքը, գրավում այն, «իսկ վերադարձի ճանապարհին ներխուժում է Նիժնի Նովգորոդ, այնտեղ ծեծի է ենթարկում Թաթարական, Հայկական և Բեսերմենական¹⁹ բազմաթիվ վաճառականների, նրանց ապրանքները թալանում է, իսկ նավերը՝ որոշները խորտակում է, որոշները՝ վառում»²⁰: Հետաքրքիր է այն փաստը, որ Մոսկովյան իշխան Դմիտրի I Իվանովիչի (1359-1389թթ.) զայրույթը մեղմելու համար Նովգորոդյան պատվիրակությունը համոզում էր նրան, որ «թալանել

¹³ **Попов А.Н.**, сборник славянских и русских сочинений и статей, внесенных в хронографы русской редакции, Тип. А. И. Мамонтова и К, Москва, 1869, с. 58.

¹⁴ **Кулаковский Ю.А.**, Прошлое Тавриды, тип. Товар.И.Н.Кушнерев, Киев, 1906, с. 103., **Якобсон А.Л.**, Средневековый Херсонес XII-XIV вв., Изд. «Наука», Москва-Ленинград, 1960, с. 105, 119., **Григорян В.**, История армянских колоний Украины и Польши, Изд. АН Армянской СССР, Ереван, 1980, с.49, 51, 208.

¹⁵ **Кондраков Н.П.**, Русскиеклады: исследование древностей великокняжеского периода, Изд. Императорской археологической комиссии, СПб, 1896, с. 28.

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ **Кулишер И.М.**, История русского народного хозяйства, т. 1, Москва, 1925, с.32.

¹⁸ Պովոլնիկներ – Հին Նովգորոդի «ազատ» բնակիչներ, ովքեր մտնում էին զինված դրուժինաների մեջ, որոնք զինվում էին Նովգորոդյան վաճառականների և բոյարների կողմից, զբաղվում էին թալանով և առևտրով:

¹⁹ «Բեսերմեն» կամ «բեսերման» Հին Ռուսիայում սկզբից անվանում էին թաթարներին, ապա թաթար հարկահավաքներին, իսկ լայն գործառնամբ այդ տերմինը օգտագործում էին «այլադավան» իմաստով:

²⁰ **Беляев И.Д.**, Рассказы из Русской истории.Кн.2: История Новгорода Великого отъ древнейших временъ до падения, Москва, 1964, с. 450.

են միայն այլահավատներին, և Մոսկովյան հյուրերին չեն էլ դիպել, իսկ իշխանը գոհ այդ բացատրությունից, հետ նահանջեց...»²¹: Եզրակացությունն ակնհայտ է՝ մինչև 14-րդ դարը Հին Ռուսիայի տարածքում հայ վաճառականների անվտանգությունը երաշխավորող ոչ մի պայմանավորվածություն չկար. չնայած ռուսների հետ նույն դավանանքի լինելու հանգամանքին՝ նրանք իրավական նույն աստիճանակարգում էին, ինչ, օրինակ, թաթարները, այնինչ, նույն այդ ժամանակաշրջանում Լեհաստանում հայ վաճառականներն ունեին տեղացիներին հավասար իրավունքներ և «հայերին թույլատրվում էր դատվել տեղի բոլոր օրենքներով»²²:

Մոնղոլական կայսրության ժամանակաշրջանում հայերը, զուրկ սեփական պետությունից ու սփռված տարբեր երկրներում, ոչ միայն աշխույժ առևտրային հարաբերություններ ունեին Հյուսիսի հետ, այլև եվրոպացիների հետ զուգահեռ անմաս չէին միասնորենական առաքելություններից: Այս մասին բացի գրավոր տեղեկություններից կան վավերագրական նյութեր²³, ինչպես, օրինակ, հայատառ տապանաքարերը Վոլգայի վրա գտնվող Բուլդար քաղաքում²⁴:

Ռուս եկեղեցական պատմաբան, հնագետ Ս.Ա.Բելոկուրովի «Сношение России с Кавказом» աշխատության մեջ հանդիպում ենք հետաքրքիր վերլուծության առ այն, որ 15-րդ դարում անհամեմատ ընդլայնվում են «ժողովրդական գիտելիքները Կովկասյան արևելքի երկրների ու քաղաքների մասին»²⁵: Հեղինակը, խոսելով մոնղոլական արշավանքների ավերիչ հետևանքների մասին, միաժամանակ ընդգծում է, որ «Հորդայի շնորհիվ» ռուսներն «էապես հանդիպեցին» Կովկասի ժողովուրդների հետ, ծանոթացան նրանց կենցաղին, Կովկասյան ժողովուրդներն էլ իրենց հերթին նոր հանգամանքներում առավել սերտ շփումներ հաստատեցին ռուսների. «Իրենց հերթին Կովկասյան ժողովուրդները, որոնք նվաճվել էին մոնղոլների կողմից, մասնակցում էին Թաթարների արշավանքներին, այդ թվում՝ դեպի Ռուսիա»²⁶:

Եվ այսպես, 11-ից մինչև 15-րդ դարը ձևավորված և հիմնավորված Հին Ռուսիայի հայկական գաղթավայրերը ոչ միայն պահպանում էին կապը մայր հայրենիքի հետ, այլև դառնում են հայ-ռուսական կապերի կարևոր օղակներ՝ ստանալով ինքնավար համայնքների իրավունքներ: Ռուս պատմաբան, սլավոնագետ, հնագետ Բ.Ա.Լիննիչենկոն իր «Черты из истории сословий в Юго-западной (Галицкой) Руси XIV-XV в.» հիմնարար աշխատության մեջ ոչ միայն մանրակրկիտ անդրադառնում է Ռուսիայում հայերի իրավունքներին, հայկական գաղութների կարգավիճակին, այլև համապարփակ գնահատական է տալիս հայ-ռուսական առևտրատնտեսական հարաբերություններում հայերի կատարած դերին. «Միջնադարյան ժամանակաշրջանում Ռուսիայի քաղաքների պատմության մեջ հայերին բավականին երևելի տեղ է

²¹ Նույն տեղում:

²² **Март Н.Я.**, Кавказский культурный мир и Армения, Петроград, 1915, с. 47.

²³ **Бартолд В.В.**, История изучения Востока в Европе и России: Лекции, СПб, 1911, с.75.

²⁴ **Бартолд В.В.**, Место прикаспийских областей в истории мусульманского мира, Баку, 1925, с. 63.

²⁵ **Белокуров С.А.**, Сношение России с Кавказом. Материалы изъятые из Масковского главного архива Министерства иностранных дел, выпуск 1-ый, 1578-1613гг., Москва, 1889, с. 7-8.

²⁶ Նույն տեղում:

պատկանում: Առանց չափազանցության կարելի է անդել, որ Հարավային Ռուսիայի խոշոր առևտրային կենտրոններն իրենց հարստության, փայլի և նշանակության համար հիմնականում պարտական են հայերին: Շնորհիվ այդ տոկուն, ճարպիկ և ձեռներեց ժողովրդի հարավ-ռուսական առևտրային կենտրոնները դարձան միջնորդներ Արևելքի և Արևմուտքի միջև առևտրում»²⁷: Արևելքի առևտրային ճանապարհներին ու կենսաձևին քաջածանոթ լինելով, արևելյան լեզուներին ու զինական արվեստին լավ տիրապետելով, «անձնական քաջությունից զուրկ չլինելով»²⁸, հայերն արագ հանձն առան Արևելքի և Արևմուտքի միջև ցամաքային առևտուրը, իսկ Ղրիմում իտալացիների գաղութի անկմամբ «այն իրենց ճարպիկ ձեռքերում կենտրոնացրին»²⁹:

Եթե Բյուզանդական տիրապետության, սելջուկների ոտնձգությունների, թաթար-մոնղոլների արշավանքների հետևանքով Հայաստանը թուլանում է և մասնատվում, ապա դրան զուգահեռ Ռուսաստանում միավորվում են ֆեոդալական մասնատվածության շրջանում մեկուսացած առանձին իշխանությունները, ստեղծվում է կենտրոնացված պետություն: Ռուս պատմաբան Մ.Ն.Կարամզինը նկատում է, որ այս շրջանում Ռուսիան անվտանգ է համարվում օտարագրի վաճառականության, այդ թվում և հայերի համար. «Վաճառականները խաղաղ ճանապարհորդում էին... Հույները, հայերը, հրեաները, մորավները, վենետիկցիները ապրում էին Կիևում, հրապուրված ապրանքների մեծաքանակությամբ և ռուսների հյուրընկալությամբ, վերջիններս թույլատրում էին նրանց դավանքը և հանդիսավորությամբ պատարագներ անելու, միայն չվիճել հավատի հարցերի շուրջ»³⁰: Ոչ միայն հայրենիքից արտագաղթող հայերն էին նախընտրում բնակություն հաստատել օրեցօր հզորացող Ռուսիայի զարգացող, խոշորացող հայկական համայնքներում, այլև ռուս իշխանականներն իրենց հերթին ի դեմս հայերի տեսնում էին օրինապահ, «իրենց իսկ կամոք գանձարանին զգալի եկամուտներ վճարող, հավատարիմ և սիրալիր»³¹ հպատակների. «Իշխան Դանիլը³², ամրացնելով իր քաղաքները, բնակեցնում էր դրանք գերմանացիներով, լեհերով, հայերով, հրեաներով, որը չէր կարող ազդեցություն չունենալ երկրի ապագա ճակատագրի վրա»³³: Ստեղծված իրավիճակը հակասական ու երկակի էր. մի կողմից՝ հայրենիքից դուրս զարգացող համայնքներում անվտանգ ու բարվոք կյանք գտնելու նպատակով հայությունը հեռանում էր պատմական հայկական հողերից, արտագաղթում՝ հայրենիքը զիջելով քոչվոր ցեղերին, մյուս կողմից՝ հայրենիքում դժվարին կացության մեջ ապրող հայության մոտ հույս է ծագում հայ համայնքների և նրանց հովանավոր պետությունների միջոցով ազատվել օտարի լծից: Ռուսահայ գաղութների տնտեսապես հզորացումը, հայրենիքի հետ կապերի աշխուժացումը

²⁷ Линниченко И.А., Черты из истории сословий в Юго-западной (Галицкой) Руси XIV-XV в., Москва, 1894, с. 219-220.

²⁸ Նույն տեղում:

²⁹ Նույն տեղում:

³⁰ Карамзин М.Н., История государства Российского, т. III, СПб, 1894, с. 123-124.

³¹ Линниченко И.А., указ. соч., с. 223.

³² Խոսրը Դանիլ Ալեքսանդրովիչ Մոսկովյան իշխանի (1277-1303թթ.) մասին է, Ալեքսանդր Նևսկու կրտսեր որդին, Ռյուրիկովիչների Մոսկովյան ճյուղի հիմնադիրը:

³³ Соловьев С.М., Сочинения, кн. II, Москва, 1988, с.183.

հնարավորություն են ընձեռում Ռուսաստանի հետ քաղաքական կապերի ստեղծման առաջին փորձերը կատարելու, նրա օգնությամբ հակաթուրքական ճակատ ստեղծելու համար, առավել ևս երբ թուրքերը Բյուզանդական կայսրությունը կործանելուց հետո 1475 թվականին մտնում են Ղրիմ՝ Կաֆա և Սուդակ՝ իշխանությունը Ղրիմում հանձնելով թուրքամետ Մենգլը Գիրեյին³⁴։ Թուրքական վտանգի առջև կանգնած էին Մոսկվայի և՛ թշնամիները, և՛ դաշնակիցները³⁵։

Ռուսիայի թագավոր Իվան 3-րդին (1440-1505թթ.) ուղղված 1483 տարով թվագրվող³⁶ «վրացական հողերի իվերական թագավոր Ալեքսանդրի»³⁷ նամակով առաջին փորձն է կատարվում քաղաքական կապ հաստատելու Ռուսիայի հետ³⁸՝ թուրք-պարսկական լծից ազատվելու նպատակով, ստանալու ռուսական «Մեծ ցարի և Մեծ տիրակալի» հովանավորչությունը³⁹, իսկ նման առաքելությունը զլուխ բերելու համար վրացա-կախեթական դեսպաններին «ընկերակցում էր» նուխեցի (շաքեցի) հայազգի վաճառական Խոզե (Խոջա) Մարումը⁴⁰։ Վրացական դեսպանությունը ռուսական կողմի մոտ պաշաճ հետաքրքրություն առաջացրեց մերձկասպյան տարածաշրջանի և Կովկասի ժողովուրդների հանդեպ, սակայն վերահաս ռուս-լիտվական պատերազմի պայմաններում (1487-1494թթ.) դաշնակցային հարաբերությունները «սուլթանի հետ դարձան անհրաժեշտություն մոսկովյան արտաքին քաղաքականության հաջողության համար»⁴¹։ 1483 թվականի այդ պատվիրալության առնչությամբ առկա հակիրճ, թերի տեղեկություններն, այնուամենայնիվ, մի քանի կարևոր *позыв* ունեն.

³⁴ *Տե՛ս մանրամասներ՝ Смирнов В.Г., Крымское ханство под верховенством Османской порты до начала XVIII века, СПб, 1886, с. 347-348.*

³⁵ *Базилевич К.В., Внешняя политика русского централизованного государства: вторая половина XV века, Москва, 1952, с. 414.*

³⁶ *Русский феодальный архив XIV- первой трети XVI, под ред. В.И.Буганова, Москва, 1987, с. 238.*

³⁷ *ПСРЛ, т. VIII (Продолжение летописи по воскресному списку), СПб, 1859, с. 224.*

³⁸ «Գրամոտայում» նշված է 6991 թվականը, այսինքն՝ 1483 թվական, չնայած հետագա աղբյուրներում հանդիպում ենք 7000 թվականը, այսինքն՝ 1492, սակայն վերջիններում վրացական դեսպանը հիշատակվում է Մուրատ անունով, իսկ նամակի պահպանված տեքստում դեսպանորդներ են «Նարիմանը, Դամիյանը» և «նրանց ընկերակցող Խոզե Մարումը»։ փաստացի սա վրացա-ռուսական քաղաքական հարաբերակցության գրավոր հիշատակված հայտնի առաջին փորձն է։

³⁹ *Базилевич К.В., указ. соч., с. 410.*

⁴⁰ Որոշ պատմաբաններ գտնում են, որ խոսքը Ալ-կոյունլուների տիրակալ Ուզուն Հասանի կողմից Վենետիկ ուղարկված դիվանագիտական առաքելության դեկավար, հայազգի վաճառական Խոջա Միրաբի մասին է (1406-1486թթ.) տես՝ **Հակոբյան Հ.**, Ուղեգրություններ. ԺԳ-ԺԶ դար (1253-1582), Հ, Ա, Երևան, 1932, էջ 156-213), սակայն մենք հնարավոր չենք համարում Խոջա Միրաբի 1483 թվականին Ռուսիայի մայրաքաղաք Մոսկվայում գտնվելը, քանի որ նախ՝ նրա մասնակցությամբ պատվիրակություն Վենետիկի Սիկիլիո թագավորի մոտ ընդունելության էր 1470-1471թթ. և այնտեղից վերադարձել է Թավրիզ, ապա՝ 1483 թվականին Խոջա Միրաբը 80-ին մոտ տարիքն առած գառավալ ծերունի էր, երկարատև ճանապարհորդությունների համար անպատրաստ և ով 1486 թվականի մարտի 24-ին սպանվել է Թավրիզում թուրքի կողմից (տես՝ **Тер-Саркисянц А.**, *История и культура армянского народа с древнейших времен до начала XIX в., М., Издат. РАН, 2008. С. 289, Պապյան Ա.Ա.*, Ալ-Կոյունլուների պետությունը միջազգային հարաբերություններում ոլորտում և հայերը, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1993, էջ 106-107)։

⁴¹ **Теплов В.**, *Русские представители в Царьграде (1496-1891), СПб, 1891, с. 2.*

❖ այդ պահին Ռուսիայի հետ դիվանագիտական հարաբերությունների ձևավորման նախաձեռնությունը գալիս է կովկասյան, մերձկասպյան ժողովուրդներից,

❖ արդեն իսկ շեշտադրվում էր Ռուսիայի հետ նույնադավան՝ քրիստոնյա լինելը՝ Իվան 3-րդին համարելով «քրիստոնեության հույս», նրան դիմելով «մեր հավատի ամրոց, ամենալուսաշող տիրակալ» մեծարանքով,

❖ օրեցօր հզորացող և իր արտաքին սահմաններն ընդարձակելու հավակնություններ ցուցաբերող Ռուսիան դիտարկվում է որպես «բոլոր տիրակալների ապավեն, օրենք և հույս», ինչը մատնանշում է Ռուսիայի հովանավորչությունը, օգնությունը հայցելու կանխատրամադրվածությունը:

15-րդ դարավերջում Կովկասի և մասնավորապես Հայաստանի առնչությամբ Ռուսիայի արտաքին քաղաքականության հետաքրքրությունների գնահատականն ամփոփված է խորհրդային պատմաբան Կ.Վ.Բազիլևիչի համապարփակ մեկնաբանության մեջ. «Իվան 3-րդի ազդու և հաջողակ քաղաքականությունը հարևան արևելյան ժողովուրդների մոտ առաջացրին Ռուսական պետության ուժի և հեղինակության աներկբա ընդունում, ճանաչում»⁴²:

Ռուսական տերության հզորացումը, սահմանների ընդարձակումը հարավում՝ Կազանի, Աստրախանի միացումը մի կողմից վտանգում էին Թուրքիայի և Պարսկաստանի սահմանների անձեռնմխելիությունը, վտանգում արևելք-արևմուտք առևտրային ճանապարհները, Կազանի ու Աստրախանի իսլամադավանների հետ միավորման նպատակները, մյուս կողմից էլ հպատակ քրիստոնյաների մեջ օտար լծից ազատվելու հույսեր էին առաջացնում: Ռուսաց Իվան IV Ահեղ (1530-1584թթ.) ցարի օրոք Ֆեոդոր Իվանովիչ (1584-1598թթ.), Բորիս Գոդունով (1598-1605թթ.) թագավորների օրոք վրաց իշխանների նորանոր դիմումներին մասնակից էին նաև հայերի ներկայացուցիչները: Սա արդեն ռուս-հայկական հարաբերությունների ժամանակագրական և որակական նոր փուլի նախերգանքն էր:

ИСТОКИ РАЗВИТИЯ РУССКО-АРМЯНСКИХ ОТНОШЕНИЙ В РУССКОЙ ИСТОРИОГРАФИИ. Ч. II (11-15-ые века) - ЭЛИНА МХИТАРЯН - В статье представляются редкие упоминания об армянах и Армении в русской летописи и в русских историографических трудах 11-15-ого веков, продолжая хронологическую логику первой части статьи с тем же названием. На основе богатого, вновь открытого материала русских источников, широко известные проблемы и вопросы армянской истории анализируются совершенно под другим углом, что и помогает выявить важность внешней политики Руси в Закавказье на восходе политической активности в этом регионе.

При изучении поставленных в рамках темы проблем использовались общенаучные методы, а также индивидуальные /частные/ или специальные методы - диалектические, логические, исторические, сравнительно-исторические, аналитические, статистические и системные.

⁴² *Базилевич К.В., указ. соч., с. 413.*

Ключевые слова: военное сотрудничество, армяно-русские отношения, Русь, эмиграция, торговые связи, миссионеры, торговцы.

THE ORIGINS OF DEVELOPMENT OF RUSSIAN-ARMENIAN RELATIONS IN RUSSIAN HISTORIOGRAPHY. P II (11-15 centuries) – ELINA MKHITARYAN -The article presents rare references to Armenians and Armenia in Russian chronicles and Russian historiographical works of the 11th-15th centuries, continuing the chronological logic of the first part of the article with the same title. Based on the rich, new material of Russian sources, well-known problems and issues of Armenian history are analyzed from a completely different angle, which helps to reveal the importance of Russian's foreign policy in the Transcaucasia at the dawn of political activity in this region.

In comprehensive research of problems, posed under the theme, have been used general scientific methods - dialectical, logical, historical, as well as individual / partial / or special methods, such as legal-comparative, comparative historical, analytical, statistical and systemic.

Keywords: military relations, Armenian-Russian relations, Rus', emigration, trade relations, missionaries, merchants.

**ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐՂՐՈՒՄՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՀՀ-Ի
ՆԵՐՂՐՈՒՄԱՅԻՆ ՃԻՇՏ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԳՐԱՎԱԿԱՆ**

Հոդվածում ուսումնասիրվում է ՕՈւՆ-երի ներգրավման նպատակով երկրների կողմից ճիշտ ռազմավարության մշակման և իրականացման կարևորությունը: Քննարկվում է ճիշտ ռազմավարության մշակման նպատակով անհրաժեշտ հարցադրումների անհրաժեշտությունը և բացահայտվում են տվյալ հարցադրումներն ու տրվում վերջիններիս համապարփակ և հիմնավորված պատասխանները: Հաշվի առնելով օտարերկրյա ուղղակի ներդրումների նվազման միտումները՝ ռազմավարության մշակման անհրաժեշտությունը գնահատվում է բարձր, քանի որ ՕՈւՆ-երը բավարար չէ միայն դիտարկել երկրների համար աշխատատեղերի ստեղծման կամ ներդրված գումարների հոսքի տեսանկյունից, այլև անհրաժեշտ է դիտարկել ՕՈւՆ-երի ուղղակի և անուղղակի ազդեցությունները երկրի կյանքի այլ ասպեկտների վրա ևս: Արդյունքում կարող ենք ասել, որ Հայաստանը կարող է դառնալ ՕՈւՆ-ների ներգրավման իրական հարթակ, սակայն հրատապ է ճիշտ ռազմավարության մշակումն ու իրականացումը:

Բանալի բառեր. օտարերկրյա ուղղակի ներդրումներ, անդրազգային կազմակերպություն, ներդրումային միջավայր, ռազմավարություն, գերակա ոլորտներ, ներդրումային քաղաքականություն, ներդրումային ռեժիմ, ՏՏ, գյուղատնտեսություն, վերականգնվող էներգետիկա:

Ներածություն: Յուրաքանչյուր երկրի ներդրումային միջավայրի առաջին և ամենակարևոր ցուցանիշն օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերն են: Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին նկատվում է ներդրումային դաշտի գրավչության անկում, ինչն են վկայում ինչպես օտարերկրյա ներդրումների կրճատման ծավալները, այնպես էլ միջազգային փորձագիտական գնահատականները: Հետևաբար, պետք է ճիշտ և հետևողական քայլեր ձեռնարկել ներդրումային քաղաքականության մշակման և իրականացման ուղղությամբ: Առաջնահերթ անհրաժեշտ է հաշվի առնել այն փաստը, որ ՕՈւՆ-երի ոլորտում գործում են երկու հիմնական դերակատարներ՝ անդրազգային կազմակերպությունները, որոնք իրականացնում են ներդրումները, և երկրները (հաճախ ներկայանում են ներդրումների խթանման գործակալությունների միջոցով), որոնցում կատարվում են այդ ներդրումները (UNCTAD, 2021, 7)¹: Տվյալ համագործակցության շրջանակներում չափազանց մեծ դեր

¹ UNCTAD, TRANSNATIONAL CORPORATIONS INVESTMENT AND DEVELOPMENT, 2021, 7.

Է հատկացվում ներդրումների խթանման գործակալություններին, որոնք լիազորվում են ներդրումների հետ համատեղ աշխատանքի միջոցով ոչ միայն աջակցում են ներդրող ընկերություններին իրենց ներդրումային առաջին քայլերն անել տվյալ երկրում, այլև ներկայացնում են երկիրը՝ նոր օտարերկրյա ներդրումներ ներգրավելու նպատակով (OECD and IDB, 2018, 9)²: Ընդհանուր քաղաքականության մշակման նպատակով անհրաժեշտ է ունենալ ՕՈՒՆ-երի պատմության և զարգացման միտումների վերաբերյալ լավ գիտելիքներ, ինչպես նաև կարողանալ համապատասխան գնահատել տվյալ երկրի ներդրումային ներուժը՝ օտարերկրյա ներդրումների ներգրավման տեսանկյունից:

Մեթոդաբանություն: Մույն հետազոտության հիմնական նպատակը ներդրումային ճիշտ քաղաքականության մշակման համար մոտեցումների ներկայացումն է՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման նպատակով: Հոդվածի համար որպես գիտական հիմք են ծառայել ներդրումային ոլորտի առնչությամբ հայ և օտարերկրյա հեղինակների գիտական աշխատություններն ու վերլուծությունները, իսկ որպես տեղեկատվական հիմք՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող պաշտոնական հաշվետվությունները և տվյալները, Համաշխարհային բանկի և այլ միջազգային կառույցների կողմից հրապարակվող զեկույցները:

Գրականության ակնարկ: Ներդրումային ոլորտի ճիշտ քաղաքականության իրականացման և ներդրումային միջավայրի բարելավման և ընդհանուր ներդրումներ հասկացության վերաբերյալ առկա են գիտական լուրջ միջազգային հետազոտություններ և ուղեցույցներ, ինչպես նաև մասնագիտական տարբեր գնահատականներ: Ըստ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի՝ օտարերկրյա ներդրում է համարվում գույքի ցանկացած տեսակ, այդ թվում՝ ֆինանսական միջոցներ և մտավոր արժեքներ, որն օտարերկրյա ներդրողի կողմից անմիջականորեն ներդրվում է ՀՀ տարածքում իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության ոլորտում՝ շահույթի (եկամտի) ստացման կամ այլ օգտակար արդյունքի հասնելու նպատակով (ՀՀ օրենք, 1994)³: Միևնույն ժամանակ, միջազգային փորձի տեսանկյունից «Ներդրում» (կապիտալ ներդրում) տերմինը սովորաբար օգտագործվում է կա՛մ որպես հիմնական կապիտալի մեծացման, դրա պահպանման ուղղությամբ կատարվող ծախսերի հոսքի, կա՛մ այլ բարիքների արտադրության համար նախատեսվող ծախսերի հոսքի իմաստով (W. Pearce, 1997, 258)⁴: Համաձայն մեկ այլ տեսակետի՝ ՕՈՒՆ-ը ներդրում է կազմակերպության կամ ֆիզիկական անձի կողմից մեկ այլ երկրում, որտեղ չի գտնվում իր կենսական շահերի սկզբնական կենտրոնը (Maitena Duce, 2003, 1)⁵: Հայտնի մեկ այլ հասկացություն է առաջ քաշվում առ այն, որ տնտեսագիտությունը ներդրումները սահմանում է որպես ներկա կատարված ծախսերի ապագա փոխհատուցում (Avinash Dixit & Robert Pindyck, 1994, 1)⁶:

² OECD and IDB, *Mapping of Investment Promotion Agencies in OECD countries*, 2018, 9.

³ 1994 թվականի հուլիսի 4-ին ընդունված «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենք:


⁴ David W. Pearce, *The Macmillan Dictionary of Modern Economics*, 1997, 258 page.

⁵ Maitena Duce, *Definitions of Foreign Direct Investment (FDI): a methodological note*, July 31, 2003, 1.

⁶ Avinash Dixit & Robert Pindyck, 1994. *Investment under Uncertainty*. Princeton Univ. Press, 1.

Սահմանումն ընկալելուց հետո արդեն կարելի է մեր առջև հարց դնել՝ «Ինչպե՞ս բարձրացնել ՀՀ ներդրումային միջավայրի գրավչությունը ճիշտ ներդրումային քաղաքականության իրականացման միջոցով»:

Վերլուծություն: Ներդրումների խթանումը Հայաստանի Հանրապետության տնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններից մեկն է, որը ենթադրում է օտարերկրյա ներդրողների համար արտոնությունների ստեղծում, որն իր հետ կրերի երկրի արտահանման ավելացում ու գործազրկության մակարդակի նվազեցում, ներդրումների և բիզնեսի համար բարենպաստ միջավայրի ստեղծում, կարգավորող համակարգի թափանցիկության բարձրացում և ՀՀ-ում կայուն տնտեսական աճի ապահովում (ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգը, 2015)⁷: Մինևույն ժամանակ, ՀՀ-ն ներկայումս հայտարարել է «բաց դռների» ներդրումային քաղաքականության մասին, որը երկրին զարգացող երկրների շրջանում դարձնում է ամենաբաց ներդրումային ռեժիմներից ունեցող երկրներից մեկը: Սակայն այս ամենը դեռևս իր արդյունքները ցույց չի տալիս ՕՈՒՆ-երի էական աճ գրանցելու տեսանկյունից: Ստորև ներկայացված է ՕՈՒՆ-երի փոփոխությունը Հայաստանում 2001-2019թթ.:



Պատկեր 1. ՕՈՒՆ-ը ՀՀ-ում 2001-2019թթ.: (ՀՀ վիճակագրական կոմիտե, ԱՄՆ դոլար)⁸

2008թ. համաշխարհային ճգնաժամից հետո ՕՈՒՆ-երի մակարդակի վերականգնումը ՀՀ-ում բնավ տեղի չի ունենում, ինչի պատճառ են հանդիսանում այն խորքային խնդիրները, որոնց բացահայտմանն ուղղված քայլերի արդյունավետ իրականացումը չի հաջողվում պատշաճ ներդրումային քաղաքականության բացակայության պատճառով:

Քանի որ ՕՈՒՆ-երն ինքնանպատակ չեն, այլ ենթադրում են իրական տնտեսական զարգացման ուղի, ապա անհրաժեշտ է հասկանալ հետևյալ հարցերի պատասխանները ներդրումային քաղաքականություն մշակելիս՝

- 1) Օտարերկրյա ներդրումների ո՞ր տեսակներն են օպտիմալ երկրի համար,
- 2) Ինչպիսի՞ ոլորտային առավելություններ կան ՀՀ-ում ներդրումներ իրականացնելու համար,

⁷ ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգը և սույն հայեցակարգից բխող միջոցառումների ժամանակացույցը, ՀՀ կառավարության հոկտեմբերի 8-ի նիստի N45 արձանագրային որոշում:

⁸ ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված տվյալները ՕՈՒՆ-երի գուտ հոսքերի վերաբերյալ:

- 3) Ո՞ր երկրների կազմակերպությունների համար կարող է ՀՀ-ն հետաքրքիր թվալ ներդրումների իրականացման տեսանկյունից,
- 4) Ինչպիսի՞ն պետք է լինի կառավարության քաղաքականությունը երկարաժամկետ կտրվածքով՝ ներդրումների հոսքն ապահովելու համար (Вдовин И.А., 2008, 1-3):

Որպես առաջին հարցին ի պատասխան պետք է ընդունել, որ անցումային զարգացող տնտեսությունները կարող են ներգրավել հիմնականում ռեսուրսների վրա հիմնված ներդրումներ: Սրանք այն ներդրումներն են, որոնք իրականացվում են՝ գնահատելով տվյալ երկրի մրցակցային առավելությունները: Այսպիսով, երկիր, որը հարուստ է բնական ռեսուրսներով ինչպիսին է մետաղական հանքանյութը, գրավում է օտարերկրյա ընկերություններին՝ ոչ միայն հումքի վերամշակման, այլև հանքանյութի տեսքով արտահանման նպատակով: Ռեսուրսների վրա հիմնված ներդրումների երկրորդ տեսակն իրենից ենթադրում է էժան, սակայն մասնագիտացված աշխատուժի առկայությունը տվյալ երկրում, ինչն էական ազդեցություն կարող է թողնել ՀՀ-ի համար՝ ներդրումների ներգրավման տեսանկյունից, քանի որ գրագիտության ցուցանիշով Հայաստանն աշխարհի 64-րդ երկիրն է 189 երկրների մեջ (UNDP, 2020)¹⁰: Հետևաբար, թե՛ ապրանքների (վերամշակված հանքահումքային նյութերի) և թե՛ ծառայությունների տեսանկյունից ՀՀ-ն կարող է գրավիչ լինել օտարերկրյա ներդրողների համար, քանի որ վերջիններս հնարավորություն ունեն կազմակերպելու վերոնշյալների արտահանումը հեշտացված պայմաններով:

Ներդրումային քաղաքականության մշակման հաջորդ կարևորագույն քայլը հիմնական ոլորտների առանձնացումն է: Հայաստանում կան ներդրումային հնարավոր որոշակի ոլորտներ, որոնք կարող են հետաքրքրել օտարերկրյա ներդրողներին: Ներդրումային տարածքների ընտրությունը գործընթաց է, որով ընկերությունը ընտրում է երկիր/տարածաշրջան, ընտրություն է կատարում տնտեսության տարբեր ճյուղերի միջև: Որոշ արտասահմանյան ընկերություններ աստիճանաբար են մուտք գործում երկիր, իսկ մյուսներն ամբողջ հատկացված գումարը ներդնում են մեկ անգամով: Հաշվի առնելով ներդրումային ոլորտների գնահատման հիմնական գործոնները, որոնցից են տվյալ ոլորտում առկա առավելությունները, մուտքի ու ելքի հեշտ հնարավորությունը, ռեսուրսների առկայությունը, պետության կողմից տրամադրվող հարկային, մաքսային և առևտրային հնարավորությունները, ենթակառուցվածքների բավարար մակարդակը՝ կարող ենք առանձնացնել Հայաստանի Հանրապետությունում ներդրումների իրականացման 3 հիմնական և 1 լրացուցիչ ոլորտ՝ Տեղեկատվական տեխնոլոգիաներ, Գյուղատնտեսություն, Վերականգնվող էներգետիկա, Զբոսաշրջություն (լրացուցիչ):

Երկրները պետք է հստակ հասկանան ոչ միայն օտարերկրյա ներդրումների ներգրավման դրական և բացասական կողմերը, այլև իրատեսորեն գնահատեն, թե ինչ

⁹ Вдовин И.А., д.ю.н., Стратегия привлечения инвестиций, 2008, 1-3:

¹⁰ United Nations Development Programme, Education Index 2020.

տեսակի և որ ոլորտներում ներդրումներ կարող են ներգրավել: Դա կարևոր է, քանի որ անիրատեսական ակնկալիքներ ունեցող պետությունները, ամենայն հավանականությամբ, կկորցնեն թանկարժեք ռեսուրսները՝ փորձելով ներգրավել ընկերություններ, որոնք երբեք ներդրումներ չեն կատարելու տարածաշրջանում: Հետևաբար, Հայաստանի Հանրապետության տեսանկյունից առավել արդյունավետ է ներգրավել ներդրումներ հենց վերոնշյալ ոլորտներում:

Ներդրումային քաղաքականության մշակման մյուս խնդիրն է պարզել, թե որ երկրների կազմակերպությունների համար կարող է գրավիչ լինել Հայաստանի Հանրապետությունը: Ներդրումների հիմնական տեսակի և հնարավոր ներդրումային ոլորտները պարզելուց հետո անհրաժեշտ է այնուհետև պարզել, թե որ երկրից պետք է ներգրավել տվյալ միջոցները: Հաշվի առնելով երկրների համապատասխան մասնագիտացումները, երկրների համար հետաքրքրության ներկայացնող ոլորտները, ինչպես նաև Հայաստանի հետ ունեցած մշակութային և պատմական սերտ կապերն ու հայկական մեծ սփյուռքի առկայությունը տվյալ երկրներում՝ կարելի է առանձնացնել ներդրումների ներգրավման հիմնական 3 երկիր՝ Ռուսաստանի Դաշնություն, Գերմանիա և Ֆրանսիա:

Ներդրումային քաղաքականության վերջին, սակայն ոչ պակաս կարևոր կետը երկարաժամկետ կտրվածքով վերոնշյալ կետերի արդյունավետության գնահատումն է: ՕՈՒՆ-երի ներգրավումն իրենից ենթադրում է շարունակական գործընթաց, քանի որ ներդրվող երկրի տնտեսական ցուցանիշները փոխվում են ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային հարթակում տեղի ունեցող փոփոխություններին զուգընթաց: Պետք է հստակ պատկերացում ունենալ ՕՈՒՆ-երի վրա հնարավոր ազդեցություն ունեցող միտումների մասին (օրինակ՝ կրթության կամ ենթակառուցվածքների բարելավում), գնահատել հետագա ջանքերն այդ տեսանկյունից և անհրաժեշտ ճշգրտումներ կատարել ներդրողների հետ աշխատանքի ռազմավարության մեջ:

Այսպիսով, ներդրումների ներգրավման ռազմավարությունը պետք է կառուցվի՝ հաշվի առնելով ոչ միայն այն ոլորտները, որոնք այսօր (այսինքն՝ կարճաժամկետ) հետաքրքրություն են ներկայացնում ներդրողների համար, այլև միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում (ենթադրելով, որ ներդրումային միջավայրը կբարելավվի) հնարավոր հետաքրքիր ոլորտները: Միննույն ժամանակ, քանի որ ՀՀ-ն նպատակ ունի զարգացնել բարձր տեխնոլոգիաների ոլորտը, հետևաբար, ռազմավարությունը պետք է հստակ ուղղված լինի դեպի երկրի արդյունաբերական զարգացում:

Եզրակացություն: Այսպիսով, պատասխանելով Հայաստանի Հանրապետության ներդրումային միջավայրին առնչվող հիմնական 4 հարցերին՝ կարողացանք պարզել, թե օտարերկրյա ներդրումների հիմնական որ տեսակն է օգտակար երկրի համար, ինչպես նաև հնարավորություն ունեցանք բացահայտելու ՀՀ հիմնական ներդրումային ոլորտները, և թե վերջիններս որ երկրների համար կարող են հետաքրքրություն ներկայացնել:

Պարզեցինք, որ Հայաստանին ներդրումների ներգրավման տեսանկյունից

անհրաժեշտ է շեշտը առաջնահերթ դնել ռեսուրսների վրա հիմնված ներդրումների վրա, որոնք բնորոշ են զարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրներին: Հասկացանք, որ Հայաստանում կան որոշ գերակա ոլորտներ, որոնք կարող են իրական հետաքրքրություն ներկայացնել հնարավոր ներդրողների համար, ինչպիսիք են վերականգնվող էներգիան, բարձր տեխնոլոգիաները, գյուղատնտեսությունը և զբոսաշրջությունը, որը, կախված վերջին տարիներին տեղի ունեցող իրադարձություններից, որոշակի անկում է ապրել, սակայն արդեն նկատելի են տվյալ ոլորտի վերականգնման միտումները: Կարողացանք նաև սահմանել այն առաջնահերթ երկրները, որոնցից ակնկալվում են օտարերկրյա ներդրումների հոսքեր: Այդ երկրներն են Ռուսաստանի Դաշնությունը, Գերմանիան և Ֆրանսիան, քանի որ տվյալ երկրների հետաքրքրությունների շրջանակը համընկնում է հայաստանյան հնարավոր ներդրումային ոլորտների հետ, ինչպես նաև տվյալ երկրների հետ Հայաստանն ունի մշակութային և պատմական սերտ հարաբերություններ՝ միաժամանակ կարևորելով այն փաստը, որ այդ երկրներում գոյություն ունի հայկական մեծ սփյուռք:

Ներդրումներ ներգրավելու մոտեցման ճշգրտումը հրամայական է: Կորպորատիվ ներդրողների տարբեր թիրախային խմբերը շուկայավարման յուրահատուկ մոտեցման կարիք ունեն: Պետք է բացահայտել ամենաարդյունավետ մոտեցումները և համապատասխանաբար կարգավորել ռազմավարությունը: Անվիճելիորեն կարևոր է վերագնահատել երկրի ներդրումների խթանման գործակալության կազմակերպչական գործառնությունները և պարտականությունները: Շուկայավարման առաջնահերթությունների փոփոխությունը կարող է պահանջել ճշգրտումներ ֆունկցիոնալ և մասնագիտական պարտականությունների մեջ:

Այսպիսով, ուսումնասիրելով ՀՀ ներդրումային միջավայրը, ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ Հայաստանը կարող է դառնալ ՕՈՆ-ների ներգրավման իրական հարթակ: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ պարբերաբար պետք է ուսումնասիրել արտասահմանյան գործարար և ներդրումային միջավայրի կարգավորման լավագույն փորձը և այն ներդնել Հայաստանում՝ տեղական առանձնահատկությունները հաշվի առնելով:

РАБОТКА ПРАВИЛЬНОЙ ИНВЕСТИЦИОННОЙ ПОЛИТИКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В ОТНОШЕНИИ ПРЯМЫХ ИНОСТРАННЫХ ИНВЕСТИЦИЙ, КАК ГАРАНТИЯ ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА - ЗАВЕН МЕЛИКДЖАНЫН - В этой статье исследуется потенциал страны для разработки и реализации правильных стратегий привлечения ПИИ. Обсуждается необходимость важных вопросов для выработки правильной стратегии, уточняются заданные вопросы и на последние даются обоснованные ответы. Учитывая тенденцию к сокращению прямых иностранных инвестиций в РА, потребность в разработке стратегии высока, поскольку ПИИ недостаточно рассматривать только с точки зрения создания рабочих мест или денежных потоков для стран, но также и прямое и косвенное влияние ПИИ на другие аспекты страны. В итоге можно сказать, что Армения может стать реальной

площадкой для привлечения ПИИ, но разработка и реализация правильной стратегии не терпит отлагательств.

Ключевые слова: прямые иностранные инвестиции, транснациональные корпорации, инвестиционный климат, стратегия, приоритетные направления.

DEVELOPMENT OF THE CORRECT INVESTMENT POLICY OF THE REPUBLIC OF ARMENIA IN RELATION TO FOREIGN DIRECT INVESTMENT AS A GUARANTEE OF ECONOMIC GROWTH - ZAVEN MELIKJANYAN - This article explores the potential of countries to design and implement the right strategies for attracting FDI. The necessity of important questions for the development of the correct strategy is discussed, the questions asked are clarified and substantiated answers are given to the latter. Given the downward trend in foreign direct investment in Armenia, the need for strategy development is high, since FDI is not considered only in terms of job creation or cash flows for countries, but also the direct and indirect impact of FDI on other aspects of the country. As a result, we can say that Armenia can become a real platform for attracting FDI, but the development and implementation of the right strategy is urgent.

Keywords: Foreign direct investment, transnational corporations, investment climate, strategy, priority areas.

ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ, ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Յուրաքանչյուր երկրի տնտեսական աճի կարևոր նախապայմաններից մեկը զարգացած աշխատաշուկայի առկայությունն է, որի ձևավորման համար անհրաժեշտ է աշխատանքային ներուժի ընդլայնում և արդյունավետ օգտագործում: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է արձանագրել, որ աշխատանքի շուկաները ներկայումս գլոբալ և տեղական մակարդակով կառուցվածքային վերափոխումների են ենթարկվում, ինչի պատճառով բավականին դժվարություններ են առաջանում վերջիններս ավանդական մոտեցումներով կառավարելը: Հետևաբար, ստեղծված խնդիրների լուծման լավագույն տարբերակը նոր ու ստեղծագործ մոտեցումների կիրառումն է, ինչի շնորհիվ յուրաքանչյուր երկիր հնարավորություն է ստանում ընդգծել սեփական զարգացման հեռանկարները երկարաժամկետ կտրվածքով: Վերջիվերջո աշխատանքի շուկան իրենից ենթադրում է տնտեսական և իրավական երևույթների մի համախումբ, որը թույլ է տալիս մարդկանց փոխարինել իրենց ունակությունները համապատասխան վարձատրությամբ, որը վերջիններս կարող են օգտագործել սեփական կարիքների համար ապրանքներ կամ ծառայություններ ձեռք բերելու համար:

Բանալի բառեր. աշխատաշուկա, աշխատանքային ռեսուրս, աշխատուժ, զբաղվածություն, գործազրկություն, վարձու աշխատող, տեղեկատվական տեխնոլոգիաներ, տնտեսական աճ, ներուժ, մասնագիտություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ըստ ՄԱԿ-ի կողմից տրված սահմանման՝ աշխատանքը ցանկացած տարիքի և սեռի անձանց կողմից իրականացվող ցանկացած գործունեությունն է, որի նպատակն է արտադրել ապրանքներ կամ տրամադրել ծառայություններ՝ սեփական կամ այլոց սպառման համար՝ անկախ աշխատանքի ֆորմալ, ոչ ֆորմալ բնույթից:

Միևնույն ժամանակ յուրաքանչյուր երկրի աշխատաշուկայի ուսումնասիրման պարագայում անհրաժեշտ է տարբերակել մի քանի սահմանումներ, որից առաջինը աշխատանքային ռեսուրս հասկացությունն է, ինչը ենթադրում է աշխատուժի և աշխատուժից դուրս գտնվող բնակչության հանրագումարը: Միաժամանակ աշխատուժն իրենից ենթադրում է զբաղվածների և գործազուրկների հանրագումարը¹:

Աշխատանքի շուկան իրականում անհրաժեշտ է դիտարկել որպես աշխատանքի առաջարկի և պահանջարկի շուկայական հարաբերությունների համախումբ, որը համակարգում է գործատուի և աշխատողի միջև ծագող աշխատանքային հարաբերությունները, որոնք առնչվում են աշխատանքի տարբեր բնագավառներին:

¹ <https://armstat.am/file/doc/99528083.pdf>

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետությունում աշխատաշուկայի առկա վիճակն ուսումնասիրելով՝ հասկանալ վերջինիս հիմնական միտումներն ու զարգացման հեռանկարները՝ ընդգծելով վերոնշյալի կարևորությունը:

Հոդվածի համար որպես գիտական հիմք են ծառայել Հայաստանի աշխատաշուկայի վերաբերյալ հայ հեղինակների կողմից իրականացված գիտական աշխատություններն ու վերլուծությունները, իսկ որպես տեղեկատվական հիմք՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող պաշտոնական հաշվետվությունները և տվյալները, զեկույցները, որոնք հնարավորություն են տալիս ոչ միայն հասկանալու աշխատաշուկայում ստեղծված վիճակը, այլև իրականացնելու հետազոտություններ և կանխատեսումներ ապագայում ոլորտին սպասվող հեռանկարների վերաբերյալ:

ԱՆԽԱՏԱՀԱՏՈՒՄՈՒՄ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ստորև ներկայացված են ՀՀ աշխատանքի շուկայի հիմնական ցուցանիշները եռամսյակներով՝

	2020թ.			2021թ.			2021թ. /2020թ. փոփոխությունը		
	I	II	III	I	II	III	I	II	III
	1 000 մարդ						%		
Աշխատանքային ռեսուրսներ	2 097.4	2 157.0	2 069.4	2 023.7	1 948.2	1 975.3	96.5	90.3	95.5
Աշխատուժ (աշխատուժի առաջարկ)	1 178.8	1 245.2	1 247.9	1 136.9	1 167.6	1 182.1	96.4	93.8	94.7
Զբաղվածներ	946.0	1 027.0	1 021.1	943.8	993.0	1 004.8	99.8	96.7	98.4
Գործազուրկներ	232.8	218.2	226.9	193.1	174.6	177.3	82.9	80.0	78.1
Աշխատուժից դուրս բնակչություն	918.6	911.8	821.5	886.8	780.6	793.2	96.5	85.6	96.6

Աղյուսակ 1՝ ՀՀ աշխատանքի շուկայի հիմնական ցուցանիշները, եռամսյակներով: Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե²:

Տվյալներից հստակ երևում է, որ ՀՀ-ում 2021թ.-ին 2020թ.-ի համեմատ նվազել է աշխատանքային ռեսուրսների քանակը, ինչը պատճառ է գործազուրկների թվի նվազման: Ընդ որում, գործազուրկների թվի հաշվարկման հիմքում ընկած է ՄԱԿ-ի մեթոդաբանությունը, որը ենթադրում է, որ գործազուրկ է համարվում այն մարդը, ով հետազոտությանը նախորդող վերջին 4 շաբաթվա ընթացքում (ներառյալ հետազոտվող շաբաթը) միաժամանակ բավարարել է հետևյալ երեք պայմաններին՝

- Զի ունեցել աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք,
- Ակտիվորեն փնտրել է աշխատանք ցանկացած եղանակով
- Պատրաստ է եղել անցնել աշխատանքի առաջիկա երկու շաբաթվա ընթացքում³:

² https://www.armstat.am/file/article/sv_12_21a_141.pdf

³ <https://armstat.am/file/doc/99528083.pdf>

ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԵՍ

Մինևույն ժամանակ, «Զբաղվածության մասին» ՀՀ Օրենքի համաձայն՝ գործազուրկ է համարվում տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը չլրացած՝ աշխատանք փնտրող և սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված գործունեության որևէ տեսակով չզբաղված անձը, որն աշխատանք գտնելու նպատակով հաշվառված է լիազորված մարմնում, պատրաստակամ է անցնելու հարմար աշխատանքի և ստացել է գործազուրկի կարգավիճակ⁴։ Ստորև ներկայացված են սույն մեթոդաբանությամբ գործազրկության ցուցանիշները, որոնք հավաքագրվել և ներկայացվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության կողմից՝

	Աշխատանք փնտրողներ		նրանցից՝ գործազուրկներ	
	ընդամենը, մարդ	%, 2021թ. / 2020թ.	ընդամենը, մարդ	%, 2021թ. / 2020թ.
Հունվար	88 929	104.1	62 193	99.9
Փետրվար	89 896	104.9	63 023	101.9
Մարտ	90 568	105.4	62 974	102.3
Ապրիլ	90 428	105.3	62 447	102.9
Մայիս	90 363	104.1	61 955	102.0
Հունիս	90 330	103.1	61 356	101.9
Հուլիս	90 340	102.4	61 176	101.9
Օգոստոս	90 304	102.0	60 826	101.2
Սեպտեմբեր	89 080	100.6	59 541	99.0
Հոկտեմբեր	87 815	99.4	58 574	96.5
Նոյեմբեր	86 890	98.3	57 690	94.6
Դեկտեմբեր	86 396	98.2	58 153	94.8

Աղյուսակ 2՝ ՀՀ աշխատուժի առաջարկը, 2021թ.։ Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե։

Տվյալ աղյուսակից կարող ենք հասկանալ, որ 2021թ. դեկտեմբեր ամսվա վերջի դրությամբ ՀՀ-ում գործազուրկների ընդհանուր թիվը կազմել է 58 153, որն էականորեն տարբերվում է ՄԱԿ-ի կողմից հրապարակվող տվյալներից (տարբերությունը կազմում է շուրջ 3 անգամ)⁵։

Եվս մեկ անհանգստացնող տվյալ է իրենից ենթադրում զբաղված մարդկանց մեջ վարձու աշխատողների քանակը, որը ցուցադրված է ստորև ներկայացված աղյուսակի միջոցով՝

Կազմակերպություններն ըստ չափի	Կազմակերպությունների թիվը	Ընդամենի նկատմամբ, %	Աշխատողների թվաքանակը, մարդ	Ընդամենի նկատմամբ, %	Աշխատողների միջին թվաքանակը, մարդ	Միջին ամսական աշխատավարձը, դրամ
Ընդամենը						
Ընդամենը	57 067	100	671 552	100	11.8	202 238
1 - 9 աշխատող	47 125	82.6	123 719	18.4	2.6	106 907
10 - 49 աշխատող	7 832	13.7	163 835	24.4	20.9	162 312
50 - 249 աշխատող	1 821	3.2	170 365	25.4	93.6	209 128
250 > աշխատող	289	0.5	213 633	31.8	739.2	282 571

Աղյուսակ 3՝ վարձու աշխատողների թվաքանակը (2021թ. նոյեմբեր)։ Աղբյուր՝

⁴ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=143355>

⁵ https://www.armstat.am/file/article/sv_12_21a_141.pdf

ՀՀ ՎԿԳ:


Ստացվում է, որ 1 004 800 զբաղված մարդկանցից վարձու աշխատող են համարվում ընդամենը 671 552 մարդ (կամ ընդհանուր թվի 66,83%-ը):

Վերոնշյալ տվյալներն ուսումնասիրելով՝ կարող ենք ասել, որ Հայաստանի աշխատաշուկան դեռևս վերջնական զարգացման փուլում չի գտնվում և ներկայումս լայն հնարավորություններ կան վերջինս ընդլայնելու և ներառական տնտեսական աճ ապահովելու համար:

ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Անհնար է խոսել Հայաստանի աշխատաշուկայի մասին՝ առանց չնշելու տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը, որը հաջողությամբ փորձում է դառնալ ՀՀ տնտեսության լոկոմոտիվը: Ըստ ՀՀ բարձր տեխնոլոգիաների նախարարության կողմից կատարված վերլուծությունների՝ հաջորդող 5 տարվա ընթացքում բարձր տեխնոլոգիաների ոլորտում առաջանալու է առնվազն 20 000 նոր մասնագետների կարիք: Վերլուծությունը կատարված է այն հիմքի վրա, որ 2018թ. և 2019թ. ոլորտի աճը կազմել է շուրջ 30%, իսկ 2020թ. ճգնաժամային պայմաններում՝ 20%: Ոլորտի տարեկան աճը կկազմի 20%, իսկ աշխատողների աճը՝ 15%:

Կանխատեսման ճշմարտացիության մեջ համոզվելու համար կարող ենք նշել, որ 2021թ. տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի ոլորտը ՀՀ ամենախոշոր 16 ոլորտներից զբաղեցնում էր 6-րդ հորիզոնականը՝ 34 514 աշխատակցով, որից 22 643 մարդ աշխատում է միայն տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում: Համեմատության համար կարող ենք նշել, որ ՏՏ և կապի ոլորտը աշխատակիցների քանակով գերազանցում է այնպիսի ոլորտների, ինչպիսիք են կացության և հանրային սննդի կազմակերպում, շինարարություն, ֆինանսական և ապահովագրական ծառայություններ ոլորտները: Մինևույն ժամանակ ՏՏ և կապի ոլորտը սպառնում է մոտակա ժամանակներում զբաղեցնել 5-րդ հորիզոնականը՝ գերազանցելով նաև պետական կառավարման և պաշտպանության ոլորտին (36 733 աշխատակից)⁷:



⁶ https://www.armstat.am/file/article/sv_12_21a_142.pdf

⁷ https://armstat.am/file/article/sv_12_21a_142.pdf

Գրաֆիկ 1՝ Բարձր տեխնոլոգիաների աճը ՀՀ-ում (կանխատեսում): Աղբյուր՝ ՀՀ ԲՏԱՊՑ:

Ոլորտի կտրուկ զարգացման մասին է խոսում նաև այն փաստը, որ աշխատանքի հայտարարությունների կայքի տվյալների համաձայն՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը ամենապահանջված ոլորտն է եղել 2021թ. տեղադրված բոլոր հայտարարությունների մեջ՝ իր կշռով (բոլոր տեղադրված հայտարարությունների շուրջ 25%-ը)՝:




Գրաֆիկ 2՝ ամենապահանջված մասնագիտությունները 2021թ.: Աղբյուրը՝ staff.am:

Երկրորդ միտումը, որի մասին անհրաժեշտ է խոսել, համաճարակի նվազման միտումն է, որին զուգահեռ կզարգանան կացության և հանրային սննդի կազմակերպման, մշակույթի, զվարճությունների և հանգստի, ինչպես նաև սպասարկման այլ ծառայությունների ոլորտները, որոնք միասին 2021թ. ունեցել են ավելի քան 72 781 վարձու աշխատող, որը կազմում է ընդհանուր վարձու աշխատողների 10,83%-ը: Այս ոլորտներն ուղղակի և անուղղակի կերպով խթանում են նաև մյուս ոլորտների զարգացմանը, ինչը հավելյալ աշխատատեղեր է ստեղծում ՀՀ բնակչության համար: Դժվար է հուսալ, որ 2022թ. արդեն մենք կկարողանանք հասնել մինչև համաճարակային մակարդակին, սակայն աճն ակնհայտ կլինի:

Երրորդ միտումը վերաբերում է հեռահար աշխատանքին, որը, համաճարակը ցույց տվեց, որ որոշ դեպքերում ուղղակի անհրաժեշտություն է:

⁸ <https://edu.hti.am/>

⁹ <https://staff.am/staffmedia/ra-labor-market-2021/>



Գրաֆիկ 3՝ բոլոր ոլորտների նկարագրություն: Աղբյուր՝ staff.am:

Տվյալներից երևում է, որ դեռ տեղադրված աշխատանքային հայտարարությունների ընդամենը 1%-ն է բաժին ընկնում հեռահար աշխատանքին, սակայն անհրաժեշտ է նշել, որ ՀՀ-ում բազմաթիվ ընկերություններ արդեն որդեգրել են հեռահար (կամ կիսահեռահար) աշխատանքի մոդելը:

ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ներկայումս, բազմաթիվ տնտեսական, տեխնոլոգիական և սոցիալ-ժողովրդագրական գործոններով պայմանավորված, Հայաստանի աշխատանքային շուկան ենթարկվում է լուրջ փոփոխությունների և, միևնույն ժամանակ, ի հայտ են գալիս զարգացման նոր հնարավորություններ, որոնք մինչ այժմ նկատելի չէին: Աշխարհում ստեղծված նոր իրողությունները ստիպում են վերափոխել աշխատաշուկային ներկայացվող պահանջները, մասնավորապես զբաղվածության բարձր մակարդակ ապահովելու և տնտեսական ներառական աճ ապահովելու համար անհրաժեշտ է բարձրացնել աշխատողների որակավորումը¹⁰:

Հաշվի առնելով վերոգրյալ բոլոր փաստերը՝ կարող ենք հստակ ասել, որ Հայաստանի Հանրապետությունում կան բազմաթիվ զարգացման հեռանկարներ օտարերկրյա կապիտալի ներգրավման համար: Մասնավորապես լուրջ հնարավորություններ են ստեղծվում անդրազգային կազմակերպությունների համար աշխատուժի ներգրավման համար, քանի որ հստակ հասկացանք, որ ըստ ՄԱԿ-ի մեթոդաբանության, Հայաստանում կան շուրջ 180 000 գործազուրկներ, որոնց որակավորման ապահովման համար կարելի է կազմակերպել վերապատրաստման կարճատև դասընթացներ:

Զարգացման հաջորդ հեռանկարը կապված է Ռուսաստանից և Ուկրաինայից ժամանած միգրանտների հետ, որոնց մեջ քիչ չեն տեխնոլոգիական-միգրանտները¹¹: Վերջիններս չեն զբաղեցնելու բարձր տեխնոլոգիաների ոլորտում հայ մասնագետների դիրքերը, այլ նոր հնարավորություններ են ստեղծելու վերջիններիս զարգացման

¹⁰ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=68183>

¹¹ <https://hal.archives-ouvertes.fr/hal-03284369/document>

համար, քանի որ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը Հայաստանում աճում է ահռելի մեծ տեմպերով և նոր աշխատակիցների ներգրավման խնդիր ունեն հայաստանյան գրեթե բոլոր ընկերությունները¹²։ Տվյալ երկրներից ժամանած բարձր որակավորում և պատրաստվածություն ունեցող մասնագետները բերելու են իրենց հետ սեփական գիտելիքները և փորձը, որը փոխանցելու են հայ մասնագետներին՝ ժամանակի ընթացքում բարձրացնելով կատարված աշխատանքի որակը։

Հաջորդ կետն ուղղակիորեն կապված է վերոնշյալ կետի հետ և կայանում է նրանում, որ աշխարհաքաղաքական նոր իրողություններով պայմանավորված՝ ռուսական և ուկրաինական ընկերությունները, ինչպես նաև տվյալ երկրներում հիմնադրված օտարերկրյա կապիտալով ընկերությունները, փնտրելու են նոր շուկաներ՝ տեղափոխվելու համար և ԵԱՏՄ շուկայի լավագույն տարբերակներից մեկը Հայաստանում սեփական ընկերությունն ունենալն է, որը հնարավորություն է տալու ոչ միայն ներգրավվել մասնագետների արտերկրից, այլև օգտագործել հայկական աշխատուժը¹³։

Միաժամանակ, պետք է հաշվի առնել տեխնոլոգիական զարգացման փաստը, քանի որ վերջինս ստիպում է կրճատել աշխատատեղերը՝ մարդկանց գործառույթները փոխարինելով մեքենաների աշխատանքով։ Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է բարձրացնել աշխատակիցների որակավորումը, գործատուները պետք է կազմակերպեն վերապատրաստման համապատասխան դասընթացներ՝ աշխատաշուկայի ներկա պահանջներին համապատասխանելու համար։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ուսումնասիրելով աշխատաշուկայի առկա վիճակը և նկատվող միտումները Հայաստանում՝ կարող ենք վստահորեն ասել, որ կան զարգացման շատ լուրջ հեռանկարներ, որոնք անհրաժեշտ է բաց չթողնել։ Մինևս ժամանակ անհրաժեշտ է նշել, որ աշխատանքային շուկան ներկայումս ենթարկվում է բազմաթիվ փոփոխությունների և աշխարհի համար տնտեսապես կայուն մրցակցային ապրանքներ և ծառայություններ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ բարձր որակավորում և հմտություններ ունեցող աշխատուժ¹⁴։ Պետք է հաշվի առնել այն փաստը, որ աշխատանքային շուկան գրանցում է արագ աճ և դրան անհրաժեշտ է պատասխանել՝ պատրաստ հմուտ կադրեր, որպեսզի հնարավոր լինի լուծել Հայաստանում գրանցված գործազրկության խոշոր խնդիրը։ Խնդրի ակունքներում կանգնած է այն պատճառը, որ ներկայումս Հայաստանում ստեղծվել է խզում կրթական հաստատությունների և պահանջկոտ աշխատաշուկայի միջև, քանի որ հայաստանյան բուհերը չեն ապահովում աշխատանքային շուկայի պահանջներին համապատասխան կադրեր։ Ընկերությունների դժգոհությունը գալիս է այնտեղից, որ բուհերի շրջանավարտներին տրամադրվում են միայն տեսական գիտելիքներ և քիչ տեղ է հատկացվում գործնական

¹² https://asue.am/upload/files/amberd/amberd_labor_market.pdf

¹³ https://www.mlisa.am/?page_id=1196

¹⁴ <https://evconsulting.com/hy/what-kind-of-skills-will-be-required-for-the-future-of-jobs-in-armenia/>

գիտելիքներին և փորձառությանը¹⁵:

Աշխարհում ներկայումս ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակը ստիպում է հարմարվել նոր իրողություններին և առավելագույն օգուտներ քաղել դրանից՝ ներգրավելով ինչպես ռուսական և ուկրաինական ընկերություններին, այնպես էլ այդ երկրներում բարձր որակավորում ունեցող մասնագետներին հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտից, քանի որ վերջիններս ունեն հարմարվողականության բարձր մակարդակ և ճկունություն: Ստեղծելով համապատասխան աշխատանքային պայմաններ բարձր տեխնոլոգիաների ոլորտը ներկայացնող օտարերկրյա մասնագետների համար՝ մենք հնարավորություն ենք ստանում ոչ միայն ավելացնելու Հայաստանում ստեղծվող արդյունքը, այլև բարձրացնելու հայ մասնագետների որակավորումը:

Այսպիսով, ուսումնասիրելով հայկական աշխատաշուկայի վիճակը, ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ Հայաստանը կարող է տնտեսական զարգացում ապահովել իր ունեցած ազատ աշխատանքային ռեսուրսների, ինչպես նաև օտարազգի բարձր որակավորում ունեցող մասնագետների հաշվին: Միաժամանակ անհրաժեշտ է մշակել հստակ ռազմավարություն, ինչպես նաև գործողությունների նախագիծ՝ առկա հնարավորություններից առավելագույնս օգտվելու նպատակով: Պետք է նաև պարբերաբար ուսումնասիրել արտասահմանյան գործարար միջավայրի կարգավորման լավագույն փորձը և ներդնել այն Հայաստանում՝ աշխատանքային շուկայի զարգացման և ընդլայնման հնարավորություններն առավելագույնի հասցնելու համար:

ТЕКУЩЕЕ СОСТОЯНИЕ РЫНКА ТРУДА, ТЕНДЕНЦИИ И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ В АРМЕНИИ - ЗАВЕН МЕЛИКДЖАНЫН- Одним из важных факторов экономического роста любой страны является наличие развитого рынка труда, формирование которого требует расширения и эффективного использования трудового потенциала. В то же время необходимо отметить, что в настоящее время рынки труда претерпевают структурные изменения на глобальном и локальном уровнях, что затрудняет управление ими традиционными подходами. Поэтому лучший способ решения созданных проблем – это применение новых и креативных подходов, благодаря которым каждая страна получает возможность подчеркнуть собственные перспективы развития в долгосрочной перспективе. Ведь рынок труда представляет собой совокупность экономических и правовых явлений, позволяющих людям замещать свои способности соответствующей заработной платой, которую они могут использовать для покупки товаров или услуг для собственных нужд.

Ключевые слова. рынок труда, трудовые ресурсы, рабочая сила, занятость, безработица, наемный работник, информационные технологии, экономический рост, потенциал, профессия.

¹⁵ <https://compass-center.org/hy/researches/>

CURRENT STATE OF THE LABOR MARKET, TRENDS AND DEVELOPMENT PROSPECTS IN ARMENIA - ZAVEN MELIKJANYAN- One of the important factors in the economic growth of any country is the presence of a developed labor market, the formation of which requires the expansion and effective use of labor potential. At the same time, it should be noted that currently labor markets are undergoing structural changes at the global and local levels, which makes it difficult to manage them with traditional approaches. Therefore, the best way to solve the problems created is to apply new and creative approaches, thanks to which each country has the opportunity to emphasize its own development prospects in the long term. After all, the labor market is a set of economic and legal facts that allow people to replace their abilities with adequate wages, which they can use to buy goods or services for their own needs.

Key words: *labor market, labor resources, labor force, employment, unemployment, employee, information technology, economic growth, potential, profession.*

ЗАПАД НЕСЕТ ОТВЕТСТВЕННОСТЬ ЗА ВОЙНУ ПРОТИВ НАГОРНОГО КАРАБАХА

Таким образом мы видим, что развязанная 27 сентября 2020 года против Нагорно-Карабахской Республики очередная война, в ходе которой Азербайджан и его прародитель Турция снова доказали, что в национальных отношениях у них кроме геноцида других средств нет. И во всем этом — вина крупных держав, в тех или иных формах имевших участие в политических процессах, связанных с процессами, протекавшими в постсоветском Азербайджане. О роли внешних факторов в формировании носителей энергии ненависти, зла и агрессии и об ответственности государств, принимавших участие в этом, не принято говорить. А зря, так как без этого невозможно понимание онтологии этих явлений.

Пора осознать, что в Нагорном Карабахе идет не религиозная война и не война социально-политических систем. Это война варварства против цивилизации, и кто ограничивается словесными осуждениями Анкары и Баку, фактически становится их пособником.

Ключевые слова. Запад, конфликт, Нагорный Карабах, государство, массовые погромы, террористические действия, война, демонтаж СССР, человечество, армянофобия.

Западу была известна просматривающаяся в действиях генсека ЦК КПСС цель, озвученная им в рассуждениях об обновлении СССР. Эта цель – демонтаж СССР по союзным республикам. Формула устраивала Запад. Но для запуска процесса нужен был конфликт, каковым оказался конфликт вокруг Нагорного Карабаха.

Можно составить целый список принятых в западных столицах документов, выражающих опасения за судьбы подвергавшихся массовым насилием армян в Азербайджанской ССР. Все были в курсе творимых там зверств. Но при этом Запад не скрывал симпатий к Горбачеву. Недаром 15 октября 1990 г., когда в руководимой им стране полыхали пожары конфликтов, он был удостоен Нобелевской премии. На этом фоне заявления, осуждающие кровавые погромы армян, должны были быть оформлены в выражениях, обходящих ответственность генсека. Для такого масштабного проекта, как демонтаж СССР, истязания, на которые было обречено армянство АзССР, авторами проекта наверняка воспринимались как достойные сожаления, но неизбежные его детали. Отношение к геноциду армян в феврале 1988 г. в Сумгаите не оставляют места для сомнения, что проект развала СССР через межнациональные конфликты уже был в рабочих папках Запада.

Не исключено, что проект был задуман и инициирован самим генсеком ЦК КПСС и его командой, а новый курс «Перестройка и гласность!» служил его

прикрытием. Западу оставалось лишь поддержать процесс «демократизации империи зла», запущенный ее новым лидером, что он и делал открыто. Возможно также, что сама подсказка ключевых идей шла от Запада, по ходу предоставившего поддержку генсеку ЦК КПСС в виде оперативных экспертных советов. Как бы там ни было, Западу была известна просматривающаяся в действиях генсека ЦК КПСС цель, озвученная им в рассуждениях об обновлении СССР. Эта цель — демонтаж СССР по союзным республикам. Формула устраивала Запад. Но для запуска процесса нужен был конфликт, каковым оказался конфликт вокруг Нагорного Карабаха.

Отношение Запада к проекту «Распад по союзным республикам» был озвучен сразу после того, как Россия, Украина и Беларусь 8 декабря 1991 г. в Беловежской пуще объявили о создании Содружества Независимых Государств (СНГ). По решению Европейского совета (Маастрихт, 9–11 декабря 1991 г.) 16 декабря 1991 г. в Брюсселе заседание Совета ЕС на уровне министров иностранных дел заявило о критериях ЕС для признания новых государств в Восточной Европе и на территории СССР. Среди критериев признания новых государств на территории Советского Союза и Восточной Европы государства — члены ЕС для признания новых государств на постсоветском пространстве перед бывшими союзными республиками выдвинули условие о взаимном уважении ими всех существующих границ. Но и при этом в ряду новых государств Азербайджанская Республика (АР), как в свое время предшествовавшие ей Азербайджанская Демократическая Республика (АДР) и АзССР, оказалась особым случаем. Она уже успела отказаться от правопреемства АзССР, провозгласив восстановление просуществовавшей в 1918—1920 гг. АДР.

Акт признания АР в границах АзССР оказался абсолютно лишенным правовых оснований, так как государство, правопреемницей которого АР себя декларировала, не имело ни признанных, ни фактически установленных границ. Европа стала не замечать эти «мелочи» и признала АР в границах АзССР. Если все же полагать, что она, имеющая привычку в иных вопросах добираться до самых незначительных подробностей, могла пренебречь этой «мелочью», то не только традициям европейской правовой культуры, но и международному праву противоречил более разительный факт. АР не могла быть признана в границах бывшей АзССР с Нахичеваном в силу действующего Карсского договора от 18 октября 1921 г., по которому он был передан под покровительство (но не под суверенитет!) АзССР. Если же этот договор признать недействительным с момента подписания, то придется вернуться к статусу Нахичевана как признанного самим Баку неотъемлемой территорией Армении. Препградой признания АР в границах АзССР было и провозглашение Нагорно-Карабахской Республики в соответствии с нормами международного и внутреннего права СССР. Но Европа признала АР, где до 16 декабря 1991 г., т. е. до момента принятия критериев ЕС, ни разу не было акта самоопределения на предмет суверенитета и установления на этой основе легитимных границ!

Изне наделяя АР границами, Европа продолжала линию турков-кемалистов и большевиков, узаконив произвол в отношении армян на заседании Кавбюро РКП (б) и подписании Карсского договора. Можно сказать, что карабахов в бывшем СССР было много. Да, аналогичные проблемы были, но нигде вопрос не был связан с геноцидом

государствообразующего народа, каковым было армянство АзССР, учрежденной как интернациональное, не имеющее титульной нации государство. В игнорировании этого факта раскрываются и мотивы того, почему продолжавшиеся почти четыре года массовые погромы армян по всему АзССР Запад не оценил как акты геноцида. Дело в том, что такая квалификация кровавых погромов армян в АзССР помешала бы на финише демонтажа СССР применению принципа «Распад по союзным республикам». Европа осмотрительно избегала такой квалификации зверств в отношении армян в АзССР, чтобы при признании новых государств по принципу «Распад по союзным республикам» самой открыто не оказаться на стороне геноцидного государства.

Но юридически и морально нелицеприятные аспекты признания АР в границах АзССР не ограничиваются этим. Запад не только освободил Баку от груза преступлений против человечества, но и провоцировал его на войну против НКР для освобождения «своих» территорий от армянской «оккупации». 27 сентября 2020 г. началась очередная, третья по счёту война. Вряд ли Запад учел последствия такого подхода для духовного мира азербайджанского общества. Это был не просто заговор молчания о Геноциде армянства АзССР. Это было награждение АР армянскими территориями. В Баку это поняли как поощрение своего поведения. Последствия не заставили себя долго ждать. За этническими чистками последовали преследования людей-полукровок от смешанных армяно-азербайджанских браков. Армянофобия стала официальной идеологией внутренней и внешней политики. Пропаганда ненависти к армянам добралась до детских садов и школьных учебников. Баку стал пополнять террористами ряды исламских фундаменталистов и финансировать ИГИЛ (организация, чья деятельность запрещена в РФ). Проявлением духовного состояния азербайджанского общества стало всенародное ликование по поводу экстрадиции из Венгрии Рамиля Сафарова, в 2004 г. убившего спящего армянского офицера Гургена Маргаряна в Будапеште, где он вместе с ним проходил обучение в рамках программы НАТО «Партнёрство во имя мира».

История Сафарова, героизированного за убийство спящего человека, была знаковой. Баку со своими повадками в открытую вышел на международную арену и, как и раньше, отделался словесными демаршами и «суровыми нареканиями». Более адекватных средств для Баку не нашлось. Не последовали какие-либо санкции за развращение европейских структур «икорной дипломатией». Начатое с дела Сафарова расширение форматов самореализации и насаждения своих политико-культурных стандартов на международном поприще должно было иметь развитие. Ведь у Баку были все основания для уверенности, что все сходит с рук. Летом 2020 г. в Москве азербайджанцы развязали так называемую «абрикосовую войну», пытаясь спровоцировать армяно-азербайджанский конфликт на российской почве, зная, какую опасность представляет это для многонациональной России.

Типичные проявления политической культуры Азербайджана, начиная с воспитания в духе армяноненавистничества детей в школах, детских садах и грабежа истории и культуры народов региона, кончая героизацией убийцы спящего армянского офицера, спонсированием ИГИЛ (организация, чья деятельность запрещена в РФ) и развязыванием «абрикосовой войны» в России, вряд ли можно представить как стихийно

возникшие явления. Это не действия кочевников яйлагной стоянки, где тревога из одной юрты резонансом отдается другим и все племя всплеском выбегает из палаток для защиты стоянки. Акты азербайджанцев за пределами самого Азербайджана невозможны без руководящего центра их планирования и координации. Оставшиеся ненаказанными преступления вдохновляют Баку на новые масштабные террористические действия на международной арене. Хронологически последним месседжем от внешних акторов на дозволение реализации накопленного потенциала фашиствующей агрессивности стало предание молчанию геноцида армянства АзССР и признание АР с юридически не принадлежащими ей территориями Нахичевана и Арцаха.

Хотели того или нет в западных столицах, но это стало поощрением геноцидного поведения Баку, стимулом становления Азербайджана одним из мировых центров экспорта идеологии агрессивного национализма и геноцидального поведения. Свидетельство тому — развязанная 27 сентября 2020 года против Нагорно-Карабахской Республики очередная война, в ходе которой Азербайджан и его прародитель Турция снова доказали, что в национальных отношениях у них кроме геноцида других средств нет. И во всем этом — вина крупных держав, в тех или иных формах имевших участие в политических процессах, связанных с процессами, протекавшими в постсоветском Азербайджане. О роли внешних факторов в формировании носителей энергии ненависти, зла и агрессии и об ответственности государств, принимавших участие в этом, не принято говорить. А зря, так как без этого невозможно понимание онтологии этих явлений.

Пора осознать, что в Нагорном Карабахе идет не религиозная война и не война социально-политических систем. Это война варварства против цивилизации, и кто ограничивается словесными осуждениями Анкары и Баку, фактически становится их пособником.

ԱՐԵՎՍՏՈՒՏՔԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է ԿՐՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ԴԵՍ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՄԱՐ - ԱԼԵՔՍԱՆԴ ՄԱՆԱՍՅԱՆ - Այդ կերպ մենք տեսնում ենք, որ 2020 թ. սեպտեմբերի 27-ին Լեռնային Ղարաբաղի հանրապետության դեմ սանձազերծվեց հերթական պատերազմը, որի ընթացքում Ադրբեջանը և նրա նախահայր Թուրքիան կրկին ապացուցեցին, որ ազգային հարաբերությունները նրանց մոտ միայն ցեղասպան բնույթ են կրում: Եվ այս ամենի մեջ մեղքը մեծ տերություններինն է, որոնք այս կամ այն կերպ մասնակցություն են ունենում հետխորհրդային Ադրբեջանի տարածքում տեղի ունեցող քաղաքական գործընթացին:

Արտաքին գործոնների դերի, բնակչության մեջ ատելության ձևավորման, չարի և ագրեսիայի, և այս ամենի մեջ մասնակցություն ունեցող պետությունների պատասխանատվության մասին ընդունված չէ խոսել: Բայց իզուր, քանի որ առանց դրա հնարավոր չէ այդ երևույթի գոյաբանական ըմբռնումը:

Ժամանակն է գիտակցելու, որ Լեռնային Ղարաբաղում ոչ կրոնական պատերազմ է, և ոչ էլ սոցիալ-քաղաքական: Սա բարբարոսություն է ընդդեմ քաղաքակրթության, և ով սահմանափակվում է բանավոր դատապարտելով Անկարային և Բաքվին փաստացի դառնում է նրանց հանցակիցը:

Բանալի բառեր. արևմուտք, կոնֆլիկտ, Լեռնային Ղարաբաղ, պետություն, զանգվածային ջարդեր, ահաբեկչական գործողություններ, պատերազմ, ԽՍՀՄ ցուցադրություն, մարդկությունը, հայաստյացություն:

THE WEST IS RESPONSIBLE FOR THE WAR AGAINST NAGORNO-KARABAKH-ALEXANDER MANASYAN -Accordingly, we see that, another war unleashed against The Nagorno-Karabakh Republic on the 27 th of September during which Azerbaijan and its ancestor Turkey had proved that in national relations they have no other means than genocide. And in all this is the fault of the major powers, taking part in various forms of political processes, concerned with processes that took place in the post-Soviet Azerbaijan. It is not customary to talk about the formation of external factors of those who carry the energy of hatred, evil, and aggression and the responsibility of the countries who take part in it. And in vain, since without it is impossible to understand the ontology of these phenomena. It is time to realize that the war in Nagorno Karabakh is not a war of religion or a war of socio-political systems. It is a war of barbarism against civilization, and who is limited to verbal condemnations of Ankara and Baku, in fact, becomes their accomplice.

Key words: the west, conflict, Nogorno Karabakh, state, massive pogroms, terrorist actions, war, dismantling of the USSR, civilization, Armenianophobia.

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԸ՝ ՀԱՆՐԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ
ԲԱՂԱՂԻՉ**

Հետխորհրդային տարածության քաղաքական զարգացման տեսամեթոդական հիմքերի ուսումնասիրման համար քաղաքական գիտությունը հիմնվում է քաղաքական դինամիկայի բազմամակարդակ ուսումնասիրությունների վրա: Այս հայեցակարգի մասին ներկա գիտական գրականության մեջ և սոցիալ-քաղաքական պրակտիկայում գոյություն ունեն շատ մոտեցումներ: Մեր հետազոտական աշխատանքի նպատակներից էլնելով՝ քաղաքական զարգացման հայեցակարգի ուսումնասիրման համար առանցքային ենք համարում քաղաքական զարգացման և քաղաքական կերպափոխումների փոխհարաբերությունների ուսումնասիրումը հանրային քաղաքականության համակարգի արդիականացման գործընթացներում: Համակարգելով քաղաքական զարգացման մեկնաբանման տարբեր մոտեցումներ՝ քաղաքական զարգացումը բնորոշվում է որպես քաղաքական փոփոխությունների հատուկ ձև, որը երնթադրում է տարբեր քաղաքական երևույթների փոխակերպում, կերպափոխում՝ հանգեցնելով քաղաքական համակարգերի դրական էվոլյուցիայի: Ներկա հարափոփոխ աշխարհում հանրային քաղաքականության համակարգը շարունակաբար զարգանում է՝ պարբերաբար հայտնվելով աններդաշնակ սպառնալիքների և հատվածային փոփոխությունների մեջ: Քաղաքական զարգացման արդյունքում հանրային քաղաքականության համակարգի կենսագործունեության բոլոր ոլորտները արդյունավետ կերպափոխվում են, որպեսզի կարողանան հավասարաժեռ պատասխանել արդի մարտահրավերներին:

Բանալի բառեր. քաղաքական զարգացում, հանրային քաղաքականություն, արդիականացում, ժողովրդավարության որակ, համագործակցություն, քաղաքական կերպափոխում, ժողովրդավարական համախմբում:

Քաղաքական զարգացումը բազմամակարդակ և բազմաչափ գործընթաց է, որը հանրային քաղաքականության համակարգի արդիականացման գերակա բաղադրիչներից է և ապահովում է ժողովրդավարական կառավարման որակական զարգացումը: Այդ առումով քաղաքական զարգացման գլխավոր հրամայականներն են՝ իր խորհրդանիշներով ու արժեքներով ճկուն քաղաքական համակարգի ձևավորումը, հանրային քաղաքականության համակարգի ինստիտուտների արդյունավետ գործառնումը, պետականաշինության մշակույթի զարգացումը և հանրային քաղաքականության համակարգի արդիականացման շարունակականության ապահովումը:

Հետխորհրդային տարածության քաղաքական զարգացման տեսամեթոդական հիմքերի ուսումնասիրման համար քաղաքական գիտությունը հիմնվում է քաղաքական դինամիկայի բազմամակարդակ ուսումնասիրությունների վրա: Այս հայեցակարգի մասին ներկա գիտական գրականության մեջ և սոցիալ-քաղաքական պրակտիկայում գոյություն ունեն շատ մոտեցումներ: Մեր հետազոտական աշխատանքի նպատակներից էլնելով՝ քաղաքական զարգացման հայեցակարգի ուսումնասիրման համար առանցքային ենք համարում քաղաքական զարգացման և քաղաքական կերպափոխումների փոխհարաբերությունների ուսումնասիրումը հանրային քաղաքականության համակարգի արդիականացման գործընթացներում:

Հանրային քաղաքականության համակարգի արդիականացման համատեքստում քաղաքական զարգացման հիմնախնդիրների տեսամեթոդական հիմքերի ուսումնասիրումը հնարավորություն է տալիս փաստել, որ քաղաքական զարգացումը ենթադրում է բազմամակարդակ և բազմավեկտոր գործընթացներ, որոնք տեղի են ունենում ինչպես գծային, այնպես էլ ոչ գծային զարգացման ճանապարհով¹: Քաղաքական զարգացման գծային մոդելը ենթադրում է անցում ժողովրդավարական քաղաքական համակարգի գծային վեկտորների կիրառման սկզբունքների համաձայն՝ հետևյալ փուլերով. ավտորիտարիզմի քայքայում, քաղաքական վարչակարգի ազատականացում, ինստիտուցիոնալ ժողովրդավարություն, ոչ համախմբված ժողովրդավարություն և ժողովրդավարության համախմբում²:

Հետխորհրդային տարբեր երկրներում հանրային քաղաքականության արդիականացման գործընթացը տեղի է ունենում տարբեր փուլերով ու հետազդեով: Ինչպես փաստում են տեսաբանները, ուսումնասիրելով հետխորհրդային երկրների ժողովրդավարական անցման առաջին տասնամյակի փորձը, որոշ երկրների այդ ժամանակահատվածում հաջողվեց ապահովել ազատական ժողովրդավարությունների համախմբում, ամրապնդել ժողովրդավարական ինստիտուտները, սակայն մյուս երկրներում այդպիսի ինստիտուտները զուգորդվեցին ոչ ժողովրդավարական, ավտորիտար, կամ էլ պաշտոնական (ձևական) ժողովրդավարական ընթացակարգերի հետ, որոնց հետևում թաքնված են ինքնիշխանական կառավարման նոր տարատեսակները³: Այս մոտեցման համատեքստում քաղաքագետ Ա.Մելվիլը նշում է, «որ տարբերություններն այնքան մեծ ու աննախադեպ են, որ ժամանակակից քաղաքագիտական մտքի առջև դրվում է քաղաքական փոփոխությունների և քաղաքական զարգացման մասին

¹ Мельвил А. Демократические транзиты // "Политология: Лексикон". М., 2007, с. 123.

² Бродовская Е., Королев П. Демократический транзит на постсоветском пространстве: подходы к определению, модели, этапы // "Известия ТГУ". Гуманитарные науки. Тула, 2013, сс. 10-16.

³ Соловьёв А.И. Политология: политическая теория, политические технологии. Учебник для студентов вузов. М., 2000, с. 290.

ձևավորված պատկերացումների հայեցակարգային նորացման խնդիրը՝ հետևյալ մոնիստական կերպափոխումների տարաբնույթ հաշվառմամբ⁴:

Այս ենթատեքստում քաղաքական զարգացումը դիտարկվում է որպես քաղաքական էվոյուցիայի դրական փոփոխություն՝ հասարակության պահանջներին համապատասխան՝ հիմքում ունենալով հանրային շահը: Քաղաքական զարգացումը ենթադրում է ոչ միայն քաղաքական համակարգերի ներքին կերպափոխում, այլ նաև այդ համակարգերի անցում որակապես այլ մակարդակի կամ մեկ համակարգային տեսակի փոփոխություն մեկ ուրիշով⁵:

Ամփոփելով քաղաքական զարգացման հայեցակարգի տարբեր մոտեցումները՝ փաստենք, որ քաղաքական զարգացումը բնորոշվում է որպես քաղաքական երևույթ, որը քաղաքական գործընթացների մի մասն է կազմում և համարվում է քաղաքական համակարգի դրական շարժ, որի արդյունքում այն ենթարկվում է որակական փոփոխությունների⁶:

XX դարում տեղի ունեցող քաղաքական զարգացումները վերաբնորոշեցին արդիականացման և զարգացման միջև եղած կապերը: Սկսեցին առաջնային համարվել սոցիալ-տնտեսական և քաղաքական կառուցվածքային այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են ընթանալ ոչ միայն արևմտյան ժողովրդավարացման մոդելով: Այս փուլում քննադատվում է 50-60-ական թվականների փորձարարական շրջանում «հանուն իշխանության» մղվող ներքաղաքական պայքարը թերագնահատելու և միջազգային գործոնների ազդեցությունը բացարձականացնելու միաշափ մոտեցումը: Ցանկանալով նվազագույնի հասցնել առաջին փուլի սխալները՝ երկրորդ փուլում կարևորվեց մարդու քաղաքական գիտակցության, մշակույթի, ավանդական և քաղաքական նոր արժեքների փոխներդաշնակման անհրաժեշտությունը⁷: Այս փուլում գերխնդիր համարվեց այնպիսի հնարավորությունների ստեղծումը, որը գլոբալ մակարդակով թույլ կտա աշխարհի ցանկացած ծայրում ապրող մարդուն, ընդունելով ազատական արժեքների գերակայությունը, ինքնորոշվել:

Քաղաքական զարգացման արդյունավետությունը պայմանավորված է ընթացակարգային և կառուցվածքային գործոններով: Համաձայն առաջինի՝ զարգացման արդյունավետությունը պայմանավորված է քաղաքական ընտրանու՝ համընդհանուր ընդունելության արժանացած ընթացակարգերի ընտրության, ընդունվող որոշումների կառուցակարգում հանրային շահի գերակայության ընդգծմամբ: Իսկ երկրորդի ժամանակ անհրաժեշտ է կարևորել հասարակության մեջ առկա միջազգային, սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային այն կառուցակարգերը, որոնք իրատես գործունեություն են ծավալում հանուն

⁴ Мельвиль А.Ю., *О траекториях посткоммунистических трансформаций*, Полис, 2004, №2.

⁵ Политология. Учеб./А.Ю. Мельвиль и др. М., 2005, с. 322.

⁶ Соловьёв А. И. Политология: политическая теория, политические технологии. Учебник для студентов вузов. М., 2000, с. 289.

⁷ Մարգարյան Մ., Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր: Երևան, «Պետական ծառայություն», 2004, էջ 261:

Ժողովրդավարական արժեքների հաստատման: Ժողովրդավարության ծագումնաբանության ընդհանուր մոդելները կազմելիս անորոշությունները նվազագույնի հասցնելու համար անհրաժեշտ է հենվել մերթ կառուցվածքային (առաջին հերթին՝ պետական և ազգագոյացման, սոցիալ-տնտեսական և մշակութա-արժեքային), մերթ ընթացակարգային գործոնների, մասնավորապես այն քաղաքական դերակատարների ընտրության և կոնկրետ որոշումների ու գործողությունների վրա, որոնցից կախված է ժողովրդավարացման գործընթացը⁸:

Այսպիսով՝ ժողովրդավարական համախմբման պայմանների մասին առաջարկվող «անցում-համախմբում» մոդելը հիմնված է հանրային քաղաքականության համակարգի արդիականացման փուլային պատկերացումների վրա: Ըստ էության, ենթադրվում է, որ ժողովրդավարությունը շարժվում է կանխատեսված ուղղությամբ՝ վերաբժնորելով ինքն իրեն մի փուլից մյուսին անցնելով: Ենթադրվում է, որ անցումային փուլում գտնվող նոր ժողովրդավարություններում քաղաքական զարգացման գործընթացն ուսումնասիրելիս մենք պետք է միաժամանակ դիտարկենք սոցիալական զարգացման մեկնակետը, ներկա իրավիճակը և ժողովրդավարացման գործընթացի արդյունքները: Քաղաքական զարգացման արդյունքում բարձրանում է ժողովրդավարության որակը, որը ենթադրում է ոչ թե հակամարտող քաղաքական ուժերից մեկի հաղթանակ, այլ յուրօրինակ պակտ (օր.՝ Մոնկլոայի պակտը Իսպանիայում) կամ պակտերի շարքի ձևակերպում, որոնք սահմանում են քաղաքական զարգացման հետագա փուլերի «խաղի կանոնները» և որոշակի երաշխիքներ տրամադրում «պարտվածներին»: Պակտի լեգիտիմացումը և դրա հետագա զարգացումը թույլ է տալիս անցնել քաղաքական զարգացման առանցքային պահերից մեկին՝ նոր իշխանության ազատ և մրցակցային ընտրությունների անցկացմանը: Սակայն, ինչպես ցույց է տալիս Մ.Մաքֆուլի կատարած վերլուծությունը, հետխորհրդային քաղաքական զարգացման գործընթացների դեպքում չեն գործում անցումագիտական մոդելի առնվազն երկու հիմնական դրույթները՝

1) պատկերացումն այն մասին, որ առաջացած քաղաքական փակուղուց ելք է հանդիսանում էվոյուցիոն ժողովրդավարացման համար հիմքեր ստեղծող պակտը, և

2) ընտրանիների փոխզիջման արդյունքում «վերնից» ժողովրդավարության փաթաթման գաղափարը:

Ինչպես նշում է Մաքֆուլը, «հետխորհրդային երկրների համար առավել բնորոշ է ոչ թե պակտի, այլ հակասության ուժային լուծման տարբերակը, ընդ որում՝ առաջացող վարչակարգի տեսակը մեծապես որոշվում է նրանով, թե որտեղից է գալիս քաղաքական վերափոխումների ազդակը»⁹:

⁸ Մարգարյան Մ., *Ժողովրդավարական անցման հիմնախնդիրները* ՀՀ-ում, «21-րդ դար», թիվ 4 (10), 2005, էջ 129:

⁹ McFall M., "The Forth Wave of Democracy and Dictatorship. Noncooperative Transitions in the Postcommunist World." *World Politics*, vol. 54, no. 2, Cambridge University Press, 2002, p. 22-28.

Քաղաքական զարգացման հետազոտական մեթոդաբանական տեսանկյունից արդյունավետ է հետխորհրդային երկրներում ուսումնասիրել արդեն տեղի ունեցած վարչակարգային փոփոխությունների առանձնահատկությունները: Մեր տեսակետը կարող ենք հիմնավորել Լ.Դայմոնդի մեջբերմամբ. «Ժողովրդավարությունը ենթադրում է ավելին, քան պարզապես ընտրություններ, նույնիսկ եթե դրանք կանոնավոր, ազատ և ազնիվ են: Այն ենթադրում է, որ չկան ընտրագանգվածի առջև պատասխանատվություն չկրող զինվորական կամ այլ սոցիալական ու քաղաքական ուժերի համար իշխանության «արգելոցային տարածություններ», որ պաշտոնատար անձանց «հորիզոնական» պատասխանատվություն գոյություն ունի միմյանց նկատմամբ, որը սահմանափակում է գործադիր կառույցների իշխանությունը և պաշտպանում սահմանադրականությունը, օրենքի գերակայությունն ու խորհրդակցական ընթացակարգերը: Վերջապես, այն ենթադրում է պայմանների առկայություն՝ քաղաքական և քաղաքացիական հոգնականության, ինչպես նաև անհատական ու խմբային ազատությունների ապահովման համար, որպեսզի մրցակցող շահերը և արժեքները կարողանան արտահայտում գտնել և մրցակցել ոչ միայն պարբերական ընտրությունների ժամանակ... Այս ամենը դուրս է բերում ավելի բարձր չափանիշների և ավելի բարձր երևույթի, որը կարող է սահմանվել որպես «ազատական ժողովրդավարություն»՝ ոչ թե պետության և տնտեսության միջև փոխհարաբերությունների, այլ քաղաքական և քաղաքացիական ազատության որակի առումով»¹⁰:

Ակնհայտ է, որ ժողովրդավարության որակը որպես վարչակարգի շարունակական բարեփոխումների և հանրային քաղաքականության համակարգի արդիականացման չափորոշիչ պարբերաբար ընդարձակում է ժողովրդավարության սոցիալական տարածությունը՝ դիրսկուրսի միջոցով: Այս պարագայում հանրագումարելով հետկոմունիստական երկրների քաղաքական զարգացման փորձը՝ կարող ենք ասել, որ քաղաքական զարգացման բնականոնության ապահովման համար հարկավոր են հասարակական քաղաքական այլ պայմաններ, քան անցումը սկսելու համար: Այս գործընթացի բազմաչափությունը նկատի ունենալով՝ կարող ենք եզրակացնել, որ մի դեպքում քաղաքական ժողովրդավարությունը որպես համախմբման կայացման պայման պայմանավորված է քաղաքական կուսակցությունների կամ քաղաքացիական հասարակության որակից, մյուս դեպքում որոշիչ են համարվում ազատական այն բարեփոխումները, որոնց հետևողական իրականացումը կարող է պոզիտիվ (կամ նեգատիվ) ազդեցություն ունենալ ժողովրդավարական համախմբման վրա՝ պայմանավորված դիրսկուրսի բնույթով: Հանրային քաղաքականության համակարգի արդիականացման գործընթացում քաղաքական զարգացումը կոնկրետ

¹⁰ Diamond L., "Developing Democracy Toward Consolidation." Baltimore, L., 1999. pp. 16-17.

պատմական իրավիճակի, մշակույթի և կոնկրետ պայմանների մեջ ձևավորված և զարգացող տեքստի բազմակողմանի դիսկուրսային գործընթացի հետևանք է¹¹:

Քաղաքական զարգացման գործընթացը ենթադրում է շարունակականություն և ունի մի շարք առանձնահատկություններ, որոնցից գերակա են տեղի ունեցող համակարգային փոփոխությունների բազմամակարդակության առկայությունը և արդյունքի կառավարման մշտադիտարկման մեխանիզմների կիրառումը: Որոշիչը մոդելի տրամաբանությունն ապահովող ժողովրդավարության հայեցակարգն է, որտեղ ժողովրդավարությունը շատ հաճախ որակվում է իբրև կանոնակարգված բաց անվերջություն կամ կազմակերպված անորոշություն¹²: Քաղաքական զարգացման գործընթացում առանձնահատուկ դեր ունեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են քաղաքական և քաղաքացիական մշակույթում դիսկուրսի զարգացումը: Այս համատեքստում նպատակահարմար ենք համարում նշել, որ քաղաքական զարգացման գործընթացը՝ որպես քաղաքականության դինամիկ բնութագիր, դրսևորվում է քաղաքական փոփոխությամբ և քաղաքական կերպափոխմամբ: Քաղաքական զարգացման հիմնական շարժիչ ուժը այս կամ այն երկրում շահերի ինստիտուցիոնալացման աստիճանն է և քաղաքական ինստիտուտների առանձնահատկությունը, ընդ որում, ինստիտուցիոնալացման գործընթացի հետ մնալը մոբիլիզացիայի և մասնակցության աճի տեմպերից անցումային հասարակություններում քաղաքական ճգնաժամերի և անկայունության հիմնական պատճառն է¹³: Փաստենք, որ քաղաքական զարգացման գործընթացում գերակա դեր ունեն քաղաքական ինստիտուտները:

Ներկա հարափոփոխ աշխարհում հետխորհրդային երկրները, հանրային քաղաքականության համակարգի արդիականացման արժեշահային առանձնահատկություններով պայմանավորված, բախվել են բազմաբնույթ մարտահրավերների, ուստի պայմանավորված գլոբալացման և տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացմամբ՝ հասարակական կյանքում տեղի են ունենում համակարգային փոփոխություններ: Հանրային քաղաքականության համակարգը շարունակաբար զարգանում է՝ պարբերաբար հայտնվելով աններդաշնակ սպառնալիքների և հատվածային փոփոխությունների մեջ: Արդյունքում քաղաքական զարգացումը հիմնվում է ոչ թե ավանդական և համամարդկային արժեքների փոխգործակցության վրա, այլ մեխանիկական «արևմտականացման»:

Քաղաքական զարգացման արժեքային կողմնորոշիչները համակարգված ուսումնասիրելու համար փաստենք, որ այն ընդգրկում է հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտները՝ ձևավորելով բաց հասարակական կառույցներ, բարձրացնելով անհատների սոցիալական տարբերակվածությունը և

¹¹ Мусихин Г. И., Дискурсивный анализ идеологий: возможности и ограничения, Полис, 2011. № 5, сс. 128-144.

¹² Մարգարյան Մ., Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2019, էջ 125:

¹³ Парсонс Т., Система современных обществ., М., 1997, сс. 45-52.

մասնագիտացումը, ինչպես նաև խմբերի, խավերի և դասերի սոցիալական գործառույթները:

Ամերիկացի քաղաքագետ Գ.Ալմոնդը քաղաքական համակարգի զարգացվածությունը պայմանականորեն բաժանեց պարզունակի, ավանդականի և արդիականի¹⁴: Վերջինս բնութագրում էր ավանդական հասարակության սոցիալ-քաղաքական գործընթացների անցումը դեպի ժամանակակից, արդյունաբերական հասարակության՝ ընկալվելով որպես հասարակական զարգացման տեսություն և պրակտիկա: Այսպիսով՝ համաշխարհային քաղաքական գործընթացների կառավարման ընդհանուր մոդելն ընկած է քաղաքական զարգացման և արդիականացման տեսության հիմքում, ինչը ենթադրում է ավանդական հասարակությունից անցում դեպի տեղեկատվական հասարակություն: Վերջինս հնարավոր է բացառապես գիտատեխնիկական առաջընթացի, սոցիալական շարժունակության, արժեքային համակարգերի փոփոխության պայմաններում՝ ենթադրելով քաղաքական ինստիտուտների, դերակատարների, նպատակների ու արժեքային համակարգի հստակեցում¹⁵:

Հանրային քաղաքականության համակարգի արդիականացման գործընթացում քաղաքական զարգացմանը բնորոշ են՝

- 1) քաղաքական համակարգի արդիականացում՝ բազմատեսակ ինստիտուտներով և դերակատարներով,
- 2) ժողովրդավարական քաղաքական համակարգի կայացում, ինչը ենթադրում է ինստիտուտների բնականոն գործունեություն,
- 3) հասարակական բոլոր խավերի պարբերական ներգրավում քաղաքական իշխանության մեջ,
- 4) համակարգի արդիականացման գործընթացում նախկին ավանդական էլիտայի դուրսմղում,
- 5) իշխանության լեգիտիմության առկայության պայմաններում կառավարողների կողմից կառավարվողների նկատմամբ պատասխանատվության բարձրացում¹⁶:

Փաստորեն քաղաքական զարգացումը մարտահրավեր է, որին յուրաքանչյուր հասարակություն պատասխանում է իր արժեքային համակարգի և քաղաքական գիտակցությանը համապատասխան ընտրությունների ինստիտուտի ձևավորման, կայացման և կազմակերպման միջոցով:

Հանրագումարելով XX դարի 50-ականներից մեկնարկած քաղաքական զարգացման փորձը՝ Ս.Հանթինգթոնը, Շ.Էյզենշտադը, Ռ.Դալը, Հ.Ալմոնդը, Ֆ.Ֆուկույաման խոսում են «արդիականացման սինդրոմի», «փակուղային արդիականացման», ինչպես նաև «մարգինալ արդիականացման» մասին, որոնք հակասական ներգործություն են թողնում կերպափոխվող հասարակության քաղաքա-

¹⁴ Типология современных политических систем, <http://www.politicstime.ru/potis-422-1.html>:

¹⁵ Хантингтон С., Политический порядок в меняющихся обществах, - М., Прогресс-Традиция, 2004, с. 50.

¹⁶ Хантингтон С., Политический порядок в меняющихся обществах, М., 2004, с. 50-94.

կան համակարգի արդիականացման վրա: Այդ երկրներում առկա տնտեսական և քաղաքական անկայուն իրավիճակը վկայում է, որ պատրաստի մոդելների հանպատրաստից ներդրումը որևէ հասարակության սոցիալ-պատմական ենթատեքստում, որը չի հասցրել արդիականանալ սեփական արժեհամակարգի հաշվին, անհամատեղելիություն առաջ բերելով տվյալ հանրության անցյալի, ներկայի և ապագայի միջև, ստեղծում է և՛ պատահականության, և՛ քառսի, և՛ մարգինալության մեծ հնարավորություններ¹⁷:

Այս համատեքստում քաղաքական զարգացումը բնութագրվում է որպես հասարակության համընդհանուր, արմատական կերպափոխում: Տեղեկատվական հասարակության ցանցային գործառույթը վկայում է, որ քաղաքական զարգացումը բազմաչափ երևույթ է և պայմանավորված հասարակության քաղաքական գիտակցության մակարդակով: Քաղաքական զարգացումը հիմնվում է կապիտալիզմի զարգացման հումանիզացիայի վրա: Վերջինս համարվում է քաղաքական զարգացման գլխավոր ինստիտուտ և ապրանքարտադրության համակարգ, կենտրոն, արդիականացման հիմնական արդյունք ու միջուկ¹⁸:

Ամփոփելով փաստենք, որ քաղաքական զարգացման գործընթացում հանդես եկող հանրային կառավարման համակարգի ինստիտուտները.

- Պետք է գիտակցեն հասարակությունում ժողովրդավարության արժեքների և բնականոն արդիականացման անհրաժեշտությունը՝ հանուն ինքնիշխանության, սեփական հասարակության անվտանգության պահպանման, քաղաքական զարգացման ճգնաժամերից խուսափման և սոցիալական, իրավական պետության կայացման,
- արդի գլոբալ դարաշրջանում անհրաժեշտ է պահպանել սեփական ազգային արժեքները՝ զուգամիտելով համամարդկային արժեքների և միջազգային նորմերի հետ,
- հասարակության բնականոն արդիականացման ապահովման պայմաններում պետք է կարողանան ապահովել համագործակցության մշակույթ:

Քաղաքական զարգացման գործընթացները ՀՀ-ում՝ ներառելով ավանդական և արդիական մշակույթները, կողմնորոշված են դեպի ընտրության ազատությունը, մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները: ՀՀ-ում քաղաքական համակարգի զարգացման համար առկա են հետևյալ հիմնախնդիրները.

¹⁷ Рюэль Я., Случайность и хаос, Ижевск, 2001, сс. 68-69.

¹⁸ Федотова В. Г., Колпаков В. А., Федотова Н. Н., Глобальный капитализм: три великие трансформации, социально-философский анализ взаимоотношений экономики и общества, -М., Культурная революция, 2008, с. 76-79:

- ժողովրդավարական քաղաքական մշակույթի համապարփակ բնույթի ընդունումը և քաղաքական գործունեության սահմանների ու հնարավորությունների մշակումը,
- ավանդույթների նկատմամբ վերաբերմունքի հստակեցումը, քանի որ հանրային կառավարման համակարգը, բացառելով իր անցյալը, չի կարող արդյունավետ ժողովրդավարացվել առանց ներկայի և ապագայի,
- քաղաքական համակարգում գոյություն ունեցող դերերի արդյունավետ օգտագործելու հարցում անվստահության հաղթահարում:

Այսպիսով, հանրային քաղաքականության համակարգի արդիականացման պայմաններում քաղաքական զարգացման գործընթացում քաղաքական և քաղաքացիական մշակույթի հաստատումը ենթադրում է հասարակական գիտակցությունում հոգնականության արժեքների ներդրում և ազգային-ազատական արժեքների զուգամիտման ապահովում:

*ИМПЕРАТИВЫ ПОЛИТИЧЕСКОГО РАЗВИТИЯ КАК СОСТАВЛЯЮЩАЯ МОДЕРНИЗАЦИИ СИСТЕМЫ ГОСУДАРСТВЕННОЙ ПОЛИТИКИ - **МАРТИН АГАДЖАНИЯН** - Политология опирается на многоуровневые исследования политической динамики для изучения теоретических и методологических основ политического развития постсоветского пространства. В современной научной литературе и общественно-политической практике существует множество подходов к этой концепции. Исходя из целей нашей исследовательской работы, ключевым в изучении концепции политического развития мы считаем изучение взаимосвязи между политическим развитием и политической трансформацией в процессе модернизации системы государственной политики. Путем согласования различных подходов к трактовке политического развития политическое развитие определяется как особая форма политических изменений, предполагающая трансформацию различных политических явлений, ведущую к позитивной эволюции политических систем. В современном меняющемся мире система государственной политики постоянно развивается, периодически появляясь в несогласованных угрозах и фрагментарных изменениях. В результате политического развития эффективно трансформируются все сферы жизнедеятельности системы государственной политики, чтобы иметь возможность адекватно реагировать на современные вызовы.*

Ключевые слова: политическое развитие, государственная политика, модернизация, качество демократии, сотрудничество, политическая трансформация, демократическая консолидация.

*THE IMPERATIVES OF POLITICAL DEVELOPMENT AS A COMPONENT OF THE MODERNIZATION OF THE PUBLIC POLICY SYSTEM - **MARTIN AGHAJANYAN** -*

Political science relies on multilevel studies of political dynamics to study the theoretical and methodological foundations of the political development of the post-Soviet space. In modern scientific literature and socio-political practice, there are many approaches to this concept. Based on the goals of our research work, we consider the study of the relationship between political development and political transformation in the process of modernizing the public policy system to be the key in studying the concept of political development. By coordinating different approaches to the interpretation of political development, political development is defined as a special form of political change, involving the transformation of various political phenomena, leading to a positive evolution of political systems. In today's changing world, the system of public policy is constantly evolving, periodically appearing in inconsistent threats and fragmented changes. As a result of political development, all spheres of life of the public policy system are effectively transforming in order to be able to adequately respond to current challenges.

Keywords: *political development, public policy, modernization, quality of democracy, cooperation, political transformation, democratic consolidation.*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆԻ ՇԻՐԻՆՅԱՆ** - բանասիրական գիտությունների թեկնածու
2. **ԶԻՆԱԲԴԱ ԲԱՆԱՅԱՆ** - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
3. **ՍՈՒՐԷՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ** - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
4. **ՍՈՎԴԱՏ ԽԱՆՅԱՆ** - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Գիտության վաստակավոր գործիչ
5. **ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ** - բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտ
6. **ՄԱՆՈՒՇ ԲԱՆԱՅԱՆ** – ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի հայցորդ
7. **ԱՐԹՈՒՐ ՄԻՐԶՈՅԱՆ** -ԵՊՀ Հայ բանասիրության ֆակուլտետի չորրորդ կուրսի ուսանող, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն (ՀՀ)
8. **ՀՈՎԻԿ ՍՈՒՍԱՅԵԼՅԱՆ** – բանասիրական գիտությունների դոկտոր
9. **ԼՈՒՄԻՆԷ ԱԲԵՏԻՄԵԱՆ** - բանաստեղծ, գրականագետ, գրաբարագետ, բան. գիտ. թեկն., առաջ գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անուան գրականության ինստիտուտ
10. **ԷՂՈՒԱՐԴ ՄԿՐՏՅԱՆ** -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
11. **ԼՈՒՄԻՆԵ ԹՈՎՄԱՅԱՆ** - բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՊՄՀ Ռոմանագերմանական բանասիրության ամբիոնի դոցենտ
12. **ԼԻԱՆԱ ՄԱՆԹՐՅԱՆ** – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Շուշիի տեխնոլոգիական համալսարան
13. **ԱՐՄԻՆԵ ԲԱՂՆԱՍԱՐՅԱՆ** - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
14. **ԷԼԻՆԱ ՄԽԹԱՐՅԱՆ** - ԱՀ սոցիալական զարգացման և միգրացիայի նախարարության Միգրացիոն քաղաքականության մշակման բաժնի պետ, Փախստականների և տեղահանված անձանց հարցերով փորձագետ, ԱրՊՀ դասախոս
15. **ԶԱՎԵՆ ՄԵԼԻՔՅԱՆՅԱՆ** - Հայաստանում ֆրանսիական համալսարանի մագիստրոս
16. **ԱԼԵՔՍԱՆԴԻ ՄԱՆԱՅԱՆ** - փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԵՊՀ տեսական փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի պրոֆեսոր
17. **ՄԱՐՏԻՆ ԱՂԱԶԱՆՅԱՆ** - Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման բաժնի 2-րդ կուրսի մագիստրատուրայի ուսանող («Հանրային քաղաքականություն» մագիստրոսական ծրագիր)

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ

1. **АНИ ШИРИНЯН** - кандидат филологических наук
2. **ЗИНАИДА БАЛАЯН** - кандидат филологических наук, доцент
3. **СУРЕН ДАНИЕЛЯН** - доктор филологических наук, профессор
4. **СОКРАТ ХАНИЯН** - доктор филологических наук, профессор, Заслуженный деятель науки
5. **АРКМЕНИК НИКОГОСЯН** - кандидат филологических наук, литературный институт им. Манука Абебяна НАОРА
6. **МАНУШ БАЛАЯН** - соискатель кафедры литературы и журналистики АрГУ
7. **АРТУР МИРЗОЯН** - студент 4-го курса Факультета армянской филологии ЕГУ, г. Ереван, Республика Армения (РА)
8. **ОВИК МУСАЕЛЯН** - доктор филологических наук
9. **ЛУСИНЕ АВЕТИСЯН** - поэт, литературовед, диалектовед, кандидат педагогических наук, старший научный сотрудник НАОРА литературного института имени М. Абебяна
10. **ЭДУАРД МКРТЧЯН** - доктор филологических наук, профессор
11. **ЛУСИНЕ ТОВМАСЯН** - кандидат филологических наук, доцент романо-германской филологической кафедры ЕГПУ
12. **ЛИАНА САНТЯН** - кандидат филологических наук, доцент, Шушинский технологический университет
13. **АРМИНЕ БАГДАСАРЯН** - кандидат педагогических наук, доцент
14. **ЭЛИНА МХИТАРЯН** - преподаватель АрГУ, заведующая отделом министерства социального, труда, по вопросам миграции РА
15. **ЗАВЕН МЕЛИКДЖАНИЯН** - магистрант французского университета в Армении
16. **АЛЕКСАНДР МАНАСЯН** - доктор философских наук, член правления НАНРА, профессор кафедры логики и философии ЕГУ
17. **МАРТИН АГАДЖАНИЯН** - Факультет международных отношений, отдел Общественное управление, магистрант 2-ого курса (Магистерская программа «Государственная политика»).

INFORMATION ABOUT AUTHORS

1. **ANI SHIRINYAN** - Candidate of Philological Sciences
2. **ZINAIDA BALAYAN** - Candidate of Philological Sciences, Associate Professor
3. **SUREN DANIELYAN**- Doctor of Philological Sciences, Professor Souren Danielyan With the Motto of Cultural Unity
4. **SOKRAT KHANYAN**- Doctor of Philological Sciences, Professor, Honored Scientist
5. **ARQMENIK NIKOGHOSYAN** - Candidate of Philological Sciences, after Manuk Abeghyan of NAS RA Institute of Literature
6. **MANOUSH BALAYAN**- Applicant of the Chair of Literature and Journalism of ArSU
7. **ARTHUR MIRZOYAN** - 4th year student at Faculty of Armenian Philology, YSU, Yerevan, Republic of Armenia (RA)
8. **HOVIK MUSAYELYAN** - Doctor of Philological Sciences
9. **LUSINE AVETISIAN** - Poet, literary Critic, Literary scholar, Professor of Classical Armenian (grabar), Candidate of Philological Sciences, Senior Researcher, Institute of Literature after M. Abeghian NAS of RA
10. **EDUARD MKRTCHYAN**- Doctor of Philological Sciences, Professor
11. **LUSINE TOVMASYAN**- Doctor of Philological Sciences, Professor, PhD Associate professor/Chair of Romano-Germanic Languages
12. **LIANA SANTRYAN**- Doctor of Philological Sciences, Associate Professor
13. **ARMINE BAGDASARYAN** - Candidate of Pedagogical Sciences, Associate Professor
14. **ELINA MKHITARYAN** – The Head of the Department of Migration and Refugees of the Ministry of Labor, Social and Migration of the Republic of Artsakh, Lecturer of Artsakh State University
15. **ZAVEN MELIQJANYAN**- Master's degree from the French University in Armenia
16. **ALEXANDER MANASYAN** - Doctor of Philosophy, Corresponding Member of NAS RA, Professor of YSU Chair of Theoretical Philosophy and Logic
17. **MARTIN AGHAJANYAN** - Faculty of International Relations, Department of Public Administration, 2nd-year master's degree student (Master in Public Policy)

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ»

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴՊՐԱՏՈՒՆ 1 (13)-2022

Հասարակական գիտությունների հանդես

СТЕПАНАКЕРТСКИЙ УНИВЕРСИТЕТ

«ГРИГОР НАРЕКАЦИ»

ДПРАТУН 1 (13)-2022

Журнал социальных наук

STEPANAKERT «GRIGOR NAREKATSY»

UNIVERSITY

DPRATUN 1 (13)-2022

Journal of Social Sciences

Տպագրությունը՝ օֆսեթ
Թուղթը՝ օֆսեթ
Չափսը՝ 60x84 1/8
Ծավալը՝ 20,25 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 300